

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I X
2 0 0 6

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գյումրի 2006

ԴՏՀ 008+902 / 904+800
ԳՄԴ 71+63. 4+80
Գ 602

Հրատարակում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Արամ Քալանքարյան, Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղիկյան, Արամ Քոսյան,
Սարգիս Հարությունյան, Սարգիս Պետրոսյան, Լարիսա Եգանյան,
Համազասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան, Կարինե Բագեյան,
Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

Խմբագրությամբ բան. գիտ. դոկտոր
պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի

Գիտական աշխատություններ, 9
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
2006, 204 էջ:

Գ - 4400000000
703 (02) – 2006

ԳՄԴ 71+ 63,4+80

ISBN 5- 8080 - 0504 - 3
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2006

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК IX EDITION

RESEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

ГЮМРИ 2006 GYUMRI

**Публикуется по решению Ученого совета
Ширакского центра арменоведческих исследований НАН РА**

Редакционная коллегия:

**Саргис Арутюнян, Арам Калантарян, Ашот Мелконян, Хачик Бадикян, Арам
Косян, Саргис Петросян, Лариса Еганян, Амазасп Хачатрян, Армен Айрапетян,
Карине Базеян, Карине Саакян, Асмик Арутюнян**

**Под редакцией доктора фил. наук,
профессора Серго Айрапетяна**

**Published by arrangement of the Scientific Council
of Shirak's Research Centre NAS RA**

Editing stuff:

**Sargis Harutunyan, Aram Qalantaryan, Ashot Melkonyan, Khachik Badikyan,
Aram Qosyan, Sargis Petrosyan, Larissa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen
Hairapetyan, Karine Bazeyan, Karine Sahakyan, Asmik Harutunyan**

Edited by Doctor of Philology, professor Sergo Hairapetyan

Սարգիս ՊԵՏՐՈՎՅԱՆ

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ღրիստոնեթրյան պայմաններում նորովի մեկնարանված հեթանոսական կարևոր տոռներից է եղել նաև ღրիստոսի Հարության տոռնի հետ համադրված Զատիկը: Հրեական նույնարձույք տոռնի հետ որևէ առնչություն չունեցող մեր Զատիկը իր անվանքը պարտական է հացահատիկին: Զատիկ **q-hասիկ* (սոռնի Անցանակ, Անցարան, Անցիկ քրիստոնեական անուններն են բարգմանությունները հրեական Պատեր անվան):¹ Զ նախածանցը Զատիկ անվան մեջ, ինչպես է այլ դեպքերում ևս, հանդես է գալիս կամ սաստկական նշանակությամբ, կամ որպես սին տարր (բայց որոշ բայերում դրանց «Փիզիկական նշանակությունը փոխում է բարոյականի»): հմնտ. *զարմաճք, զարդ, զեղծ* և այլն:²

Ծաղկազարդից մինչև Զատիկի տևող Զատկաշարաքի և բուն Զատիկի ծիսակարգում կարևոր տեղ էր Վերապահակած հացահատիկներին և նրանցից պատրաստված ուտեստներին, իսկ Ծաղկազարդի կիրակի օրը կոչվում էր «Զատիկի կիրակի»:³ Այդ օրը, Զավախիք բոլոր տներում, օրինակ, հատիկ կոչվող տառեստն էր լինում, որը «փաշած մաքոր ցորեն է՝ հետը քիշմիշ, շաքարի մանրոր և ընկույզ խառնած», իսկ զատկական տնօրիների ժամանակ տներում «փոնջի վրա դրված է լինում թթվամոռ, աղ, խոնճ, հացահատիկներ, ջուր և այլն»:⁴ Գարդմանում (Գանձակի զավառ) Զատիկի նախորդ օրվա տնօրիներից հետո քահանան ստանում էր «կամ մի քանի կոպեկ, կամ ծու, բրինձ, ցորեն և այլն»:⁵

Նախորդ դարաշրջանների համեմատ հացազի բույսերի մշակումը Հայկական լեռնաշխարհում նոր բարձր մակարդակի էր հասել ուրարտական դարաշրջանում:⁶ Ուրեմն, ուրարտական դիցարանում անտեսված չէին լինելու հացահատիկի պաշտամունքն արտացոլող աստվածությունները: Մեր կարծիքով, այդպիսիք էին արական աստվածությունների մի քառյակ կազմած Էլիպորին, Թատահենին, Արարութան և Իրուժինին: Սրանցից առաջինի՝ Էլիպիրի/Էլիպորիի (^ՊElipri/^ՊElipuri),⁷ ուրարտական կարևոր աստվածություններից մեկը լինելու մասին է խոսում այն իրողությունը, որ Ուրարտուում գերազույն աստված Խաղիին ճոնված կորողներից քացի եղել են ևս մի քանի աստվածներին ճոնված կորողներ: Դրանցից հայտնարերպածները ճոնված են Թեյշերային (երկու կորող), Ծիլինիին, Խուտուինիին, Կուեռային և Էլիպորիին (մեկական կորող):⁸ Էլիպորիին ճոնված կորողը հայտնարերլիև է Արմեղի շրջանի Արծվաբերդում, որը հիմք է տվել Ենթաղելու, թե սա եղել է Արմեղի աստվածը, իսկ նրա պաշտամունքը տարածված է եղել Վանա լճի հյուսիսային ափերին Արմեղում և նրա շրջակայրում:⁹ Արմեղի շրջանը ընդիուած XX դ. սկզբները (մինչև Մեծ Եղեռնը) հայտնի էր որպես «հացահատիկների շտեմարան»:¹⁰

¹ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ի, Եր., 1971, էջ 212:

² Արեգ Աշոտի լեզվաբանությանը, Եր., 1965, էջ 188, «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Եր., 1975, էջ 61-64:

³ Այն. Մ'ալիս այս նաև, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. Ա, Եր., 1944, էջ 10, հ. Ի. Եր., 1944, էջ 64:

⁴ B. L. w̄l w̄j w̄ū, *Brylkın*, h. I., *Bp.*, 1983, t̄g 284, 287:

⁵ Նույնի, հ. Ա, Եր., 1988, էջ 449:

⁶ Н. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, стр. 53-101.
⁷ Г. Мелик-Швильи, Урартские клинообразные надписи, М., 1960, № 27, № 104.

⁸ Ա. Հ Ա Ր Ա Կ Ի Ա Բ, Վանի քաջավարության պետական կրոնը (այսուհետև՝ ՎԹՊԿ), Եր.,

⁹ Ե. Աղոթ Աղասի, «Հայաստանի պատմություն (այսուհետև՝ ՀՊ), Եր., 1972, էջ 163,227; ՎԹՊԿ, էջ 56:

¹⁰Թ. Հակոբյան, Ստ. Մելիք - Բայրութի և Հայաստանի և հարակից

Հրցանակների տեղանունների բառարան, հ. I, Եր., 1986, էջ 462:

Այս իրողությունը հիմք ընդունելով, մենք ենթադրում ենք, որ Eliuri դիցանվան մեջ կարող է արտացոլված լինել դիցանվանակիր ասովկածության «հացահատիկային» բնույթը: Eli-puri բաղադրիչներից բաղկացած դիցանվան առաջին բաղադրիչը ներկայացնում է հայերեն Եղի «հասնելու մոտ կարնահամ ցորեն» բառը (հմմտ. «Եղի» -որ և անհամ ցորեան»),¹¹ որի հեղի տարբերակից ունենք հեղիք «բերք, բույս»:¹² Այս բառերի հիմքում հ. ե. *el- «ելնել, բարձրանալ», «աճել» արմատն է, որից ունենք նաև եղանել «գրուս զալ, ծագել, բխել», եղուսա «քրոյսի աճում», եղուզանել «ընձյուղել, ծլել» և այլն:¹³ Ազգակից լեզուների նույնարմատ բառերից են հին հնդկ. rōdati «քարձրանալ», «աճել», ավետ. րաօձաւի «աճում է», զոր. լուծա «աճել», և այլն:¹⁴ Եղի//հեղի բառի վերջնածայն -ի-ն հայերենի բուսանուններ կերտող վերջածանցն է. հմմտ. այժի, զիիի, ծիրանի, կաղճի և այլն:¹⁵ Գ. Զահուկյանը Eliuri դիցանվան մեջ տեսնելով հնդեկրպական միևնույն արմատը, դիցանվանը վերագրում է «եղարեր» (կամ «գոյաբե՞ր») նշանակությունը:¹⁶

Eli-puri դիցանվան երկրորդ բաղադրիչի հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. *sper- «ցանել, ցրվել, սփուր» արմատի մի տարբերակը՝ ազգակիցը հայ. փուլ և փրփուր (<*փիր-փուր) բառերի:¹⁷ Նոյն արմատից են ավետ. fra-sparəγa «ճյուղ»,¹⁸ հուն. σπέρμα «սերմ», σπόρος «ցանք», «սերմ», «պլոտի, բերք, բերքահավաք» բառերը և այլն:¹⁹ Հնդեկրպական նոյն արմատի մեկ այլ տարբերակն է ընկած ապուր բառի հիմքում, որը նշանակում է «ոտելիք, կերակոր», «ջրալի կերակոր, սուայ», նաև «ապուր միջոց»²⁰ (սրանում ա-ն նախահավելվածական ձայնավոր է): Ապուր-ի արմատակից բառերից հնչյունական տեսքով նրան առավել մոտ է ապուր-ը՝ չնայած «անսուների կեր, խոտ, դարման» նշանակությամբ²¹ վերջինս, կարծես թե, հեռու է ապուր-ից: Մրանց իմաստաբանական սերտ կապի մասին է խոսում արմատակից բառերի հետևյալ շարքը. այսուու «կճյուն, ճիլ, սեզ, շամբուսի ելեզ», այլու «վարսալի նման մի խոտեղեն է», այլերու «ցորենի նման, բայց վնասակար մի բոյս», այլու «հացի մի տեսակ (մատնաքաշ կամ բոքոն)», այլուն (<*պուռ-դոն> «քաղաքաջ», պուռնք, «մեծնաքրդոչ» (վերջիններիս մեջ՝ դռն նշանակում է «մի տեսակ հաց, պաքսիմատ» <հ.-ե. *dhon->):

Քերպած բառերի հիմքում ընկած է *sper-արմատի *spur- տարբերակը, որով դեռևս վաղ նախնադարում կոչվել են ինչպես խոտակեր կենդանիների համար ուտելի խոտազգի սիզարույսերը (որանք «ցորենի ու զարու նման, բայց ավելի կարծ ու բարակ» բույսեր են),²² այնպես էլ մարդկանց համար ուտելի նրանց սերմերն ու դիօւլա վայրի հացահատիկները: Մեր բառերի պուր/պուռ արմատի հ.-ե. *spur- նախաձեկից սերած լինելու մասին են խոսում նրա *p(h)ur- տարբերակից ծագած ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին անզլ. fyrs, ոռս. ուրեք «սեզ», հին պուս. րուր «որոն», հուն. πυρός «ցորեն», πύρον «ցորենիաց», լիտվ. rūraī, լատիշ. rūri «աշնանացան ցորեն», հին հնդկ. rūra «կարկանդակ» և այլն:²³ Այս բառերի շարքը պետք է դասել նաև հնդեվ-

¹¹ Բառգիք հայոց, Քննական բնագիքը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 87:

¹² ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 19:

¹³ Նոյն տեղում, էջ 8:

¹⁴ Նոյն տեղում, էջ 9:

¹⁵ Նոյն տեղում, հ. I, էջ 166, հ. IV, Եր., 1979, էջ 627::

¹⁶ Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Հայկական շերտը ուրարտական դիցարանում (այսուհետև՝ ՀՇՈՒ), «Պատմա-բանասիրական համդեն» (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, թիվ 1, էջ 54, 57:

¹⁷ ՀԱԲ, հ.IV, էջ 531, 535:

¹⁸ Տ. Գ ա մ կ ր ե լ ի ճ ե, Վ. Ի վ ա հ ո ւ վ, Ինդոեվրոպեйսкий язык и индоевропейцы (այսուհետև՝ ԻЯИ), տ. I-II, Տօ., 1984, տ. I, стр. 205.

¹⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 531, 535:

²⁰ ՀԱԲ, հ. I, էջ 210, 239: ՀԲԲ, հ. I, Եր., 1944, էջ 210:

²¹ ՀԲԲ, հ. I, էջ 210:

²² ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 210:

²³ ԻЯИ, տ. II, стр. 657.

բռպական որևէ լեզվից փոխառյալ վրացերեն պուրի «հաց» բառը:²⁴ Ասվածները հիմք են տախու Ելիրու դիվանունը ստուգարանել որպես «քեռահաս հացահատիկ»:

«Սիերի դրամ» դիցանվանացանկում Էլիպուրիին նախորդում է հնդեվրոպական ծագումով Կուտօսա աստվածը, որի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել Ուրարտական թագավորության կազմավորումից շատ առաջ:²⁵ Ուիա//Վիա դիցուհու հետ զոյզ կազմած Կուտօսան եղել է պատղաբերության և ջրի անձնավորում աստվածություն՝ (հննտ. ²⁶Quera/Կուտօս և կաւառ-ն «ջրի նեղ առու», իսկ ու/աւ հննտ. շուառն//շաւառն, շուշ//շաւշ, տուար//տուար և այլն): ²⁷Միա//Միա դիցանունը ևս հնդեվրոպական ծագում ունի: Նրա մեջ դժվար չէ տեսնել հ.-ե. *Աւանահամեր՝ ծագած *Աւե-/*Աւ- «ողորել, հյուսել» արմատից: Այս նախամերից և նրա տարրերակներից սերած բառերից են հայ. զի/զիկի, զինի, ինչ հնդկ. ուայ «ճյուղ», հուն. սիήն «խաղողի վազ», լատին. և այլ անուններում, ինչ պավ. ույա «ճյուղ», լիսով. ույյան «ողորում եմ» և այլն:²⁷ Բուսական աշխարհին առնչվող այս բառերը առաջացել են հնդեվրոպական հեռավոր անցյալում առանձին բոյսերի ողորվելով աճելու պատճառով («խաղողի վազ»>«խաղող»>«զինի»), իսկ ծառերի մասունք ճյուղերի՝ ողորվելով հյուսվելու կարողության պատճառով (այստեղից էլ՝ «կապ» և այլ նշանակությունները): Ուրեմն, Վիան լինելու եր բուսաշխարհի անձնավորում մի դիցուհի, իսկ Էլիպուրին եղել է պատղաբերության աստված Կուտօսային և բուսականության դիցուհի Վիային ուղեկցող մի աստվածություն՝ գուցե հենց նրանց որդին:

Նոյնին պետք է ասել նաև Էլիպուրիի հետ քառյակ կազմած իրարահաջորդ երեք աստվածությունների մասին, մանավանդ որ նրա նման սրանք ևս կրում են «հացահատիկային» ստուգարանությամբ անուններ: Արական այս աստվածությունների քառյակի գոյության մասին է խոսում այն փաստը, որ սրանց գուգակից չորս դիցուհիները (և միայն նրանք) կրում են միևնույն ²⁸Աին («Աինա») անունը:²⁸ Իսկ քառյակի գոյությունը, մեր կարծիքով, կապ ունի ցորենի վեգետացիայի տևողության հետ: Հայկական լեռնաշխարհի բարձրադիր շրջաններում գարնանացան ցորենի վեգետացիան տևում է մոտավորապես 4 ամիս. օրինակ, Սիսիանում այն 117-120 օր է, Վարդենիսում՝ 122-128 օր:²⁹ Այս առիվ նշենք, որ Ուրարտուում ևս ընդունված էր տարվա ամիսներից բաղկացած լինելու գաղափարը:³⁰ Ցորենի վեգետացիայի 4 ամիսների և հիշյալ քառյակի համապատասխանությունը հուշում է, որ այս աստվածությունները եղել են Արա Գեղեցիկի տիպի աստվածություններ կամ համարվել այդպիսի մի աստվածության չորս դրսևորումները: Բոյսերն ու հացահատիկը առհասարակ պատկերացվել են գեղեցիկ երիտասարդի կամ պատանու տեսքով, իսկ Արան եղել է հողին, բուսաշխարհին և մասնավորապես հացահատիկներին առնչվող մի աստված, խորհրդանշելով «աշնանը մեռնող և գարնանը հատնող բուսականությունը, ծլոր, հաստնացող, հնձվող ու կալավող հացահատիկը՝ մեռնողի ու հատնողի ցիկլային հավերժ կրկնություններով»:³¹

Առավելաբանական ինչ պատկերացումների համաձայն, հնձում-կալսում գործընթացը համարժեքն էր հացի ոգու, հացահատիկի անձնավորում աստվածության շարշարանքների և սպանության,³² իսկ երբ նա բաղկաւ և հայտնվում էր անդրշիրիմյան աշխարհում, ապա՝ արտացոլում էր հացահատիկի ամբարտում ու նոր ցանքը:

²⁴ В. Г е о р г и е в, *Исследования по сравнительно-историческому языкоизнанию*, М., 1958, стр. 216.

²⁵ Ս. Հ մ ա լ յ ա ն, Կուտօս-Կուտօս աստվածության պաշտամունքը հայկական լեռնաշխարհում, ՊԲՀ, 1990, թիվ 1, էջ 152-166:

²⁶ Նոյնին: Ս. Հ մ ա լ յ ա ն, Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին, ՊԲՀ, 1975, թիվ 1, էջ 160, ՎՃՊԿ, էջ 27, 50-55:

²⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 627, ԱՅԱ, թ. II, стр. 649-650.

²⁸ ՎՃՊԿ, էջ 27:

²⁹ Ա. Մ ա թ և լ ո ս յ ա ն, Ցորեն, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Եր., 1986, էջ 168:

³⁰ ՎՃՊԿ, էջ 78:

³¹ Ա. Մ ա թ և լ ո ս յ ա ն, Հին հայոց հակատալիքները, Կրտնը, պաշտամունք ու դիցարանը, Եր., 2001, էջ 26-27:

³² Հ. Ա ր յ ո ն յ ա ն, *Отражение древневосточной жатвенной мифологии в загадке о пшенице, «Ларвեր հասարակական գիտությունների»*, 1969, N 11, стр. 67-77.

Ըստ այսմ, հասկանալի էր թե ինչու «Սների դրան» դիցանվանացանկում քայլակը եղ- ուափակող Իրմուշինին հաջորդում է անդրշիրիմյան մի աստվածություն՝ «Հոգիներ վոխսադրող աստվածը»:³³ Յանք/քառում առասպելաբանական նույնացնան հե- տևանքն է դիր/տիր բառը, որը նշանակում է թե՝ «ցորեն սերմանելու մի առանձին ձև, որ առան և ընտիր ցորեն է տալիս», թե՝ այն տեղը, «որտեղ դրված են ննջեցյալների մար- մինները, շիրին, գերեզման»:³⁴ Հ. Աճառյանի կարծիքով, այս բառը ծագում է դժնի բայի դի արմատից (<հ.-ե.*dhe-)՝ ու մասնիկով, իսկ Վ. Բդյանի և Ս. Երևանյանի կարծիքով, սրա նախնական տիր տարրերակը ծագում է հերանոսական Տիր աստծու անունից:³⁵ Ի նկատի առնենք, որ Տիրը ոչ միայն ոպրության աստված էր, այլև «առել է մարդկանց հոգիները և ուղեկցել անդրաշխարհ»:³⁶ Իր այս վերջին գործառությունը Տիրը հիշեցնում է «Սների դրան» դիցանվանացանկում «հացահատիկային» քառյակին հաջորդող «Հո- գիներ վոխսադրող աստվածությանը»: Ի դեպ, հայոց մեջ մինչև XX դարի սկզբները գո- յատևում էր մի սովորույթ, որը պահանջում էր Զատկին ոչ միայն ցերեկը, այլև գիշերը սեղանը լի, իսկ դրուերն ու պատուհանները բաց պահել, որպեսզի իրենց կենդանի հա- ռազատներին այցելող նախնյաց հոգիները կարողանան օգտվել ընդհանուր հյուրափ- ուրյունից:

Հացահատիկի ցանքից մինչև հասուն հասկերի կալսումն ու երնումը դրսի աշ- խատանք էր և տղամարդու գործ, իսկ տուն հասնելուց հետո մինչև նրա հաց դառ- նալը՝ ներսի աշխատանք էր, կանացի գործ: Այս դեպքում ևս արժեն հիշել հանրահայտ առածը՝ «Ծղամարդ որ կա՝ դրսու պատ է, կնիկը՝ ներսի»:³⁷ Ըստ այսմ, Արմի դիցու- իմները, լինելով «հացահատիկային» չորս արական աստվածությունների իգական գոյցերը, համարվելու էին անձնավորումները և հովանավորները հացահատիկի հետ տնային պայմաններում ընթացող չորս իրարահաջորդ գործողությունների՝ աղալու, մարդկու, խնդր շաղվելու և հաց թխելու: Որ այս գործողությունները գուտը կանացիական են եղել, ցույց են տալիս հայ ազգագրության նյութերը: Մինչև ջրաղացի գյուտը աղալը ևս այդպիսի գործ է համարվել, հմնու. աղալ բառի հետ նույնարմատ աղջօ>աղջիկ և աղավիսին բառերը:³⁸ Ի դեպ, դա իր արտացոլումն է գտել նաև «Սասնա ծոերի» բազմաթիվ պատումներում (օրինակ, Կուզբաղն «Քառուն ազապ աղջիկ կը տանը՝ երկանք աղան»):³⁹ «Հացահատիկային» չորս աստվածությունների իգական գոյցերի միևնույն Արձիներ (Այնան) անվանք հանդես գալը կարող է արձագանքը լինել նախկինում նրանց միևնույն դիցուհու չորս դրսորումները լինելու իրողության: Իսկ այդ դիցուհին անձնավորելու էր հանապազօրյա հացը:

Արական քառյակի երկրորդ աստվածը Թառափինին է, որի, ինչպես նաև չորրոր- դի՝ Իրմուշինի, անվան մեջ կարելի է առանձնացնել -ու վերջնամասը՝ նույնական հմեխլուպական ծագումով հայերենին -ին վերջածանցի հետ (հմնու. ամուսին, դարրին, լուսին և այլն):⁴⁰ Tarrat-ini դիցանվան իիմքը Գ. Զահուկյանը համեմատում է հայերեն բառ «քառել, բարձր տեղ նստել» բառի հետ և, Էլիպուրի, Իրմուշինի դիցանվունների նման, այս դիցանվանը ևս վերագրում է հայկական ծագում:⁴¹ Շիշտ է, որ հայերեն բառ բառի հիմքում հ.-ե. *t̪rs- «ցորանալ, ցանաքել» արմատն է:⁴² Սակայն, մեր դիցանվան դեպքում պետք է ի նկատի առնել ոչ թե բառի բարձր տեղադրությունը, այլ նրա չո- րությունը՝ բառը չորացած ճյուղն է, և այդ չորությունը, այս դեպքում, վերագրել հասուն հատիկին, չորս հասկին (ի տարրերության եղիի, որը կանաչ հասկի անհան հատիկն է):

³³ Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Հայոց լնզի պատմություն (իին շրջան), Եր., 1961, էջ 138: «Հայ ժողովրդի պատմության քրեսունատիա» , հ. I, էջ 47, ծան. 2: ՎՃՊԿ, էջ 27:

³⁴ ՀԲԲ, հ. I, էջ 523:

³⁵ ՀԱԲ, հ. I, էջ 675: Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ իրաս., հ. I, Եր., 1971, էջ 805-806:

³⁶ Ս. Հ ա ր ո թ թ ն յ ա ն, Հին հայոց հավատալիքներ..., էջ 45:

³⁷ Ս. Հ ա ն ա լ ա ն յ ա ն, Առածանի, Եր., 1960, էջ 204:

³⁸ Ս. Մ ե լ ե, Հայագիտական տառմանակրություններ, Եր., 1978, էջ 227-228:

³⁹ «Սասնա-ծոեր», ժողովրդական վեպ, հ. I, Եր., 1936, էջ 70 (նաև էջ 183, 264, 346, 406, 504, 669, 772, 802, 823, 1001, 1051, 1104 և այլն):

⁴⁰ ՀԾՈՒԴ, էջ 51-57:

⁴¹ ՀԱԲ, հ. II, էջ 154-157:

Այսպիսով, Թառախնին, ի տարբերություն Ելիափորիի, իսկապես լինելու էր հասունացող-հասունացած հացահատիկն անձնավորած աստվածություն:

Քառյակի երրորդ աստվածության՝⁴² Adaruta անվան մեջ Գր. Ղափանցյանը տեսնում է արամեական Atar//Attar (աքաղ. Istar) դիցանունը և արամեա-աստրական -սթա իգական սեռի ցուցիչ վերջածանցը, այս աստվածությանն համարելով, ծննդի, բազմացման և, հավանաբար, որպես բուժիչ դիցուիի:⁴³ Բայց հայտնի է, որ Աղարության իգական աստվածություն չէ: «Սիերի դրան» դիցանվանացնկում նա հիշատակված է 35 արական աստվածությունների շարքում: Adaruta-^{*ad-ar-}ստ դիցանվան մեջ ad-արմատից բացի առկա են -ar և -ստ հնդեվրոպական ծագմամբ Վերջածանցները: Մրանցից առաջինը զուգահեռն է հայերեն -ար (հմնտ. *արդ-ար, զալ-ար, պալ-ար* և այլն), իսկ երկրորդը՝ -ոյթ (հմնտ. *եղ-ոյթ, երեւ-ոյթ, զ-այր-ոյթ* և այլն), հնդեվրոպական ծագմամբ Վերջածանցների:

Adaruta դիցանվան ^{*ad-} արմատը ևս հնդեվրոպական ծագում ունի և, մեր կարծիքով, նույնական է հ.-ե. ^{*Had-} (^{*Hat-}) արմատի հետ: Վերջինս է առկա հայ. *հատ*, *հատիկ*, ավեատ. ածն-*frādāna* «ցորենաշատ», լատին. ador «հաճար», զոթ. atisk «սերմ» բառերի հիմքում:⁴⁴ Այս նույն արմատն է առկա լինելու նաև հուն. ἀθήρ «հասկի քիսու», «փողոք՝ հասկի և ծորսի խոշոր կտրուտանք» բառում (հավանաբար, նաև եզիպտական ծագում վերագրված հունարեն աթիրա «ալյուրով կամ մաքրած ցորենով պատրաստված կերակոր» բառում):⁴⁵ Հունարեն արմատակից աթիր և աթիրա բառերի միջոցով հաստատվում է մեր *հատ*, *հատիկ* բառերի և *հատանել* բայի *հատ* արմատի նաև իմաստարանական փոխադարձ սերս կապը, որովհետև *հատանել* նշանակում է նաև «կտրել», իսկ նրա *յատանել/յատել* տարրերակը՝ «կտրել, մանավանդ ծառի ճյուղերը կտրել», «ծառերի կամ մանավանդ որքի ավելորդ ճյուղերը կտրել»:⁴⁶ Վերջիններիս արմատակից հայերեն հետևյալ բառերը ցույց են տալիս հնդեվրոպական ^{*Had-} արմատի հմաստային զարգացման ընթացքը. *հատ* «մեկ հատիկ սերմ, ունի, մանավանդ ցորենի կամ որիշ հացարույսի», *հատիծ* (<հատ-իծ), «կտու», *հատիկ* (հատ-իկ) «սերմ», «խաշած ցորենով պատրաստված մի ուտելիք»:⁴⁷ Բացառված չէ, որ նոյն հնդեվրոպական արմատը լինի նաև *հասկ* (<^{*Had-sk?}) և *հաց* (<^{*Had-sk?}) բառերի հիմքում:

Աստվածությունների քառյակը եզրափակում է ^{*Irmušini-}ն, որի կարևորության մասին է խոսում թեկուզ Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.) կողմից նրան ձռնված տաճարը Հայկաբերդում (Զավուշ-թեփե հնավայրը):⁴⁸ Գր. Ղափանցյանը Irmušini դիցանվան հիմքում տեսնելով խեթ. irma «հիփանդրություն» բառը, անվանակիր աստվածությանը վերագրում է բուժիչ գործառությունը:⁴⁹ Գ. Զահուկյանը այս դիցանվան վերջնամասում տեսնում է հայ. ^{*սին} (>սնել) արմատը՝ «ենթադրության սահմաններում» ձևակերպումը:⁵⁰ Մեր կարծիքով, Irm-սշ-ուն բաղադրիչների բաժանվող դիցանվան առաջին բաղադրիչի մեջ կարելի է տեսնել հնագույն հայերենի ^{*երմ} արմատը՝ պահպանված երմուկ (*<երմ-ուկ) բառի մեջ: Երմուկ նշանակում է «ալիր վարսակոյ, գարոյ, ցորենոյ խոշոր աղացեալ», «ալիր խոշոր եւ սենագոյն», «ձավար», «ցորենի թեփ» և համարվում է փոխառյալ քրք. իրմիկ «կորկոտի շատ նանրը» բառից:⁵¹ Հ. Աճառյանն այս վերջինիս առքիվ գրում է, որ «քուրք բառը չունի Բյուզանդ, բայց սովորական է օսմաններենի մեջ»:⁵² Իսկ դա նշանակում է, որ քուրքական մյուս լեզուներում բացակայող և միայն օսմանյան (փոքրասիական) բուքրերենում առկա այս բառը բուր-

⁴² Гր. К а п а н յ ա ն, Историко-лингвистические работы, Ер., 1956, стр. 196-198.

⁴³ ИЯИ, т. II, стр. 655.

⁴⁴ Древнегреческо-русский словарь, составил И. Дворецкий, т. I, М., 1958, стр. 43;

⁴⁵ ՀԱԲ, հ. I, էջ 88:

⁴⁶ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 50-51, 386:

⁴⁷ ՀԱԲ, հ. III, էջ 50-51,

⁴⁸ ՎԺԹԿ, էջ 56, 123, ծան. 4:

⁴⁹ Гր. К а п а ն յ ա ն, Աշվ. աշխ., տ. I, Ер., 1975, стр. 191.

⁵⁰ Գ. Զ ա հ ո կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԾ), Եր., 1987, էջ 444:

⁵¹ ՀԱԲ, հ. II, էջ 46, ՀԲԲ, հ. I, էջ 577, 602:

⁵² ՀԱԲ, հ. II, էջ 46:

քական ծագում չունի: Մեր կարծիքով, այն փոխառյալ է հացազգի բոյսերի մշակության բնագավառում հազարամյակների փորձ ունեցող տեղաբնիկ նաևակյաց բնակչության լեզվից՝ հայերենից:

Երմուկ (տարբերակները՝ *իրմուկ*, *երմուկ*) բառի հայերենում բնիկ լինելու մասին են խոսում հետևյալ փաստերը. ա) Այս բառը հայերենին բնորոշ կազմություն ունի՝ կազմված է *երմ արմատից՝ -ուկ վերջածանցով. *երմ-ուկ>երմուկ (որից՝ *իրմուկ*, իսկ երմուկ՝ *երմություն* «քերքի և կենսամթերքների առատություն» բառի ազդեցությամբ): բ) Բառի երեք տարբերակներում էլ առկա է մեր բուսանուններում հաճախ հանդիպող -ուկ վերջածանցը՝ հայերենի հնդեվրոպական ծագումով ամենազործուն վերջածանցներից մեկը (բուսանուններից հմտն. *ավելուկ*, *գայլուկ*, *կամեփուկ*, *պատաստուկ* և այլն).⁵² գ) **Երմուկ** բառի *երմ բաղադրիչը մ աճական մասնիկով ներկայացնում է *եր արմատը՝ իր տարբերակներով առկա հայերեն ուրիշ բառերում ևս: Հ.-Ն. *er-/*or-/*r-արմատից ծագած բառերից մեկի՝ *արմ* «արմատ» բառի, վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. «Քնիկ հայ բառ՝ հիմյուր բառում է հմաստով նրան ուսուցից լեզուների բառերը (հուն. ὄρμενος «ցողուն, ընձյուղ, ծիր», ՚έρνος «ծիր, ճյուղ», հին իսլ. րենն «ծիել, ամել», րան «ճյուղ», իբզ. րոնո «կլոճ, ծափ բուն» և այլն):⁵³ Արմատի այս նույն տարբերակից է լինելու նաև արմայ (<արմ-այ>) բառը, որը նշանակում է «եզիպտացորենից պատրաստած կորկոտ», «փոշոր աղացած ալյուր, որը եփում են պուտուկի մեջ և վրան յուղ ածելով ուսում, խաշիլ»:⁵⁴

Հնդեվրոպական er-/*or-/*r- արմատի⁵⁵ երկրորդ տարբերակից են հետևյալ բառերը. որուն «փոտազզիների կարգից օարիների ցեղին պատկանող բույս...», որայ «ցորենի կամ գարու խորձ» (>որային, որային), որան «քաղած հունձ, որ պետք է կալավի», գուցե նաև որիզ(ն) «քրիմձ» (որ-իզ հմտն. խոր-իզ//խոր-ինձ, կոր-իզ//կոր-ինձ): Արմատի եր-/որ-/ար- տարբերակների առին նշենք նաև, որ ո և ր բաղաձայներից առաջ հազվադեպ չէ ե/ո/ա հերթագայությունը հայերենի մի շարք արմատակից բառերում:⁵⁶ Այսպիսով, Իրուսին դիցանկան առաջին բաղադրիչը ներկայացնում է երմուկ (երմ-ուկ) բառի հիմքը՝ ծագած հ.-ե. արմատի վերին ձայնդարձից: Նրա երկրորդ՝ -ս-, բաղադրիչից հնչյունական համարժեքի անորոշության պատճառով առայժմ ձեռնպահ ենք նույն նրա ստուգաբանության փորձից, իսկ երրորդ՝ -ու, բաղադրիչը, ինչպես նախապես նշվեց, հմապատասխանում է հայերենի հնդեվրոպական ծագմամբ իմ վերջածանցին:

Հայասական դիցարանում կար ^DTerittituni- կոչված մի աստվածություն: Նրա կարևորության նախին խոսում է այն փաստը, որ հայասական ամենահարգի 14 աստվածություններից ցուցակում, Սուպիլլիումա-Խոլկանա պայմանագրի համաձայն, նա գրադեցնում էր 8-րդ տեղը:⁵⁸ Որ նա սերտ առնչություն է ունեցել հացահատիկի պաշտամունքի հետ, կարեի է կոսիել արդեն նրանից, որ հիշատակված է խաղողագործության հովանավոր ^DՍուպաշտա-ից անմիջապես առաջ: Ինչպես պարզվում է հիշյալ դաշնագրից, հացահատիկային բոյսերի նշակումից հետո և անասնապահությունից առաջ Հայասայի զյուղատնտեսության մեջ կարևոր տեղ է զրավել խաղողագործությունը: Դաշնագրի խզման դեպքում խեր բազավոր Սուպիլլիուման (մ.թ.ա. 1380-1346թթ) հայասացիներին սպասնում էր, թե կոչնչացվեն «ձեր տները, ձեր դաշտերը (իմա՝ արտերը), [ձեր բնակավայրերը], ձեր խաղողի այգիները, ձեր մարգագետինները (իմա՝ արտերը), ձեր խոշոր ու մասն անասունները, ձեր ամրող ունեցվածքը»:⁵⁹ Terittiuni աստվածության հացահատիկ աղալու գործընթացն անձնավորելու մասին է

⁵² ՀԼՊՆԺ, էջ 232, 356:

⁵³ ՀԱԲ, հ. I, էջ 327:

⁵⁴ ՀԲԲ, հ. I, էջ 274:

⁵⁵ ՀԱԲ, հ. III, էջ 384:

⁵⁶ ՀԲԲ, հ. III, էջ 580, 583, 586:

⁵⁷ ՀԱԲ, հ. I, էջ 253, 263, 291, 292, հ. III, էջ 575-576, 584-585, 586:

⁵⁸ Keilschrifturkunden aus Boghazköy, Berlin, XXVI, 39, IV, 30.

⁵⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 199: ՀՊ, էջ 37:

խոսում նրա անվան ստուգարանությունը: Գ. Զահուկյանի հետևողամբ, մենք ևս չենք կարծում, թե այս դիցանոնք «եռագի, եռապո» է նշանակում:⁶⁰

Մեր կարծիքով, Terit – tituni բաղադրիչներից կազմված դիցանունը իր առաջին բաղադրիչի հիմքում ունի վերոհիշյալ դիր/սիր բառը, որը, ինչպես տեսանք, նշանակում է «ցորեն սերմանելու մի առանձին ձև, որ առատ և ընտիր ցորեն է տալիս», բայց որից ոններ նաև դիր ցորեն բառակապակցությունը, որը նշանակում է «զիրով մշակված սպիտակ ընտիր ցորեն»:⁶¹ Ըստ Երևոյթին, ուղղակի ծագումնաբանական կապ գոյություն ունի նրանց և տրէ (քրք. դրա) բառի միջև. տրէ <*տիր-է: Այն նշանակում է «հայու ինչ յալերէ եւ ի ձուոց հատեալ նման թելահայի», այսինքն՝ «դրմաճ, երիշտա», «տեղական մակարոն, որ պատրաստում են պինդ խմորից»:⁶² Կարծում ենք, որ նոյնական կապի գոյությունը չի բացառվում նա. հայասական դիցանվան, հիշյալ բառերի և բարբառային թիրիր (<*թիր-իր) բառի միջև, որը նշանակում է «հացահատիկներով և չիրով պատրաստված ջրալի կերակորիք»: Դ/ո/թ համապատասխանության տեսանկյունից հմնտ. դերկուկ/ստերկուկ/ստերեկուկ//թերեկուկ/ թերեկուկ բուսանունը:⁶³ Թիրիր-ը կազմված է -իր վերջածանցով (հմնտ. զալիր, կնճիր, սամիր բառերը և բրիր, գնիր, Չուիր և այլ անձնանունները): Նոյնը կարելի է ասել և դիցանվան terit-նասում առկա -իտ վերջածանցի նասին. հմնտ. հ.-ե. -et (հ)- կամ -ed-//et- անվանական և հիմքակազմ վերջածանցները:⁶⁴ Ինչպես տեսնում ենք, *դիր/*տիր /*թիր արմատով կազմված բառերն առնչվում են նախ ցորենին ապա՝ նշում հացահատիկով և ալյուրով պատրաստված կերակրատեսակները: Ըստ այս, արմատի նախնական նշանակությունը պետք է լիներ «ցորեն» կամ «հացահատիկ»:

Հայասական *Terit-tituni դիցանվան երկրորդ մասի՝ *tituni-ի հետնորդն ենք մենք տեսնում ի դեմս հայերեն տառուն (<*տիտ-ուն) բառի՝ կազմված –ուն վերջածանցով (հմնտ. բեղ-ուն, իմաստ-ուն, ծեղ-ուն և այլն).⁶⁵ Tituni նշանակում է «չախչախ՝ փայտի շերտ, որ մի ծայրով ամրացած է ջրաղացի կրիճակին և մյուս ծայրով ընկած է ջրաղացքարի վրա, որի պտտվելիս ցնցվում է և ցնցում հաղորդում է կրիճակին, որից ցորենը դանդաղաբար հոսում է ներքև և աղացվում»:⁶⁶ Ի նկատի առներով հ.-ե. *ձա-«քաժանել, տրնել, ծեղթել» արմատի ածանցյալ ձևերի, նրան առնչվող ուրարտական սեպագործյան լեզվի did- «քաժանել, անջատել» բառի⁶⁷ և հայերեն բարբառային տիտիկել (<տիտ-իկ, տէտ-իկ») «փետրատել, բզիկ-բզիկ անել» բառի⁶⁸ գոյությունը. տառուն բառի տիտ (<>հ.-ե. *did-) արմատին ևս կարելի է «վերաբեր դրանց մոտ իմաստ, հավանաբար, «անջատել, աղալ» նշանակությամբ: Այսպիսով, Terit-tituni- դիցանունը ծեռք է բերում «ցորենը թեփից անջատող», այսինքն՝ «ցորեն աղացող» իմաստը:

Ի դեպ, Ուրարտուի բնակչության բարձր կոչված խավի⁶⁹ անվան մեջ ևս կարելի է տեսնել նոյն ֊p(h)ar-«հացահատիկ, հաց» արմատը, իսկ անվանը վերագրել «հացահատիկ մշակողներ» կամ «հացագործներ» իմաստը: Pur-âli բառաբարդի -âli վերջնամասը, ըստ Երևոյթին, հոգնակիակերտ է՝ համարժեք Aramâle, Դարանադի, Սամազի, Սարդադի զավառանուններում առկա -alê// -աղի տեղանվանակերտի⁷⁰ (իմաստի

⁶⁰ ՀԼՊՆԺ, էջ 329, գ.ր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 62-63:

⁶¹ ՀԲԲ, հ. I, էջ 523:

⁶² ՀԲԲ, հ. IV, էջ 436: ՀԲԲ, հ. I, էջ 501: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաև քրել (<*քիր) «այսուր շաղախել, խմոր շինել» բայլը: Հ.-ե. *մո-նախաձեկց նրա սերած լիմելու մասին է խոսում հունարեն նոյնածագություն թէլօ (terio) «ոռորել, հարել», «մնշել, սեղմել» բայլը:

⁶³ ՀԲԲ, հ. IV, էջ 398:

⁶⁴ ԻՐԱ, բ. I, ստ. 218, 248, 346.

⁶⁵ Գ. Զահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 234:

⁶⁶ ՀԲԲ, հ. IV, էջ 8, 443:

⁶⁷ Գ. Ջյակյան, Վզայություն ինդոեվրոպեական, խորրիտско-սարդարական և կավականական լեզուներու մասին, Երևան, 1967, ստ. 21, 66, 124.

⁶⁸ ՀԲԲ, հ. IV, էջ 414:

⁶⁹ Ի. Դ յ ա կ օ ն օ վ, Ի. Մ ե ծ է ծ կ ա յ, Սարդարական գույք և արքայություն, Հայաստան, 1987, N 3, ստ. 207-208.

⁷⁰ Հ. Ա ծ ո ն ց, Արմենիա և արքայություն, Երևան, 1971, ստ. 55-56.

տեսանկյունից հմնտ. «այր՝ «Հայաստան» և «հայեր», Վիրք «Վրաստան» և «վրացիներ», Պարքեր «Պարքաստան» և «պարևներ» և այլն):

Ավելացնենք, որ ուրարտական դարաշրջանում Սիփան սարը կոչվում էր Adduru⁷¹ (<*ad-duru): Լեռնական առաջին բաղադրիչը նույնական է Adaruta դիցանվան և հատ «հատիկ» բառի հետ (<h.-t. *Had-), իսկ երկրորդ բաղադրիչը հայերեն տուր-ք բառի ավելի հին ձևն է (<h.-t. *dōr-> hniն. ծարօն «պարզն, նվեր»):⁷² Ուրեմն, Adduru նշանակում է «հատիկասու (լեռ)»⁷³

УРАРТСКИЕ БОЖЕСТВА ЗЕРНА

— Резюме —

— С. Петросян —

Божества Элипуря, Тараини, Адарута и Ирмушини урартского пантеона индоевропейско-армянского происхождения. В теониме Elipuri<*eli-puri наличествуют и.-е. корни *el- “подниматься”, “вырастать” и *p(h)ūr- “пшеница”: ср. арм. եղի “незрелая пшеница” и шашпир “пшца”, “суп из пахты” и т.д. В основе теонима Taraini <*tara-ini лежит и.-е. корень *tr̥s- “сохнуть, обсыхать” и суффикс -ini индоевропейского происхождения: ср. тот же суффикс в урартских теонимах Siwini, Hušuni, Nalaini и т.д., а также суффикс -ին, в армянских словах անոն-ին, պար-ին, լուս-ին и т.д. Теоним Adarutu состоит из компонентов *ad-ar-uta. Первый из них идентичен с и.-е. корнем *Had-“зерно”>арм. հատ, հատիկ “зерно”, а второе и третье – суффиксы и.-е. происхождения: ср. арм. արդար, զալ-ար, պալ-ար с одной стороны, а с другой- ել-ոյր, երեւ-ոյր, զայր-ոյր и т.д. В теониме Irmušini <*Irm-uš-ini наличествует тот же корень, что и в арм. слове երմուկ//իրմուկ “пшеничная крупа, ячменная крупа, мучная крупа”, “толокно”. Она одного происхождения с армянскими словами արմ, արման “корень” (<и.-е. *t̥- “подниматься, воскреснуть”) и արմայ “кукурузная крупа”, “мучная крупа”, “жиза”. Компонент -uš- в этом теониме не поддается этимологии ввиду неопределенности звукового состава, а компонент -in(i) представляет вышеупомянутый суффикс. По всей вероятности, божества Элипуря, Тараини, Адарута и Ирмушини являются олицетворениями следовавших друг за другом фаз вегетационного цикла созревания пшеницы.

⁷¹ Н. Арутюнян, Топонимка Урарту, Еր., 1985, стр. 12-13.

⁷² ՀԱԲ, հ. IV, էջ 357:

⁷³ Սիփանի ստորատին զտնվող Արծկեի զավառի վերաբերյալ Գ. Խրվանձտյանց գրում է. «Օդ զավառին բարեխառն. լեռանց կողմերը զով և Սիփան զազարը մշտաձյում: Հողը բերքի և ընտիր գորեն ու խոտ կը բերե» (Գ. Մրվանձտյանց, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 406):

Հույնե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊՈՆՏՈՍԻ ԱՐՁԱՅԱԿԱՆ ԵՎ ԳՈՒԳԱՐՁԻ ԲԴԵՇԽԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Աքեմենյան տերության սահմանը Կովկասում հասնում էր մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթա: Հերոդոտոսի վկայությամբ «մինչև այդ լեռը տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հյուսիս (ընկած երկիրը) հաշվի չի առնում պարսիկներին»:¹ Աքեմենյան աշխարհակալության համար կենական անհրաժեշտություն էր ներկայացնում Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնացքների հսկողությունը, որպեսզի թույլ չորփի «պարսիկներին հաշվի չառնող» սարմատական և լեռնցի բարբարոս ցեղերի մուտքը աշխարհակալության մեջ մտնող երկրները: Այդ պատասխանատու գործի իրականացնումը պետք է դրված լիներ տեղական սատրապների վրա: Դարիալի լեռնացքի գոտում դա իրականացնելու էր Հայաստանի սատրապը, իսկ Դերբենդի լեռնացքի գոտում՝ Մարաստանի սատրապը:

Աքեմենյան աշխարհակալության վիլոգման ժամանակ Մարաստանի սատրապն էր Աստրապատը (Աստրապատես), որը մ.թ.ա. 331թ. Գավամելայի ճակատամարտին մակեդոնացիների դեմ հանել էր ոչ միայն իր մարերին (մեղացիներին): Արիանոսի վկայությամբ, «Մեղացիներին առաջնորդուն էր Աստրապատեսը, և մեղացիների հետ մարտակառով շարված են եղել կադրումները, աղվանները և շակաշենցիները (Տակեսինո)»²: Արիանոսի մեկ ուրիշ վկայության մեջ ևս այս ցեղերի ներկայացուցիչներն իհշատակվում են աքեմենյան բանակի շարքերում³, այսինքն, հաստատվում է այդ ցեղերի Աքեմենյանների հայտակները լինելու փաստը: Աքեմենյան աշխարհակալության կործանումից հետո այդ ցեղերը մնացին Աստրապատի ստեղծած Աստրապատական-Մարաստանի բազավորության տիրապետության տակ, որի բազավորն էլ պետք է իրականացներ Դերբենդի լեռնացքի գոտու հսկողությունը:

Դարիալի լեռնացքի գոտու հսկողությունը իրականացրած Հայաստանի սատրապ Երվանդը (Օրոնտես) այդ գործը շարունակել էր նաև Աքեմենյան աշխարհակալության կործանումից հետո, եթե իրեն անկախ բազավոր էր հոչակել⁴: Նա պատմական նախատիպերից մեկն է խորենացիական Վաղարշակ (Անանուն պատմիչի երկում՝ Արշակ) բազավորի, որին են մեր պատմիչները վերագրում Հայաստանի հյուսիսային կողմնակալության ստեղծումը⁵: Այդ կողմնակալությունը բուն հայկական տարածքներից բացի ներառում էր նաև Կուր գետի և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի միջև ձգված տարածքը՝ Դարիալի լեռնացքի գոտին ներառյալ: Այստեղ էլ որոշ ժամանակ անց ստեղծվել էր վրացական անկախ բազավորությունը՝ կոչված Քարթի, Վիրք, Իրերիա: Ըստ «Վրաց դարձ» միջնադարյան երկի, Վրաց բազավորության հիմնադիր Փառնավազից առաջ այստեղ հշխում էր Արիան-Քարթի կոչված օտար երկրի արքայազն Ազոն, որին «Թագավորների մասին պատմության» հեղինակ Լեռնացի Մրովելին համարում է մակեդոնացի՝ կառավարիչ նշանակված Ալեքսանդր Մակեդոնացու կողմից: Ազոյի դեմ ապստամքած և մարտում նրան ապանած Փառնավազը համարվել է Մցխեթի հին հշխողներից Վերջինի զարմիկը: Նրա դաշնակիցներն են եղել

¹ *Herod., III, 97 (Հերոդոտոս, Պատմություն ինը գործից, քարզմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 198):*

² *Arrian., III, 8, 4 (Հ. Մանանյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Եր., 1944, էջ 105: Ալեքսանդր Մակեդոնացի, Եր., 1987, էջ 97):*

³ *Arrian., III, 11, 4 (Ալեքսանդր Մակեդոնացի, էջ 101):*

⁴ Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 505-506:

⁵ Մովսիսի Խորենացոյ պատմություն Հայոց, Եր., 1981, Բ, ը, Բ, Ժա (այսուհետև՝ Ս. Խորենացի): Լ. Պետրոսյան, Ավանդական Վաղարշակի պատմական ու վիպական նախատիպերի շուրջ, ԳԱԱ ԸՀՀ կենսորնի «Գիտական աշխատություններ», V, Գյումրի, 2002, էջ 136-142: Նոյմի՝ Հայաստանի հյուսիսային կողմնակալությունները ըստ հայ և օտար աղբյուրների, ԳՊՄԴ հանրապետական գիտական նոտարքանի նյութեր (նվիրվում է Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին), Գյումրի, 2005, էջ 100-103:

հյուսիսկովկասյան ցեղերը, Էգրիսիի (Արևմտյան Վրաստան) կառավարիչ Կուջին և Ասուրիստանի թագավորը՝ հանձին որի, ըստ Երևանյին, հասկանալու ենք Ասորիք-Ասորեստանի տիրակալ, Սելևյան Անտիոքու 1-ինին (մ.թ.ա. 281-261թ.):

Այս իրադարձությունները ներկայացնող վկայությունների վերաբերյալ վրացի պատմաբան Ն. Լոնոուրին գրում է. «Չնայած որոշ լեզնդար մանրամասներին (օր., Ալեքսանդրի արշավանքը Քարթի), այդ վկայությունները պարունակում են նի շաք կոնկրետ ցուցումներ իր՝ Փառնավազի, գործունեության մասին, նրա փոխարարելությունների մասին դիարքունների (Անտիոքու 1-ին, Լիսիմաքու) հետ և այնքան ճիշտ են արտացոլում ընդհանուր պատմական վիճակը, որ հազիվ թե այդ ամբողջ պատմվածքը կարելի է համարել լեզենդ»⁶: Նման կարծիքներ ավելի վաղ արտահայտել էին նաև Գ. Սելիքիշվիլին⁷, Ա.Ի. Բոլտունովան⁸ և որիշներ:⁹ Ն. Լոնոուրին կարծում է նաև, որ Ազոյի և Փառնավազի միջև մղված պայքարը եղել է ներքին պայքար՝ մի կողմից վրացական Մցիսերա-Քարթիի (Փառնավազի գլխավորած սասպեյրական - հարավարևմտյան) պետական կազմավորումների միջև:¹⁰ «Հին աշխարհի պատմության» ռուսերեն ակադեմիական հրատարակության II հատորի հեղինակները նշում են, որ Արիան-Քարթիի թագավորի որդի Ազոն երբ համարվում է Ալեքսանդր Սակերնացու նտերինը՝ «պատմականորեն կատարելապես անհավատահի է»,¹¹ բայց Ն. Լոնոուրիի ննան, նրանք ևս Արիան-Քարթիին որոնում են Հայկական լեռնաշխարհում, աքեմենյան XVIII սատրապությունում, որտեղ, նրանց կարծիքով ևս, իրք թե բնակվում էր «արևելյան նախավրացական» սասպեյրների ցեղով»:¹² Բայց իզուր է Արիան-Քարթիի փնտրվում Հայկական լեռնաշխարհում, որովհետև այդ երկրանվան Արիան բաղադրիչը հստակ կերպով մատնացույց է անում Իրանը, որի ժամանակակից անվան հիմքում ընկած է հնագույն իրանական Արիանա ծևը: Ընդ որում, Փառնավազին նախորդած կառավարիչի իրանական ծագման իրողությունը հաստատվում է նաև Մ. Խորենացու Մար Աքասին հանգող այն վկայությունների օգնությամբ, որոնցում ևս հիշատակվում է Ալեքսանդր Մակեդոնացին:

Մեր պատմահոր Երկում կարդում ենք, որ Հայոց Վաղարշակ արքան «Կովկաս լեռան դեմ հյուսիսի կողմնակալ է նշանակում մեծ և հզոր ցեղը և նահապետության անունը դնում է Գուգարացոց բղեշխ, որ Դարեհի Սիհրդատ նախարարի սերնդից էր, որին Ալեքսանդրը բերելով իշխան նշանակեց Խվերիացոց ցեղից գերինների վրա...»:¹³ Գուգարաց բնագրի այս գլխում անանուն մնացած նորանշանակ կողմնակալը ոչ քև Սիհրդատի «սերնդից» է, այլ նրա որդին՝ «ի գաւակէ Սիհրդատայ» (*զավակ-ը նախ և առաջ «ծնունդ» ու «որդի» է նշանակում, ապա նոր՝ «սերններ» և այն)*:¹⁴ Ժամանակագրության ճշտման առումն ավելի կարևոր են այստեղ հիշատակված անձնավորություններից Դարեհը և Ալեքսանդրը, որոնց շնորհիվ պարզ է դառնում, որ նյուս անձնավորություններից՝ Վաղարշակի, Սիհրդատի և նրա կողմնակալ որդու, պատմական նախատիպերը եղել են առաջինների, թեկուզ, կրտսեր ժամանակակիցները: Իսկ որ նրանց և Ալեքսանդր Մակեդոնացու հետ հիշատակված Դարեհը Աքեմենյան վերջին

⁶ Н. Л о м о у р и, *Возникновение древнеиберийского (картийского) государства, "Проблемы античной культуры"*, Тб., 1975, стр. 487-488.

⁷ Г. М е л и к и ш в ի լ ի, *К истории древней Грузии*, Тб., 1959, стр. 266-271, 276-283.

⁸ И. Б о л տ ү հ օ վ ա, *Возникновение классового общества и государственной власти в Иберии*, "Вестник древней истории", 1956, N 2, стр. 28-43.

⁹ "Всемирная история", т. II, М., 1956, стр. 156-157; "История древнего мира. II. Расцвет древних обществ", М., 1989, стр. 385.

¹⁰ Н. Л о м о у р и, ճշգ. աշխ., էջ 491-493:

¹¹ История древнего мира", II, стр. 385.

¹² Սասպեյրների հնդեւլրոպական-հայկական ծագման մասին տե՛ս Ա. Պետրոսյան, Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Հարայի ավանդագրույցում, «Պատմաբանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 187, 203:

¹³ Ա. Խ ո ր ե ն ա ց ի լ ի, Բ, թ:

¹⁴ Նոր բազմից հայկագեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 722: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 85:

արքայից արքան է, կասկած լինել չի կարող:¹⁵ Այս դեպքում Հայաստանի նախկին արքանեմյան սատրապ և նորընծած քաջավոր Օրբնտես-Երվանդի կողմից նորաստեղծ հյուսիսային կողմնակալությունում կողմնակալ նշանակված Սիհրդատի որդին լինելու է վրացական ավանդությունների Ազնի, որը վրացիներին հայտնի է եղել ոչ թե իր իսկական անվամբ, այլ վաղաքական մականվամբ: Նրա իսկական անունը, ինչպես պարզվում է Խորենացու հաջորդ վկայություններից, նույնպես *Միհրդատ* է եղել:

Եթե Խորենացին իր *Ա* գրքի ը գլխում անառնուն է քողնում նորանշանակ Գուգարաց բղեջսին, ապա նոյն գրքի ժամանում նրան ևս *Միհրդատ* է կոչում: Վաղարշակ և Արշակ քաջավորներից հետո քաջավորած Արտաշեսի առիթով նա գրում է. «Բայց իր Արտաշաման դրաստրը կնության է տալիս ոմն Միհրդատի՝ Վրաց մեծ բղեջսի, որ Դարեհի նախարար Միհրդատի զավակներից էր, որին Ալեքսանդրը նշանակել էր իսկրիացիների գերիմների վրա, ինչպես առաջ պատմեցինք, և նրան է հավատում հյուսիսային լեռների և Պոնտոսի ծովի կողմնակալությունը»:¹⁶ Այս երկրորդ Միհրդատի որդին ևս, ինչպես կտեսնենք ստորև, Միհրդատ էր կոչվում: Փաստուն, Սովուս Խորենացուն հայտնի են եղել նոյն տոհմի ներկայացուցիչ երեք իրարահաջորդ Միհրդատներ՝ 1, II և III: *Միհրդատ* անվան այս տոհմում շատ սիրված լինելու, արդեն որոշակի իհմք է տալիս կապ տեսնելու Դարեհի III-ի Միհրդատ նախարարի և Պոնտոսի արքայատոհմի միջև, որում նույնպես շատ սիրված էր *Միհրդատ* անունը: Այդ կապն ավելի հստակ է դառնում, եթե ի նկատի ենք առնում հետևյալ երկու հանգանանքները: 1. Միհրդատ II-ին Վրաց մեծ բղեջսի կոչելով հանդերձ, Սովուս Խորենացին մատնանշում է, որ նրան էր հանձնված «հյուսիսային լեռների և Պոնտոսի ծովի կողմնակալությունը»: 2. Մեկ այլ առիթով մեր պատմահայրը նշում է, որ «երկրորդական զահը» հաջորդ Հայոց քաջավոր Տիգրանը «տովել էր իր քրոջ մարդուն՝ Միհրդատին, իսկ Միհրդատի մասից հետո ոչ որի չէր տրված, մինչև որ Երվանդը (Երվանդ Վերօնի քաջավորը) Վերապարձրեց Արգամին»:¹⁷ «Երկրորդական զահը» տրվում էր քաջավորության մեջ քաջավորից հետո երկրորդ ազդեցիկ անձին նրան, ով «Երկրորդ քաջաւորութեանն լիներ»:¹⁸

Միհրդատներից երրորդին հայոց քաջավորը զրկել էր ոչ միայն «Երկրորդական զահից», այլև նրա հոր գրադեցրած «Վրաց մեծ բղեջսի» պաշտոնից: Կարծում ենք, որ դա կարող էր տեղի ունենալ միայն այն բանից հետո, եթե Ազր-Միհրդատ II-ը սպանվել էր Փառնավազի կողմից, իսկ նրա որդի Միհրդատ III-ը քշնամուն դիմադրելու փոխարեն փախել էր Պոնտոս: Ինչպես Սովուս Խորենացին է վկայում, «Այս ժամանակները Տիգրանի մեջ կասկած է ծագում պատաճի Միհրդատի մասին, թե իր քետորդին (քրոջ որդին) չէ, ուստի նրան ոչ մի իշխանություն չի տալիս, ոչ իսկ նրա աշխարհը՝ Վրաստանը: Միհրդատն արհամարհանք կրելով իր քետի Տիգրանից՝ ապատամքում է (նրանից) և ապավիճում է Կեսարին»:¹⁹ Խորենացու ժամանակագրության մեջ այս դեպքերը մոտ են բերված մեր թվագրությանը: Իրականում դրանք վերաբերում են մ.թ.ա. III դարի առաջին տասնամյակներին, եթե Փառնավազի իշխանության զալու հետևանքով Վիրքից փախստական դարձած պատաճի Միհրդատը՝ Միհրդատ III-ը, ի վերջո հիմնադրել էր Պոնտոսի անկախ քաջավորությունը:

Ստ. Մալխասյանցի կարծիքով, սրա հայր Միհրդատը «Միհրդատ Զ Եվպատորն է, որ կոչվում է նաև Միհրդատ Մեծ, Պոնտոսի քաջավորը»:²⁰ Բայց Միհրդատ VI Եվպատորը (մ.թ.ա. 63-11 թթ.) զահակալել է այս իրադարձություններից 200-150 տարի անց: Գ. Սարգսյանը համամիտ լինելով Ստ. Մալխասյանցի հետ, ավելացնում է, որ Կեսարին ապավիճած խորենացիական Միհրդատի պատաճի որդի Միհրդատն էլ լինելու է Միհրդատ Եվպատորի որդին, որը դիմել էր Հուլիոս Կեսարին:²¹ Այս հարցերի

¹⁵ Մ կ և ե և Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, Աշխարհարար քարզ. և մեկմարանությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1981, էջ 483, ծան. 125:

¹⁶ Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ժա:

¹⁷ Նոյն տեղում, Բ, խդ:

¹⁸ Նոյն տեղում, Բ, ը, Բ, խդ:

¹⁹ Նոյն տեղում, Բ, ժր:

²⁰ Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, էջ 486, ծան. 138:

²¹ Մ. Խ օ ր ե ն ա ց ի, Իстория Армении, Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ер., 1990, стр. 241, стр. 242, стр. 323.

Վերաբերյալ այլ տեսակետ ունեն Ի. Ս. Դյակոնովը, Վ. Գ. Ներոնովան և Ի. Ս. Սվենցից կայացած: Ըստ նրանց, նախվիմ աքեմենյան XIX սատրապության տարածքում Պոնտական քաջավորությունն իմնադրած անձը պարսկական վերջին սատրապներից մեկի որդին էր՝ Սիհրդատ II-ը, որը քաջավորել է մ.թ.ա. 300-266թթ. միջև:²² Նախ պանտական քաջավորությունը այդքան վաղ իմնադրված լինել չէր կարող, ապա՝ Սիհրդատ II-ը նույնանում է Վիրքուն սպանված Ազոյի հետ: Այսուհանդերձ, նրանք ինչ-որ կապ են տեսնում Ազոյի և պոնտական Սիհրդատների միջև:²³ Իսկ այդ կապը նարմնավորող եղել է Ազոյի (Սիհրդատ II-ի) որդին՝ 266թ. առաջ Վիրքը լրած և Պոնտոսի անկախ քաջավորությունն իմնադրած պատաճի Սիհրդատը (Սիհրդատ III-ը): Այս արևելագետների պաշտպանած տեսակետն ավելի մոտ է պատմական իրականությանը, քան մինչ այդ գոյություն ունեցած և պոնտական պաշտոնական տեսակետից եկող վարկածը: Ըստ դրա, Պոնտական քաջավորության իմնադրին է եղել Զիոս քաղաքի իշխող, Աքեմենյան տոհմից սերած Սիհրդատ II (կամ Սիհրդատ 1-ը, կամ Սիհրդատ III-ը), որը նախ ծառայության մեջ է եղել Սակեղոնիայի քաջավոր Անտիգոնոս I-ի (մ.թ.ա. 283-240թթ.) մոտ, ապա՝ մ.թ.ա. 281թ. իրեն հռչակել է անկախ քաջավոր:²⁴

Պոնտոսի Սիհրդատյան արքայատոհմի իմնադրին պարսիկ են համարում անտիկ դարաշրջանի հեղինակներից սկսած մինչև ժամանակակից ուսումնասիրողները՝ քացառությամբ վրաց պատմաքան Գ. Գոզալիշվիլու, որը փորձել է նրան պոնտական վոքրասիական ծագում վերագրել:²⁵ Անտիկ շրջանի հեղինակներից Պոլիբիոսը, Դիոնորոսը և ուրիշներ կարծում են, որ Պոնտոսի Սիհրդատյանների հեռավոր նախնին եղել է Աքեմենյան զահի հափշտակիչ մոզ Գառումատային սպանած «Յոթ պարսիկներից» մեկը,²⁶ իսկ Տակիտոսը, Ապահանոսը և ուրիշներ նրանց սերած են համարում հենց Աքեմենյաններից:²⁷ Ե. Ա. Մոլլը այս հաղորդումների միջև հակասություն չի տեսնում, դրավետու Աքեմենյան քաջավորների օրինական կանայք լինում էին միայն դավադիր «Յոթ պարսիկների» սերունդներից:²⁸ Հերոդոտոսի վկայությամբ, «Յոթ պարսիկները» պայմանավորվել էին նաև, որ իրենցից մեկը քաջավոր դառնալուց հետո «քաջավորը պետք է իր համար կին վերցնի միայն դասակիցներից որևէ մեկի ընտանիքից»:²⁹

Տարակարծություն գոյություն ունի նաև պոնտական արքայատոհմի այս հեռավոր նախնու անվան հարցում: Սովորաբար, նրա անունը չի հիշատակվում, իսկ հիշատակողներից Պոլիբիոսը նրան կոչում է Մազոն,³⁰ Ֆլորոսը՝ Արտարազես:³¹ Արքայատոհմի և Պոնտական քաջավորության իմնադրի (Ենթադրյալ Սիհրդատ I-ի՝ մ.թ.ա. 302-266թթ.)³² հոր անվան հարցում ևս անտիկ դարաշրջանի հեղինակները տարակարծիք են: Նրան կոչում են Արփորարզան կամ Սիհրդատ:³³ Ստեղծված խառնաշփորչ փորձել է գրիս հանել Ե. Ա. Մոլլը, բայց նրան ևս դա չի հաջողվել՝ Մոլլիս Խորենացու վկայություններից անտեղյակ լինելու (կամ դրանք անտեսելու) պատճառով: Իսկ Խորենացու հաղորդած տեղեկությունները, ինչպես տեսանք, հնարավորություն տվեցին պարզելու, որ Փառնավազի Վիրքում քաջավոր դառնալուց հետո այնտեղից վտարված Սիհրդատ III-ը՝ սպանված Սիհրդատ II-ի պատաճի որդին և Դարեհ III-ի գորավար

²² История древнего мира, II, стр. 384.

²³ Նոյն տեղում, էջ 385:

²⁴ О. С а в о с т ь յ ա ն օ ւ ա , Понтийское царство, “Советская историческая энциклопедия”, т. 11, М., 1968, стр. 405.

²⁵ Г. Г о з а լ ի շ վ և լ լ ի , Митридат Понтийский, Тб., 1962, стр. 235.

²⁶ Polyb, V, 43, 2; Diodor. XIX, 40.

²⁷ Tacit, Annal, XII, 18; Appian, Mithr., IX, 112.

²⁸ Е. М о լ ե ւ, К вопросу о происхождении династии понтийских Митридатидов, “Вестник древней истории”, 1983, N 4, стр. 134-135.

²⁹ Herod, III, 84 (Հերոդոտու, էջ 194):

³⁰ Polyb, V, 43, 2.

³¹ Flot, XL, 3, 5.

³² Հ. Մանանդյան, Տիգրան II-ը և Հռոմը, Եր., 1940, էջ 17-18: Նոյնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, էջ 98:

³³ Е. М о լ ե ւ, Եղիսաբետ, էջ 131, 135:

Սիհրդատի (Սիհրդատ I) թոռը, հաստատվել էր Պոնտոսում և հիմնադիրը դարձել պոնտական Սիհրդատյան արքայատոհմի ու Պոնտոսի ամելախ քաջավորության: Նրա պատ Սիհրդատ I-ից էր սերտուն նաև Գուգարաց բղեջիսերի տոհմը:

О РОДСТВЕ ДИНАСТИЙ ПОНТИЙСКИХ ЦАРЕЙ И ГУГАРКСКИХ БДЕШХОВ

Резюме

Л. Петросян

После крушения Ахеменидской державы, районы Восточнопонтийских гор и северного Закавказья с Дарьялским проходом находились под контролем независимого армянского царства Ервандуниев (Ервандидов, Оронтидов). Царь Ерванд, один из исторических прототипов легендарного царя Валаршака (у Мовсеса Хоренаци), организовал там наместничество, во главе которого стал Митридат – сын одноименного военачальника последнего Ахеменида - Дария III.

По-нашему мнению, именно этот Митридат в “Картлис չховреба” (“История Грузии”) был ласкательно назван Азо. Он был низложен и убит основателем независимого грузинского царства (Картли, Иберия) Фарнавазом в 70-ых годах III в. до н. э. Сын этого (второго) Митридата, тоже Митридат, бежал в горные районы Понта, где впоследствии стал основателем Понтийского царства Митридатидов.

Первый из упомянутых Митридатов, по Мовсесу Хоренаци, был предком не только понтийских царей, но и гугаркских (гогаренских) бдешхов.

Анаит ХУДАВЕРДЯН

**ЗАКОНОМЕРНОСТИ ГЕОГРАФИЧЕСКОЙ ИЗМЕНЧИВОСТИ
КРАНИОЛОГИЧЕСКИХ ПРИЗНАКОВ НА ТЕРРИТОРИИ
КАВКАЗА, ПЕРЕДНЕЙ И СРЕДНЕЙ АЗИИ, ЕВРОПЫ, ИНДИИ
И СЕВЕРНОЙ АФРИКИ В ЭПОХУ РАННЕЙ БРОНЗЫ**

Особая роль в исследовании антропологических связей населения Кавказа в периоде раннего металла принадлежит М. Абдушелишвили.¹ Именно М. Абдушелишвили заложил тот антропологический фундамент в фактологическом и теоретическом отношениях, на котором базировались последующие этапы исследования этих проблем.

Природная среда, в которой находилось древнее население Кавказа, имела ряд негативных и позитивных сторон. К первым относятся экстремальные климатические условия. Позитивная сторона заключается в том, что природные факторы способствовали активным связям между различными регионами. Среди этих факторов – и распределение природных ресурсов (обсидиана, кремня и др.), распространение их на широких пространствах из определенных месторождений, и наличие различных экологических ниш, использование которых предопределяло как перемещения единых групп, так и регулярное взаимодействие различных хозяйствственно-культурных типов; весьма значительным фактором были и обширные открытые пространства, с которыми связано возникновение подвижных форм скотоводства. Последние же обусловили появление своего рода "передаточной сферы" в виде подвижных скотоводческих коллективов, быстрые и далекие передвижения которых способствовали распространению и взаимодействию антропологических типов и культурных элементов.

Следует говорить об установлении ареальных контактов между группами, далеко не всегда генетически родственными, но территориально сближившимися вплоть до взаимопроникновения и влияния друг на друга в течение продолжительного времени. Это приводило к их интеграции, к созданию ряда крупных этнокультурных группировок, приведших к определенной интеграции на взаимосвязанных территориях и к значительным последствиям экономического, культурного, антропологического, общепроцессуального характера.

Прежде всего, несколько слов о материалах, которые легли в основу настоящего сообщения. Анализу было подвергнуто 154 краниологических серий с территории Кавказа, Передней и Средней Азии, Европы, Индии, Северной Африки. Из обширного списка диагностических признаков для оценки географической изменчивости их были выбраны те, которые наиболее полно обрисовывают физический облик населения и обнаруживают наибольший диапазон изменчивости. Если считать величину изменчивости одним из критериев таксономической значимости признака, то при описании антропологического состава населения Кавказа, Передней и Средней Азии, Европы, Индии, Северной Африки в эпоху бронзы в первую очередь следует обратить внимание на скуловой диаметр, выраженность переноса, назомалярный угол, зигомаксиллярный угол, черепной указатель, высоту лица, размеры носа, орбитные размеры и наконец угол выступания носа.

¹ М. А б д у ш е л и ш в и л и, *Антрапология населения Кавказа в бронзовом периоде, Тбилиси, 1982.*

Рассмотрим распределение вариаций ключевых признаков.

По черепному указателю удлиненная форма черепной коробки (долихокрания) была характерна для населения Ланджика, Шенгавита, Мейданнера, Кикети, Жинвали, сборной краниологической серии из куро-араксских погребений Грузии, Тебе-Гиссара III, Эль-Убейда, Сиалка, Библа, Хараппа, Ланганжа, Северной Африки, Гинчи, Средней Азии, Калмыкии, ямной культуры Нижнего Поволжья, фатьяновской культуры Верхнего Поволжья, Подонья, Нижнего Поднепровья, окрашенных и скорченных костяков Среднего Поднепровья, ямной и шнуровой керамики Украины, трипольской культуры Поднестровья, Чехии, Румынии, Дунайского бассейна, Польши, Словакии, Германии, Дании, Франции, Прибалтики. Мезокрания проявляется в сериях Закавказья (Джарат, Ахалцих, Тквиави), Северного Кавказа, Ирана (Караташ), Индии (Лотгал), Калмыкии (катакомбная культура), Нижнего Поволжья (Кривая Лука /катакомбная культура/), Саратовской области, объединенной группы из Волгоградского Заволжья, Урала (Меллятамак), Поднепровья (Васильевка II, Вольное, Игренский), Нижнего Поднепровья /катакомбная культура/, Украины /объединенные группы ямной культуры, трипольской культуры и культуры шаровидных амфор/, Поднестровья (Веремье), Прибалтики (Олений о-в, Звейниеки 3), Прирейнской области (Ринбек), Венгрии (Алшонемедия), Греции, Норвегии. Довольно компактную брахицранную группу составляют серии из районов Нижнего Поволжья (Кривая Лука /ямная культура, ямно-катаомбное время), Калмыкии (Чограй I, Чограй II, Чограй III, объединенные серии ямной культуры, ямно-катаомбного времени), а также черепа из Туркмении (Тумек-Кичиджик), Эстонии (гребенчато-ямочная культура) и Румынии (культура шаровидных амфор).

Общая высота черепной коробки обнаруживает сложную мозаичную картину изменчивости на всем ареале. Наименьшие размеры имеют черепа из Тквиави, Тумек-Кичиджика, Ланганжа, Задоно-Авиловского м-ка, абаевской культуры Поволжья, культуры шаровидных амфор Польши. Основные вариации сосредоточены в пределах 137.9-141.1мм (Ланджик, Мейданнер, сборная краниологическая серия из куро-араксских погребений Грузии, Сиалк, Караташ, Геоксюр, Хапуздепе, Северный Кавказ, Гинчи, Чограй II, Калмыкия /ямно-катаомбного времени, катаомбная культура/, Элиста и Архара, Заливский, Заволжские степи, Волгоградское Заволжье, Нижнее и Верхнее Поволжья /ранние фатьяновцы/, Алитуб, Новочеркасск, Волошское, Украина /ямная культура/, Нижнее Поднепровье /ямная и катаомбная культуры/, Среднее Поднепровье, Усатово, Олений о-в, Ладожские стоянки, Эстония /культура боевых топоров/, Бильче-Злата, Бржесь и Кувавский, Дунайский бассейн, Злота, Польша /культура шнуровой керамики/, Клейнгафередорф, Алшонемедия, Румыния, Восточная Румыния, Балинтешть, Швеция).

Наименьшие размеры лобного диаметра имеют черепа из Джарата, Библа, Поднестровья (Выхватинцы), Эвдыка I, Задоно-Авиловского, Съезжинского, Волосовского и Пасековского могильниках. Преобладающие вариации сосредоточены в пределах 96.2-99.3 мм (Ланджик, Мейданнер, Эль-Убейда, Караташ, Афalu, Геоксюр, Северный Кавказ, Гинчи, Калмыкия, Запорожская обл, Волгоградское Заволжье, Нижнее и Верхнее Поволжья, Васильевка I, Васильевка III, Александрия, Мариупольский, Нижнее Поднепровье, Звейниеки, Олений о-в, Эстония, Бильче-Злата, Напа и Муукси, Бржесь и Кувавский, Дунайский бассейн, Польша, Злота, Иордансмюль (Силезия), Иванка Дунае, Ринбек Вестофалия, Рессен Саксония, Остдорф и Роггов, Грос-Черносек, Саксо-Тюрингия, Чехия, Богемия, Офнэт, Румыния, Черника, Дриду и Русе, Швеция, Словакия, Тевьеек) и 99.4-102.5мм (Шенгавит, Тквиави, Кикети, сборная краниологическая серия из

куро-араксских погребений Грузии, Кривая Лука 1 и 2, Чограй I, Чограй III, Бережовка, Заволжские степи, Ростов, Никольское, Дереивка, Вовниги 2, Вольное, Игренский, Усатово, Веремье, Среднее Поднепровье, Сокальский и Ульовка, Польша, Чехия, Черновода-Колумбия, Восточная Румыния, Норвегия).

Наименьшие размеры скулового диаметра - 121-128.9мм имеют черепа из Ахалциха, Кикети, Эль-Убейда, Библа, Тебе-Гиссара III, Поднестровья, Выхватинцев, Бильче-Злата, Иордансмюля (Силезия), Ринбек Вестфалии, Рессен Саксонии, Саксо-Тюрингия, Богемия, Клейнгафередорфа, Черника, Дриду и Русе, Греции. Величины его в пределах 129.0-131.9мм сосредоточены в сериях: Ланджик, Джарат, Майданнер, объединенной группе из куро-араксских погребений Грузии, Хараппа, Карадепе, Алтындинепе, Волгоградского Заволжья, Волошское, Нижнего Поднепровья, Украины, Румынии, Дунайского бассейна, Польши, Чехии, Швеции, Словакии. Большие размеры скулового диаметра в пределах 138.0-153.9мм сосредоточены главным образом в сериях (Жинвали, Афалу, Тумек-Кичиджик, Хапуздепе, Тафоральт, Калмыкия 1, Кривая Лука 1, Чограй II, Чограй III, Кривая Лука 2, Калмыкия 4, Кривая Лука 3, Заливский, Саратовской области, Заволжские степи, Дроних, Нижнее Поволжье 1, Меллятамак, Госпитальный холм, Ростов, Новочеркасск, Павловский м-к 1,2, Никольское, Дереивка, Вовниги 1,2, Вольное, Васильевка II, Васильевка I, Васильевка III, Каменные Потоки, Ворошиловград, Александрия, Мариупольский, Украина 2, Усатово, Звейниеки 2,3, Олений о-в, Ладожские стоянки, Напа и Муукси, Среднее Поднепровье, Офнет, Корсернор и Ведбэк, Тевьеек и Гоздик).

Меньшие величины верхней высоты лица - 63.0-66.9мм отмечены на черепах из Съезжинского м-ка, Заволжских степей, Румынии, Бржесть и Куюнского м-ов, Иордансмюль (Силезия), Ринбека (Вестфалия), Чехии, Богемии 1, Офнета, Клейнгафередорфа. Величины его в пределах 67.0-68.9 мм имеют черепа из Ланджика, Ланганжа, Лотгала, Библа, Алтындинепе, Хапуздепе, Тафоральта, Северного Кавказа, Калмыкии, Волосовского м-ка, Новочеркасска, Ворошиловграда, Александрии, Поднестровья, Дунайского бассейна, Сокальского и Ульовки, Польши, Алшонемедии, Румынии, Тевьеека. Большие размеры верхней высоты лица в пределах 72.0-82.9мм сосредоточены главным образом в сериях (Шенгавит, Майданнер, Жинвали, объединенной группе из куро-араксских погребений Грузии, Джорджитсмина, Эль-Убейда, Сиалк, Хараппа, Тумек-Кичиджик, Карадепе, Геоксюр, Чограй II, Заливский, Задоно-Авиловский, Меллятамак, Верхнего Поволжья, Ростова, Крепинский, Никольское, Дереивка, Вовниги 1,2, Вольное, Васильевка II, Волошское, Васильевка I, Игренский м-к, Каменные Потоки, Нижнего Поднепровья, Украины, Эстонии, Польши, Злата, Иванка Дунае, Саксо-Тюрингия, Восточной Пруссии, Корсернор и Ведбэк).

Высота орбиты варьирует незначительно. Большинство групп имеют низкие орбиты. Высокие орбиты в пределах 33.7-40.1мм сосредоточены в сериях: Шенгавит, Тквиави, Жинвали, Кикети, Ахалциха, Ланганжа, Хараппа, Хапуздепе, Эвдык I, Верхнего Поволжья, Игренского м-ка, Ворошиловград, Мариупольского м-ка, Звейниеки 2, Олений о-в, Гырченъ, Красный Яр, Веремье, Алшонемедии. Средняя ширина орбиты - 37.5-40.1мм отмечена у черепов из Ланджика, Ланганжа, Эль-Убейда, Карадепе, Алтындинепе, Богдэнешть, Черновода-Колумбия, Польши. Остальные серии отличаются широкими орбитами - 40.2-50.1мм.

В вариациях носового указателя наименьшие величины- 38.5-46.3 мм имеют серии: Джарат, Шенгавит, Тквиави, Джорджитсмина, Гинчи, Меллятамак, Веремье, Богдэнешть, Грос-Черносек. Величины его в

пределах 46.4-47.8мм сосредоточены в сериях: Эль-Убейда, сборной краниологической серии из куро-аракских погребений Грузии, Алтын-депе, Северного Кавказа, Съезжинского м-ка, Волосовского м-ка, Дроних, Верхнего Поволжья, Никольское, Вовники 1, Васильевка II, Волошское, Васильевка III, Каменные Потоки, Звейниеки 2, Напа и Муукси. Преобладающий вариант сосредоточен в пределах - 47.9-49.3мм. Большие размеры носового указателя в пределах 50.9-57.7мм сосредоточены главным образом в сериях (Ланджик, Майданнер, Кикети, Ланганж, Лотгал, Хараппа, Афалу, Карадепе, Хапуздепе, Тафоральт, Чограй I, Чограй III, Эвдык I, Госпитальный холм, Новочеркасск, Ясырев 1, Игренский м-к, Украина, Дунайский бассейн, Сокальский, Ульвовка, Иордансмюль (Силезия), Польша, Остдорф и Ротгов, Офнет, Клейнгафедорф, Тевьеck и Гоздик).

Угол профиля лба варьирует без определенной закономерности. Преобладающий вариант - 78.6-89.3. Меньшие величины признака - 69.0-74.7 отмечены на черепах из Жинвали, Волошского м-ка и Каменные Потоки. Величины его в пределах 74.8-78.5 сосредоточены в сериях: Майданнер, Кикети, Кривая Лука 3, Задоно-Авиловского м-ка, Саратовской области, Меллятамак, Васильевка I, Нижнего Поднепровья 1.

Наименьшие величины назомолярного угла - 131.0-135.9 сосредоточены в сериях: Ланджик, Жинвали, Тепе-Гиссар III, Карадепе, Геоксюр, Гинчи, Заливский, Эвдык I, Запорожской области, Волошское, Украины, Нижнего Поднепровья, Эстонии 2, Гоздик. Средние размеры назомолярного угла, в пределах 139.0-141.9, сосредоточены в сериях: Шенгавит, Кикети, Джорджитсмина, Тумек-Кичиджик, Алтындине, Чограй I, Калмыкия, Задоно-Авиловского м-ка, Дроних, Ростова, Ясырев 1, Никольское, Васильевка III, Александрия, Звейниеки 1,3, Тевьеck. Наибольшие величины 145.0-150.9 отмечены в сериях: Тквиави, Хапуздепе, Дереивка, Каменные Потоки.

Распределение зигомаксиллярного угла обнаруживает пеструю картину. Величины его в пределах 114.0-123.9 отмечены на черепах объединенной серии куро-аракских погребений Грузии, Северного Кавказа, Гинчи, Волосовского м-ка, Дрониха, Волгоградского Заволжья, Крепинского м-ка, Павловского м-ка 1, Никольского м-ка, Дереивка, Вовники 1, Волошское, Украины 1, Нижнего Поднепровья 1,2, Поднестровья, Звейниеки 2, Выхватинцы. Преобладающий вариант сосредоточен в пределах 124.0-126.9. Наибольшие величины - 130.0-140.9 отмечены у черепов Ланджика, Майданнера, Тафоральта, Афалу, Меллятамака, Ворошиловграда, Мариупольского м-ка, Оленего о-ва, Эстонии 1, Кривой Луки 2, Съезжинского м-ка, Саратовской области, Новочеркасска, Дереивского м-ка, Игренского м-ка, Каменные Потоки, Звейниеки 3.

По углу выступания носовых костей можно отметить сходство закавказских, среднеазиатских и восточноевропейских серий. Основные вариации сосредоточены в пределах 28.0-40.0. Однако несколько серий в указанных регионах выделяются заниженными значениями этого признака (Тумек-Кичиджик, Съезжинский м-к, Дроних, Павловский м-к 2, Украина 5, Олений о-в, Бильче-Злата).

В вариациях дакриального указателя наименьшие величины - 43.9-49.9 имеют черепа Павловского м-ка 2, Эстонии 1. Основные вариации сосредоточены в пределах 50.0-59.9мм. Распределение симотического указателя обнаруживает пеструю картину. Величины его в пределах 33.9-39.9 мм отмечены на черепах Афалу, Тафоральта, Павловского м-ка 1, Эстонии 1. Величины их в пределах 40.0-49.9мм имеют черепа из Ланджика, Кикети, Тепе-Гиссара III, Тумек-Кичиджика, Саратовской области, Дрониха, Волгоградского Заволжья, Павловского м-ка 2, Никольского м-ка,

Васильевка II, Волошского, Игренского, Мариупольского м-ков, Оленего ова, Эстонии 2. Преобладающий вариант сосредоточен в пределах - 50.0-59.9 мм. Величины их в пределах 60.0-69.9 мм имеют черепа из Мейданнера, Тквиави, Джорджитсминда, Геоксюра, Алтынде, Кривой Луки 2, Калмыкии 4, Бережновки, Запорожской области, Нижнего Поволжья 2, Ростова, Новочеркасска, Красного Яра, Вовниги 1. Большие размеры симотического указателя в пределах 70.0-91.9мм сосредоточены главным образом в сериях (Гинчи, Нижняя Бараниковка).

Приведенная характеристика географической изменчивости антропологических признаков на Кавказе, Передней и Средней Азии, Европы, Индии, Северной Африки не имела целью служить решению вопросов сложения различных этнических групп этой огромной территории, хотя и может быть использована в данном направлении. Обращение к этой теме было вызвано некоторыми предшествующими работами,² показавшими участие коренного населения в сложении антропологического облика некоторых племен при их расселении на широком пространстве, и желанием проследить, как глубоко уходят корни местного субстрата. Подводя итоги анализу географического распределения краниологических признаков у населения Кавказа, Передней и Средней Азии, Европы, Индии, Северной Африки в эпоху ранней бронзы, можно выделить три комплекса признаков, привязанных к определенным территориям. Основная часть населения обладала средними значениями краниологических признаков, варьирующих в пределах, характерных для европеоидных форм. Во-первых, отчетливо выделяется антропологический тип, для которого характерны длинный и высокий череп, крупные размеры лицевого отдела, сильное выступание носа и резкая профилярованность в назомалярной и зигомаксиллярной области; проявляется у населения Нижнего Поднепровья (Васильевка I и Васильевка III), Прибалтики (Звейниеки), Приуралье (Меллятамакский м-к), Подонья (хутор Ясырев), Нижнего Поволжья (сборные серии Волгоградской, Астраханской, Саратовской обл.), охватывает территорию Прикаспия, проявляясь в населении, известном по могильникам Чограй I, Чограй II и др.

Вторая антропологическая комбинация весьма сходна с первой. Долихокranные и долихомезокранные узколицые антропологические типы проявляются в краниологических сериях с территории Армении, Грузии, Передней и Средней Азии, Северного Кавказа (майкопская культура), Гинчи, Калмыкии, Поднестровья (трипольская культура), причерноморских степей, Нижнего Поднепровья (Запорожье, катакомбная культура), Украины (культура кемибинская и "окрашенных и скорченных костяков"), Степного Крыма, Эстонии, Литвы, Румынии, Чехии, Германии, Польши, Венгрии, Греции, Франции, Индии и др.

Третий антропологический тип характеризуется увеличением поперечного диаметра черепа и скелевой ширины, уплощенностью назомалярного отдела и значительной профилярованностью зигомаксиллярного, средне-или сильным выступанием носа. Это сочета-

² А. Худавердян, *О взаимосвязях населения Кавказа, Восточной Европы, Передней и Средней Азии в эпоху ранней бронзы: по антропологическим данным IV Конгресса этног. и антроп. России, Нальчик, 2001*; А. Худавердян, Сравнительный анализ антропологических материалов эпохи ранней бронзы Армении и территорий Евразиатского региона, III Меж. археологическая конференция "Древнейшие общности земледельцев и скотоводов Северного Причерноморья (IV тыс. до н.э.-IV в. н.э), Тирасполь, 2002; А. Худавердян, Палеоантропологические данные к вопросу об этнических взаимоотношениях населения Евразии в эпоху ранней бронзы, Городцовская научная конференция. Москва, 2003.

ние признаков наиболее четко проявляется в краниологической серии Оленьего острова, в Нижнем Поднепровье (Никольское, Дереивка, Вовниги, Вольное), на Украине (ямная культура), на Дону (Дроних, Госпитальных холм, Задоно-Авиловский, Павловский и Ростовский м-ки), в Нижнем Поволжье (Съезжинский м-к), астраханского побережья Волги (Кривая Лука), Калмыкии и др. Некоторые серии не имеют строгой локализации, а занимают то же пространство, что и длиноголовый узколицый и высоколицый антропологический тип. На карте эти серии занимают промежуточное или самостоятельное положение. Несмотря на это, как правило, они отличаются от ближайшей по рангу столь незначительно, что, эти различия можно не принимать в расчет (на данном этапе), рассматривая их как проявление той же тенденции к сдвигу средней величины признака метисной популяции в сторону показателя одной из исходных.

Оценивая величину изменчивости краниологических признаков на территории Кавказа, Передней и Средней Азии, Индии, Европы, Северной Африки в целом, приходим к выводу о том, что этнические процессы идут здесь в первую очередь по признакам I порядка: углы горизонтальной профилировки лица и ширине и высоте лица, которые несмотря на сравнительно большую вариабельность имеют строгую этническую и территориальную приуроченность. Географическая локализация вариаций признаков в данном случае отражает не изначальную дифференциацию, а представляет собой вторичное явление и связана с расселением носителей определенных культур. В раннебронзовом периоде средиземноморский тип был распространен на достаточно большой территории, охватывающей Кавказ, Переднюю и Среднюю Азию, Средиземноморье, Индию, Поднестровье, Европу и т.д. Широкое сопоставление краниологических данных кавказских серий позволяет выявить наличие морфологически близких групп в географических рамках всей этой обширной территории. Населения Поднестровья, Румынии, Передней Азии, Индии, Туркмении, Польши имеют сходные комплексы с краниологическими материалами из Кавказа.

Таким образом, помимо общих положений, изложенных в преамбуле настоящей работы, в нашем распоряжении оказываются еще несколько положений, имеющих немалое значение для изучения отдельных проблем этногенеза южных европеоидов. Прежде всего, это положение о том, что в эпоху ранней бронзы на всей территории от Средиземноморья до Индии доминировали очень близкие в антропологическом смысле морфологические формы, что заставляет думать об "изначальной генетической общности заселения всей этой огромной территории".³ Не менее существенным является и тот факт, что население Кавказа занимало центральное положение этого обширного массива как в географическом, так и в морфологическом смысле, а это свидетельствует о том, что Кавказ является одним из наиболее древних центров этногенеза южных европеоидов.

³ М. Абдуллаев и др., Н. Цумади, Антропологические взаимоотношения населения Кавказа в периоде раннего металла, Кавказ в системе палеометаллических культур Евразии, Тбилиси, 1987, стр. 237-245.

**ՎԱԴ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱԾՐՋԱՆՈՒԿՈՎԿԱՍԻ, ԱՌԱՋԱՎՈՐ ԵՎ ՍԻԶԻՆ
ԱՄԻԱՅԻ, ԵՎՐՈՊԱՅԻ, ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ
ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳԱՆԳԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈԽԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում

Ա. Խուժավերդյան

Ներկայացված աշխատանքում իրականացված է Հայաստանի բրոնզիդարյան հուշարձաններից հայտնաբերված հնեամարդաբանական նյութի ուսումնասիրություն պատմական հիմքի վրա: Հենվելով գանգարանական հատկանիշների վրա՝ արվել է Կովկասի, Եվրոպայի, Առաջավոր և Սիրին Ասիայի, Հնդկաստանի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանների առանձին էթնիկ խմբերի համալիր բնութագիր: Կիրառվել է աշխարհագրական ներողը, որն առավելագույնս է նպաստում հետազոտվող խնդիրների պարզաբանմանը: Գանգարանական ուսումնասիրությունը հայտնաբերել է մարդաբանական երեք խմբեր: Բացահայտվել են սահմանափակ էթնիկ խմբերի միզորացիոն երևույթներ (մ.թ.ա. III դ.):

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ծովական ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՍԵՏԻ ՀԻՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թովմա Արծրունին, Մովսես Խորենացու տեսանկյունից շարադրելով Երվանդ-Արտաշես հակամարտության պատմությունը, նաև այնպիսի մանրամասներ է հաղորդում, որոնք մեր պատմահոր երկուս իսպան բացակայում են: Դրանցից ուշագրավները Արտամետ քաղաքի հիմնադրման, Զարդ ամրոցի կառուցման և դրանց շրջակայքը շենացնելու մասին այն հաղորդումներն են, որոնց համար, անտարակույս, արբյուր են ծառայել տեղական ավանդագրույցները: Ըստ Արծրունի պատմիչի, Երվանդ արքայից (մ.թ.ա. III դ. վերջեր) խոյս տված մասնուկ Արտաշեսը՝ ապագա Արտաշես I-ը (մ.թ.ա. 189-160թթ.), իր դայակ Մորատի հետ միասին նախ հաստատվել էր Վան քաղաքից արևելք գտնվող Վարագ լեռան վրա, ապա՝ ապաստան գտել ինչ-որ բլրի լանջից բխող աղբյուրի մոտ՝ «ի կարկաս հովտաձևս, հանդէա հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ յայն տեղի, յորում բղխէ աղբյուրաբար առ սոռորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովոն»:¹ Թագավոր դառնալուց հետո Արտաշեսը որոշում է շենացնել այդ տարածքը և «գրաստակերտս մեծամեծ շորջ զեզերքն անտառախիտ ծառովք եւ զիներեր որովով եւ զանազան պտղովք, զշէնս պատրաստեալ... Իսկ շորջ զբերդաննան ապարանօքն՝ պարապէ զբուրն շորջանակի յապառաժուտ տաշելոց քարանց. քաղաք ամենալից զիովիտն ամրացուցանելով»:²

Քաղաքը կառուցվում էր և կարիք էր զգում անվանակոչության: Ըստ Թովմա Արծրունու. «Իսկ զանոն քաղաքին կոչեցին Արտամատ՝ որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ճեռակերտ, կամ թէ՝ Արտաշէսի եկը. զի ըստ պարսիկ ճայնի՝ մաս՝ եկը թարգմանի»:³ Ինչպես տեսնում ենք, Արծրունի պատմիչը Արտամետ տեղանկան երկու տարբեր ստուգաբանություններ է բերում: Դրանցից երկրորդում պարզորդ զգացվում է Մովսես Խորենացու շոնչը, որն էլ ստիպել է Թովմա Արծրունուն անգամ ձևափոխել Արտամետ-ը Արտամատ-ի: Մովսես Խորենացին Արշարունիքի Մարմետ բնակավայրի (Երվանդակերտի) անոնը առնչելով Երվանդ-Արտաշես հակամարտության պատմությանը, նրա Մարմետ անվան առաջացումը բացատրում է հետևյալ կերպ: Իր բանակով Երվանդակերտի մասուցյներն հասած Արտաշեսը «միարան գոշմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Սար ամատ», որ թարգմանի Մարս եկն... Յայս ի տոյն ճայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ»:⁴ Արտամետն/Արտամատի ստուգաբանություններից առաջինը՝ «Արտաշէսի ճեռակերտ»-ը լինելու է տեղականը՝ ժողովրդական ավանդագրույցից եկողը: Վերջինիս անդրադառնալուց առաջ տեսնենք, թէ Վասպուրականի պատմիչը էլ ինչ շինություններ է վերագրում Արտաշեսին: Ըստ նրա, Հայոց քաջավորը նաև ջրանցը է կառուցել, որը վերոհիշյալ աղբյուրի մոտից շոր պետք է մատակարարեք քաղաքին և շրջակայքին, իսկ մինչ այդ «ի վերայ բղխեալ աղբյուրն, դարձեալ պարապէ զբարարլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիք շինուածովք»,⁵ այսինքն՝ ամրարտակով ջրամբար է կառուցել:

Պարզվում է, որ Վան քաղաքից հարավ ընկած այս նույն շրջանում շինարարական նույնպիսի աշխատանքներ իրականացրել է Ուրարտուի Իշապուինի արքան (մ.թ.ա. 825-810թթ.): Վան քաղաքից 7կմ հարավ-արևելք գտնվող Ծկաստան զյուղից հայտնաբերված սյուների բնորոշների վրա կարդացվում է հետևյալը. Ի՞րավունք

¹ Թովմա Արծրունի և Անամում, Պատմութիւն տաճճ Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա), Եր., 1985, Ա, Է:

² Նույն տեղում, Ա, Հ:

³ Նույնը:

⁴ Մ. Խ ո ր է ն ա ց ի, Հայոց պատմութիւն (այսուհետև՝ Մ. Խորենացի), Եր., 1981, Բ, Խզ:

⁵ Թ ո վ մ ա պ է ա մ բ ա ր ա ր լ ո ւ ր ն ի պ ա հ պ ա ն ո ւ թ ի ւ ն ջ ր ո յ ն ա մ ր ա գ ո ւ ն ի ք շ ի ն ո ւ ա ծ ո ւ լ ո ւ ր ք ։

Sarduriինուն ունի BITU շաման «Խշորակի Սարդություն» այս տունը կառուցեց»:⁶ Իսկ «Արտամետու կից են գրեթե Կոնկու վանք, Կենդանյաց գեղ, Ծվատան գեղ»:⁷ Նույն Ծվաստանից հայտնաբերված մեկ որիշ արձանագրության մեջ նշվում է, որ Խշորակինի արքան Ախիտնի քաղաքին մերձ աղբյուրի մոտից այստեղով ջրանցք է անցկացրել:⁸ Այս քաղաքի ամունք հիշատակված է նաև Խշորակինի հաջորդ Մենուա քաջավորի (մ.թ.ա. 810-786թ.) Աղքամարի (այնտեղ տարված) արձանագրության մեջ:⁹ Ախիտնի քաղաքն ու նրա մարզը տեղադրում են կամ Վանս լճի հարավային, կամ հարավ-արևելյան ափերի մոտ:¹⁰ Հավանականը վերջինն է՝ Արտամետու ու նրա շրջանը ներառյալ: Մեր կարծիքով, այս դեպքում Խշորակինի արձանագրությունները խոսում են այն նույն շինարարական գործունության մասին, որը ևս ժողովրդական ավանդագրույցների հետևությամբ Արծրունյաց տան պատմիչը վերագրում է Արտաշես արքային:

Իսկ ինչո՞ւ է այդ գործունությունը վերագրվել հենց Արտաշեսին, երբ նա, անկասկած, ունեցել է իր հետավոր նախորդը՝ մ.թ.ա. IX դ. ուրարտական արքան: Պատճառներից առաջինը լինելու է այն, որ Արտաշես I-ը և այս շրջանում շինարարական աշխատանքներ եր ծավալել: Հայտնի է նրա քաղաքաշինական եռանդուն գործունեության արգասիք այնպիսի քաղաքների գոյուրյունը, ինչպիսիք էին Արտաշատը, Զարեհավանները, Զարիշատները և այլն: Իսկ որ, իսկապես, նա այստեղ ևս լուրջ շինարարական աշխատանքներ է կատարել, վկայում է Արտամետի պաշտոնական Արտաշեսան անվանումը:¹¹ Հետազոտում մնացած շրջակա գալաքի վրա:¹² Պատճառներից երկրորդը լինելու էր Արտամետ և Արտաշես անունների առաջին քաղաքիների ակնհայտ հնչյունական նմանությունը, որը բավարար «փաստարկ» կարող էր ծառայել ժողովրդական սուուզանությամբ այդ երկու անունները միմյանց աղերսակցելու համար: Խշորակինի հիմնադրած քաղաքի Արտաշեսին վերագրելու երրորդ պատճառը կարող էր լինել այն, որ ժողովրդը Հայոց քաջավորների (նրա համար Խշորակինին և Հայոց քաջավոր էր) մեծագործությունները նախ և առաջ վերագրում էր Արտաշեսին, որի անունը մի տեսակ համարժեք էր դարձել «սիրված քաջավոր» հասկացության: Օրինակ, Տրդատ I-ը (54-80թ.) և ժողովրդին հայտնի է եղել Արտաշես անունով: Հ. Մանանդյանի կարծիքով սա, «եղել է, հավանորեն, Հայաստանի քաջավորների տիտղոսը, ինչպես Արշակը պարբերի և Կեսարը հումայնեցիների մոտ»:¹³

Արտամետու և նրա շրջակայրում Խշորակինի ծավալած շինարարական գործունության Արտաշես I-ին վերագրելու պատճառներից մեկն էլ գալու էր պաշտամունքային ոլորտից: Ի տարբերություն Մեծ Հայքի Երվանդունի քաջավորների, որոնց կրոնական քաղաքականությունը խարսխվում էր Ամարտակի աստծու և զուգակից Մայր դիցությունում պաշտամունքի վրա, Խշորակինի կառուցած Արտամետու, ինչպես կտևանենք ստորև, առաջնային համարվել է Արևաստծու և զուգակից դիցությունում պաշտամունքը: Նույն պաշտամունքը առաջնային է եղել նաև Արտաշես I-ի համար: Որ Երվանդունի քաջավորների համար առաջնայինը ոչ թե Արևաստծու, այլ ամպրոպային Շանթառաք աստծու պաշտամունքն է եղել, ցույց է տալիս ինչպես նրանց կրած Երտանդ գահանունը¹⁴ և Շանթառաք աստծու նման Երվանդ Վերջինին վերագրված հայացքով որ-

⁶ Ն. Ադ Բ Շ շ, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 149:

⁷ Գ. Ար Վ ա ն ծ ա ւ յ ա ն ց, Երկեր, հ.1, Եր., 1978, էջ 386:

⁸ Գ. Մ ե լ ի կ ի շ ւ և լ ի, Յարտկություններ (Յարտկություններ), Մ., 1960, № 1.

⁹ Նոյնական:

¹⁰ Հ. Ա ր ս տ յ ա ն, Տոպոնիմիկա Յարտկություններ, Եր., 1985, ստուգ. Արտամետ, էջ 355-356.

¹¹ Ս. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը քատ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 41:

¹² Նույն տեղում, էջ 109:

¹³ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.1, Եր., 1944, էջ 353:

¹⁴ Ս. Պ ե տ ր ո ն ս յ ա ն, «Կահազնի երգի» ակրոստիքուների վերականգնման և վերծանման փոքր, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 4, էջ 81-87: Նույնի Հայոց երեք արքայազմների հասարակական ֆունկցիաների մասին, ՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 3, Գյումրի, 2000, էջ 59-64:

ձաքարեր ժողովու հավատալիքը,¹⁵ այնպէս էլ այն հաճգամանը, որ նա երդկում էր Արամազդով (ամպրոպային Շանթառաք աստված) և Արտեմիդով (Արտեմիս/Անահիտ):¹⁶ Իսկ որ նրա հակառակորդ Արտաշես I-ը արևապաշտ է եղել, ցույց է տալիս նրա անունով կոչված «արտաշիսյան թագի» գլխավոր զարդաքանդակը: Օրինակ, Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55թ.) թագի կենտրոնում Արևի խորհրդանշանն է, իսկ Արևի երկու կողմերին գլուխները դեպի խորհրդանշանը, մարմինները դեպի դուրս պատկերված երկու թռչունները Արտաշակ (Վեներա) մոյորակի երկու դրսորումներն են՝ Արտաշակը որպես Լուսաբեր և որպես Գիշերավար:¹⁷

Ինչպես կտեսնենք ստորև, արևապաշտությունից են գալիս Արտամետի և այս տեղ կառուցված Զարդ ամրոցի անունները: Ըստ Թովմա Արծրունու, Արտաշեար երբ «զամրոցն պատրաստեաց, կոչեաց զանոն ամրոցին Զարդ, այսինքն՝ պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն»:¹⁸ Նախարարության երկրորդ կեսը ուղեցույց կարող է ծառայել ամրոցի կապր քաղաքի և նրա անվանադիր աստծու հետ բացահայտելու, ինչպես նաև Արտամետ տեղանունը սոուզարանելու ճանապարհին: Ամրոցի անունը նույնական է զարդ (<զ-արդ> բառի հետ, որը հետում նշանակում էր նաև «զամրոց զարդ երկնից»):¹⁹ Անանիա Շիրակացին «Յաղագս երկնային զարդուց» վերնագիր տակ ներկայացնում է թե՛ երկնային համաստեղությունները, թե՛ անզեն աշքով տեսանելի հինգ մողրակներն ու Լուսինը, թե՛, որը և այս դեպքում ամենակարևորն է՝ Արեգակը:²⁰ Դարձ է, որ զարդ բառը նա գործածում է «լուսատու» նշանակությամբ, իսկ լուսատուների մեջ ամենահզորը ցերեկային լուսատուն է՝ Արևը, որին էլ նախ և առաջ վերաբերելու է զարդ բառը: Զարդ բառի և ամրոցի անվան այս նշանակությունն էլ ի նկատի առնելով շարունակենք մեր քննարկումը:

Արտամետի *մետ-ի դեպքում հմտություն տեղանունը և գետանունը Վան քաղաքից հյուսիսից²¹ և Մարմետ տեղանունը Արշարունիքում:²² Այս *մետ//մէտ բառը, մեր կարծիքով, արմատակիցն է հայերեն մոյր «մեցուկ, ցից», «փին հնդկերեն» մեթի «մոյր, մեցուկ, այուն» և բրակերեն մուռու «զյուղ, շեն» բառերի, որոնք բխեցվում են հ.-ն. *mei- արմատից՝ -dհ,-d,-t աճականներով: Նրա համար կարելի է վերականգնել *meid- նախաձնկը՝ որպես զուգահեռ բրակերեն բառի վերականգնվող *mei-i(h)- «քնակատեղի» նախաձնկի:²³ Այս դեպքում, Արտամետ և Զարդ տեղանունները, իրենց նշանակություններով գրեթե համընկնում են: Դրանք հասկացվելու էին որպես «Արտ (աստծու) բնակատեղի», «Արտ (աստծու) կացարան»:

Մեր կարծիքով, այս տեղանուններում առկա Արտ-արդ բաղադրիչը եղել է Արևի աստծու մակրիդը՝ քարուի պատճառով փոխարինած նրա բուն անվանը: Այս բառը պահպանված է նաև արտախոյր բառարարի մեջ: «Ժագավորական թագ» նշանակող և բազմաթիվ ուսումնասիրություններում քննարկման առարկա դարձած այս բառի վերաբերյալ Հ. Աճառյանի արած վերջնական եզրակացությունն այս է՝ «Բարդված է արտ+խոյր բառերից..., բայց ի՞նչ է արտ»:²⁴ Կարծում ենք, որ այս հարցում մեզ կարող է օգնել Արտաշիսյան արքաների բազը, որի գլխավոր զարդաքանդակը ճառագայթող արևի խորհրդանշանն է:²⁵ Ըստ այս, արտախոյր-ը «քագավորական թագ»

¹⁵ Ս. Խորեն ենացի, Բ, խր:

¹⁶ Թռվամաս, Ա, Է:

¹⁷ Ս.Պ եւ բ ո ս յ ա ն, Գյումրիի պեղած գոտու բեկորի զարդանախչերի շուրջ, ԾՊՄՃ հանրապետական առաջին գիտաժողովի գեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 30-32:

¹⁸ Թռվամաս, Ա, Ը:

¹⁹ Նոր բարգիր հայկակեան լեզուի (այսուետն ՆՀԲ), հ.1, Եր., 1979, էջ 718:

²⁰ Ա. Շիրակացիստութիւն և սոռմար, Եր., 1940, էջ 19-31:

²¹ Գ.Արվանիտի աշխատանքներ, էջ 315, 398:

²² Ս. Խորեն ենացի, Բ, խր: Ս. Արքահամայան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 228:

²³ Գ. Զահրանկի աշխատանքներ, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 180, 240: Նույնի՝ Հայերենը և հնդկարպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61, ծան., 45:

²⁴ Հ. Աճառյանի արած առաջարկան բառարար, հ. 1, 1971, էջ 339-340:

²⁵ Խ. Մուշեղյան եղանական շրջանառությունը Հայաստանում, Եր., 1983, էջ 45. 50, 56, 57:

ընդհանրական իմաստը պարունակելով հանդերձ, պեսք է, որ նախապես վերաբերեք «արտաշիսյան թագին» և նշանակեք «արևային թագ»։ Համեմատության համար նկատենք, որ Կոնացենեի Անտիոքոս Երվանդունի արքան (մ.թ.ա. 69-34թթ.) Նեմրութ լեռնան բարձրաքանակներից մեկում նույնպես պատկերված է հայկական (Արտաշիսյանների թագի նման) թագով, բայց «արտաշիսյան թագի» արևի ու զույգ քոչունների պատկերների փոխարեն նրա թագը նույն տեղում այցուծի պատկեր ունի։ Ըստ այս, ապրդ/արտ-ը կարելի է ծագած համարել հ.-ե. *ր-> հայերեն *ար արմատից և դիտել տարրերակը այդ (որից արթու) բառի։ Արթու բառի ծագման վերաբերյալ Հ. Աճանյանը գրում է. «Քանի որ հենց թիթ- արմատը տալիս է արդեն հարր-մուլ, հարր-չիլ բայլ, ուստի լավագույնն է բաժանել նրանց արր-ուն և դմել ար (յառնեմ, արի) «վեր կենալ» արմատից՝ թ աճականով...»:²⁶ Այս դեպքում հայերեն արր-ը, ուրեմն՝ նաև Արտ/ արդ-ը, ազգակիցն է դառնում այնպիսի բառերի, ինչպիսիք են հին հնողն. ան արտրու արմատից հայրյավ», հուն. արτօ «հարյավ», օրթոս «արևածագ», լատին. orior «հասնեմ», ortus «արևածագ, արևելք» բառերը:²⁷

Հայերեն արր/արտ/արդ արմատն ենք մենք տեսնում նաև ուրարտական Արևի աստված Շիվինիի հետ սերտորեն կապված սրբությունների։ Արտուվարասինների (եղ. թվով՝ Արտսարասի, հոգն. թվով՝ Արտսարասաւ)՝²⁸ անվան մեջ։ Արևային Շիվինիի հետ նրանց կապն ապացուցելով, Ս. Հնայալյանը Արտուվարասիններ/«Շիվինիի զորքեր» հասկացությունը գուգադրում է հայ առասպելաբանությունից հայտնի «Արևի աստծո թիկնազորի» հետ։²⁹

Արտուվարասի բառի վարասի բաղադրիչը այդ անունը կրողների՝ որպես «քիկնազորի» բացահայտիչն է։ XIX դարավերջի վանեցին հատույալ պատկերացումն ուներ դրա «մարտիկների» և նրանց գործառույթների վերաբերյալ։ «Վարազա սարեն կ'երևա արշալույնեն առաջ հարևեսկ արևուն ծագումն. ահազին լերան մը տակեն կ'ելլեն 12 դավազներ, սև սև արաբներ, և այդ լերան վրա լուսեղնն ճպորներով ճառագայթի պես կը զարնեն. լեռը կը ցածնա. ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն... հանկարծ արևու ուսկի գլուխն ու հերեղն բքչան կ'երևա»։³⁰ Գ. Արվանձտյանցի կողմից ընդգծված դավազ-ը ծագումով արաբներն բառ է («وَقَّ، դավաս») և նշանակում է «նետաձիգ»։ Թե այս բառը հին հայերեն ինչ բառի է փոխարինել, դժվար է ասել։ Այսուհանդերձ, մենք հակված ենք Արտուվարասինների անվան *վարասի բաղադրիչի մեջ տեսնելու նույն նշանակությունն ունեցած մի բառ։ Արևի դավազների «լուսեղնն ճպորները» նրանց նետերն էին լինելու։ Արևային բնույթի աստվածները նաև աղեղնավոր-նետաձիգներ էին։ Հիշենք մեր խայտակն և քաջազնուր աղեղնավոր Հայկին՝ չար-խավար ուժերի անձնավորում Բեյին նետահարողին, հիշենք Շիվինիի հերարձակ պատկերները ուրարտական արվեստի գործերում նետ ու աղեղը ձեռքին, հիշենք նաև ոսկեզիսակ աղեղնավոր Ապոլոնին և այլն։ Կարծում ենք, որ *վարասի-ն հենց «նետաձիգ» է նշանակում և իր հիմքում ունի հայերեն *վարս արմատը։ Այս արմատն է առկա հայերեն վարաս (<>վարս-ամ) «զավազան, բիր, ցից», վարսել (<>վարս-ել) և վարսաստել (<>վարս-աւոր-ել) բառերում։ Վերջիններս նշանակում են «գետին զամել, հողի մեջ մխել» և առաջին նման ընդունելի ստուգաբանություններ չունեն։³¹ Բայց դժվար չէ կռահելը, որ դրանք առնչվում են նաև «նետ» և «նետահարել» հասկացություններին։ Հիշենք, թե ինչպես է Հայկը սպանել Բեյին։ «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարջայն, լի քարշէ զլայնալիճն, դիալցուցանէ գերեզրեւեանն կրծից տախտակին, եւ շեշտ ընդ մեջ թիկանցն բախանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն»։³²

²⁶ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 1, էջ 314:

²⁷ Նույն տեղում, հ. 3, Եր., 1977, էջ 384-385:

²⁸ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 29:

²⁹ Նույնը:

³⁰ Գ. Սր վ ա ն ճ ա ռ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 77-78:

³¹ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, Եր., 1979, էջ 325:

³² Ս. Խ ո ր ե ն ա ց ի յ ա ն, Ա, ժաւ:

Արուսյակ մոլորակը՝ երկնակամարի ամենապայծառ լուսատումերից մեկը, աղավնու հետ միասին, եղել է ջրային տարերքի անձնավորում հեթանոսական Աստղիկ դիցուհու և նույնատիպ առաջավորասիական այլ դիցուհիների խորհրդանիշը:³³ Նա պաշտվել է նաև Արտամնեռում, որը պարզվում է Թովմա Արծրունու կողմից դարձայլ Արտաշեսին Վերագրված հետևյալ հաղորդումից: Զաղաքը կառուցելու ընթացքում Հայոց արքան «ի մէջ երեքարմատեան գոզածեւ հովտին փորո՛ որ յերից բլոցն խոնարիի, շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, եւ ի վերայ նորա կանգնէ զԱստղեան պատկերն, եւ մօս նորա զոտու զամանու պաշտպանութեան կրոցն, կարգէ եւ յօրինէ ի նմա փողոց վաճառոց ամենալիցն եւ բաւականա».³⁴ Ինչպես տեսնում ենք, խոսքը տաճարային համալիրի մասին է, որի կենտրոնում գտնվել է Աստղիկ դիցուհու բարձրաշեն տաճարը՝ նրա կուտքի հետ միասին:

Հայունի է, որ երկնակամարում տարբեր եղանակներին իր ունեցած հակառիք դիրքերի (արևածագից առաջ՝ արևելքում, իսկ մայրամուտից հետո՝ արևմուտքում) պատճառով Արուսյակը նախապես համարվել էր տարբեր լուսատուներ և, ըստ այդմ, կրել իրար անհարիք անուններ՝ *Լուսաբեր* (Լուս աստղ) և *Գիշերավար*: Մեր նախնիների կողմից ցուցաբերված այդպիսի մուտեցման հետևանքն են ոչ միայն այս անունները, այլև հայոց հին տոռնարի համապատասխան օրանունների որոշակի հերթականությունը: Ամսի 7-րդ օրը կոչում էր *Աստղիկ* և նախորդում էր *Սիհր* անունը կրող 8-րդ օրվան (Սիհրը հեթանու հայերի կրոնում արեգակնային հրեւ նյութին ու նրա ջերմությունն անձնավորող աստվածն էր), իսկ 30-րդ օրը, որը ամսի Վերջին օրն էր, կոչվում էր *Գիշերավար* և հաջորդում էր 29-րդ օրվան՝ *Վարազիհը*³⁵ (*Վարազ* լեռնանվան հետ նույնական այս օրանունը տարբերակն է արեգակնային լույսի անձնավորում աստծու *Վահագն* անվան՝ նրա նման ծագած իրանական միևնույն նախաձևից): Ուրեմն, իին հայոց տոռնարի օրանուններից մեկը՝ *Աստղիկը*, արտացոլում է Արուսյակի էությունը որպես արևածագի ավետարերի, իսկ մյուսը՝ *Գիշերավարը*, արտացոլում է նրա էությունը որպես արևի երկնային ուղու վախճաներ գուժողի: Կարծում ենք, որ նույնական տարբերակում գոյություն է ունեցել նաև ուրարտական դարաշրջանում: Արուսյակի անձնավորում դիցուհու կերպարում նախկին երկու դիցուհիների կերպարների միահյուսված լինելու վկաները ուրարտական բրոնզե կարսաների կես քռչուն-կես կին ներկայացնող կանքերն են: Բ. Պիտորովսկին այդ կանքերը առնչելով արևի պաշտամունքին (դրանք մեջերին կրում են արևը խորհրդանշական օգակներ), միևնույն ժամանակ համարում է Տուշպունա դիցուհու խորհրդանիշները:³⁶ Կասկած լինել չի կարող, որ կես քռչուն-կես կին ներկայացնող այդ կանքերը նաև համարվել են դիցուհու խորհրդանիշ Արուսյակ մոլորակի մարմնավորումները, որովհետև նրանց մեջ կան նաև, որ կանացի մեկ զլիի փոխարեն (նկ.1) ունեն երկուուր (նկ.2): Իսկ այդպիսի դեպքերում հաշվի են առնվել թե՝ *Լուսաբեր* (առավոտյան Արուսյակը), թե՝ *Գիշերավարը* (Երեկոյան Արուսյակը):

Հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում հաճախ ենք հաճույքում «Պղնձեն քաղաքի» առասպեկտարանական կերպարին: Այս դեպքում մեկ հետաքրքրում է «Սասնա ծոերի» մեջ հիշատակվող «Պղնձեն քաղաքը՝ Խանդութի հայրենական քաղաքը», որը միայն նրան չէ, որ առնչվում է, որովհետև մեկ այլ պատումի համաձայն, «Պղնձեն քաղաքը Քաստուն ճող ծամ կար. եղ ի քաջավորի աղջիկ էր»:³⁷ Ընդ որում, «Պղնձեն քաղաքի քաջավորի աղջկա քարձրաշեն պալատի տանիքին դրված էր

³³ Մ. Ա բ ե ղ յ ա ն, ««Ղիշապմեր» կոչված կորողներն իրեն Աստղիկ-Դերկեսող դիցուհու արձան-ներ, Եր., 1941, էջ 71, 74-78:


³⁴ Թովմակը, Ա, ը:

³⁵ Ղ. Ա լ ի շ ա ն, «Հայոց իին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 78: Հ. Բաղալյան, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 100, 101, 104:


³⁶ Բ. Պ ո օ տ ր օ վ ս կ ս ի յ, Արևոտության աշխատանքներ, Երևան, հ. 1, Եր., 1971, էջ 409:

³⁷ Սասնա ծոեր, հ. 2, մաս 1, Եր., 1944, էջ 81: Նոյն մաս 2, Եր., 1951, էջ 242:

լինում գիշերը ճրազի ախ լոյս տվող ոսկե խնձոր և ով «զարկե էն ոսկի խնձորը քիրի տակ, դնի ուր ծոց, /Թագավորի խիս կորի անե, կտրիչ էլճի, /Աղջիկ կը տանի իրեն»:³⁸



Նկ. 1



Նկ. 2

Կասկած լինել չի կարող, որ Պղնձեն քաղաքի բազավորի աղջիկը վիպական զուգահեռն է Աստղիկի (և նմանատիպ դիցուիկների), նրա լուսատու ոսկե խնձորը՝ Արուսյակ մոլորակի, իսկ առասպելաբանական «Պղնձեն քաղաք» խնքը՝ իշխալ դիցուու սրբավայր-նստավայրի: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Վան քաղաքից ոչ հեռու, Վարագա դաշտում եղած ավերակ բնակավայրերից մեկը դեռևս XIXդ. վերջին կրում էր Պղնձեն քաղաք անունը:³⁹ Այս «քաղաքի» անվան մեջ պղնձ (որից՝ պղնձեն) բարի առկայությունը ևս խոսում է Աստղիկի և նույնատիպ դիցուիկների պաշտամունքին այդ «քաղաքի» առնչվելու նաևն, որովհետև ժամանակին մետաղները ևս, շարաբվա օրերի նման, ունեին իրենց առասպելաբանական հովանավոր աստվածությունները՝ խորիրդանշելով նրանց: Օրինակ, Արևի աստծու խորիրդանիշը ոսկին էր, Լուսնի աստծուն՝ արծաթը, իսկ Աստղիկի տիափի դիցուիկներինը (Ափրոդիտե, Վեներա և այլն) պղնձնան էր:⁴⁰ Վարագա դաշտում գտնվող «Պղնձեն քաղաք»-ից արևելք Վարագ լեռն էր՝ իր մի մասով կրած Աստղիկ անունը:⁴¹ Եթե ամրող հայության համար «օրվա սկիզբն ավետում է Լոյս աստղը, Լուս աստղը, Վեներա մոլորակը, որը կոչվում է նաև Արուսյակ»,⁴² ապա Վանի և իր շրջանի հայերի համար օրվա սկիզբը ուղղակի կապի մեջ էր դրված Վարագ լեռան և Լուսաբերի հետ: «Այնուղի առավոտը՝ ոչ արևածագումն է և ոչ քաղաքակրթյալ տեղերու պես՝ արևածագումն քանի մը ժամ ետքը. այլ՝ երբ Լուս աստղն իր գլուխը կը բարձրացնե Վարագա Գալիլիայեն»:⁴³ Դրանցից որոշ

³⁸ Սասմա ծոեր, հ. 1, Եր., 1936, էջ 149:

³⁹ Գ. Սր վա ն ձ տ յ ա ն ց, Եղվ. աշխ., հ. 1, էջ 78: Սասմա ծոեր, հ. 1, մաս 2, էջ 866:

⁴⁰ Բ. Տօ ռ օ ռ օ, Մետալլы, Мифы народов мира, т. 2, М., 1988, стр. 147.

⁴¹ Գ. Սր վա ն ձ տ յ ա ն ց, Եղվ. աշխ., հ. 1, էջ 47-48:

⁴² Մ. Ար ե ղ յ ա ն, Երկեր, հ. 7, Եր., 1975, էջ 37:

⁴³ Գ. Սր վա ն ձ տ յ ա ն ց, Եղվ. աշխ., հ. 1, էջ 126:

Ժամանակ անցնելուց հետո է, որ «Վարազա սարեմ... հանկարծ արևու ոսկի գլուխն ու հրեղեն քրչամն կերևս»:⁴⁴

Տարբեր ավանդույթներում Արուսյակն անձնավորած դիցուիիների պաշտամունքները միահյուսված էին Արևի աստվածների պաշտամունքներին: Հայ իրականության մեջ դրա լավագույն վկայություններն են Վահագին և Աստղիկի պաշտամունքը Տարմին Աշտիշառում⁴⁵ և Ծիվինին ու Տուշպուեայի համատեղ պաշտամունքը Տուշպա-Վանում:⁴⁶ Ընդ որում, այս քաղաքը Արևի աստծու պաշտամունքի կարևոր կենտրոն է եղել Ուրարտուի մայրաքաղաքը դարնալուց շատ առաջ:⁴⁷ Այն նույնըն վաղ ժամանակներից լինելու էր նաև Արուսյակի անձնավորում դիցուին պաշտամունքի նույնափակ կենտրոն: Դրա մասին է խոսում Տուշպա և Տուշպուեա անունների անխօնելի կապը: Դրա վկայություններն են նաև քաղաքի հիմնադրումը առասպելական (ոչ պատմական) Ծամիրամին վերագրող ավանդագրույցները: Առասպելական Ծամիրամը ժառանգործն է Իշտար // Աստղիկ և նույնատիպ դիցուիիների,⁴⁸ ավելի ճիշտ նրանց՝ որպես Երեկոյան Արուսյակի անձնավորում դիցուիիների (այսուղիղ էլ Ծամիրամի կերպարի բացահայտումը գծերը): Ծամիրամի մասին ավանդագրույցները նրան առնչում են ոչ միայն Վանին, այլև Լեզրին և Արտամետին, այսինքն՝ Վանա լճի հարավ-արևելյան շրջանների բնակավայրերին:⁴⁹ Այս առիթով իշխենք նաև, որ Արտամետի մոտ Վանա լիճը բափող նույնանուն գետակը կոչվում էր նաև Ծամիրամազետ:⁵⁰ Այս միջավայրում է իր ստեղծման բուն պատճառը բացահայտում Ս. Հակոբի մասին այն ավանդագրույցը, որտեղ Արտամետի աղջիկները «անամաշ» և «անամոք» են բնութագրվում: Քանի այն է, որ աղբյուրում լիսացք անելիս, նրանք «ոչ պատկառեցան ի սրբոյն, եւ ոչ ծածկեցին զրունակ իրենաց»:⁵¹

Ուրարտական դարաշրջանում (ավելի վաղ ևս) արդեն հստակ պատկերացում կար Լուսաբերի և Գիշերավարի միևնույն լրաստուն լինելու վերաբերյալ: Այսուհանդերձ, պաշտամունքային ոլորտում հազարամյակների ընթացքում արմատավորված պատկերացումները չեն կարող հեշտությամբ տեղի տալ և միևնույն լրաստուի երկու տարբեր անձնավորումները՝ պայմանավորված երկնականարում նրա ունեցած տարբեր դիրքերով, շարունակում եր գոյատել Արուսյակի անձնավորումը մեկ՝ ավելի բարձր կարգի, դիցուիի ըմբռնվելու կողքին: Անզամ հեթանոսական դարերում այդ պատկերացումը շարունակում էր գոյատել (հմմտ. Արա Գեղեցիկի գուգակիցները՝ Նուարդ և Ծամիրամ) և նույնիսկ քափանցել էր մեր միջնադարյան ոյլուցանավելակ (հմմտ. Սասունցի Դավիթի գուգակիցները՝ Խանդուր և Չմշկիկ): Նույն կերպ ուրարտական դարաշրջանում այդպիսի պատկերացումը շարունակելու էր գոյատել Արուսյակի անձնավորում մեկ՝ ավելի բարձր կարգի, դիցուին վերաբերյալ եղած պատկերացման կողքին: Միօրինակություն մտցնելու և պաշտամունքը կենտրոնացնելու համար կարիք է զգացվել մեկ՝ միավորիչ, անվան ընտրության: Քանի որ Տուշպա-Վանն էր դարձել պիտության թե՛ Խոկլոր Կենտրոնը, թե՛ նայրաքաղաքը, բնականաբար, նախապատվորյունը տրվելու էր նրա դիցուիուն, որը և իր ու պետության զիսավոր սրբավայրի անունով կոչվեց Տուշպուեա (հմմտ. Տոսպ և Տոսպեա): Նման նոտեցում գոյություն ուներ նաև հայության ազգակից ժողովուրդների ավանդույթներում:

⁴⁴ Գ. Սր վա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 76-77:

⁴⁵ Ազարամգեղայ Պատմութին հայոց, Եր., 1983, ճժ՛գ, 809:

⁴⁶ Գ. Մ ե լ ի կ տ վ ա լ լ լ և լ լ, Խանր - Յրարտ, Եր., 1954, սր. 373.

⁴⁷ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 46:

⁴⁸ Ս. Սր ե ղ յ ա ն, «Կիշապներ»,..., էջ 78-79: Ս. Արյունյան, Շամիրամ, Միֆы народов мира, թ. 2, սր. 639.

⁴⁹ Գ. Սր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 76: Ա. Ղանալամյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 70-71: Ս. Սր ե ղ յ ա ն, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 545-549:

⁵⁰ Թ. Հ ա կ ո ր յ ա ն, Ստ. Մ ե լ ի բ Բ ա յ ո ւ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ս տ վ ա յ ո ւ շ յ ա ն, նշվ. աշխ., հ. 1, 1986, էջ 491:

⁵¹ Ս. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 371-372:

Ինչպես Արևի անձնավորում աստվածը (^DUTU, ^DŠi_uini), այնպես էլ Արտայակի անձնավորում դիցուիին (^DIštar, ^DTeVine) համարվել են ուրարտական քաջավորների դինաստիական աստվածությունները: Սարդուր I-ը (մ.թ.ա. 845-825թթ.) «արևային» *Սարդուրի* (<^{*}sard-ur) անունը կրելով հանդերձ (համաձագում է լուղիական Տառօձ և դիցանվան հետ՝ նախնական «արև», «տարի» նշանակությամբ),⁵² մեծապես պաշտել է նաև Արտայակի անձնավորում դիցուին՝ «1988թ. հայտնարերված մի սեպագրում Սարդուրի I-ինի անունից առաջ դրված է Իշքար դիցուին նշանակող գաղափարազիր».⁵³ Իսկ Ծիվինիին նրա բռու Մենուայի (մ.թ.ա. 810-786թթ.) ձոնած կորուրում,⁵⁴ ինչպես Ս. Հմայակյանն է նկատում. «Մինուան իր և իր որդու համար այդ աստծուց խնդրում է «կյանք, ուրախություն, մեծություն»: Հաճամաններ, որը Վկայում է այն մասին, որ Ծիվինին եղել է նաև քաջավորող հարստության հովանավոր աստվածություններից մեկը»:⁵⁵ Ուրեմն, բնական է, որ զույգ կազմած Արևի և Արտայակի աստվածությունները պաշտելի հովանավորներ են լինելու նաև Սարդուրի I-ի որդի և Մենուայի հայր Իշքուինիի համար: Իսկ քանի որ նրանց համատեղ պաշտամունքն իրականացվում էր ոչ միայն Տուշպա//Կանում, այլև Արտամետում, ապա հասկանալի է դառնում այն հոգածությունը, որով Իշպուինին շրջապատել էր Արտամետու ու նրա նարզը: Ուրեմն, տնտեսական նկատառումներից բացի, Իշպուինին պետք է աշքի առաջ ունեցած լիներ նաև կրոնական գործոնը, եթք շինարարական լայնաձավալ աշխատանքներ էր ծեռնարկում Արևի աստծու և Արտայակի անձնավորում դիցուին համատեղ պաշտամունքի երկրորդ կարևոր վայրում՝ Արտամետում:

ДРЕВНИЕ БОЖЕСТВА АРТАМЕТА

— Резюме —

— С. Петросян, Ц. Петросян —

По сообщению Т. Арцруни, юго-восточнее Вана царь Арташес построил город Артамет, крепость Зард, канал с водохранилищем и капище божества Астхик. В действительности, согласно урартским надписям, такие дела здесь совершил царь Ишпунини (825-810гг. д.н.э.), при котором древний Артамет был значительным центром культа божественной пары Арт (“Солнце, Бог солнца”) и Астхик (“планета Венера”, “Богиня этой планеты”). От имени этого солнечного бога происходит как топонимы *Артамет* и *Зард*<^{*}з-ард (т.е. другое название Артамета), так и название ^DArṭuuarasaue (<^{*}Արտսարասէ), которое носили “стрелки-гвардейцы” Бога Солнца.

⁵² Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 49:

⁵³ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 100, ժամ. 96:

⁵⁴ Г. Մ ե լ ի կ ի շ վ ի լ ի, Ուրարտական քաջականության արևադապահության մասին, Երևան, 1970, էջ 95.

⁵⁵ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 46:

Ամդրանիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԱՍՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄԺԱՍՍՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1917թ. փետրվար-հոկտեմբեր)

1917թ. ժամանակավոր կառավարության կողմից ձեռնարկված կարևորագույն միջոցառումներից մեկը, որ անրապնդելու էր պետական իշխանական համակարգն Անդրկովկասում, լինելու էր բարեփոխումների իրականացումը տեղական ինքնակառավարման ոլորտում։ Ամբողջ Ռուսաստանի, այդ թվում նաև Անդրկովկասի նասչտարով տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման ծրագրի մշակումը օրախնդիր հարց էր դարձել։ Հունիսի 1-ին կառավարության որոշմանք ճևավդրվեց աշխատանքային հանձնաժողով, որն իր անդրանիկ նիստում որոշեց ամբողջ քափով ձեռնամուխ լինել տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների ծրագրի ստեղծման ու իրականացման՝ չբացանելով նաև Անդրկովկասը վարչատարածքային նոր վերաբաժնման ենթարկելու հրատապ և դժվարագույն խնդիրը։

Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում փորձում էր ստեղծել տեղական ինքնակառավարման եռաստիճան համակարգ՝ հետևյալ դասակարգմանը. ա) տեղամաս՝ որպես սկզբնական օղակ, բ) վոլոստ, գ) գավառ։ Մինչ 1917թ. հունիսան իրադարձությունները, երբ գլխավոր քաղաքական իշխող ուժը կաղետներն էին, խնդիր էր դրվում տեղական ինքնակառավարման համակարգի կատարելազործման միջոցով մի կողմից լուծել իշխանության կազմակերպման հարցը տեղերում, այդ թվում նաև ազգային ծայրանատրյուններում։ Մյուս կողմից՝ այլ համակարգի մեջ ներառնելով նաև ազգային երկրամասերին, հարկավոր էր մերժացնել իրենց իրավագրկության վերաբերյալ երկրի կենտրոնական իշխանություններին ուղղված վերջիններին մեղադրանքների ալիքը, խլացնել ազգային-տարածքային ինքնակարության կամ ինքնորոշման իրավունքի նրանց պահանջները։

1917թ. հունիսի 27-ին Կովկասում կառավարման և ինքնակառավարման համակարգի բարեփոխման Բ. Վեսելովսկու գլխավորած հանձնաժողովը՝ բաղկացած Անդրկովկասի հայտնի ազգային-կուսակցական և քաղաքական գործիչներից (Լ. Արարենյան, Գ. Խատիսյան, Ա. Չախնարումի, Զ. Ավալով-Ավախշվիլի, Գ. Լորդիկիանիձեն, Ը. Էլիափա, Ա. Շեյխուլ Խպալանով, Մ. Խան-Խոյսկի և ուրիշներ) անդրադարձավ երկրամասում ինքնակառավարման նոր համակարգի ներդրման խնդիրն։ Հանձնաժողովի հանձնարարությամբ հարցը ներկայացրեց փորձագետ Ն. Վինոգրադսկին.¹ Բանախուսի հիմնավորման՝ Անդրկովկասում տեղական ինքնակառավարման և երկրամասի կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր իրականացնել վարչատարածքային նոր վերաբաժնմանը, քանզի նախկին բաժանումները, անտեսելով երնիկ գործոնը, ձևավորվել էին արեւատական կերպով՝ հիմնականում պայմանավորված տնտեսական գործոններով։ Ուստի Անդրկովկասում տեղական ինքնակառավարման ոլորտում նոր բարեփոխումների հիմքում պետք էր դնել կառավարման եռաստիճան՝ «տեղամաս - վոլոստ - գավառ» գաղափարը, որն առանց վարչատարածքային նոր վերաբաժնման դատապարտված էր ձախողման։

Հայտ Վինոգրադսկու՝ նոր վերաբաժնման ճանապարհին առաջնաքայլը տեղական ինքնակառավարման առաջին օղակը սահմանելու էր, որը առավելագույնս կհանապատճեն տարածքի նվազագույն միաստարք բնակվածության պայմաններին, տնտեսական և կենցաղային միասնականության պահանջներին։ Անդրկովկասի վարչական կառուցվածքը ձևավորելիս ցարիզմը հաշվի չէր առնում բնակչության ազգային կազմը, երա տնտեսական կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները.² Կարևորելով այս չափանիշները՝ Վինոգրադսկին առաջարկում էր Անդրկովկասում տեղական ինքնակառավարման սկզբնական օղակ ճանաչել վոլոստը՝ գավառակը։

¹ Ռուսաստանի պատմության պետական արխիվ (այսուհետև՝ ՌՊՊԱ), ֆ. 1788, գ. 6, գործ 9, թ. 3:

² Իстория Азербайджана, т 2, Баку, 1960, стр 154:

1917թ. հուլիսի 1-2-ին և 8-ին հանձնաժողովի նիստերում շարունակվեցին քննարկել երկրամասի նահանգների և գավառների սահմանների փոփոխությունները իրականացնելու հարցերը, որոնք բխելու էին նախորդ նիստերում առաջ քաշած պահանջներից: Հանձնաժողովը սկզբում քննարկեց Կովկասյան լեռնականների ներկայացուցիչ Վ. Զարգիլի առաջարկությունը, համաձայն որի, Թիֆլիսի նահանգից Թէրեփի նարզին պետք է միացվին Դուչերի ու Գորիի գավառների խառն բնակչության կազմ ունեցող հատվածները, իսկ Քուրայիսի նահանգից՝ Ռաճինիի գավառի մի մասը, որը հիմնականում բնակեցված էր կիստինցիներով:³ Հարկ է նշել, որ, չնայած առաջարկությունը սկզբունքային առարկությունների առիր դարձավ, այնուհանդերձ, վրացական կողմը այն մերժեց: Զարքարալիի օկրուզի հարցում հանձնաժողովը քննարկեց ինչպես նրա տնտեսական, այնպես էլ էրնիկական առկա վիճակը և հանգեց այն եզրակացության, որ նապատակահարմար կիններ այն միացնել ոչ քե Թիֆլիսի կամ Ելիզավետպոլի նահանգներին, այլ Դաղստանի մարզին, առաջին հերթին բնակչության կազմի և նրա՝ Դաղստանի հետ առավել կապված լինելու հանգամանքով: Սուխումի օկրուզը առաջարկեց ընդգրկել Քուրայիսի նահանգի մեջ, իսկ Բարումի մարզում՝ սահմանային փոփոխություններ չանել: Առավել սուր քննարկման առարկա դարձավ Ելիզավետպոլի նահանգի սահմանների վերանայման հարցը, որի կապակցությամբ իրենց առաջարկություններն էին ներկայացրել նաև հայերը՝ Ա. Շահիսարունյանի և Գ. Խատիսայի ներկայացրած նախագծով:

Համաձայն այդ փաստարդի, Ելիզավետպոլի նահանգը, որն ուներ 38.6 հազար քառ. վերաս տարածք և 1միլիոն 117 հազար ազգաբնակչություն, բաժանվում էր 8 գավառների՝ Ելիզավետպոլի, Նուխիի, Արեշի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Կարյագինի: Նահանգում հայերը կազմում էին բնակչության ավելի քան 1/3-ը: Գավառների մեծ մասը բնակեցված էր հիմնականում հայերով, հատկապես նահանգի հարավարևամտյան հատվածը: Մահմեդականներով բնակեցված էր նահանգի հյուսիսելյան մասը, մասնավորաբար, լեռնային հատվածը: Համաձայն առաջարկի՝ Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյագինի և Զանգեզուրի գավառների միացումից կարելի էր ձևավորել հատուկ նահանգ, քանի որ այն անքողջությին կիանապատասխաններ ենք վարչատարածքային միավոր ստեղծելու պահանջներին՝ ազգային միատարրություն և միասնական կենցաղային սովորույթներ, իսկ աշխարհագրական սահմանները դրան համահունչ էին:

1. Ձևավորվող լեռնային նահանգի մեջ էին ընդգրկվելու Ղազախի գավառի մի մասը՝ որպես առանձին՝ Քարավան-Սարայի գավառ հետևյալ գյուղական համայնքերով: Ղազախի գավառից՝ Քարանշերի, Քաշքենդի, Կարախանլիի, Ղուշիի, Կուլախինի, Թաղինսկո, Թոռուզ-Ղալի, Հին Դիլջանի, Նոր Դիլջանի, Կարա-Կոյոնլորի, Կորիքենի, Աքսիրասարի, Միխայլովկայի, Շամբարակի, Ուզուն-Թալայի, Քարավանսարայի, Կարա-Ղաչի համայնքները:

2. Գանձակի գավառը պետք է բաղկացած լիներ Ելիզավետպոլի գավառի հետևյալ մասերից: II տեղամասն առանց Փիրիջան-Ալսեղի Զեյվայի և Սինգենչառորի գյուղական համայնքների, IV տեղամասի մեջ մտնելու էին Ֆրեզելսկի գյուղական համայնքները և V տեղամասի մեջ՝ Ելենովկայի, Միխայլովկայի, Չուրնարատի, Բայանի, Դումժայինսկի, Զագլիկի, Դաստաֆյուրի, Աղջարենդի, Բորիսինսկի, Էրքեջի, Զարդալիուի, Ֆրեզովկո, Գետաբեկի, Սյավանսկի, Միերինինինսկի, Կարա-Սուրադի (Այրում), Նովոսարատովկայի համայնքները և Ելիզավետպոլ քաղաքի աջակողմյան ափը:

3. Շուշիի գավառը պետք է կազմված լիներ Շուշիի նախկին գավառի I տեղամասից՝ առանց Սկորելսկի գյուղական համայնքի, Արքաղուզ և Ազգուանսկի տեղամասերից, Արքաղուզի գյուղական համայնքից, Ջիվանշիրի գավառի մի մասից և Թալիշյան գյուղական համայնքից ու Զանգեզուրի գավառի մի մասից: II տեղամասի

³ Կիստինցիները Կովկասյան պատերազմի ընթացքում (XIX դ. 40-ական թթ.) Զեշնիայի լեռնային նահանգը մերժվել է առաջարկությունը՝ ազգակից չեղանձերին, ինգուշներին, բացրիցներին (տե՛ս C. Երյակ, Հասելություն միաց, Մ., 1986, ստոր. 166):

մեջ մտնելու էին Զիվանշիր գավառի Կուշչիյար, Մազութի, Սաֆյան, Մելիք-Փայասի, Բեղիք Բեկլու, Կալանդարինսկի, Հաջի-Մահմանսկի, Ծիխովինսկի համայնքները, Կարյագինի գավառի՝ Հարբուր, Էղիլլու, Արարյուղ գյուղական համայնքները։ Զանգեզորի գավառը կազմելու էր նշված նահանգի մնացյալ հատվածը։

Հայկական Գանձակ նահանգի վարչական կենտրոն պետք է լիներ Ելիզավետպողի քաղաքի հայկական մասը՝ Գանձակը։ Վարչատարածքային այսպիսի փոփոխությունները հետո Գանձակի նահանգում հայերը կվազմեին 366 հազար, իսկ մահմեդականները՝ 177 հազար մարդ՝ համապատասխանաբար 64,31 և 5%։ Գանձակի նահանգը կունենար 4 գավառներ՝ Գանձակի, Շուշիի, Ջարավան-Սարայի, Զանգեզորի։

Ելիզավետպողի նահանգի մահմեդական հատվածից կազմելու էր առանձին՝ Գյանջայի նահանգը՝ բաղկացած Ղազախի, Ելիզավետպողի, Արեշի, Նովսու, Քարդայի, Կարյագինի գավառներից հետևյալ էթնիկական կառուցվածքով. մահմեդականներ՝ 620 հազար մարդ, հայեր՝ 53 հազար, այլը՝ 31 հազար։⁴

Ա. Չահիսարունյանի և Գ. Խատիսյանի ներկայացրած փաստաթրում նշված էին նաև գյուղական մի շարք համայնքներ, որոնք մտնելու էին Գանձակի նահանգի մեջ՝ միայն տնտեսական ու աշխարհագրական գործոններով պայմանավորված։ Քանի որ դրանք (Կարախանիլի և Կուշչի գյուղական համայնքները՝ Ղազախի գավառից, Պողարինսկի և Կաջարիի համայնքները՝ Շուշիի գավառից, Թեմուր-Սասկուի, Դուղուարիլինի, Շեխսավունսկի, Խոջազանի, Սոլլա-Բուրանի և Ռուրանակիի գյուղական համայնքները) բնակեցված էին մահմեդականներով, առաջարկվեց, որ պեսզի այդ համայնքները ևս մտնեին Ելիզավետպողի նահանգի մեջ։ Դրա հետևանքով Ելիզավետպողի նահանգի բնակչության կազմը կունենար հետևյալ տեսքը. 663 հազար մարդ կամ 89%-ը՝ մահմեդականներ, 53 հազարը կամ 7%-ը՝ հայեր, 31 հազարը կամ 4%-ը՝ այլը։ Գանձակի նահանգը կատանար հետևյալ տեսքը. հայեր՝ 366 հազար մարդ կամ 70%, մահմեդականներ՝ 134 հազար կամ 25%, այլը՝ 28 հազար կամ 5%.⁵ Մահմեդական բնակչության ներկայացուցիչներից Ա. Խան-Խոյսկին և Շեյխ ուլ Խալամովը հայտարարեցին, որ քննարկվող հարցի կապակցությամբ իրենք որևէ պաշտոնական տեսակն հայտնելու իրավասություն չունեն, քայլ որպես մասնավոր անձ կողմնակից են նահանգի դաշտավայրային և լեռնային մասերը միմյանցից չանցատելուն,⁶ քանի որ դրանք սերտորեն կապված են միմյանց տնտեսապես (արտօսվայրեր, ռողորում, անասնապահություն, քոչվոր մահմեդականներին բնորոշ ապրելակերպ՝ ձմռանը դաշտավայրում, անռանը՝ լեռներում և այլն)։ Մահմեդական կողմը միաժամանակ լժագործություն հայտնեց առ այն, որ բուրք-քարարներով բնակեցված նահանգում հայերի թիվը, համաձայն հայերի ներկայացրած նախագծի, կազմելու է 53 հազար մարդ, մինչդեռ հայերով բնակեցված Գանձակի նահանգում բուրք-քարարների թիվը անցնելու էր 134 հազարի սահմանը, ինչն չէր կարելի արդարացի համարել։⁷

Ա. Չահիսարունյանի և Գ. Խատիսյանի առաջարկությամբ՝ Ալեքսանդրապոլի նահանգի կազմի մեջ էին ընդգրկվելու Ալեքսանդրապոլի, Ախալքալակի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառներն ու օկրոզները՝ բնակչության եթերկանան հետևյալ կազմով։

գավառի անվանումը	ընդամենը (հազար մարդ)	հայ (հազար մարդ)	%	մահմեդական (հազար մարդ)	%	այլը (հազար մարդ)	%
Ալեքսանդրապոլի	204	160	83	22	11	12	6
Ախալքալակի	120	94	79	10	8	16	13
Լոռու	120	92	77	14	12	14	11
Կարսի	193	83	43	49	25	61	32
Կաղզվանի	82	35	43	26	32	21	23
Ընդամենը	719	474	66	121	17	124	17

⁴ Ո-ՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ. 5:

⁵ Ո-ՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ. 5:

⁶ Նույնը:

⁷ Ո-ՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ. 5:

* Ռուսներ, հույներ, քրդեր, եղիմակներ և ուրիշներ:

Այսպիսով, Անդրկովկասի երեք հայկական նահանգներում (Երևանի, Ալեքսանդրապոլի և Գանձակի) 2 մլն. 702 հազար բնակչությունից հայեր էին լինելու 1մլն. 767 հազարը (65.4%), մահմեդականներ՝ 757 հազարը (28%), այլը՝ 178 հազարը (6.6%).⁸

Հանձնաժողովը չկարողացավ հաղթահարել քննարկումների ընթացքում ծագած տարածայնությունները, և արդեն հույսի 8-ի նիստին մահմեդական կողմը (Խան Խոյսկի և Շեյխ ուլ Խալամով) շնասնակցեց փաստորեն բոյկոտելով այն:

Հայկական կողմն իր ներկայացրած նախագծում անդրադարձել էր նաև Լոռի-Բորչալու և Աշխալալակի տարածաշրջանները Թիֆլիսի նահանգից անջատելու և այն նորակազմ Ալեքսանդրապոլի նահանգի մեջ ընդգրկելու նպատակահարմարությանը և հանդիպեց վրացական կողմի դիմադրությանն ու առարկություններին:

Անդրկովկասի բուրք-քարարները որպես վերաբաժանման հիմք առաջարկում էին ճանաչել մինչ Ռուսական կայսրության կազմի մեջ ընդգրկվելը Անդրկովկասի ունեցած նախկին վարչատարածքային սահմանները: Իսկ դա նշանակում էր մի այնպիսի հզոր մահմեդական կազմավորման ստեղծում, որն իր մեջ ներառելու էր 1. Ղուբայի, Շաքի, Շիրվանի, Բաքվի, Թալիշի նախկին խանությունները և Մուղանի տափաստան ապագա Բաքվի նահանգի կազմում, 2. Գյանջայի, Ղարաբաղի, Նախչևնի նախկին խանությունների տարածքները ապագա Ելիզավետպոլի նահանգի կազմում:

Փաստորեն վրացական և բուրք-քարարական ծրագրերի իրականացման դեպքում «Հայաստան» հասկացությունը պետք է տարածվեր Երևանի նահանգի միայն Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Երևանի գավառների վրա, ընդ որում, Երևանի գավառի առանձին տեղամասեր էլ դեռևս կարող էին վիճելի համարվել: Փոխհամաձայնության միջոցով երկրամասը վարչատարածքային վերաբաժանման ենթակելու փորձերը փաստորեն դրական արդյունքի չհանգեցրին: Անդրկովկասայան երեք ազգությունների ներկայացուցիչների միջև հակասություններմ այնքան խարցան, որ որոշվեց ժամանակավորապես դադարեցնել քննարկումները, ինչն ըստ եռյան նշանակում էր դրանք փակուղի նտցնել:

Առանձին հարցեր քննարկումների առարկա դարձան նաև ՕՉԱԿՈՍ-ին կից գեմստիյական խորհրդակցության նիստերում, որտեղ նախագահում էր վրաց մենշիկոնների առաջնորդներից մեկը՝ Ա. Չիսենկելին: Խորհրդակցության օրակարգի հիմնական հարցը վերաբերում էր տեղական ինքնակառավարում նոցնելուն: Սոցիալ-դեմոկրատ (մենշիկ) Ղազար Տեր-Ղազարյանը, խոսելով վարչատարածքային վերաբաժանման ողղությամբ ծավալած աշխատամքների մասին, նշեց, որ Անդրկովկասի ազգային-կուսակցական դեկապարտիան ներկայացուցիչների միջև քննարկվող հարցի կապակցությամբ ոչ թե համընդիանուր, այլ միայն մասնակի համաձայնություն է կայացվել Ելիզավետպոլի նահանգի վերաբաժանման շորջ՝ նահանգը հայկական և քարարական նասերի բաժանելու կապակցությամբ:⁹ Ղ. Տեր-Ղազարյանի կողմից առաջ էր քաշվել հայկական նահանգների՝ Ալեքսանդրապոլի, Երևանի, Գանձակ-Շուշիի հիմնական մարզի վերաստեղծման գաղափարը:¹⁰

Վրացիները դեմ էին բացառապես հայերով բնակեցված Ախալքալակի և Բորչալուի գավառները Թիֆլիսի նահանգից անջատելու և Հայկական մարզի մեջ ընդգրկելու գաղափարին՝ դա համարելով այս տարածքներում այլազգինների իրավունքների ուսնահարում, որն Անդրկովկասում կրանար ազգամիջյան հարաբերությունների սրման պատրիակ: Ա. Չիսենկելին հանդես եկավ առաջարկությամբ. մինչև Անդրկովկասայան երեք ազգությունների ներկայացուցիչների միջև վարչատարածքային վերաբաժանման հիմնահարցերի շորջ կայուն համաձայնություն շկայանա, հարցի քննարկումը չներկայացնել Ժամանակավոր կառավարություն և վերջինիս խնդրել միջոցառումներ չձեռնարկել՝ առանց հաշվի առնելու երկրամասի ժողովուրդների ազգային-կուսակցական դեկապարտիան կարծիքը: Բոլշևիկյան կուսակցության անունից Ֆ. Մախարաձեն առաջարկեց Անդրկովկասի համար առաջնային խնդիր դիտել տեղական ինքնակառավարում նոցնելն առանց վարչատարածքային վերաբաժանմումների,

⁸ Նոյեմբերում, թ. 6:

⁹ Կավկազ, վեստուն ՕԶԱԿՈՄԱ, 14 նոյեմբեր, 1917, ստ. 4.

¹⁰ Նոյեմբեր:

իսկ վերջինիս անդրադառնալ հետազայում, որովհետև Անդրկովկասում նախապայմաններ պիտի ատեղծվեն առաջին հերթին հողային հարցի լուծնան համար:

Տեղական ինքնակառավարման հարցերի շորջ երկրորդ խորհրդակցությունում նորից կողմերից յուրաքանչյուրը պնդեց իր տեսակետը, բացառությամբ Ֆ. Մախարանեի, որն այս անգամ առաջարկեց Անդրկովկասը Վարչատարածքային վերաբաժնում ներարկել հանրաքվեի միջոցով, քանի որ «միայն ժողովուրդն ինքն իրավունք ունի լուծելու վարչատարածքային վերաբաժնում հարցը»:¹¹ Ի վերջո խորհրդակցությունը, քննարկելով վարչատարածքային վերաբաժնում խնդիրները, եկավ այն եզրակացության, որ Անդրկովկասում տեղական ինքնակառավարում առաջին հերթին անհրաժեշտ է մտցնել այն վայրերում, որտեղ չկան վիճելի տարածքային հարցեր: Որպես վիճելի տարածքներ առաջարկվում էր ճանաչել Երևանի նահանգն ամբողջությամբ, Եղիզավետպողի նահանգն առանց Նոյսիի և Արեշի, Կարսի մարզից Կարսի ու Կաղզվանի օլյուգները և Թիֆլսի նահանգից Բորչարդի ու Աղսարալակի գավառները:¹²

Վերոշարադրյալը ցայտուն կերպով ցոյց է տալիս, թե վրացիներն ու կովկասյան բուրք-քաթարները հայկական ծրագրերի իրականացման դեմ ինչպես էին միասնական ճակատ կազմում, և պատահական չէր, որ հայերին զայելու «զավագույն» տարբերակներից մեկը համարվեց ոչ ավել, ոչ պակաս, Արարատյան դաշտավայրի կենտրոնի պատմական Հայաստանի հարյուրամյակներով ձևափրկած բնօքրանը՝ Երևանի նահանգը վիճելի տարածք դիտելը: Երկարատև քննարկումներից հետո խորհրդակցությունն ընդունեց միջանկյալ որոշումներ:

1. «Անդրկովկասում վարչատարածքային սահմանների ընդհանուր Կանոնադրություն» ընդունելը միայն Ժամանակավոր կառավարության իրավասությունն է և միայն նրան պետք է վերապահվի երկրամասի վարչատարածքային սահմանների վերածման և դրաշնան կապակցությամբ հասուն Պելրուտի ընդունման իրավունքը:

2. Տեղական ինքնակառավարում մտցնել այն տեղերում, որ չկային տարածքային վեմեր, և դրա իրավունքը ևս վերապահել Ժամանակավոր կառավարությանը:

3. Վիճելի տարածքներում տեղական ինքնակառավարում մտցնելու նախապայման համարել վարչատարածքային վերաբաժնումնան իրականացումը:¹³

Որոշվեց Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժնան ծրագիրը ուղարկել Պելրուտադ և այնտեղից հանապատճախան հանձնարարագրեր ստանալուց հետո միայն ճենանամոխ լինել դրա իրականացմանը: 1917թ. հունիսի 29-ին Ժամանակավոր կառավարության կողմից ձևափրկեց հանձնաժողովը, որի նպատակն էր հասնել Անդրկովկասում վերանշյալ խնդիրների լուծնանը: Հարցերի քննարկումը հանձնաժողովին բերեց այն եզրակացության, որ Անդրկովկասում վարչատարածքային վերաբաժնան իմքում առաջնահերթորեն պետք է դրվի էրեխկական միաստարդության զաղափարը՝ իհարկե, հաշվի առնելով նաև բնական-աշխարհագրական և տնտեսական կենցաղային պայմանները:

1917թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում իրականացված միջոցառումները, որոնք վերաբերում էին Անդրկովկասում տեղական ինքնակառավարման և վարչատարածքային վերաբաժնան խնդիրներին, որոշակի մտահոգություն և անհանգստություն առաջ բերեցին կենտրոնական իշխանություններում: Այն, որ Ժամանակավոր կառավարությունը ձգուում էր վերևից իրահանգվող միջոցառումներով մեղմել ազգամիջյան հարաբերություններում առկա լարված մթնոլորտն Անդրկովկասում, կասկած չէր հարուցում: Բայց, որ որոշակիորեն մեղմացված քաղաքական դաշտի հետևանքով Անդրկովկասային ժողովուրդների կողմից դրստրվող քաղաքական ակտիվությունը կայու էր դրսու գալ վերահսկելության շրջանակներից, սկսեց խասորեն անհանգստացնել Ռուսաստանի՝ իրեն ժողովրդավար համարող կառավարությանը: Մեր համոզմանը, հենց դա էլ եղավ դրապատճառներից մեկը, որպեսզի Ժամանակավոր կառավարությունը նախաձեռներ «Կովկասում Ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիտեի կառավարման մասին կանոնադրության» ընդունումը 1917թ. օգոստոսի 4-ին:

¹¹ Կավказ, вестник ОЗАКОМА, 14 ноյбр, 1917, стр. 4.

¹² Նոյն տեղում, 8/251/10 ноյбр, 1917.

¹³ Նոյնը:

Համաձայն այդ փաստաթղթի՝ Երկրամասը բաղկացած էր լինելու հետևյալ միավորներից. Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Գուրայիսի, Ելիզավետպոլի նահանգներից, Թերերի, Դաղստանի, Կարսի, Բարումի մարզերից և Զաքարայի ու Սովորովի օկրուգներից:

Երկրամասի կառավարիչ էր լինելու Գերազույն Կոմիսարը, որն իր գործունեությամբ ենթարկվելու էր միայն Ժամանակավոր կառավարությանը: Նրան առընթե՛ր՝ Երկրամասի կառավարման նպատակով ստեղծվելու էր Վարչական խորհուրդ:¹⁴ Տեղական ինքնակառավարման համակարգում իրքն գործադրության լեզու էր ճանաչվելու նաև ազգայինը, իսկ ազգամիջյան բնույթի գործառությունների ժամանակ՝ միայն ուստիենք: Ակզենտական նախագծում չեղ նշվում Վարչական խորհրդի կազմի երեխական ընդգրկվածության մասին, սակայն հետազայտմ զգալով, որ դա կարող էր հանգեցնել բարորությունների, կառավարությունը հասող նշեց, որ խորհուրդը բաղկացած է լինելու հայերից, վրացիներից, կովկասյան բոլոր-բարարներից և լեռնականներից:¹⁵

Կովկասյան գործերով Գերազույն կոմիսարի առնչությունները կենտրոնական իշխանությունների հետ ապահովելու նպատակով Ժամանակավոր կառավարությունը Պետրոգրադում ստեղծելու էր Կովկասյան գործերով Կոմիսարիատ: Հարկ է նշել, որ Ժամանակավոր կառավարության քաղաքական իշխանության ամիսներին Երկրամասի ժողովուրդների ազգային-կուսակցական և քաղաքական շրջանակները Ռուսաստանից անջատվելու և անկախ պետություն Խոչակվելու խնդիրներ առաջ չեն քաշում: «Մեր նպատակն է, - նշում էր Լ. Նազարյանը, - հասնել այն բանին, որպեսզի ազատ և ուժին պետության ստեղծմանը նպաստենք եղայրական միասնականության ստեղծմանը Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների համար»:¹⁶ Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների գերնպատակը քաղաքական հավասարակշռությունը (պարիտետը) և կառավարելությունը Անդրկովկասում ապահովվելն էր:

ПРОБЛЕМЫ РЕОРГАНИЗАЦИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ЗАКАВКАЗЬЕ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ В РОССИИ ВРЕМЕННОГО ПРАВИТЕЛЬСТВА (февраль- октябрь 1917г.)

— *Резюме* —

— *А. Геворгян* —

Предпринятые Временным правительством России меры по проведению реформы в области местного самоуправления с целью реорганизации системы местной власти в Закавказье являлись важнейшими политическими мероприятиями (решение Временного правительства от 1-го июня 1917г.) Кавказа и имели важное значение для выработки основных положений реформы. Проект реформы по самоуправлению и управлению Кавказа не исключал вопрос об административном переделе края. Комиссия по выработке комплексной программы реорганизации местного самоуправления в Закавказье считала желательной и целесообразной изменение административных границ края на этнической основе, на что Совещание при министре внутренних дел России откликнулось положительно.

В 1917г. влиятельные национально-политические круги Закавказья в своих предложениях по вопросу об административном переделе Закавказья выступали совершенно с противоположными позициями. Политический максимализм каждой стороны сделал невозможным достижение компромисса в области урегулирования межэтнических отношений, что и в дальнейшем стало причиной развязки военных конфликтов в Закавказье.

¹⁴ *Кавказ,вестник ОЗАКОМА*, 8/251/10 ноября, 1917, 4.

¹⁵ *Նուն տեղում*, թ 35

¹⁶ *ՌԴՊԱ*, թ. 3529, ցուցակ 1, գործ 4, թ. 1:

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում կազմավորված գավառներում ստեղծվեցին իշխանության նշանակովի մարմիններ՝ հեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանության հաստատումն էր:¹ Գավառները բաժանվում էին տեղամասերի, վերջիններս էլ՝ գյուղական հասարակությունների, որոնց հեղկոմները կենտրոնական իշխանության հետ կապը պահպանում էին տեղամասային հեղկոմների միջոցով: Խորհրդային իշխանության հաստատման գործնքացը կազմակերպում ու դեկավարում էր ՀԿ/ք/Կ Կենտկոմը: Իշխանության պետական մարմինների կազմավորմանը զուգընթաց ձևավորվում էին գավառային ու շրջանային (գավառակային) կուսակցական կազմակերպությունները: Սակայն նորաստեղծ իշխանության պետական ու կուսակցական մարմիններն ի սկզբանեւ լուրջ տարածայնություններ ունեին իրականացվող քաղաքականության և իրենց իրավասության սահմանների վերաբերյալ հարցերում: Երկրի ներքին կյանքին բնորոշ այս իրողությունն առանձնակի դրսևորում ունեցավ Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ Հեղկոմ ստեղծվել էր դեռևս 1920թ. նոյեմբերին՝ բուրքերի կողմից գավառը գրավելուց հետո, և համագործակցելով բուրքերի հետ, հույս ուներ մի կողմից բուլացնել բուրքական օկուպացիոն ռեժիմը, մյուս կողմից՝ ամրապնդել խորհրդային իշխանությունը: Սակայն այդ համագործակցությունն ավելի շուտ վարկաբեկեց խորհրդային իշխանությունը, և հեղկոմը ստիպված եղավ 1921թ. հունվարի 25-ին վայր դնել իր լիազորությունները: Կուսակցության բոյլ հեղինակությունը բարձրացնելու և Ալեքսանդրապոլի խորհրդայնացումը նախապատրաստելու նպատակով 1921թ. ապրիլին այստեղ անցկացված Հայաստանի Կոնունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության առաջին կոնֆերանսը դատապարտում և քաղաքականական սխալ է որակում Ալեքսանդրապոլի Հեղկոմի գործունեությունը.² Դրանից հետո գավառում կուսակցության քաղաքականությունն իրականացնում էր Գավկանը՝ իր մի շարք բաժիններով՝ ինֆորմացիոն-կազմակերպչական, հաշվառման և բաշխման, ազիտացիոն-պրոպագանիստական, գյուղացիների մեջ աշխատանքի և այլն:³ Գավկանի հիմնական խնդիրներն էին՝ կուսակցության հեղինակության բարձրացումը և կուսակցականների թվի ավելացումը: Ի դեպ, շատերը մտնում էին կուսակցության շարքերը՝ իրենց գոյությունը մի կերպ պահպանելու համար: Գավկանին ուղղված կուսակցականների դիմումներից երևում է, որ նրա հաշվառման և բաշխման բաժնի ճռոքում կենտրոնացված էին առաջին անհրաժեշտության մեծաքանակ իրեր և մքերքներ, որոնք բաշխվում էին միայն կուսակցական ընկերներին:⁴

Ծովքերի հեռանալոց հետո՝ 1921թ. մայիսի 23-ին, կազմակերպվում է Ալեքսանդրապոլի գավառական՝ Ս. Մանուչյանի նախագահությամբ:⁵ Չնայած որ գյուղական, գավառակային և գավառական հեղափոխական կոմիտեների կազմակերպման մասին ՀԽՍՀ ժողովադատության դեկրետում հատուկ մատնանշվում էին հեղկոմների գործառույթները,⁶ այնուամենայնիվ կուսակցական մարմինները հաճախ իրենց վրա էին վերցնում նաև դրանք:

Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունն իր վրա կրեց խորհրդային իշխանության կազմավորման շրջանի ողջ ծանրությունը թև՝ քաղաքական և քե՛ տնտեսական առումով: Ռազմական կոնունիզմի քաղաքականությունը տնտեսական կյանքում և կոնունիստական կուսակցության մենատիրության հաստատումը քաղաքական կյանքում

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱՍ), ֆ. 1022, գ. 3, գ. 336, թ. 1:

² Տե՛ս, ՀԱՍ, ֆ. 3, գ. 1, գ. 3, թ. 6:

³ Նոյեմ տեղում, գ. 6, թ. 14:

⁴ Նոյեմ տեղում, գ. 22, թ. 4:

⁵ Տե՛ս, Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Եր. 1974, էջ 61:

⁶ Նոյեմ տեղում, էջ 63-71:

նոր փորձություններ դարձան Ալեքսանդրապոլի գավառի բնակչության համար: Թուրքական զինականան պայմաններում գտնված Ալեքսանդրապոլի գավառում շարունակվում է իրեն սպառած և չարդարացված ռազմական կոմոնիզմի քաղաքականությունը: Թուրքերի կողմից քաղաքական բնակչության վերջին ունեցվածքը բռնագրավում է կարմիր բանակին կերակրելու համար: Գյուղի բնակչությունից պահանջվում է տրամադրել իր հացի ողջ ավելցուկը քաղաքի բանվորության և զորքի կարիքների համար՝ դրա դիմաց ստանալով անդրբրագիր, որ իրավունք կտար նրանց ապագայում համապատասխան քանակի վայրուտային ապրանք պահանջել պետական նքերանցներից.⁷ Սակայն միշտ չէ, որ այդ ստացականները տրվում էին:⁸ Ընդ որում, պարենամբերքը բռնագրավում էր ոչ թե ավելցուկ ունեցող գյուղացիներից, այլ ամրող գյուղից: Գաղքականներով ու որբերով հեղեղված Ալեքսանդրապոլի գավառում տնտեսական ծայրահեղ քայլքայման պայմաններում ապրող չքավոր գյուղացիները վճարելու գործը ոչինչ չունեիմ: «Այսու պատիվ ունենք հայուներու Ձեզ,- կարդում ենք Ղըրըն գյուղի հասարակությունից Ալեքսանդրապոլի հեղեղումին ուղղված 1921թ. հունիսի 7-ի խնդիրում,- որ ներկա թվի մայիսի մեջը մեր 4-րդ գավառամասի Հեղեղումի նախագահի շրջաբերական հրամանի համաձայն մեզամից պահանջվում էր 20 փոր միս, բայց մենք ընչազորկ ենք և քայլքայված, միանգանայն չենք կարող այլպիսի պահանջներին բավարարվածություն տալ քանի որ մենք կանաչով ենք սնվում: Ուստի խնդրում ենք հնարավորին չափ մեզ խնայեք: Ներկա ողբորմնի դրության մեջ գտնվող ընչազորկ ու քայլքայված գյուղացիներին ազատեք այդ պահանջնց».⁹ Ճիշտ է, հետագայում հեղեղումը որոշում է գյուղացիներին և քաղաքացիներին վճարել բանակի կարիքների համար «քրնագրավված հացահատիկի, խոտի ու տավարի արժեքը», բայց միևնույն է, գյուղացիները չին կարող բավարարել այդ պահանջները: 1921թ. հունիսի 21-ին Զավքառություն բնակչները՝ Ալեքսանդրապոլի պարենամբան բաժնի վարչին ուղղված գրությունում տեղեկացնում են, որ իրենք գտնվում են անելանելի դրության մեջ և խնդրում են շուտափույթ վերացնել գնումները:¹⁰

Քռնագրավումները կրում էին անկանոն և զանգվածային բնույթ: Դրանցով զբաղվում էր թե՛ հեղեղումը, թե՛ գավկումը և թե՛ զինկումը: Այս վիճակին վերջ տալու նպատակով Ալեքսանդրապոլի շրջանային հեղեղումի ՆԳ բաժնի վարիչ Հ. Ամառունին 1921թ. մայիսի 6-ի շրջաբերականով արգելում է ամեն տեսակի բռնագրավումները և խուզարկությունները, առաջարկում միլիցիայի պետին և զավիելկումների նախագահներին՝ իրենց իսկ անձնական պատասխանատվությամբ, անմիջապես դադարեցնել անպատասխանատու անձնավորությունների ինքնական և ապօրինի գործունեությունը և խստագույն հսկել տայն շրջաբերականի իրազործումը, իսկ մինչ այդ տեղի ունեցած բոլք խուզարկությունների և բռնագրավումների նասին խիստ քննություն կատարելուց հետո շուտափույթ իրազեկ անել իրեն:¹¹ Զնայած սրան՝ քռնագրավումները երկար ժամանակ չին դադարում: Քռնագրավումներից չի ապահովում նաև անցումը նոր տնտեսական քաղաքականության, որի հիմքում դրված էր պարենակարկը: Մի կրղմից հասկանալով, որ բռնությունների քաղաքականությունը վճարում է գյուղացու տնտեսությանը, կառավարությունը անցնում է պարենակարկի, նյուս կողմից՝ ցուցազրելով գյուղացու ամքող ունեցվածքը՝ շարունակում էր այդ քռնագրավումները: Ալեքսանդրապոլի գավիեղկումի նախագահ Ա. Չահզելյանը բոլոր գավառային և գյուղական հեղեղումներին ուղղված հրամանում տեղեկացնելով պարենատուրքի անցման մասին, հայտնում է, որ թերքը թաքցնողները կհամարվեն ժողովրդի թշնամիներ, կուլակներ, որոնց պետք է բանտարկել և ունեցվածքը բռնագրավել: ¹² 1921թ. սեպտեմբերի 15-ին Հայաստանի կոմոնիստական կուսակցության գավառային կոմիտեն և Ալեքսանդրապոլի գավիեղկումի նախագահ Ա. Չահզելյանը գյուղացիներին հանձնելու պարենատուրքը՝ միաժամանակ սպառնալով բերքի չափը թաքցնելու դեպ-

⁷ Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 1022, գ. 4, գ. 72, թ. 20:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 144, գ. 3, գ. 2, թ. 44:

⁹ Նոյն տեղում, թ. 82:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 144, գ. 3, գ. 2, թ. 75:

¹¹ Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 3, գ. 1, գ. 19, թ. 10:

¹² Նոյնը:

բում բանտ նատեցնել, ունեցածը բռնագրավել, նոյնիսկ կանգ չառնելով գնդակահառության առաջ:¹³ Սեպտեմբերի 19-26-ը պարենտուրքը հավաքող զավառային հաճախաժողովը հայտարարում է ստուգման շաբաթ՝ գյուղացիներին տեղեկացնելով, որ նրանք այդ շաբաթվա ընթացքում հնարավորություն ունեն ուղղելու իրենց սխալ տվյալները, այլապես նրանց փրկություն չկա:¹⁴ Պարենտուրքի հիմնական սկզբունքը դասակարգային նոտեցումն էր, որի համաձայն՝ հարկ դրվում էր միայն հարուստների վրա, որպեսզի գյուղացիներն իրենք մատնանշեն, թե ովքեր են հարուստները:¹⁵ Այս սկզբունքի կենսագործումը սրում է իրավիճակը զավառում: Բնակչության շրջանում լուրեր են տարածվում խորհրդային իշխանության ժամանակավոր լինելու մասին: Ալեքսանդրապոլի զավառային Արտօնարգ հանձնաժողովի նախագահին ուղղված մի զեկուցագրում նշվում էր, որ բնակչության մեծամասնության, հատկապես զարդարանության վերաբերմունքը խորհրդային իշխանության նկատմամբ քշնամական է:¹⁶ Ալեքսանդրապոլի կոմունիստական կուսակցությունը ստիպված է լինում դիմելու ազգաբնակչության՝ հորդորելով հանգստության և խաղաղության:¹⁷ Քաղաքական աշխատանքներ են տարկում կուսակցության և խորհրդային իշխանության հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: 1921թ. նոյեմբերի 24-ի շրջաբերականով Ալեքսանդրապոլի զավառի հեղկոմի նախագահն առաջարկում է. «...առանձին խնամքով ընդառաջ գնալ տեղական կարիքներին և բավարարել աշխատավոր տարրերի արդարացի խնդիրները, նպատակ ունենալով այն բերահավատության դեմն առնելու, որը հետևաբեր է նման անտարբերության և հետ է մղում խորհրդային իշխանությունից աշխատավորության լայն զանգվածների ու նպաստավոր հող ստեղծում մեր քշնամների պրովոկացիոն գործունեության համար»:¹⁸ Սեկ այլ շրջաբերականով հեղկոմի նախագահը առաջարկում է զավառակային հեղկոմներին՝ հրաժարվել դատական գործառույթներից և դրանք հանձնել դատական հիմնարկություններին:¹⁹

Ստեղծված իրավիճակն օգտագործվում է կոմունիստական կուսակցության քաղաքական իշխանությունն ամրապնդելու համար: Կուսակցության քաղաքականությունից բնակչության դժողությունների համար մեղադրվում են իշխանության մարմինները, որոնք իբր ծիշտ չեն իրականացնում կուսակցության քաղաքականությունը: Քաղաքական անմեղ նարդիկ հալածանքների և բռնությունների են ենթարկվում: Կուսակցությունը պարբերաբար անցկացնում է իր անդամների զուտ, և մեծ մասամբ խորհրդային իշխանության մարմիններում աշխատողներն են հետազոտմ կուսակցությունից, նրանցից շատերը նոյնիսկ ձերբակալվում են:²⁰ Ալեքսանդրապոլի զավառի կուսակցականների վերացուցակագրումը տեղի է ունենում 1921թ. հունիսի 1-3-ը:²¹ Այն հնարավորություն է տալիս կուսակցությունից հեռացնելու հատկապես մտավորականներին:²² Հերթական վերացուցակագրումը տեղի է ունենում սեպտեմբերիմ:²³ Սեպտեմբերի 1921թ վականի վերջերը կուսակցությունից հեռացվում է մտավորականության մեծ մասը և ապահովվում կոմունիստական կուսակցության հաղթանակն առաջիկա ընտրություններում:

1921թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի զավառում Հայաստանի խորհրդային իշխանության իրականացրած քաղաքականությունը շրաբելավեց բնակչության տնտեսական վիճակը, այլ միայն ամրապնդեց կոմունիստների քաղաքական իշխանությունը՝ հիմքեր ստեղծելով կոմունիստական մենատիրության հաստատման համար:

¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 3, գ. 1, գ. 16, թ. 4:

¹⁴ Նոյն տեղում, թ. 7:

¹⁵ Նոյն տեղում, գ. 66, թ. 31:

¹⁶ Նոյն տեղում, գ. 6, թ. 19:

¹⁷ Նոյն տեղում, գ. 16, թ. 6:

¹⁸ Նոյն տեղում, գ. 18, թ. 15:

¹⁹ Նոյն տեղում, թ. 11:

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 1, գ. 158, թ. 3:

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 3, գ. 1, գ. 47, թ. 68:

²² Նոյն տեղում, գ. 4, թ. 36:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, գ. 3, գ. 1, թ. 13:

АЛЕКСАНДРАПОЛЬСКИЙ УЕЗД В ПЕРИОД УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

— Резюме —

— К. Алексанян —

После ухода турков в апреле 1921г. население Александрапольского уезда на своих плечах вынесло все трудности и последствия установления Советской власти: военный коммунизм, продразверстка, от которых не освобождал и переход к НЭП-у.

Сложившуюся ситуацию компартия использовала в целях укрепления своих позиций, обвиняя в трудностях исполнительные органы Советов, которые якобы неверно реализовывали политику партии.

Периодически проводившиеся чистки исключали из партии в основном сотрудников Советов, которые были в основном представителями интеллигенции, многие из них были арестованы. Все это обеспечивало победу компартии на выборах в Советы, создавая условия для утверждения единовластия коммунистов.

Կարինե ԲԱԶԵՅԱՆ

XIX ԴԱՐԱՎԵՐՋԻ ԿԱՐՍԻ ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ԸՍՏ ԱՏՐԴԵՏԻ «ԻՆՉ ԺԱՌԱՆԳԵՑԻՆՔ» ԶԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Կարսը Արևմտյան Հայաստանի այն նշանավոր քաղաքներից էր, որտեղ դեռևս միջնադարում բարձր զարգացման էին հասել արհեստներն ու առևտուրը: Խղ. դառնալով Բագրատունյաց նայրաքաղաք, Կարսը, հայ պատմիչների վկայությամբ,¹ վերածվեց խոշոր առևտրարհեստավորական կենտրոնի, որտեղով անցնում էին Առևելք-Արևմտյան տարանցիկ առևտրական ճանապարհները.² Մոնղոլների և միջինասիական վաշկատունների արշավանքների հետևանքով Կարսը և նրա ծաղկող տնտեսությունը անկում ապրեցին: Քաղաքի բնակչությունը, որն ըստ Թ. Հակոբյանի իր ամենաբարձր զարգացման տարիների ընթացքում հասնում էր շուրջ 50000-ի, արտագաղթի հետևանքով նվազեց: Սակայն, շնորհիվ իր անառիկ բերդի և իր տեսակի մեջ եզակի պաշտապանական այլ ամրությունների, քաղաքը չկորցրեց իր ռազմավարական նշանակությունը և բուրքական տիրապետության տարիներին դարձավ առանձին փաշայության կենտրոն՝ մտնելով Էրզրումի սերասկյարության կազմի մեջ:³ Մեզ հետաքրքրուող ժամանակաշրջանում Կարսը մնում էր երեսի մի բերդաքաղաք, որն ուներ քաղաքային կենցաղին բնորոշ դիմագիծ և իր ռազմավարական նշանակության շորովիվ դարձել էր յուրատեսակ կովախնձոր Թուրքիայի և Ռուսաստանի միջև: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարս քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության մի զգակի հատված զարդեց՝ հաստատվելով Գյումրիում և Շիրակում:⁴ Չնայած դրան քաղաքը չկորցրեց իր արհեստավորապետական դեմքը, իսկ 1878թ. Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց և առանձին վարչական միավորի (Կարսի մարզ) կենտրոն դառնալուց հետո նոր վերելք ապրեց: Գյումրի-Ալեքսանդրապոլը, որը համարվում է Կարսի ավանդույթների ուղղակի կրողը, նույնական գօնում է փոխադարձ կապերի, ազգեցույթունների հետազոտման անհրաժեշտություն: Ալեքսանդրապոլ-Կարս տնտեսամշակութային կապերն ավելի ամրապնդվեցին վերոհիշյալ իրադարձություններից ու հատկապես երկու քաղաքների միջև երկարուղու կառուցումից հետո:

Իր արհեստավորապետական հարուստ ավանդույթներով հայտնի Կարս քաղաքը ցայսօր պատշաճ գիտական ուսումնասիրության առարկա չի դարձել: Նույն նախանցյալ դարում Մոսկվայում հրատարակված Կրպեհ «Կարս քաղաք»⁵ ուսումնասիրությունը սիրողական-ճանաչողական բնույթ ունի: Հարկ է նշել նաև «Մշակ»-ում տպագրված Խ. Սառանկողյանի հոդվածը,⁶ որում վերլուծվում են Կարսն և Կարսի համարային կարգերը: Որոշ աղբյուրագիտական բնույթի տեղեկություններ կան նաև ռուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուներում,⁷ որոնք կցկուուր տվյալներ են հաղորդում քաղաքում տարածված զրադանքների մասին:

Կարսում տարածված զրադանքների, արհեստավորների մասին շատ սեղմ տեղեկություններ է հաղորդում Վ. Աքրահամյանը,⁸ ինչն ամբողջական պատկերացում չի տալիս քաղաքի դերի ու նշանակության մասին: Այդ առումով խիստ արժեքավոր է գրող և հասարակական գործիչ Ատրպետի «Բանակցեցինք»

¹ Ար ի ս ա ա կ ե ս Լ ա ս ս ի վ ե ր ց ի, Պատմություն հայոց, քարզմ. Վ. Գևորգյանի, Եր., 1973:

² Բ. Ա ռ ա թ ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, Եր., 1958, էջ 80-81: Տես նաև Թ. Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., 1987, էջ 167:

³ Նոյն տեղում, էջ 168:

⁴ Աղ. Ե ր ի ց յ ա ն ց, Ամենայն հայոց կարողիկությունը և Կովկասի հայք XIXդ., մաս Ա, Բ. Թիֆլիս, 1894-1895: Население Восточной Армении в XIX- начале XXв., Еր., 2002; Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դ. առաջին կեսին, Գյումրի, 2005:

⁵ Կ ր պ ե, Կարս քաղաք, Մ, 1894:

⁶ Խ. Մ ա ռ ա ն կ ո ւ ա ն ա ն, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, Ն 68:

⁷ Օբզօր Կարսկոյ օբլաստի, Տիֆլիս, 1886.

⁸ Վ. Ա ր բ ա հ ա մ յ ա ն, Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը), Եր., 1971, էջ 69-70:

ուսումնասիրությունը, որը պահպում է Հայաստանի պատմության թանգարանի արխիվում:⁹ Հետաքրքիրն այն է, որ արյուրագիտական անուրանայի արժեքը ունեցող անտիկ այս աշխատությունն օգտագործել է միայն Ս.Դավթյանը¹⁰ և, չգիտես ինչու, անտեսվել է արհեստների և համբարտյունների խնդրով զրադշողների կողմից:

Ասրաբետը¹¹ (Սարգս Մուրայացյան-1860-1937թ.) գրական, հասարակական-քաղաքական բուռն կենսագրություն ունեցող այն հայ գործիչներից էր, որի բողած տպագիր և անտիկ ժառանգությունն ընդգրկում է հայոց կյանքի տարրեր բնագավառներ: Ծնորիկ իր բնածին դիտողականության և ինքնակրքության՝ Ասրաբետին հաջողվել է բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ հավաքել հայերի և հարևան ժողովուրդների տնտեսական, մշակութային և կրոնական հարաբերությունների վերաբերյալ, որոնց վերլուծությունները, չնայած իրենց հակասականությանն ու ծայրահեղ գնահատականներին, չեն կորցրել իրենց արյուրագիտական արժեքը:

«Բնէ Ժառանգեցինք»-ը գրվել է 1933թ. Լեճինականում և վերաբերում է իր ծննդավայր Կարս քաղաքին,¹² նրա արհեստներին ու զրադշուներին, բնակարաններին ու հասարակական այլ կառույցներին: Հեղինակն իր աշխատության առաջարարանում կարևորում է արհեստների դերը հայ ժողովում կյանքում՝ գտնելով, որ «միակ փրկիչը արհեստավորն է»: Այս մոտեցումն ընդհանրապես հատուկ էր մշակականներին, որոնք փորձում էին ավանդական արհեստների և արհեստավորական կենցաղի պահպաննան և «գովերգման» միջոցով ընդդիմանալ արյունաբերական հեղաշրջման հետևանքով առաջացած համահարեցման երևույթներին: Ուստի Ասրաբետը ձգում է հնարավորինս մանրամասն ներկայացնել Կարսում տարածված արհեստները, արհեստավորներին ու նրանց կազմակերպությունները: Հատկանշական է, որ հեղինակն իր սեփական ըննությունն է կատարում, անցկացնում է պատմական գուգահետներ՝ հաստատելու համար հայոց մեջ տվյալ արհեստի վաղ ծագումն ու զարգացումը, դրա տարածվածությունը, ներկայացնում է արհեստավորական արտադրանքի արյունահանման ծավալները և այլն: Մեզ համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն ձեռագիր այն հոդվածները, որ նկարագրում են որոշակի արհեստները: Աշխատանքը պարունակում է նաև քաղաքի կենցաղին ու ստվորույթներին վերաբերող արժեքավոր նյութեր:

Ուսումնասիրությունը գրված է խիստ կանոնակարգված, ողջ նյութը բաժանված է 10 մասի, 35 գլուխների, սրանք էլ ենթագլուխներից: Գլուխները վերաբերում են մայր արհեստներին, բաժինները՝ դրանց առանձին ճյուղերին, իսկ ենթագլուխներում ներկայացված են ավելի ներ մասնագիտացումները: Այսպես, օրինակ՝ մաս I-ը կոչվում է «Զովկակներ», որի առաջին գլուխը վերաբերում է բամբակագործներին, բաժանվում է մի քանի ենթագլուխ՝ մասնութեր, կտավագործներ, մանուսայագործներ, դաշտագրդներ, չիր նկարողներ և այլն: Արհեստների մի մասը ներկայացվում է տեղական անվանումով, թվարկվում է ոչ միայն զրադշունքը, այլև դրա կատարման եղանակներն ու պատրաստվող իրերը՝ իրենց գործածման եղանակներով ու տարածման արեալներով: Հեղինակը ոչ միշտ, բայց հիշատակում է նաև հայտնի վարպետներին և նրանց թիվը: Ասրաբետը ներկայացնում է արհեստանցների և կրավակների թիվը, դրանց տեղադրությունը և այլն: Ըստ Ասրաբետի՝ Կարսում XIX դ. վերջին կային 60-ից ավելի արհեստներ, որ արտահայտված չեն Վ. Արքահամյանի կողմից ներկայացված ցուցակներում:¹³ Սոորոք ներկայացվում է արհեստների ու զրադշուների այն ցանկը, որոնք իր աշխատության մեջ հիշատակում է հեղինակը: Որպեսզի ավելի հեշտ լինի համեմատություններ անցկացնելն ու տարբերությունները նկատելը, միաժամանակ տրվում է նաև Վ. Արքահամյանի աշխատության մեջ առկա աղյուսակը:

⁹ ՀՊԹ արխիվ, գործ 176 (ա):

¹⁰ Ս. Դավթյան և այլն, Հայկական ասեղնագործություն, Եր., 1972:

¹¹ Ասրաբետի մասին կենսագրական տվյալները տեսն, Ասրաբետ, Երկեր, Եր., 1964,

Կ. Դանիելյանի նախարարություն, էջ 3-15:

¹² Ասրաբետի հայրը՝ Սկրտիչ Մուրայացյանը Կարսի հարուստ վաճառականներից էր և իր մասնագիտությանը զուգահեռ փաստարանական գործունեությամբ էր զրադշում Կ. Պոլսում:

¹³ Վ. Արքահամյան մեջ ամսագիր, էջ 70:

հ/հ	Կարսի արհեստների անուններն ըստ Ասրավեսի	Արհեստների տեղական անվանումներն ըստ Ասրավեսի	հ/հ	Կարսի արհեստներն ըստ Վ.Արքահամբակի
1	բամբակագործներ		1	Նաջարներ
2	կտուլագործներ		2	Հացագործներ
3	նոյր կտուլագործներ		3	Հրոշակագործներ
4	մանուսայագործներ		4	Սնագործներ
5	դաշագործներ	դաճրազ	5	Դերձակներ
6	չիր նախողներ	դալամբյար չթի	6	Գիշարկ կարողներ
7	կանեփի քարանագործներ		7	Կոշկակարներ
8	էիրամագործներ		8	Վառարանագործներ
9	շալագործներ		9	Ալաղձագործներ
10	քեցիմագործներ		10	Խառատներ
11	կարպետագործներ		11	Տակառագործներ
12	գորգագործներ		12	Հյուսներ
13	թաղիքագործներ		13	Թիթեղագործներ
14	ապրեշումագործներ		14	Պղնձագործներ
15	ասելնագործներ		15	Անվագործներ
16	ժանելիագործներ		16	Դարբիններ
17	պարանագործներ	դայթանցի	17	Փականագործներ
18	վերարկու կարողներ	արաջի	18	Ժամագործներ
19	մուշտակագործներ		19	Ուկերիչներ
20	կաշեգործներ	դաֆաֆ	20	Անագապատողներ
21	կոչկակարներ		21	Զինագործներ
22	ներկարարներ	բոյաջի	22	Անտառապահներ
23	տրեխագործներ	շարոխչի	23	Վարսավիդներ
24	քամբագործներ		24	Կազմարարներ
25	վրանագործներ		25	Ջարտաշներ
26	դերձակներ		26	Կուպրագործներ
27	երիզագործներ	դազագ	27	Ապակեզօրծներ
28	բրուտներ		28	Ներկարարներ
29	աղյուսագործներ		29	Զամբյուղագործներ
30	ճախառակագործներ	շրմաջի	30	Սղոցողներ
31	հյուսներ			
32	երկրագործական գործիքներ պատրաստողներ			
33	սայլ պատրաստողներ	սայլանցի		
34	անվագործներ	մառանցի		
35	կամ շինողներ			
36	գորբան շինողներ			
37	սամրագործներ			
38	պղնձագործներ			
39	թիթեղագործներ			
40	ձուլագործներ			
41	դաշույնագործներ- պղղառագործներ	բիշախչի		
42	դարբիններ			
43	պայտարմեր			
44	փականագործներ			
45	զինագործներ			
46	ուկերիչներ-թելքաշ, փորագոռ, արծնապատող, սևագոռ	զարցյար, չիքրիչի, դալամբյար եմալող, սալարող		
47	պղնձի փորագորչներ			
48	կմիքագործ-քանդակագործներ			
49	հայեկագործներ			
50	ապակեզօրծներ			
51	սալիրիչներ			

52	կազմարարներ
53	խավախտրողներ
54	ծաղկագրողներ
55	քանաք շինողներ
56	լուսանկարիչներ
57	կենդանագիրներ
58	զինեզործներ
59	երաժիշտներ
60	պարտիզաններ
61	բաղմիսապամներ

Կարծում ենք, որ Ասրաբետի ցուցակը ևս ամբողջական չէ, քանի որ հեղինակը բոլոր արհեստների մասին չի գրել: Այդուսակում բացակայում են որոշ արհեստներ, որոնք առկա են Վ. Աքրահամյանի ներկայացված ցանկում: Խակ թվարկված արհեստների առկայության խկույքունը կասկած չի հարուցում, քանի որ հեղինակը ճշգրիտ նշում է արհեստանոցների շարքերի տեղակայքը, ապա՝ թվարկում հայտնի վարպետներին: Ներկայացված արհեստների ճնշող մեծամասնությունն առկա է նաև Կարինի և հատկապես՝ Ալեքսանդրապոլի արհեստների ցուցակներում. մի հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է Կարին-Կարս-Ալեքսանդրապոլ արհեստավորական կապերի ու ավանդույթների մեծ ընդհանուրությունը:

Ասրաբետի ներկայացրած արհեստների թվում բացարիկ տեղ են զբավում վրանագործությունը և քանդակագործությունը, որոնք՝ որպես առանձին արհեստ, ընդհանրապես հայտնի չեն և չեն ներկայացվել և հայկական ոչ մի քաղաքի կամ գաղքավայրի արհեստների ցուցակում: Հետաքրքիր է, որ դրանք, ըստ հեղինակի, շատ տարածված և մեծաքիչ վարպետներ ունեցող արհեստներ են: Վրանագործության տարածվածությունն ու զարգացումը նա կապում է օսմանյան բանակի մատակարարման հետ: Այսուղ հարկ է ընդգծել Ասրաբետի շեշտադրած մի հանգամանքը. քորքական բանակի մատակարարությունը, որ իրականացվում էր հայերի կողմից: Հեղինակը նկարագրում է, թե ինչ չափով էին հայ արհեստավորներն աշխատում քորքական բանակի համար՝ սկսած կաշեգործներից, դիրքակներից, տրեզագործներից, կոչկակարներից, վերջացրած քամքագործներով ու վրանագործներով: Ընդ որում, հեղինակը թվարկում է նաև Արևմտյան Հայաստանի այլ քաղաքների ննան արհեստավորներին, որոնք աշխատում էին քորքական կառավարության պատվերով: Այսպես, քամքագործները, ըստ Ասրաբետի, «ոչ միայն երկրի կարավաններին մատակարարում էին ուղտի, ձիու, ջրու, իշու համեստները, կաշվե և մաշկի բոլոր սարքերը, այլ սրանք էին պատրաստում դարերից ի վեր Օսմանյան քանակի ծիրերի, կառքերի ամբողջ սարքվածքը: Խիստ շատ անգամ ռազմադաշտի գորականների հրամաններով արհեստավոր մաշկագործներին և խաղախորդներին խմբերով քշում էին այս քաղաքից այն քաղաքը, բերդը և արհեստանոցները՝ իրենց գործիքներով ռազմական կարևոր պատրաստություններ կատարելու: Թամբագործները պատրաստում էին բետնակիր գրաստների համար պայտակներ, որ ռազմական մքերքները փոխադրեն հարյուրավոր կիրամետրերի ճանապարհները»:¹⁴

Ինչ վերաբերում է վրանագործներին, ապա նրանք աշխատում էին ինչպես մասնավոր անձանց՝ չորանների, քրդերի, բեկերի, ցեղակետների, այնպես էլ զինվորականների համար: Ասրաբետը մանրամասն մկարագրում է հատկապես զինվորական վրանները պարզ և բարդ, զարդարուն և հասարակ՝ նայած պատվիրատուի կարողության: Օրինակ՝ «մեծատուն քորդ ցեղապետերը այնպիսի վրաններ ունեին՝ գորգով, կարպետներով ու քարեքներով կահավորված, որ նրանց մեջ առանց դժվարության կարելի էր ձմեռները ապրել»:¹⁵ Սիամանանակ հեղինակը նշում է, որ Էրզրումի վրանագործները ավելի զարգացած էին և ավելի ընդարձակ գործ ունեին: Հարկ է նշել, որ Կա-

¹⁴ Ա ու բ պ ե տ, Ի՞նչ ժառանգեցինք, էջ 32:

¹⁵ Նոյն տեղում, էջ 34:

լինի արհեստների համբարություններին նվիրված Ս. Եղիազարյանցի և Խ. Մառան-կողյանի հետազոտություններում այս գրալմունքների մասին հիշատակություն չկա:¹⁶

Սյուս արհեստը, որի մասին խոսում է Ասրաբետը, «Քանդակագործություն» է: Հեղինակն առանձնացնում է այս արհեստավորներին՝ որպես «հասուկ կնիք փորողներ», որոնք փորագրում էին կարծր քարերի վրա: Արհեստի լայն մասսայականությունը (ամեն քաղաքում 10-20 փորագրիշ) քացարվում էր նրանով, որ «ոչ միայն մեծամեծ պաշտօնավորները, հարուստները, հոգևորականները, նույնիսկ շարժիներն ու զուդացիները պարտավորված էին անհատական կնիք կրելու: Գրագետների թիվը այնքան փոքր էր, որ փոխանակ ստորագրության, պիտի անհատական կնիք պահեր ամեն մարդ, մուրհակ կամ դաշնագիր վավերացնելու համար»:¹⁷

Աշխատության բարձր արժեքը նաև այն է, որ հեղինակը փորձում է ամեն մի արհեստ ներկայացնել հայկական մյուս քաղաքների հետ համեմատության մեջ՝ ցույց տալու համար արհեստի տարածման արեաները: Միաժամանակ նա հիշատակում է անվանի վարպետներին, նրանց արհեստի ժառանգորդման հանգանաճները, տոհմական արհեստավորների նշանակոր գործերի պատությունը՝ երբեմն նաև ցավով նշելով, որ աշխի ընկնող վարպետների ժառանգները չեն շարունակել նախնիների գործը, և ընդհատվել է ժառանգականության դարերով ձգվող շրբան:

Ակեքանդրապոլի արհեստների ու արհեստավորության ուսումնասիրության առումով ևս «Ի՞նչ ժառանգեցինք»-ը հետագա լուրջ վերլուծություն պահանջող տեղեկություններ է պարունակում: Այստեղ հաճախ բարձրվում են այն վարպետները, որոնք կամ որոնց հետնորդները Կարսից տեղափոխվել են Ալեքսանդրապոլ՝ շարունակելով կամ ընդհատելով հիշյալ արհեստը: Քաղաքի ազգագրության ուսումնասիրության տեսանկյունից Կարսի քաղաքային բնակարանների, հագուստի, զարդերի, կենցաղային իրերի, սպորտայինների բվարկումը ևս անփոխարինելի սկզբնադրյուրի արժեքը է հաղորդում հիշյալ աշխատությանը: Յավոր, Ասրաբետը ամբողջովին չի իրազործել իր մտահղացումը՝ շիացնելով նկարագրել շատ քաղաքային գրադարաններ, չնայած դրանք ձեռագրի բովանդակության մեջ գրանցված են: Փաստորեն ձեռագիրն անավարտ է: Տեղ գտած անհարթությունների շարքում հարկ է առանձնացնել այն, որ հեղինակը փորձում է իր ոչ միշտ տեղին վերլուծությունն ու գննությունը կատարել՝ հիշելով հնագիտական գոտածներ, բանգարանային արժեքներ, կամ այլ սկզբնադրյուրներ, որոնք շեղել են նրան բուն արհեստներ, գրադարաններն ու կենցաղը նկարագրելուց:

Թերություններով հանդերձ՝ Ասրաբետի ձեռագիրը բացահիկ ուշագրավ և արժեքավոր սկզբնադրյուր է ոչ միայն Կարսի, Ալեքսանդրապոլի, այլև ընդհանրապես հայկական ժողովրդական արհեստների, իսկ ավելի լայն առումով՝ հայոց կենցաղամշակութային համայնքի ուսումնասիրության համար:

РЕМЕСЛА Г. КАРС КОНЦА XIX ВЕКА ПО РУКОПИСНОМУ ИССЛЕДОВАНИЮ АТРПЕТА “ЧТО МЫ УНАСЛЕДОВАЛИ”

Резюме

К. Базеян

В статье представлен анализ рукописного исследования армянского писателя и общественно-политического деятеля Атрпета (Саргис Мубайджян) "Что унаследовали", которое хранится в архивных фондах Государственного исторического музея Армении. Рукопись посвящена его родному городу Карсу. Автор, по мере возможностей, скрупулезно описывает распространенные в городе ремесла и занятия, ремесленников и их учреждения, объемы реализации товара и т. д. В рукописи имеются также интересные и уникальные сведения о быте и традициях Карса, необходимые для изучения городского быта армян конца 19-ого века.

¹⁶ Ս. Եղիազարյան գաղաքայի ճյուղերը Կարսում XIX դարի առաջին երեք տասնամյակում, «Մշակ», 1891, № 65: Խ. Մառանկողեան, Էրգումի և Կարսի արհեստատորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, № 68:

¹⁷ Ատրպետը նշում է 63:

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

(XIXդ. երկրորդ կես-XXդ. առաջին կես)

XIXդ. երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում տեղի ունեցող խոշոր տնտեսական փոփոխությունները, սոցիալական-քաղաքական վայրիվերումները և հատկապես կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացման արդյունքում արդյունաբերության հսկայական աճը անդրադարձան հայոց ավանդական արհեստագործության տարբեր ճյուղերի վրա: Հիշյալ ժամանակաշրջանում անկնան միտումներ էին նկատվում հայոց ավանդական տնայնագործության և արհեստների մեջ:

Անդրկովկասում գոյատևող ավանդական արհեստների և դրանց կազմակերպությունների շուրջ XIXդ. վերջին քառորդում աշխատյած քննարկում և բանավեճ սկսվեց ոուսալեզու և հայկական մամուլում: Ելնելով մետրոպոլիայի, այսինքն՝ բուն Ռուսաստանի եվրոպական նասում անընդհատ հզորացող արդյունաբերական կապիտալի շահերից և փորձելով կովկասյան շուկայից դորս մղել տեղական ավանդական արհեստագործական արտադրանքը, Կովկասի փոխարքայության ոուսական իշխանությունները խսկական հարձակում սկսեցին նրա դեմ:

Ոուսական հետազոտողները, իրենց քացահայտ կողմնակալ հոդվածներում նեմացնելով ավանդական արհեստների բնույթը, դրանք միտումնավոր անվանում էին՝ տնայնագործություն (*кустарные промыслы*): Երես մինչև XIXդ. 60-70-ական թթ. ոուսական պարբերականներում և տեղեկատու վիճակագրական ժողովածուներում հիացական արտահայտություններ կային հայկական արհեստավորական կենտրոններում արտադրվող ապահների մասին, ապա նոյն դարի վերջի և XXդ. սկզբի նոյնանուն աղբյուրներում քացահայտ քամահրանքով է խոսվում դրանց մասին:¹ Տիրահոչակ Ա. Պիրավովը² և նրա նմաններն անընդհատ թմրկահարում էին կովկասյան արհեստների տնայնագործական բնույթը, փնովում արտադրանքի ցածր որակը՝ անվանելով ավանդական արհեստներն իրենց դարն ապահանձնելու համար աղբյուրներու համար աղբյուրներու համար: Թիֆլիսում անցկացվեց նոյնիսկ հասուկ ժողով, որտեղ քննարկվեց «տնայնագործության ապահանձնելու» Կովկասում: Սևարյուրակային-ազգայնական «Կավկազ» պարբերականի էջերում քացահայտ հերյուրանքներ էին տպագրվում կովկասյան համբարությունների գործունեության մասին, իսկ համբարությունների երիտասարդ անդամներին անվանում էին ազգայնականներ ու անշատականներ: Կրթերը հատկապես բորբոքվեցին, երբ Ալեքսանդրապուր երիտասարդ հայ արհեստավորը սպանեց ոուս սևարյուրակային-ազգայնական քահանային, որն իր քարոզներում լրտաճք էր քափում հայ եկեղեցու և ժողովրդի հասցեին:³ Տնտեսական հալածանքները փաստորեն փոխադրվեցին քացահայտ քաղաքական հարձակումների դաշտ՝ նայատակ հետապնդելով քայքայել քաղաքային համայնքի ներքին ավանդական կառուցվածքը: Սա ստույայինյան քաղաքականության ուղղությունն էր: Գյուղական համայնքների քայքայումից հետո հերքը պետք է հասներ նաև քաղաքներին՝ հատկապես կովկասյան, որոնցում դեռևս ամուր էին ներքին անքանական ավանդական ձևերը: Նոյնիսկ բոլշևիկյան ապահանձնությունը վարչությունը կազմակերպում էր առաջին համայնքների տնտեսական կառուցվածքը:

¹ Գ. Ա դ ա ն յ ա ն, 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի ոուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուները որպես Ալեքսանդրական քաղաքային և նրա բնակչության տնտեսական գրադարձների ուսումնասիրության աղբյուր, Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պրոբլեմների տառմնասիրությունը, Եր., 1985, էջ 6:

² Ա. Պ ի ր ա լ օ վ, Կրաτկий օչերկ կուսարին պրոմայսլու Կավկազ, Տիֆլիս, 1900.

³ Գ. Ա դ ա ն յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր, Լենինական, 1985, տեսք 2:

⁴ Վ. Լ ե ն ի ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 425:

Անհրաժեշտ է նշել, որ XIX դ. վերջին երեսնամյակում իրականացվող տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխմանները ուղղակիրուն բախվում էին քաղաքային հասարակության կազմակերպման այնպիսի ավանդական կառույցների հետ, ինչպիսիք էին համբարությունները: Եթե XIX դ. առաջին կեսին նվաճված և յուրացվող Կովկասում ոռոսական իշխանությունները հանդուրժողական և մինչեւսկ խրախուսական վերաբերմունք ունեին համբարությունների նկատմամբ, ապա նոյն դարավերջին իրադրությունը կտրուկ փոխվեց: Հարկ է նշել, որ ոռոսական իշխանությունները լրելյացն համաձայնություն էին կայացրել համբարային ավագանու հետ և քաղաքային ինքնակառավարման շատ ֆունկցիաներ հանձնել էին համբարներին.⁵ Օրինակ, ինչպես XVIII դ., այնպես էլ XIX դ. ողջ ընթացքում Թիֆլիսի համբարներն էին որոշում քաղաքագլուխ ընտրության հարցը: Քանի որ համբարների մեծամասնությունը հայեր էին, ապա նախ Արևելյան Քարթլիի բազավորը, ավելի ուշ Կովկասի փոխարքան ատիպակած էին այս պաշտոնում հաստատել բացառապես հայերին: Նման իրավիճակ էր տիրում նաև Երևանի նահանգի քաղաքներում և դրանցից ամենամեծում՝ Ալեքսանդրապոլսում, որտեղ քաղաքային ողջ ինքնակառավարումը գտնվում էր Հսմաֆների ծեռքում: Պետական իշխանությունները փորձում էին չխառնվել քաղաքի հասարակության ներքին հարցերին՝ բողներով վարչական բազմաթիվ գործառույթներ (վատորակ ապրանքի համար պատիժներ, արիեստավորների միջև ծագած վեճերի լուծում, զանցանքների քննում և այլն) էսմաֆական ավագանու տրամադրության տակ: Մինչև Պ. Ստոլիխայինի նախաձեռնած հոդային ռենժորմները (1907-1910-ական թթ.) զյուրական համայնքի կառավարումը և իրականացվում էր ներքին ինքնակառավարման ավանդական մարմինների միջոցով, և պետությունը գործ ուներ ոչ թե որոշակի համայնքի անդամի կամ ընտանիքի հետ, այլ գյուղական ավագանու ղեկավարի՝ գյուղապետի հետ, որն ընտրվում էր համայնքի ժողովում և հաստատվում ղյատանցիայի պրիստավի կողմից: Հասարակական-քաղաքական նոր պայմաններում իրերի այսպիսի դրույթունը բույլ չէր տալիս իշխանության կենտրոնական մարմիններին՝ Կովկասի փոխարքայությանը, ի նաև նավորի Երևանի նահանգին ոչ միայն խառնվել Ալեքսանդրապոլի ներքին ինքնակառավարման խնդիրներին, այլև կարգավորել արիեստավորներական արտադրանքի իրացման և քաղաքի շուկայի վերահսկման խնդիրները:

Ոռոսական գործարանային էժան ու զանգվածային արտադրանքի մուտքն Ալեքսանդրապոլի շուկա բազմաթիվ արիեստավորների արդատացման պատճառ դարձավ, ինչը շատ լավ էին հասկանում էսմաֆական ավագանու անդամները: Նրանք բոլոր միջոցներով փորձում էին գերծ պահել քաղաքի շուկան ներմուծվող ապրանքների ճնշող հոսքից: Այս պարագայում ինքնապաշտպանության լավագույն միջոց կարող էր լինել միայն դարերով ամրագրված համապարտ երաշխավորության համակարգը, որը քաղաքային համայնքի սոցիո-նորմատիվ մշակույթի բաղկացուցիչն էր: Ալեքսանդրապոլի բնակչությունը ուղղակի և անուղղակի գրավված էր համբարությունների մեջ և ուսական իշխանություններին հարաբերվում էր միջնորդավորված՝ համբարային վերաբան մարմինների միջոցով: Վ. Աքրահամյանի պնդմամբ Ալեքսանդրապոլի բոլոր արիեստավորներն ու առևտրականները անխստիր մտնում էին այս կամ այն համբարության մեջ:⁶ Յուրաքանչյուր արիեստավոր կամ առևտրական իր շահերի պաշտպանության համար առաջին հերթին դիմում էր հիշյալ նարմիններին, այլ ոչ թե պետական իշխանությանը: Համբարային ավագանին իր հերթին փորձում էր ապահովագրել արիեստավորներին անհավասար մրցակցությունից և տարածաշրջան ներհոսող էժանագին ապրանքների ճնշումից:

Բնականարար հայ մտավորականությունը պետք է ինչ-որ կերպ արձագանքեր իշխանությունների հարձակումներին: «Մշակ» թերթի էջերում մեկը մյուսի հետևելից տպագրվեցին բավական լուրջ հետազոտական հոդվածներ՝ նվիրված հայկական

⁵ Գ. Ա դ ա մ ա ն, Սեկ անգամ և հայ համբարությունների շուրջ, «Ծիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական հիմներորդ գիտաժողովի գեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 32:

⁶Վ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII-XX դարի սկիզբը), Եր., 1971, էջ 59:

ավանդական արհեստներին ու համբարություններին: Սրանց շարքում էին այնպիսի նշանավոր մոռավորականներ, ինչպիսիք էին Կազանի համալսարանի իրավագիտության արդիուսոր Սողոմոն Եղիազարյանը⁷ (հետագայում նա իրատարակեց մեծածավալ և արժեքավոր երկաստոր աշխատություն, որի երկրորդ մասն ամբողջության նվիրված էր համբարություններին)⁸, Խ. Մառանկոյանը⁹, Ավ. Ասլանյանը¹⁰ և այլք: Հայ հեղինակները փորձում էին ամեն կերպ պաշտպանել ավանդական արհեստներն ու համբարային կազմակերպությունները ուսուական զանազան պարբերականների էջերում հայտնված հարձակումներից: Ս.Եղիազարյանը, համակողմանիորեն քննելով եվրոպական համբարությունների սոցիալ-իրավական կարգավիճակը, լայն պատմահամեմատական նյութի վրա հենվելով, ներկայացնում է արևելյան և ի մասնավորի հայ համբարությունները՝ վեր համելով վերջիններին նմանություններն ու տարբերությունները արևմտյան նման կազմակերպություններից:

Հարկ է նշել, որ ինչպես նաևսահսկորիդային, այնպիսի կառուցական պատմագրության մեջ արևելյան համբարական կազմակերպությունները անհիմն կերպով նեմացվում էին, իր դրանք իրենց զարգացման մակարդակով և կազմակերպածության առումով եվրոպական ցեխերի մակարդակից շատ ցածր էին: Սա, իհարկե, արդյունք էր նյութի շինացության, և Ս. Եղիազարյանի ուսուերեն մենագրությունը փորձ էր երևելյան համբարությունները պատշաճորեն ներկայացնել ուսուական գիտական շրջանակներին: Անվանի գիտնականը, զգալով քաղաքային հասարակության կազմակերպածության ազգային կառուցի կարևոր սոցիալական դերակատարումը, փորձում էր ամեն կերպ հիմնավորել համբարությունների գոյության անհրաժեշտությունը և դրանց սոցիալական մեծ դերակատարումը արևելյան (իմա՝ հայ) հասարակության մեջ: Համարյա նոյն դիրքերից համեմ էին զայխ նաև վերոհիշյալ հետազոտողները, որոնք նոյնիսկ փորձում էին ատեղծել համբարությունների իդեալական պատկեր: Հայ հեղինակները համոզված էին, որ համբարությունների քայլայտն ու դրանց դերի նեմացումը կհանգեցնեն ավանդական արհեստների դուրս մղմանը և արդյունքում հազարվոր արհեստավորների աղքատացմանը: Սակայն համբարությունները ստիպված էին զիջնել, և դրանց քանակական նվազեցնելու, իսկ Հայաստանի խորիդայնացումից հետո խսպառ վերացան:

Ուսուաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության հետևանքով բազմաթիվ ավանդական արհեստներ կամ վերանում էին, կամ էլ սրանցով պարապողները ստիպված էին վերառակավորվել և հարմարվել նոր պայմաններին: Երկարուղու մուտքը Ալեքսանդրապոլ և երկարուղային մեծ դեպոյի կառուցումը որակյալ բանվորների պահանջարկ առաջացրին, որը լուծվեց շնորհիվ տեղական երկարագործ վարպետների: Ամենակին էլ պատահական չէր, որ հենց Ալեքսանդրապոլ ընտրվեց որպես երկարուղային շարժակազմի և շոգեքարշների վերանորոգման կենտրոն: Ուսուական իշխանությունները հաշվի էին առել տեղի աշխատությի և մասնագետների կարողությունները, որոնց շատ արագ ու կարծ ժամանակում կարելի էր վերառակավորել:

Ավելի ուշ՝ XXդ. առաջին կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խորիդային իշխանությունների նախաձեռնած երկրի լայնամասշտար ինդրուստրալիզացիայի տարիներին հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում մեծ շափով օգտագործվեցին տեղական վարպետների հնտություններն ու փորձը: Նախկին դարրինները, խառատները, փականագործները, ձուլագործները, ոսկերիչ-արծարագործները, հյուսն-ատաղճագործները, կահագործները, դերձակները, կաշեգործները, օճառագործները, ներկողները և այլք կարողացան հարմարվել նոր պայմաններին:

⁷ Ս. Եղիազարյանը կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խորիդային իշխանությունների նախաձեռնած երկրի լայնամասշտար ինդրուստրալիզացիայի տարիներին հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում մեծ շափով օգտագործվեցին տեղական վարպետների հնտություններն ու փորձը: Նախկին դարրինները, խառատները, փականագործները, ձուլագործները, ոսկերիչ-արծարագործները, հյուսն-ատաղճագործները, կահագործները, դերձակները, կաշեգործները, օճառագործները, ներկողները և այլք կարողացան հարմարվել նոր պայմաններին:

⁸ Ս. Եղիազարյանը կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խորիդային իշխանությունների նախաձեռնած երկրի լայնամասշտար ինդրուստրալիզացիայի տարիներին հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում մեծ շափով օգտագործվեցին տեղական վարպետների հնտություններն ու փորձը: Նախկին դարրինները, խառատները, փականագործները, ձուլագործները, ոսկերիչ-արծարագործները, հյուսն-ատաղճագործները, կահագործները, դերձակները, կաշեգործները, օճառագործները, ներկողները և այլք կարողացան հարմարվել նոր պայմաններին:

⁹ Խ. Խաչատրյանը կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խ. Խաչատրյանը կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը:

¹⁰ Ավ. Ասլանյանը կեսին (հաստկապես խորիդային իշխանության տարիներին) արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը:

Քազմապրոֆիլ զինագործները դարձան բավականին բարդ մեխանիկական սարքերի (կարի մեքենա, կարի զարչ, մեխանիկական կալիչ և այլն) վերանորոգողներ: Հարակից արհեստների՝ խառատության, փականագործության, գործիքաշինության բնագավառներում ձեռք բերված հնտությունները թույլ տվեցին զինագործներին արագ «կողմնորոշվել» և հարմարվել նոր իրապայմաններին: Նրանցից քչերը շարունակեցին պարապել իրենց արհեստով:¹¹ Նշանավոր ոսկերիչ-արծարագործներ Գուրգեն Տարախյանը (Մաշտի Գուրգեն) և Սարտին Բզմիրյանը (Կոչկունեց Սարտին), օրինակ, նորարաց տեքստի կոմբինատում ծաղկավոր չքի դաշվածքի նախշերն էին փորագրում:¹² Յուղական արտելների հիմնա վրա և սպանեանոցի վարպետների ուժերով ստեղծվեց Լենինականի մսի-պահածոների կոմբինատուր, հոչականոր կահագործ-վարպետների ուժերով՝ «Կարմիր նոյեմբեր» կահույքի ֆարբիկան և այլն:¹³

Հարկ է նշել, որ բազմաթիվ արհեստավորներ՝ թիթեղագործներ, քարտաշ-որմնադիրներ, ծեփագործներ, ներկարարներ (նախշքարներ), սորցարարներ (խզարչի) և այլ շարունակեցին պարապել սեփական արհեստով և գրաղվել անհատական գործունեությամբ: Սա բխում էր հիշյալ արհեստների բնույթից, քանի որ դրանցից շատերը արհեստանոցի գոյության կարիքը չունեին կամ էլ ի սկզբանե շրջիկ արհեստներ էին: Չատ անվանի արհեստներ 1920-30-ական թթ. Լենինականում գործող բանֆակներում և ֆարբիկա-գործարանային ուսումնարաններում դարձան վարպետ-դաստիարակներ՝ իրենց հնտությունները հաղորդելով երիտասարդներին:

Համեմատության համար նշենք, որ այլ էր դրությունը զյուղերում, որտեղ հատկապես դարբնի արհեստի կարիքը զգացվում էր ընդհուպ նիմշն ԽՀր. վերջը: Նույնիսկ մեխանիկական արհեստանոցների և ՍՇ կայաններին կից վերանորոգման ցեխների գոյության պայմաններում բուն դարբնի աշխատանքի պահանջը մեծ էր: Գյուղական դարբնին շարունակում էր ոչ միայն պատրաստել, այլև հատկապես վերանորոգել արհեստավորական կամ գործարանային եղանակով պատրաստված զյուղատնտեսական գործիքներն ու հարմարանքները: Հայ դարբնիների մուրճի տակ հիշյալ գործիքների և մեխանիզմների զանազան մասերը կարող էին վերափոխվել՝ դառնալով միանգամայն այլ հարմարանք կամ գործիք: Օրինակ՝ Արարատյան դաշտավայրի դարբնիները մեխանիկական հնձիչի մաշված սկավառակներից պատրաստում էին շատ ամուր բափշակավոր բաներ:

Գործարանային արտադրության պողպատի տարրեր համարանիշներով (մարլա) իրերը երկրորդական մշակման ժամանակ առավել բարձր որակ էին ապահովում և զյուղական դարբնիներից շատերն օգտվում էին ընձեռված հնարավորությունից: Ոչ նախկին չափերով և ընդգրկմանք, բայց և այնպես զյուղական դարբնինը պահպնեց իր արհեստին բնորոշ ավանդական բազմաթիվ ֆունկցիաներ: Նոյնը կարելի է ասել նաև խեցեգործության մասին: Եթե Ալեքսանդրապոլի վերջին բրուտները (շոմլակի) արդեն XX դ. 30-40-ական թթ. այլև չին պարապում իրենց բուն արհեստով, ապա հարլան զյուղերում և հատկապես Սամանդյուրում այս արհեստով պարապողների թիվը չնվազեց: Այստեղ հատկապես զարգացած էր կանացի խեցեգործությունը և թոն-թագործությունը՝ որպես շրջիկ արհեստ:

Անփոփելով կարող ենք նշել, որ չնայած հայ նտավորականների երկյուղին, ավանդական արհեստները իսպառ չվերացան, իսկ արհեստագործական բարձր ավանդույթը ունեցող այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Ախալցխան և հատկապես Ակեբաններապոլ-Լենինականը, նույնիսկ խորհրդային ինդուստրալիզացիայի պայմաններում չկորցրին իրենց արհեստավորական ավանդույթների մեծ մասը: Այս-

¹¹ Գ. Ա ղ ճ յ ա ն, Հայկական զինագործությունը ԽIX դարում-XX դարի սկզբին (ըստ Կարն և Ախալցխայի նյութերի), ԸՀՀ կենսորոնի «Գյուղական աշխատավորություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 135:

¹² Գ. Ա ղ ճ յ ա ն, Գայտային ազգագրական նյութեր, Լենինական, 1985, տեսոր 1, բանասաց Սարտին Իզմիրյանի հաղորդած նյութը:

¹³ Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Լենինական զավատի տցիալ-տնտեսական տարածքային կազմակերպումը 1920-40 թթ., ԸՀՀ կենսորոնի «Գյուղական աշխատավորություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 219-220:

¹⁴ Կ. Բ ա զ ե յ ա ն, Ծիրակի արդի խեցեգործությունը, «Ծիրակի պատմամշակութային ժառանգությունը» հաճրապետական վեցերորդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2004, էջ 96-97:

տեղ մինչև XX դ. վերջերը պահպանվեցին իրենց տեսակի մեջ եզակի արհեստների բազմաթիվ ճյուղեր, որոնք դեռևս դարասկզբին վերացել էին հայկական մյուս քաղաքներում:

ВИДОИЗМЕНЕНИЯ ТРАДИЦИОННЫХ РЕМЕСЕЛ В АЛЕКСАНДРОПОЛЕ-ЛЕНИНАКАНЕ (II половина XIXв.- I половина XXв.)

Резюме

Г. Аганян

В статье обсуждаются причины и следствия видоизменений традиционных ремесел. В конце XIXв. и первой половине XXв. в Александрополе-Ленинакане произошли определенные коренные изменения, которые подействовали на всю систему экономико-культурного развития. Под последовательным давлением российских, а потом и советских властей понесли большой ущерб традиционные занятия и ремесла Александрополя-Ленинакана. Многие традиционные ремесла или исчезли или видоизменились, а представители этих занятий перепрофировались.

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՈՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՍՈՒՄՆԱՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՍԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Հովհ. Թումանյանի մի շաբթ ստեղծագործություններ վկայում են այն մասին, որ նա հայոց մշակույթի շատ բնագավառներ ոչ այնքան «նկարագրում է փորձված ազգագրագետի հմտությամբ»,՝ որքան որ մշակույթի տարրեր բնագավառներին վերաբերող ազգագրական նյութը հաղորդում է որպես հմուտ ու տաղանդավոր բանասաց: Բայց երբ այդ նյութը ներկայացվում է հանճարեղ արվեստագիտի գրչով, կերտվում են այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Մարոն», «Ամուշ», «Լոռեցի Սաքոն», որոնք, գեղարվեստական արժեքից զատ, անսպաս աղջյուր են նաև հայոց ավանդական մշակույթի ուսումնասիրության համար: Ազգագրագետի համար Թումանյանը հանդես է գալիս որպես վսուհեղի բանասաց, որովհետև նա նկարագրում է իր ու իր շրջապատի՝ ընտանիքի, ընկերների, համազյուղացիների կյանքը, այն մշակութային իրողությունները, որոնց կրողն է ինքը: Որոշ բաներ նրան պատմել են, բայց իրմանականում նա տեսել ու ապրել է այն, ինչի մասին գրում է, ականատեսն ու ունկնդիրն է այն ամենի, ինչի մասին կարդում ենք նրա ստեղծագործություններում: Թումանյանը նկարագրույն միջավայրի, բարերի ու սովորույթների, մշակութային այս կամ այն երևույթի անմիջական կրողն է, մասնակիցն ու դերակատարը:

Հայոց ավանդական ամուսնահարսանեկան արարողակարգի գեղարվեստական փայլուն պատկեր է «Մարոն» պոեմը: Պոեմուն ազգագրական նյութը նախուցված է տաղանդավոր արվեստագետի գրչով: Ընթերցողի աշխատավոր աշխատավոր ամուսնական ուղղության ամուսնակարգի տեսաժապավեն է՝ իր հստակ կանոնակարգված փուլերով: Հեղինակի հակիրճ, կտրուկ, բայց և խոսուն նախադասություններն օժտված են այնպիսի ուժով, որ կարծես հուշում են ընթերցողին՝ ավարտվեց նախորդ փուլը, սկսվում է նորը.

Նշանեցին Սարոյին

Տվին չորան Կարոյին:

Եվ մինչ ընթերցողը խորասուզվում է հերթական փույի արարողությունների նկարագրության մեջ, գրողը կրկին սրափեցնում է նրան՝ ևս մի փուլ ավարտվեց.

Պակեցին Սարոյին

Տվին չորան Կարոյին:

Մարոն հեղինակի հասակակիցն է, նրա խաղընկերը: Լսելով Սարոյի մահվան լորր Թումանյանի մասուկ հոգին ապրել է հայոց նահապետական գյուղական մշակույթին բնորոշ «վաղաժամ ամուսնության դժբախտ հետևանքների»¹ ողբերգությունը: Տպակորոշ հոգին հետազում պետք է ներկայացներ ընկերութու դժբախտ ճակատագիրը և ականա հանդես զար որպես բանասաց այն երևույթի, որ լրտեցիներն եւ, «մյուս հայաբնակ զավաների նման...սրանից մի երկու տասնյակ տարի առաջ ավելի փոքր հասակում էին ամուսնացնում իրենց զավակներին, բավական էր, որ աղջիկը 9-10, իսկ տղան՝ 12-13 տարեկան դառնար, որ նրանց «հոգատար» ծնողները՝ առանց նույնիսկ նրանց համաձայնությունն առնելու՝ նշանեին ու պսակեին նրանց»:²

Ժիր էր Մարոն, դրիբեկան,

Նոր էր իննը տարեկան,

Նրանց տունը երբ մի օր

Եկան երկու եկավոր:

Սարոյի և նրա նմանների ճակատագրի ազգագրագետ վկա Ե. Լալյանը գրում է. «Այժմ ևս այս տիսուր երևույթը պաղաժամ ամուսնությունը-Հ.Հ.) շարունակվում

¹ Կ. Մելիք - Փաշա և Աննա, Թումանյանը և ազգագրությունը, Պատմա-քանակական համդես, 3, 1969, էջ 78:

² Նոյնը:

³ Ե. Լալյան, Բոշալուի զավառ, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), Թիֆլիս, 1902, գիր 9, էջ 212:

է»:⁴ Նա զրանցում է, որ ամուսնացողների տարիքային տարրերությունը 5-15 տարի էր հօգուս տղամարդկանց:⁵ Թեև Թումանյանը չի նշում Կարոյի տարիքը, բայց հեղինակի արտահայտիչ խոսքից ակնհայտ է, որ Կարոն բավականին մեծ էր Մարոյից.

Չորան Կարոն սարերի
Մի հովիվ էր Վիթխարի,
Ըոյ-բուսաքին նայելիս
Սարդու սարսափ էր զալիս:

Հայոց նահապետական զյուղի «աղջիկ ուզելու» գեղարվեստական հոյակապ պատկեր է Մարոյին ուզելու տեսարանը: Ի տարրերություն սովորական բանասացների՝ ի ծնե օժտված լինելով նաև ազգագրագետի նրբազգացությամբ, որևէ նշակութային երևույթ նկարագրելիս Թումանյանը ընտրում է այդ երևույթի ամենախորհրդանշական պահը այդ պահին ասվող բառային բանաձևերից և արտահայտություններից ամենաբնուրագրականը: «Մարոյի» ազգագրական արժեքներից մենք այն է, որ Թումանյանը զգում է, որ նշանողների կամ «աղջիկ ուզելու» «մեխոր» ազգագրական տեսանկյունից հենց երկու կողմերի բանակցությունն է: Գրողը ներկա չի եղել Մարոյի նշանադրությանը, սակայն, լինելով Լոռվա նշակույթի գիտակ և կրող, կասկած չի ունեցել, թե ինչպես պետք է լուսեցի «Երկու եկավորներն» արտահայտելին իրենց նտապությունը.

Ծորիհակալ ենք մենք՝ ասին,
Տաշտերդ լի հաց լինի,
Դումներդ միշտ բաց լինի,
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տվեր մեզ ձեր տանից:

Այս տողերով անուղղակիորեն նաև հավաստվում են Լալայանի զրառումներն այն մասին, որ լուսեցի խնամախտաները սովորաբար իրենց մտադրությունն արտահայտում էին հետևյալ կերպ. «Էկել եմ քո օջախից մի բուռլ հող տանելու»:⁶ Նա վկայում է, որ աղջկա ձեռքը խնդրում էին գերդաստանի մեծից՝ պապից, մեծ հորեղբորից կամ հորից:⁷ Նույն կերպ և Թումանյանի մոտ աղջկա հայրն է տախոս համաձայնությունը.

Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արադի
Լիքը բաժակն ու ասաց.
Կամքը լինի, տեր աստված...

Սակայն դժվար թե Մարոյի հայրն այդքան արագ համաձայնություն տար. բանն այն է, որ այդպես ընդունված չէր հայ իրականության մեջ, և միանգամից համաձայնվելը անոր էր համարվում նոյնիսկ այն դեպքում, եթե «աղջկա ծնողները աղքատ լինելով, աշխատում են կարեվույն չափ շուտ ազատվել մի «տոսող բերածից»:⁸ Այս առիթով ե. Լալայանը նկատում է, որ «աղջկա տերը որքան էլ տրամադիր լինի նրանց խնդիրը կատարելու, այնուամենայնիվ, իսկույն ներ խոսք չի տալիս»:⁹ Թումանյանը, պարզապես բանաստեղծական շահերից ելնելով, միտումնավոր կրծատել է բանակցությունների ընթացքի նկարագրությունը:

Նշանողներից մինչև հարսանիք ընկած ժամանակաշրջանը նույնական հակիրճ, բայց խոսուն է պատկերված Թումանյանի կողմից: Ազգագրագետի նրբազգացությամբ օժտված հմտութեան և փորձված բանաստեղծը չի շրջանցում փեսա-զոքանչ հարաբերությունները.

Բայց զոքանչը անսահման
Սիրում, փարում էր նրան:

Հայտնի է, որ հայ իրականության մեջ զոքանչը կարևոր դեր էր խաղում նշանվածների կյանքում մինչև հարսանիք ընկած ժամանակահատվածում: Այսպես, հայ սովորության իրակունիքի մասնագետն Խ. Սամուելյանը նկատում է. «Ամենուրեք հայ

⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 213:

⁵ Նոյնը:

⁶ Նոյն տեղում, էջ 216:

⁷ Նոյնը:

⁸ Նոյն տեղում, էջ 212:

⁹ Նոյն տեղում, էջ 216:

Ժողովրդի մեջ սովորություն կա, որ փեսացուն նշանադրությունից հետո պարտավոր է ծածուկ և անտեսանելի կերպով թե՛ աներոջ կողմից և թե՛ բաղի երիտասարդների աչքերից հաճախել միշտ յուր նշանածին, ընդումին նա միշտ գնում է ընծաներով և, որ զիսավորն է, ընդունվում է միշտ աղջկա մոր կողմից և հյուրասիրվում»:¹⁰ Հայոց մեջ նման դեպքերում այդ ընծաների գերակշիռ մասը կազմում էին քաղցրավենիքն ու անուշեղենները, բարձ ու չոր մրգերը, որի մասին և Թումանյանը հիշատակում է.

Չատ էր սիրում և Մարոն.

-Լավն է, ասում էր Կարոն,

Բերում է ինձ ամեն օր

Կանիետ, չամիչ ու խնձոր...

Փեսա-զորանց հարաբերություններին Թումանյանն անուղղակիորեն անդրադառնում է նաև «Լոռեցի Սարոն» պոեմում: Ընդ որում, որպես հմուտ բանասաց, նա ակնարկում է այդ հարաբերություններին հասուլ ազգագրական մի երևոյթ:

Ուզեց զորանչի ձվածն՝ ոտել,

Թե՞ նշանածին շատ էր կարոտել-

Ոչսարք թողել՝ զնացել էր տուն:

Ընդամենը մի քանի բնութագրական բառերի գործածնամբ՝ զուտնա, իինա և այլն, Թումանյանը վերատեղում է հայոց ավանդական հարսանիքի մի հավաքական պատկեր: Այսպես, նշվում է՝

Մին էլ Կարոն աղմուկով

Եկավ զուտով-թմբուկով:

Ընդհանրապես անկարելի է պատկերացնել հայոց հարսանիքն առանց զուտնայի, առանց զյուղի երեխաների ու մեծահասակների աղմկոտ պարի:¹¹ Հեղինակն այնուհետև շարունակում է.

Ու Մարոյին զուգեցին,

Երեսին քող ձգեցին,

Հինա դրին ձեռքերը...

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Թումանյանը հարսանիքի պարզունակ նկարագրությունն է տվել, սակայն դա բնավ այլպես չէ:

Հարսի զգեստի կարևորագույն բաղադրիչներից է քողը: Քող կրելը նաև հայոց ներգերդաստանային-ներքնտանելան հարաբերությունների վիճակի կարևորագույն ցուցիչներից է: Հարսանելան քողի խորհրդանշական դերը վկայու օրինակներ հանդիպում ենք հայոց տարրեր ազգագրավաներին նվիրված գրականությունում:¹² Ինչպես վերը վկայում են ազգագրական նյութերը, իինա դնելու ստվորույթը հայոց հարսանելան արարողակարգի անքակտելի մասն էր, տարրեր ազգագրավաներում այն հայտնի էր իինա տանել, իինատաներ, իինատրեր, իինատրես և այլ անուններով:¹³ Լոռիում, օրինակ, «Հանդերձ և իինան, որ վերցրած է լինում մակարների հետ եկող հասակավոր կինը, փոխառփոխ դնում են պար եկող երիտասարդների ու աղջիկների զիսներին և պար ածում, ապա հանդերձ հանձնում են հարսնացուի մորը, իսկ իինան մի աղջկա, որ կրակի վրա դնեն և հսկե վերան, մինչև որ քերող կինը, որպես սկեսարշ կողմից լիազոր անձն, կներկե նախ հարսնացուի և ապա ընկերուի հիմների ձեռքերը»: Հինա դնելու արարողությունը հավանաբար այնքան խորհրդանշական էր, որ նոյնիսկ հարսանելան երգերում հիշատակվում է այդ մասին: Հարսին հազցնելիս ընկերուի հիմները երգում էին. «Քորիկներ խափեցին մի ձեռքս իինով», «Զքորիկ խափեցին մատիկ մի իինով...»:¹⁴

Թումանյանը կարծ, բայց բովանդակալից ձևակերպումներով ներկայացնում է նաև պասկի արարողության բնութագրական տարրերը, այդ թվում նաև դրա ընթաց-

¹⁰ Խ. Սա մ ու ելլ ա ն, Մայրական իրավունք (տեսություն հայ սովորութագրական իրավունքից), ԱՀ, զիր 19, Թիֆլիս, 1910, էջ 49:

¹¹ Հմմտ. «Այդ հանդիպումը զնացքին...առաջնորդում է դավուլ-զուտնան»- Ե. Լալայան, Բորչալուի զավակ, էջ 233:

¹² Վ. Պ ե տ ո յ ա ն, Սասնա ազգագրությունը, Եր., 1965:

¹³ Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 230 - 231:

¹⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն, Երկեր, հ.1, Եր., 1985, էջ 154: Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 245:

քում իրականացվող երկխոսությունը, որի ժամանակ հայ աղջիկը «փոսում է» լուս-թյամբ՝ զլուխը հեզորեն ու խոնարի կախելով.

-Տե՞ր ես, որդյա՞կ, հարցրեց:
-Տեր եմ, ասավ մեր Կարոն,
Լուս կանգնած էր միշտ Սարոն...

Այս ձևակերպումները գրեթե նույնությամբ իշխատակվում են նաև ազգագրական գրականության մեջ:¹⁵ Թումանյանի տողերն այնքան խոսուն են, որ ոչ ազգագրագետ ընթերցողն էլ անմիջապես հասկանում է, որ հարսանելքան արարողակարգի յուրաքանչյուր պահ խորհրդանշական է, որ որոշակի պահի հնչում է որոշակի երաժշտություն, և «տարան հա»-ն չի կարող հնչել մեկ այլ, եթե ոչ աղջկան հոր տանից հանելու պահին.

Իսկ երբ հնչեց «տարան հա»-ն,
Նրան փեսի տուն տարան:

Նշենք, որ նմանատիպ նյութ գրանցված է նաև Ե. Լալայանի կողմից. այսպես՝ «Այդ ժամանակ զուտնեն դրանն սկսում է նվազել «Տարան հայ» կամ «Էր հեռանաս» եղանակը, հարսը հեկեկալով, լալով, երկու կանանց առաջնորդությամբ գալիս կանգնում է օջախի մոտ, քաջակորը մոտենում է նրան և մոտը կանցնում: Ապա հարսի հայրը լալով խրառում և օրինում է նրան... ապա դատնալով փեսին՝ թեզ էլ եմ օրինում, քայլ ջան... կալիդ քամի ըլի, ջաղացիդ երբ ըլի...» կամ «Հարսի երբը փեսին օրինելիս ասում էր՝ «կալիդ քամի ըլի, ջաղացիդ երբ ըլի/Թև ու թիկունքիդ ամուր թերդ ըլի»:¹⁶

Ամուսնահարսանելքան արարողակարգը ներկայացնելիս Թումանյանը նաև հաղորդում է ժողովրդական բանահյուսության փայլուն նմուշներ (կոնկրետ դեպքում՝ հարսանելքան օրինանք՝)

Հայրն էլ եկավ ու ծեսին
Էսպես օրինեց իր փեսին.
Ջաղացիդ միշտ երբ լինի,
Մեջքը ամուր թերդ լինի... («Սարոն»)

Հարսանիքի փայլուն պատկեր է կերտված նաև «Անուշ» պոեմում, որն անզուգական նյութ է ոչ միայն մեր կողմից դիտարկվող հարսանելքան արարողակարգի, այլև հայոց ավանդական կենցաղի, հայոց սովորության իրավունքի վերաբերյալ: Թումանյանի «Անուշը» կարդալով նաև բացահայտում ենք, որ հայոց ավանդական հարսանիքը համազուղական միջոցառում, տոնախմբություն է, որի մասնակիցը ողջ գյուղն էր.

Զնոան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում էր անզուսպ ամբոխը զյուղի:

Հարսանիքը հատկապես տոն էր «հասած» աղջիկների ու տղաների համար, քանի որ դա միմյանց հավանելու, ընտրություն կատարելու ամենահարմար առիքն էր:

Գյուղ էին իշել հովիլ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

Հենց հարսանիքի ժամանակ էին երիտասարդ տղաներն ամեն ջանք գործադրում ցուցադրելու իրենց ֆիզիկական ունակությունները՝ ճարպկությունը, ուժն ու քաջությունը: Այդ նպատակին էին ծառայում հարսանիքների ժամանակ կազմակերպվող խաղերն ու զանազան միջոցառումները: Եվ գուցե հարսանիքի ամենահետաքրքիր դրվագները՝ զոտենարտք, նետաձգությունը, ջիլիք (ջիրիք) խաղալը¹⁷ կազմակերպվում էին հենց այդ նպատակով: Գոտենարտիք ժամանակ հնչում էր հասուկ երաժշտություն՝ կոխի եղանակ: «Չունաչին պարի եղանակը փոխում էր, փշում էր կոխի եղանակ»:¹⁸

Ահեղ ու ջահեղ իրարով անցան.

Հարայ են տալի- «Ջաշի հա, քաշի...
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին:

¹⁵ Վ. Պ ե տ ո յ ա ն, Աշվ. աշխ., էջ 263: Վ. Ղազարյան, «Նազիստության և ազգագրության իմաստութիւն ազգագրության և բանահյուսության արխիվ (այսուետն՝ ՀԱԻ ԱԲԱ), ֆ. 89:

¹⁶ Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչարդի զավառ, էջ 239:

¹⁷ Վ. Բ դ ո յ ա ն, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1-3, Եր. 1963-1983:

¹⁸ Վ. Ղ ա ր յ ա ն, ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 89:

Ողջ գյուղը բաժանվում էր երկու բանակի, որոնցից յուրաքանչյուրը բարձրածայն բացականչություններով, աննկարագրելի եռանդով ոզնորում ու ոգեշնչում էր մենամարտողներից մեկնումնեկին.

Ամեն մի բանակն ընտրեց փակիլան,
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի,
Գոռուն են, գոշում երկու բանակից.
-Մրտապինդ կացեր, մի՛ վախեք տղեք...

Տղաներն ավելի էին ոգևորվում, երբ նկատում էին հարսի թիկունքում բաքնված, իրենց մրցակցության ուշի ուշով հետևող աղջիկներին, ովքեր զաղտագողի նայում էին մենամարտողներին, հիանում նրանցով և մեծ դժվարությամբ ընտրություն կատարում, քանի որ հարսանեկան խաղերում ոչ որ չէր պարտվում, բոլոր երիտասարդները հաղթում էին. չէ՞ որ դա կազմակերպվում էր աղջիկների «խելքն առնելու»¹⁹ համար: Եվ աղջիկները թերևս տեղյակ, որ

Աղաք կա սակայն էն նուք ձորելում,
Ու միշտ հնազանդ հնոց աղարին,
Ամրոխի առջև իգիրն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիրին,

կամ գուցե մտավախություն ունենալով բացառություններից, սրտի բրբիռով հետևում էին մրցակցությանը, թե հանկարծ իրենց սիրելին չպարտվի.

Անուշը կանգնած... Սարոն նկատեց,
Թունդ առավ սիրող ու զարկեց արագ
Կատակի տալրով բռղած էր իրեն,
Ուժ արագ Սարոն, ծնկեց կատաղի,
Գետնեց լընկերին ու չորեց վրեմ:

«Անուշ» պոեմում Թունանյանը վկայում է նաև հարսանեկան ձիարշավի մասին, որի վերաբերյալ ևս բազմաթիվ ազգագրական վկայություններ կան:²⁰

Տեսեք, տեսեք, դափ ու զուտով
Ինչ հարսնիք է դուրս զալի,
Սարողիկ ուրախ, բռն ու ձյունով
Զի են խաղում, չափ տալի...

Թունանյանն արժեքավոր նյութ է հաղորդում նաև հայ իրականության մեջ գոյություն ունեցող առևանգմամբ ամուսնության մասին, որը կարող էր և ողբերգական ավարտ ունենալ:

...Էլ չեմ դիմանալ, կիֆախցնեմ զռով,
...Քու հերմ ու մերը քե որ ինձ չտան,
Արին կրափեմ ես գտնի ննան.
Սարերը կընկնեմ, կորչեմ անզյուման:

Լալայանը ևս հաստատում է Լոռվա հայոց մեջ գոյություն ունեցող այս վաղեմի սովորության մասին. Երբ զլավակորապես աղջկա ծնողները համաձայն չեն լինում տալու իրենց աղջիկը նրա վրա վրա սիրահարված երիտասարդին... և սա, հավաքելով յուր ընկերներին, փախցնում է աղջկան: Երբ այս մասին լսում են աղջկա ծնողները, ձիավորվում, սար ու ձոր ընկնում, որոնում են և եթե գտնում են՝ սաստիկ կովում են, աղջիկը հետ առնում տանում տուն, իսկ եթե ոչ, տղան մի քանի օր աղջկան յայլաներում կամ բարեկամի մոտ պահելուց հետո ուղարկում է հոր տունը»:²¹ Թունանյանը «Անուշ»-ում տալիս է նաև այս սովորութիւն գեղարվեստական փայլուն նկարագրությունը.

Ամբողջ մի ամիս խումբը զինական
Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց՝
Չորսն Սարոյին գտնելու համար,
Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց:
Սի ամսից հնաս տղերքն եկան տուն,

¹⁹ Վ. Պ ե տ ո յ ա ն, Աշվ. աշխ., էջ 233:

²⁰ Վ. Բ դ ո յ ա ն, Հայ ժողովրդական խաղեր, հ. 2, էջ 198: Ե. Լալայան, Զավախս, Երկեր, հ. 1, Եր., 1985, էջ 250: Վ. Պետոյան, Աշվ. աշխ., էջ 256:

²¹ Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչալովի զավատ, էջ 215: Վ. Ղազարյան, ՀՄ ԱԲԱ, ֆ. 89, էջ 317:

Գովելով նրա արարքը ճարպիկ.

Հալալ է տղին, այ խփություն,

Սիա թե ինչպես կփախցնեն աղջիկ:

Իհարկե, Անուշը սվորական դեաք չէ. Սոսին վրեժ է լուծում ոչ միայն քրոջ առևանգման, այլ նաև իր պատիվը ընկերոջ կողմից ունահարելու համար:

Սենակ Անուշի ախսպերը - Սոսին

Սնաց հանդերում. երդում կերավ նա,

Ուր որ էլ լինին՝ նրանց միասին

Գտնի՝ կոտորի սիրտը հովանան:

Անշուշտ, նման իրավիճակում կարևոր հաշտարար դեր էր խաղում նաև զյուղի քահանան, ինչի մասին վկայում է Թումանյանը, ցոյց տալով, թե որ դեաքում էր ներկում առևանգումը և իրականացվում պսակը, ինչը (դա բացահայտ գում ենք Թումանյանի տողերից) կարևոր էր տվյալ պարագայում.

Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,

Սիրո՞՞ն ես նրան, քու կամքո՞վ փախար...

Եթե սիրում ես՝ էլ դարդ մի անիր,

Պիտի պսակեմ ես ձեզ անպատճառ...

Վ. Ղազարյանը վկայում է. «Պատահում էր, որ զրոյով փախցրած աղջկան քողնում էին տղի տանը, զիտենալով, որ հետ քերելը կրկնակի ամորանք է իրենց համար, աղջիկը մնալու է տանը»:²²

...Կանգնած են շուրջը կանայք հարևան,

Ու խոսք չեն գտնում ասեն անարգված,

Տարած, ես քերած, անրախտ աղջկան:

Նոյնիսկ հերիարենում և լեգենդներում Թումանյանը հաղորդում է հարսանեկան արարողակարգին վերաբերող նյութեր: Հասարակ ժողովորի տղաներն ու աղջիկներն իրար ծանոթանում էին ջրի ծանին, հարսանիքներում, սարերում կամ սարի ծանին, տոնական օրերին ուխտավայրերում:²³ «Ախրամար» լեգենդում Թումանյանն անդրադառնում է սիրահարների հանդիպման մեջ այլ տարրերակի, ընդ որում, թես թվում է, թե նա դրական է վերաբերվում նման հանդիպմաներին, բայց գեղարվեստական խոսքով արտահայտում է ժողովորի վերաբերմունքը նման կապի վերաբերյալ.

Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբաստ են

Լիրը, անամոք Թամարից»:

Այլ օրինակներում, ինչ-ինչ պատճառներից եկելով, ծնողներն իրենք էին որոշում խնամիներ դառնալ («Ուկու կարասը»), կամ արքաներն իրենց աղջիկներին ամուսնացնելու նպատակով դեսպաններ էին ուղարկում արժանավոր փեսացուների մոտ, իսկ վերջիններս էլ արքայադստեր սրտին արժանանալու համար անպայման որոշակի փորձության էին ենթարկվում՝ ցոյց տալով իրենց շնորհքը ձիարշավում, գոտենարտում և այլն: Հերիարային հարսանիքները ևս չեն կարող իրականանալ առանց քավորի, բաժինքի, խնամիների փոխադարձ հարաբերությունների, յոթ օր յոթ գիշեր ընթացող քեֆերի («Չախ-չախ բագավորը», «Ուկու կարասը», «Կոնատ աղջիկը»): Եվ բացառված չէ, որ արքայազնն ամուսնանա ոչ արքայական ծագում ունեցող, նոյնիսկ հաշմանդամ աղջկա հետ, որովհետև քումանյանական իմաստությունն ամուսնության մասին ասում է. «Մարդ ու կնկա բախտը որ կա՝ սրտիցն է: Աստված դրանց համար էլ եղան է բարի տեսել»: («Կոնատ աղջիկը»)

Ամենայն հավանականությամբ, Թումանյանը տեղյակ է նաև հնում եղած այն սովորությանը, երբ աղջիկներն էին փեսացու ընտրում²⁴ և ոչ թե տղաները, ապա թե ոչ թեկուզ հերիարեն նա այնքան «անհամեսու» չէր ներկայացնի հայ աղջկան.

«Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տիսուր չեն լինիլ, ուրախ ու երջանիկ կլինես:

²² Վ. Ղ ա զ ա ր յ ա ն, Աշվ. աշխ., էջ 317:

²³ Նոյն տեղում, էջ 345:

²⁴ Խ. Մ ա մ ու ե լ յ ա ն, Աշվ. աշխ., էջ 37:

-Դե որ այդպես է, արի դու եղիք իմ կյանքի մտերիմ ընկերը, - քախանձեց աղջիկը ճամփորդին»: («Անխելք մարդք»)

Թումանյանական ամուսնահարսածեկան արարողակարգում ևս խնձորը հանդես է զայս որպես սիրո խորիրդանիշ՝ լրացնելով ազգագրական գրականության մեջ սիռված բազմաթիվ նմանատիպ նյութերը.²⁵

Ընտրիք, զարկիք ձեռիդ խնձորն

Անհաղթներից անհաղթին,

Որ ող աշխարհ մայի մնա

Անզուզական քո բախտին: («Փարվանա»)

Այսպիսով, ծնված լինելով Լոռվա ալվանդական կենցաղամշակութային արժեքներով ապրող Դսեղ զյուղում, Հովի. Թումանյանը նորք դիտողականությամբ և իրեն հասուուկ խորաքափանցությամբ վավերացրել է ժողովրդական կյանքի առօրյա և տոնածիսական կացուքածկը, այդ թվում նաև՝ հայոց ալվանդական ամուսնահարսածեկան արարողակարգի որոշ մանրամասներ՝ հաղորդելով դրանց գունեղ, գեղարվեստական մարմնավորում, անաղարտ պահպանելով ազգագրական ատահճը:

Ցավոք, Թումանյանը չի տախս ամուսնահարսածեկան ծիսաշարի հանգամանալից բնութագիրը (նրանից դա չենք էլ կարող պահանջել կամ ակնկալի): Նրա ստեղծագործությունները սահմանափակվում են այդ ծիսաշարի որոշ պահերի նկարագրությամբ, այդ ծիսաշարի հետ կապված շատ մանրամասներ Թումանյանը քավարար չափով չի լուսաբանում, որոշ տպորտությունների մասին նրա ստեղծագործություններում չենք գտնում նոյնիսկ պարզ հիշատակություն: Այնուամենայնիվ ինչպես տեսանք, Թումանյանի մի շաքր ստեղծագործություններ արժանի են ազգագրագիտների ուշադրությանը՝ հատկապես հայոց պահպանական ամուսնահարսածեկան արարողակարգի մի շաքր նրբություններ բացահայտելու առումով:

ПРОЯВЛЕНИЯ ТРАДИЦИОННОЙ АРМЯНСКОЙ СВАДЕБНОЙ ОБРЯДНОСТИ В ПРОИЗВЕДЕНИЯХ О. ТУМАНЯНА

Резюме

A. Aрутюнян

В статье обсуждается проблема проявлений элементов традиционной армянской свадебной обрядности в произведениях выдающегося армянского поэта Ованеса Туманяна. Некоторые произведения поэта анализируются не с точки зрения их художественной ценности, а как этнографический первоисточник по многим сферам армянской свадебной обрядности. Сам поэт рассматривается как прекрасный знаток традиционной армянской культуры, нравов, быта и атмосферы армянского села конца XIX-начала XX века.

²⁵ Ե. Լալայան, Վայոց Զոր, էջ 144:

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՌՈՐԴԱԿՑՈՒՄ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Կոնֆլիկտի սկզբնական պատճառը սովորաբար բացատրվում է հավասարության պահանջմունքի խախտումով: Պատահական չէ, որ ընդունված օրինաչափությունների և կարգը խախտողների գործունեությունը հանգեցնում է հավասարության և արդարության պահանջմունքի քրոնիկական ֆրուստրացիաների:

Սահմանային իրավիճակներում մեկ անձի վարքը երբեմն հակասում է այլ անձանց իրավաբանական ու բարոյական ոլորտություններին, որով էլ պայմանավորվում է նրանց վարքազծի հարկադրական փոփոխությունը: Վարքազծի փոփոխության արտահայտման միջոցներից է ազգեսիկ գործողություն՝ ֆիզիկական ճնշման սպառնալիքով կամ կարգավիճակի խախտումով: Այսպիսի դեպքերն առավելապես առնչվում են հոգեբանական կոնֆլիկտներին:

Ըստ լեզվական ընկալման՝ կոնֆլիկտը հակադիր շահերի, ձգտումների, հայցըների, ոժերի բախում է՝ ընդհարում, բախում, որն ընկած է գեղարվեստական երկի գործող անձանց պայքարի հիմքում:¹

Փիլիսոփայական հայեցակետի համաձայն՝ դրամատիկական կոնֆլիկտը կենսական հակասությունների արտահայտման յորօրինակ գեղագիտական ձև է: Նրա բովանդակությունը գեղեցկի և այլանդակի միջև մղվող պայքարն է: Կոնֆլիկտը ծագում և լուծվում է որոշակի սոցիալական ուժերի և հասարակական զարգացման միտումների բախման վրա:²

Կոնֆլիկտը լատիներեն *conflictus*՝ ընդհարում, բախում բառից է առաջացել. հայտնի են այս երևույթի բնորոշման ու սահմանման տարրեր հայեցակետեր:

Հոգեբանության մեջ առանձնացվում է կոնֆլիկտների հետևյալ տեսակները.

1. Ներանձնային. բնորոշագրվում է նույն անձի մեջ երկու հավասար ուժերի կամ զաղափարների բախմամբ՝ հակադրվելով ուղղվածությամբ, դրդապատճառներով, հետաքրքրություններով, պահանջմունքներով և այլն:
2. Սիջանանային. առաջանում է մարդկանց միջև միմյանց փոխհարաբերվելիս, երբ նրանք հետապնդում են անհամատեղելի նպատակներ՝ ունենալով անհամատեղելի արժեքային կողմնորոշումներ ու սկզբունքներ: Նման դեպքերում սուր մրցակցությամբ ձգտում են հասմելու միևնույն հետապնդելի նպատակին, որը բնականարար վերապահված է միայն կողմերից մեկին:
3. Սիջխնճային. իրեն բախումային կողմեր հանդես են գալիս սոցիալական խմբերը, որոնք ունեն անհամատեղելի նպատակներ և իրենց գործունեությամբ խոչընդոտում են մեկը մյուսին:³

Ամեն մի կոնֆլիկտ ծագում է միայն օրյեկտի առկայության դեպքում: Անհատի և սոցիալական խմբերի բախումներն առանց հիմքի չեն լինում և տեղի են ունենում այն դեպքում, եթե մասնակիցները չեն կարողանում միմյանց միջև ինչ-ոք բան պարզաբերել: Սարդիկ պայքարի մեջ են մտնում ոչ միայն իրական նյութական բարիքների համար, այլև հետապնդելով ու պաշտպանելով խարուսիկ իդեալներ: Կոնֆլիկտի առարկան միշտ իրական է և արդիական, իսկ օրյեկտը կարող է լինել ինչպես ակնհայտ, այնպես էլ լատենտային (քարենված):

Կոնֆլիկտի դիմամիկան ըմբռնելու համար նախ անհրաժեշտ է քննության առնել նրա էներգետիկան և ապա զարգացման ընթացքը: Ցուրաքանչյուր կոնֆլիկտի տևողությունը այնքան է, որքան կողմերը եռանդ են դնում այն պահպանելու համար:

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III, (Կ-Մ), Եր., 1974, էջ 184:

² Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 216:

³ Краткий психологический словарь, Политиздат, М., 1985, стр. 152.

Կոնֆլիկտի լիցքի հզրության չափը պայմանավորված է նրանով, թե որքան ավելի մեծ եռանդով են կողմերը լծվում կոնֆլիկտը «քրոբքելու» գործին:

Հարկ է տարբերակել այն օրյեկտիվ և սուրյեկտիվ գործոնները, որոնք ներքաշում են մարդկանց կոնֆլիկտային գործողությունների ոլոր:

Օրյեկտիվ գործոնները իրականության մեջ զոյլություն ունեցող հաճամաճըներն են, որոնք զիսավորապես կապված են կեցության պայմանների, ինչպես նաև անհատի կամ սոցիալական խմբի սոցիալ-հոգեբանական էական առանձնահատկությունների հետ: Օրյեկտիվ գործոնների առկայությունը, որը անհատի կամ սոցիալական խմբերի կենսականորեն կարևոր պահանջնունքների, շահերի, նպատակների բախում է առաջացնում, կոնֆլիկտը դարձնում է անխոսավիելի: Ի դեպ, դեպքերի ծավալ-մանը զուգահեռ կոնֆլիկտը կարող է ենթարկվել ձևափոխությունների:

Սուրյեկտիվ գործոնները խթանում են կոնֆլիկտային գործողությունները և որոշվում են երևակայական, պատրաճքային հաճամաճներով: Այս դեպքում մարդը աղավարված է պատկերացնում այն վիճակը, որում գտնվում է իրական հաճամաճըները ևս խեղաքություն են երևակայականի ճնշմամբ: «Պատրաճքները կոնֆլիկտը իրակրող և զորեղացնող պատճառներն ու ազդակներն են: Ըստ եռյան, երևակայամոլությունը շիկացնում է կրքերն այնքանով, որքանով իրական են հաճամաճները: Մարդը, հայտնվելով տարածայնությունների գոտում, կրում է կոնֆլիկտի և օրյեկտիվի՝ սուրյեկտիվ գործոնների «լարգները»:

Գոյություն ունեն բոլոր մարդկանց ներհատուկ մի քանի տիպական պատրաճքներ, որոնք վկայում են կոնֆլիկտի շիկացնան և էներգետիկայի մասին՝ «հաղթելապարտվելու» պատրաճքը, «փերճարդարացման» պատրաճքը, «վաստ մարդու» պատրաճքը, «հայելային ընկալման» պատրաճք⁴ (բախվող երկու կողմերի մեջ երկությների ընկալման վերաբերյալ նոյն պատկերացումների ստեղծում, այնպես, ինչպես հայելուն նայելիս): Ներանձնային կոնֆլիկտներում մարդու հոգում խսորվող դրդապատճառների պայքարում, հաղթելու հավանականություն ունի առավել հզր էներգետիկ լիցք ունեցողը: Հարցը, սակայն, շատ ավելի է բարդանում միջանձնային կամ խմբային կոնֆլիկտների դեպքում:

Ո՞րն է կոնֆլիկտի «ուժը»:

Հնարավոր չեն թվարկել այն բոլոր գործոնները, որոնք հաղթանակ և գերազանցություն են ապահովում կոնֆլիկտներում: Սակայն կոնֆլիկտային գործողության եղանակն ընտրելու խնդրում մեծ նշանակություն ունի ոչ այնքան այդ ուժի «քացարձակ մեծությունը», որքան նրանց հարաբերությունը, ուժերի հաշվեկշիռը: Կոնֆլիկտային պայքարում ուժերի հարաբերակցությունը կարող է փոփոխվել: Հակամարտող կողմերից մեկի գործողությունների նպատակը մյուսի ուժերը բոլուցնելն է: Կոնֆլիկտի դիմամիկան շատ հարցերում որոշվում է նրանով, թե կողմերն ինչպես են հասնում ուժերի գերակայության՝ շրջելով այն իրենց կողմը:

Սահմանային իրավիճակներում վտանգի պահից մինչև վարքագծի ընտրությունը կուտակվում են ազրեակի գործողության ռեսուրսներ: Եթե բացասական էներգիան և եռանդությ համաժամանակյա դրւու չեն մղվում, կարող են առաջանալ հոգեստմատիկ հիմանդրություններ և հոգեներություններ: Մարդկանց պահանջնունքների հակասությունների մեջ ընդգծելով կողմերից մեկի առավելությունը:

Բոլոր դեպքերում հարկավոր է նվազագույնի հասցեն ազրեակի վարքագծի դրաւորումները՝ գտնելով բացասական իմպուլսի պարագան երրությունը: Ազրեակի վարքագույն գասման և նվազեցման շնորհիկ, օգտագործելով հակառանական միջոցներ, կառուի է կանխել հակասությունների առաջացումը և բոլուցնել լարվածությունը: Անհրաժեշտ է վերազնել ու պահպանել նախկին ներդաշնակ հարաբերությունները՝ այսպիսով լուծելով միջանձնային հակասությունները:

Գերազանցության նշանները երբեմն դրսերպում են բարյացակամության շեշտով, կարենցությամբ, հաղորդակցման պարզությամբ, որոնք առկա են մարդու հոգե-

⁴ Конфликтология, Учебник, Санкт-Петербург, 2000, стр. 44-45.

կանի մեջ և որոնցից դժվար է ազատվել: Գաղտնի գերազանցության նշան կարելի է համարել սեփական անձի ճշմարիս լինելու մեջ համոզվածությունը:

Կոնֆլիկտային կողմերին կարելի է առաջարկել մի քանի դարձվածներ, որոնք կանխում են ինքնահավան լինելու տպավորությունը (ինձ թվում է, ըստ իս..., եթե չեմ սխալվում..., ես այդպես եմ կարծում...)՝ միջավայրին դրական կողմնորոշելով:

Եթե խոսակցի վարքագիծը հակադրվում է ներխմբային կանոններին և բարոյական դիրքորոշումներին, հակազդեցության նպատակահարմարությունը պետք է ընտրել հաղորդակցման ունակությունների վրապումներին առնչվող կոնֆլիկտները բացասարար են ներազդում կողմերի վրա՝ հանգեցնելով ներանձնային կոնֆլիկտի:

Հաղորդակցման երկար ժամանակահատվածում կարելի է պարզել խոսակցի արժեքային կողմնորոշումները, անձնային դիրքորոշումները՝ այսպիսով, հասնելով անձերի միջև հնարավոր կոնֆլիկտների հարթեցման:

Հոգեկարգավորման սկզբունքներից մեկը, այսպիսով, կոնֆլիկտների համահարթեցման մեթոդը՝ համակարգված կրումով, վեճը կանխելու հմտության հասնելն է, ըստ էության, միշտ վարվելակեպով կանխելով կոնֆլիկտի առաջցումը:

Մշակում են կոնֆլիկտային հաղորդակցման հոգեբանական կոռեկցիայի մեթոդային եղանակներ, որոնք կիրառում են եակենուրուն, ազրեսիվ ու շրջապատռղների հանդեպ գերազանցության ձգուում ունեցող մարդկանց նկատմամբ: Բոլոր դեպքերում կոնֆլիկտածին իրավիճակ է ստեղծում հավասարության պահանջնունքի ֆրուստրացիան: Գերազանցման ցանկությունը և ակնհայտ նշանների դրսւորումը հասուն են նրանց, ովքեր խորությամբ չեն ընդունում մարդկանց հավասարության գաղափարը: Սահմանային իրավիճակներում ազրեսիվ տատանումների անվիճությունը՝ խթան-հակազդեցություն, հակազդեցություն-խթան, գործողությունների շղթայում ավելանուն է: Երբեմն լարվածության ուժեղացումն ուղեկցվում է ավելիշ գործողությունների պատրաստականությամբ: Սովորաբար վեճն ավարտվում է բարոյական և իրավական արգելափակ գոտու սահմանի մոտ՝ ի վերջո հանգեցնելով ագերափի խմանության:

Համակեցության և վարվելակերպի կանոնների խախտումը ևս առնչվում է գերազանցության գաղափարի կամ դրսւորվող նշանների արտահայտմանը՝ հաճախ մեղադրանքների և վիրավորանքների ձևով: Մեղադրանքն ընդունելու դեպքում կարող են նվազել անձի ստեղծագործական ներուժը, ինքնահարգանքը և միջավայրի հարգանքը, իսկ մեղադրանքի անընդունելիությունը փոխարկվում է ակտիվ տեսակի՝ պատասխան մեղադրանքի և պայմանագործական առաջարկությունը՝ ակտիվ ակտիվացմանը:

Հարց է առաջանում՝ ինչպես վերաբերվել քննադատությանը, առանց որի անհնար է պատկերացնել համագործակցությունը:

Ըստ մեթոդական հղման՝ անհրաժեշտ է քննադատող անձից տարանջատել մեղադրական սլաքը՝ առավելապես շեշտադրելով կառուցողական առաջադրանքները (կոնստրուկտիվ) և կանխելով թյուր մոտեցումներն ու հայեցակեները:

Հաղորդակցման գործընթացում կոնֆլիկտածին գործոններից է, այսպես կոչված, «վերևից ներքև» ուղղորդված հումորը: «Չափության նոխազի» բարդույթը ունեցողները նույնիսկ բարյացական հումորի դեպքում տառապում են դիսկոնֆորտից կամ անբարեհարմարությունից: Առհասարակ անբարեհիտ հումորն ինքնարարձրացում է խոսակցի նվաստացման հաշվին. շփրվածությունը, պատասխան տալու փորձները կամ հոգեբանական պաշտպանության մյուս միջոցները (վիրավորանք, մեղադրանք) վերատիմ լարվածություն են առաջանում՝ հանգեցնելով կոնֆլիկտային իրավիճակի: Միայն ընկերական միջավայրում, որ առկա են ինտենսիվի, բարյական որակների հավասարություն, հոգեմտավոր նկարագրի ընդհանրություն, հումորը կորցնում է գերազանցության շեշտադրումը և արդարացվում է:

Անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել մարդկանց՝ միմյանց վրա ազդելու ոճին՝ ընդգծելով ժողովրդավարական ոճի և՝ առավելությունները, և՝ առանձնահատկությունները ավտորիխուարի համեմատությամբ: Ժողովրդավարական ոճի սկզբունքն է՝ պարտադրել և կոնֆլիկտի լուծնան ուղիներ առաջարկել նկարագրելով հնարավոր առավելություններն ու թերությունները: Այս դեպքում խրախուսվում է նաև այլ առաջարկությունների առաջադրումը. պարտադրում է ոչ թե անձը, այլ թելադրում է իրականությունների առաջադրումը. պարտադրում է ոչ թե անձը, այլ թելադրում է իրականությունը:

նը, հարաբերությունները զարգանում են փոխադարձ հավանության և համաձայնության մքննողատում, հետևաբար բարձրանում են անձի ակտիվությունը և ինքնագնահատականը:

Հաղորդակցման գործնքացում առավելապես կարևորվում է հավասարության սկզբունքի պահպանումը: Հաճախ կոնֆլիկտային իրավիճակներում հակադրեցության բացակայությունը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ անձը խոսափել է վեճից՝ ի վեսա արժանապատվության կրասի: Անձի արժանապատվությունը չվճառող ինքնաշխատությունը տրամադրում է համերաշխության: Լինում են դեպքեր, երբ միտումնավոր խախտվում են Վարվելակերպի ու բարոյականության ընդունված օրենքներին ու օրինաշահությունների, որի հետևանքով լարվածություն է ստեղծվում միջանձնային հարաբերությունների ողորսում: Հակադրությունը տեղափոխվում է օրենքը կամ կարգը խախտել ցանկացողների և այն բույլ չտվողների միջև: Նման դեպքերում անհրաժեշտ է փոխել խախտողի դիրքորոշումը, անձնային ուղղվածությունը, որը բացաված է առանց կոնֆրոնտացիայի: Նպատակահարմար չէ օգուագործել վիրավորական խոսքեր կամ բարձրացնել ձայնի հնչերանգը, երբեմն նախընտրելի է խոսքի մեջ մտցնել հեգնական ինտոնացիա՝ այսպիսով գասատացնելով և սրբագրելով խոսակցին:

Հոգեկարգավորման գործնքացը կարելի է իրականացնել փուլային ներգործությամբ՝ աստիճանաբար նվազեցնելով հոգեբանական ճնշումը: Կողմերին հաղորդելով ակտիվ և առողջ կենսական դիրքորոշում՝ չեզոքացնել վիճարանողների բացասական միտումները: Այս ամենն ի վերջո ուղղված է հասարակական կարգի ներդաշնակության ու անձի հոգեկան հարաբերական հակասարակշուրջյան պահպանմանը:

Անշոշտ, կարգը խախտողների վարքագիր հանդեպ լրությունն ու անտարբերությունը, հակադրեցության բացակայությունը կարող են հանգեցնել հավասարության և արդարության պահանջմունքի ծանր ֆրուստրացիաների:

Անհաջողությունները, ինչ խոսք, ազդում են նարդու կենսական դիրքորոշումների վրա՝ ողեկցվելով դրդապատճառների փոխանակումով: Հոգեկարգավորման վերջնական միտումները բախումների ու վեճների լրացնան ճանապարհով հասարակական ներդաշնակ կարգի վերականգնման, ինչպես նաև անձի հոգեկան և մտավոր աշխարհի հակասարակշուրջյան հասնելի է: Երբ լարվածությունը վերացնելու, փոխադարձ զիջումների, համագործակցությունը վերականգնելու երկուստեք ձգումներ, կոնֆլիկտը թևափոխում է գործնական հանգուցալուծման փուլ:

Կոնֆլիկտի լիակատար հանգուցալուծման կարելի է հասնել այն դեպքում, երբ և արտաքին, և՝ ներքին մակարդակներում կոնֆլիկտային իրավիճակի երկու բաղադրիչներն եւ ձևափոխսպում են:

ЭНЕРГЕТИКА КОНФЛИКТА И ПСИХОКОРРЕКЦИЯ В ПРОЦЕССЕ ОБЩЕНИЯ

Резюме

K. Saakyan, R. Oganesyan

В конфликтных ситуациях различаются объективные и субъективные факторы возникновения конфликта. Существенную роль в динамике конфликта играет энергетика. Наша цель – это достижение разрешения конфликта мирным путем. Процесс психокоррекции способствует выявлению и разработке противоконфликтных средств, приводящих к обретению относительной уровновешенности личности.

Հարիսա ԵԳԱՆՅԱՆ


ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ 2006թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մեծ Սեպասարի նախորդ երկու տարիների պեղումներով բնակավայրի վաղ միջնադարյան կառույցների տակ բացվեցին մ.թ.ա. 28-26/24-րդ դարերով թվագրվող բնակավայրի շինարարական երկու հորիզոններից պահպանված սալահատակների և պատերի հատվածներ։¹

2006թ. պեղումներն իրականացվեցին Project Discovery հիմնադրամի դրամաշնորհով։ Ելեկով որոշակի խնդիրներից՝ պեղումները նախ շարունակվեցին բնակավայրի արդեն մասսանք պեղված հատվածներում, ապա պեղավայրն ընդարձակվեց դեպի հյուսիս և արևմուտք։ Պեղավայրի արևմտյան հատվածում դրվեցին լրացուցիչ Բ-2, Բ-3, Բ-4 և Բ-5, հյուսիսայինում՝ Ը-2 և Ը-2 քառակուսիները։

Աշխատանքներն իրականացվեցին պեղավայրի կենտրոնական հատվածում՝ նախորդ տարիներին բացված միջնադարյան կառույցի առաջին (Ե-4, Ե-5) և երկրորդ սենյակներում (Ե-3)։ Առաջին սենյակում հետացվեցին հարավային մաստարայի մի նասու և հյուսիսային մաստարան ամբողջությամբ։ Պեղվեց նաև նոյն սենյակում պահպանված վաղքանգիղարյան սալահատակի տակ։

ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ. ԲՆԱԿԱՏԵՂԻ (2006)



¹ Լ. Ե զ ա ն յ ա ն, ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրը (2004-2005թթ. պեղումների նախնական արդյունքներ), ԸՆԿ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 5-21:

Նախորդ տարի բացված հարավային՝ առաջին սենյակը արևելք-արևմտուք ձգվածությամբ ուղղանկյուն պահ է՝ հարավային և հյուսիսային պատերի երկայնքով դրված մաստարաներով, որոնք վերաբերում են Վաղմիջնադարյան կառույցի վերակառւցման փուլին: Սենյակի մեջ պահպանված մ.թ.ա. III հազարամյակին վերաբերող սալահատակը և վերջինիս վրա դրված պատը մտնում էին մաստարայի տակ:

Հարավային սենյակի հյուսիսային պատի տակ դրված մաստարան գրաղեցնում էր պատի արևմտյան կեսը և ավարտվում էր հյուսիս-արևմտյան անկյունում բացված մուտքի մոտ: Վաղբրոնզիդարյան կառույցից պահպանված սալահատակից 40սմ բարձր լինելով՝ մաստարայի արևելյան կողմն ավարտվում էր նոյն սալահատակին դրված քարերով: Հստակ էր, որ վերջինս մաստարայից ավելի վաղ է, սակայն նաև համաժամանակյա չէ սալահատակին: Շարվածքի ինչ լինելը և ժամանակաշրջանը պարզելու համար անհրաժեշտ էր հետացնել մաստարան:

Մաստարայի մակերեսից 30սմ խորության վրա բացվեց շատ վատ բրծված օջախ: Խեցելենք խառն էր՝ իմնականում մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ կարմիր սատառով և սև փայլուն արտաքինով տարրեր ամանների բեկորներ, դրանց հետ նաև՝ միջնադարյան բեկորներ: Մաստարան հետացնելիս բացվեց մ.թ.ա. III հազարամյակի սալահատակի վրա դրված հյուսիս-հարավ գնացող պատին զուգահեռ նի պատ և: Քարերի և սալերի խառն շարվածքով այս պատը մնացել է միջնադարյան կառույցի տակ, որի հյուսիսային պատը դրվել է անմիջապես վերջինիս վրա: Բացված պատի հատվածը վերաբերում է մ.թ.ա. III հազարամյակի կառույցի շինարարական երկրորդ փուլին և նի ամրողություն է կազմել ստորին սալահատակից 30սմ հզորությամբ մշակութային շերտով տարանջատված երկլորդ սալահատակի հետ: Մաստարան հետացնելուց հետո արևմտյան մասում բացվեց նաև նոյն կառույցի շինարարական առաջին փուլին վերաբերող, հյուսիս-հարավ ուղղությամբ և ստորին սալահատակի հետ մեկ ամրողություն կազմող պատի (լայն. 1մ) շարունակությունը: Այսինքն՝ իրար զուգահեռ երկու պատերը տարածամանակյա են:

Սենյակի կենտրոնում՝ վաղբրոնզիդարյան սալահատակի եզրից սկսվող հողե հատակի վրա՝ երկրորդ փուլին վերաբերող պատի տակ, բացվեց անկանոն, հսկա քառերի վրա դրված անորի շուրջից իրան հատվածը կազմող բեկոր՝ ամրացված վատ բրծված կավի 4-5սմ շերտով: Կավանորի բերանը դրվել է մայր հողի մեջ ցցված ժայռերերի եզրին և քիչ բարձր է ստորին սալահատակից: Կավաշերտի հարթակի վրա գտնվեցին մաճը եղջերավոր անասունի կողովուներ և այլ անորների մի քանի բեկոր: Կավաշերտը շարունակվում և մտնում է պատի տակ: Այսինքն, շինարարական երկլորդ փուլին վերաբերող, մեկ մետր լայնությամբ, տարրեր մեծության քարերով և սալերով շարված, հողի և քարերի լիցքով պատը դրվել էր կառույցի շինարարական առաջին փուլին վերաբերող անոր-կրակարանի վրա: Հետազայում վաղբրոնզիդարյան այս պատի վրա է դրվել վաղմիջնադարյան կառույցի պատը: Այսինքն, տվյալ փոքր հատվածում ունենք վաղբրոնզիդարյան երկու և վաղմիջնադարյան մի շերտ, որոնց հարաբերակցությունը պարզելու համար պատի մի հատվածը հետացվեց: “Պեղվող հատվածը մի կողմից սահման ուներ կավաշերտի մեջ դրված անոր-կրակարանի շուրջը, մյուս կողմից՝ միջնադարյան պատը: Բացվեց հրախային խարամով և հողով տափանված հաստ հատակ՝ վաղբրոնզիդարյան ամանների բեկորներով: Ավելի վաղ շերտի առկայությունը պարզելու համատակով պեղվեց նաև սպահատակի տակ: Նախ հեռացվեց սալահատակի մի մասը: Բացված փոսի մեջ գտնվեցին բարձր զորվ և քիչ փրուն իրանով միջին բրոնզիդարյան երկու ամրողական անոր, սրանց կողքին մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ կարմիր աստառով և սև արտաքինով կարասի բեկորներ, օրինիանից սրածայր գործիք, ինչպես նաև ոչխարի ճան և սրունքովով: Վաղբրոնզիդարյան կարասն իր տեղում է, իսկ միջին բրոնզիդարյան նյութերը այստեղ հայտնվել են հետագայում, երբ բնակավայրի անկումից հետո տարածքը հավանաբար վեր է ածվել դամբարանադաշտի և մ.թ.ա. III հազարամյակի շերտի մեջ իշեցվել է միջին բրոնզիդարյան թաղում: Թեև միայն հետագա պեղումներով կարելի է հաստատել ենթադրությունը, սակայն սրա օգտին են խոսում ինչպես մ.թ.ա. II հազարամյակին վերաբերող գտածուները, այնպես էլ Սեծ Սեպասարի արևելյան հատվածի մակերեսին ուրվագծվող սալարկերը և «Դարի սուրբ» մասութի մեջ ներառված սալարկդարյան թաղումները, որոնցից

մեկի ձևը՝ երկու մեծ ծածկասալով ու կորողով, բնորոշ է միջին բրոնզի ժամանակաշրջանին:

Որոշվեց հեռացնել նաև նոյն սենյակի հարավային պատի տակ դրված նաստարայի արևմտյան կետը: Մաստարայի շարվածքից երևում էր, որ արևմտյան հատվածը հետագայում է դրվել: Նոյն հատվածում ընդհատված էր նաև հարավային պատը: 2005թ. սենյակի արևմտյան պատը բացելիս պարզվել էր, որ վերջինս, հասնելով մաստարային, ավարտվում է: Պեղվել էր նաև արևմտյան պատին կից քառակուսին, սակայն նշված պատը չհայտնաբերվեց: Անհրաժեշտ էր պարզել նաև մաստարայի տակ մնացած մ.թ.ա. III հազարամյակի սալահատակի և համաժամանակյա հյուսիսարավ պատի շարունակելի լինելը, ինչպես նաև սենյակի հարավային պատի թերի լինելու պատճառը:

Առաջին շերտից գտնվեց աղորիք և ծակոտկեն բազալտից կոտրք: Այս իրերը գտնվեցին կոպիտ, խաչվոր գծերով նախշազարդված սաղի բեկորների հետ, որոնք մնացել են արևմտյան պատի փլվածքի տակ: Մաստարան 20 սմ հջնելուց հետո բացվեց մեկ այլ սաջ, որից պահպանված աղեղնաձև հատվածը թիկունքից ամրացված էր քարերի շարվածքով: Բացվեց նաև սենյակի արևմտյան պատի շարունակությունը, որի վերին շարքերի քարերը փլվել էին օջախի վրա: Սենյակի հարավային պատի արևմտյան հատվածի բացակայությունը ենթադրում է, որ պատը կարող էր ավելի խոր դրված լինել: Այս պատը նաև պեղավայրի հարավային եզրն է, և պեղավայրի հետագա ընդարձակմամբ միայն հնարավոր կլինի պարզել պատի բացակայության պատճառը:

Հարավային պատի տակ դրված մաստարան հեռացնելուց հետո բացվեց մ.թ.ա. III հազարամյակի կառույցի առաջին հորիզոնին վերաբերող պատի շարունակությունը՝ հարավ-արևմտյան անկյունում: Այսինքն՝ կառույցը քառակուսի կամ ուղղանկյուն է եղել, և բացվածը նրա արևմտյան պատն է:

Այսպիսով, հարավային սենյակի պեղումներով հստակեցվեց, որ պահպանված ստորին սալահատակը և նրա վրայով գնացող պատը համաժամանակյա են և վերաբերում են բնակավայրի շինարարական առաջին փուլին: Նոյն փուլին է վերաբերում նաև տափանված անոր-կրակարանը, իսկ վերջինիս վրա դրված պատը կապվում է արևելյան պատի տակ պահպանված երկրորդ սալահատակի հետ և վերաբերում է վերակառուցման փուլին: Իսկ սալահատակի տակ բացվածը միջինբրոնզիդարյան շերտի փաստումն է:

Պեղավայրի կենտրոնական հատվածում շարունակվեցին նաև հյուսիսային կամ երկրորդ սենյակի պեղումները (Ե-3): Նախ բացվեցին հյուսիսի արևմտյառ-հարավ արևելքը թերվածությամբ միջանցքի պատերը: Պատերից արևմտյանն անկյուն տարով շարունակվում և միանում է հյուսիսային կամ երկրորդ սենյակի հյուսիսային պատին: Հյուսիսային սենյակի արևմտյան պատը նստած է վաղբրոնզիդարյան սալահատակին դրված հյուսիս-հարավ պատի մնացորդների վրա: Նոյն սենյակի արևելյան հատվածում նոյնպես սալահատակի վրա, պահպանվել է հյուսիս-հարավ պատ, որի վրա նստած 50սմ հզրությամբ նշակութային շերտին հաջորդում է վաղմիջնադարյան պատը: Չանք որ հյուսիսային և հարավային երկու սենյակները բաժանված են նոյն պատով և սալահատակներն էլ մնացել են վաղմիջնադարյան նոյն պատի տակ, կարելի է ենթադրել, որ դա նոյն սալահատակն է: Բաժանարար պատի արտաքին նակերտսին ընթերցվում են իրար գուգահեռ երկու շարվածք և երրորդը, որ հետագա վերակառուցման ժամանակ արված հավելում է (Ե-3, Ե-4): Պատն ունի 5,7մ երկարություն և 3,5մ լայնություն արևելյան եզրին, իսկ արևմտյանում՝ 1,8մ: Պատի երկու ծայրերի չափերի տարրերությունը պայմանավորված է հավելյալ պատի անհամաշաբ շարվածքով: Նախնական պատն ունի 1մ լայնություն: Հետագա հավելաշարն արևելյան եզրից սկսվում է 2,5մ և արևմտյանում ավարտվում 80սմ լայնությամբ: Պատը լրացվել է ամրացման նպատակով և անհամաշաբ շարվածքի արդյունքը կենտրոնի լայն փրկածքն է: Վաղմիջնադարյան կցալապույցի որակը տնտեսական և սոցիալական վիճակի վկայումն է:

Հյուսիսային հատվածում պեղվեցին հավելված կից երեք քառակուսիներ (C-2, D-2 և E-2): Լրացված հատվածն ավարտվում է սարի զագարի հյուսիսային եզրին, որ ուրվագծվում էին պատի հետքերը: Ներառվեց նաև նշված պատը: Ինչպես պեղավայրի

ողջ տարածքում, այսուեղ ևս հեռացված ճիմի տակ արդեն փլվածքների խառնիխուսոն թափված քարեր են՝ խառնված վաղբրոնզիդարյան և վաղմիջնադարյան խեցելենի հարյուրավոր թեկորների հետ։ Խեցելենի մեջ կան նախորդ տարիներին գտնված անթերի թեկորներ։ Հավելված հատվածի պեղումներով (Ե-2) բացվեցին արդեն պեղված կառույցներն ամբողջացնող պատեր։ Այսպես, հյուսիսարևելյան մասում բացվեց հյուսիսային կամ երկրորդ սենյակի հյուսիսային պատը, որի լայնությունը արևելքում 2,30մ է, արևմուտքում՝ 1,60մ։ Պատն երկու անգամ լրացվել է 40-ական ամ լայնությամբ մեկական պատով։ Հետագա երկու վերակառուցումների ժամանակ հավելված պատը դրվել է կառույցի հյուսիսային պատի տակ կուտակված 30-70սմ հզորությամբ կավի շերտի վրա։ Կավի շերտի միջից դուրս եկան շարժական մի քանի օջախների թեկորներ։ Արևմտյան նախնական պատը ի տարբերություն հյուսիսային հավելվածի, ավելի բարձր է, դրված է ժայռի վրա և ունի 1,60սմ հզորություն։ Մենյակն ամբողջությամբ բացված չէ, քանի որ վաղմիջնադարյան պատերը նստած են վաղբրոնզիդարյան կառույցի վրա։ Բացված հատվածներում հստակ են այս սենյակի վաղ բրոնզին վերաբերող հյուսիսային և արևմտյան պատերի որոշ հատվածներ և սալահատակի մի մասը։ Պայմանավորված տեղամքով՝ այս և պատկից երկու սենյակների սալահատակների բարձրությունները տարբեր են։ Առաջինի սալահատակը պատկից սենյակների սալահատակից 67սմ բարձր է։ Բացի խեցելենից, այսուղից գտնվեցին նաև փայտի և օրսիդիանից դանակի կտորներ, ինչ սալահատակի տակ սոսուզումները ցույց տվեցին, որ այս կառույցը նստած է մ.թ.ա. III հազարամյակի մշակութային շերտի վրա, այսինքն՝ վերաբերում է վաղբրոնզիդարյան կառույցի շինարարական երկրորդ փուլին։

Պեղվեց նաև բնակավայրի հյուսիսային հավելվածի արևմտյան թևը (C-2, D-2)։ Կառույցների մնացորները ծածկված են փլված քարերի խառնակույտով։ Վերին շերտից հայտնաբերված նյութերը խառն են՝ և վաղմիջնադարյան, և վաղբրոնզիդարյան։ Այս հատվածում թեև միջնադարյան կառույցներ չեն պահպանվել, սակայն գտածոնների մեջ միջնադարյան նյութերի առկայությունը ենթադրում է, որ փլվածքները կարող են վերաբերել նաև տվյալ ժամանակաշրջանին։ Բացվեց երկրորդ սենյակի հյուսիսային պատի շարունակությունը։ Այս պատի հյուսիս-արևմտյան անկյունից սկսվում է մի փոքր կառույցի արևմտյան պատը։ Վերջինս դրվել է ավելի վաղ կառույցի հյուսիս-հարավ պատի վրա։ Կառույցը փոքր է (երկարությունը՝ 1,8մ, լայնությունը՝ 1մ)։ Հյուսիսային հատվածի փլվածքի մեջ գտնվեց ոլորտն բրոնզալարից ապարանջանի թեկոր։ Այս կառույցի մեջ բացվեց մոխրի շերտով տափանված երկու հատակ, որտեղից գտնված նյութերը հիմնականում սև փայլեցված արտաքինով խեցելենի թեկորներ են։ Առաջին հատակին, 60սմ խորության վրա, սև փայլեցված քասի և նմանատիպ այլ անորների թեկորների հետ գտնվեց նաև ոսկորից, մի ծայրը ներ և տափակ գրձնիք։ Սշակութային շերտի երկու հորիզոններից գտնվեցին կայծքարից մի քանի ներդիր և կոճակ։ Հյուսիսարևելյան անկյունում, 1,60մ խորության վրա գտնվեց բրոնզի թիթեղից ինչ-որ իրի՝ ծայրերն իրար սեղմակած, տանձած մաս։ Նույն խորությունից գտնվեց նաև կավից գդալի թերան, որի պոչը գտնվել է առաջին հատակի նյութերի հետ։ Այս հատվածի պեղումներից գտնվեցին շարժական օջախների բազմաթիվ թեկորներ և եռանկյունաձև պատվանդանների քանակից ավելի հենակներ։ Հողի, մոխրի և վատ քրծված կավի փշրանքներով հագեցած շերտերում թեկորային խեցելենի՝ հատկապես շարժական օջախների և եռանկյունաձև պատվանդանների հենակների առատությունը, ինչպես նաև կառույցների բացակայությունը (այսուեղ սրբարանին կից նեղ միջանցքի հյուսիսային պատի արտաքին կողմն է և տեղանքի բնական իջվածքի պատճառով նշված պատից ցածր է 2,5մ) ենթադրում են, որ այսուեղ աղբն է լցվել։

Բնակավայրի կառուցապատման ժամանակ հաշվի է առնվել տեղանքի դիրքը, և համալիրը կառուցվել է հարթակներով։ Պեղավայրի այս հատվածը կենտրոնում բացված նեղ միջանցքի հյուսիսային պատի հակառակ կողմում է (D-3)։ Նշված պատը փլվելիս՝ քարերը լցվել են 1,5մ խորությամբ բնական իջվածքի վրա դրված մեկ այլ պատի վրա, որը նույնպես փլված է։ Խռանվել են նույն ժամանակի վերաբերող տարբեր կառույցների փլվածքները։ Տեղանքի թեքության պատճառով վերին հարթակի պատերը փլվելիս քափվել են սոսուրին հարթակի կառույցների վրա։ Հավանաբար դրա հետևանքով փլվել են նաև սոսուրին հարթակի կառույցները։

Փլվածքների տակ բացվեց խոշոր քարերով կիսաշրջանաձև շարվածք՝ հպված երրորդ սենյակի արևմտյան պատի հիմքին (D-3): Կիսաշրջանաձև շարվածքի վրա գտնվեցին նավածն աղորիք և քարից փոքր, անավարտ կուռք (տախտ.V, նկ. 10): Շրջանաձև կառույցից պահպանված երկու շարքով արևելյան կիսաշրջանը վերաբերում է վաղբրոնզիդարյան բնակավայրի շինարարական երկրորդ փուլին: 40սմ հզորությամբ, մոխրով և հարդախառն հողով տափանված հատակով շերտի գտածոները խեցելին հարյուրավոր բեկորներ են: Խճչական գույց տվեցին հետագա պետրումները, կիսաշրջանաձև շարվածքը նատած էր մայր հողին դրված բնակավայրի շինարարական առաջին հորիզոնի պատի վրա:

Կիսաշրջանաձև շարվածքի տակ բացվեց վաղբրոնզիդարյան լայն պատը (հյուսիս-հարավ, դեպի արևելք քիչ թեքությամբ), որը շարելով, հասել են բնական ժայռին և այն ներառել պատի մեջ: Պատի լայնությունը 1մ է, քարձրությունը՝ 50սմ: Հարավային կողմում ևս ժայռն ուղիղ է և արևելյան անկյունում միանում է պատին: Այսինքն՝ բնական ժայռերն օգտագործելով և կից պատ շարելով ստացել են կառույցի արևելյան և հարավային պատերը: Արևելյան պատը հյուսիսարևմտյան անկյունում միանում է հյուսիսային պատին, որից բացվեց ընդամենը երեք քար: Արդյոք շարունակվում է այս պատը, բե՛ռ ոչ, կապարզվի հետագա պեղումներով:

Նեղրված բազալտի մեծ, մոտավոր ուղղանկյուն քարերի շարվածքով արևելյան պատը բացելիս հատակին՝ մայր հողի վրա բացվեց պատից քիչ հեռու, միջին մեծության քարերով շարված օջախ: Պատին զուգահեռ շարված օջախի քարերը հյուսիսային կողմում պատից քիչ ավելի հեռու են: Չարվածքի նման թեքությունը հնարավորություն է տվել տարբեր չափերի ամանեներ դեմք կրակին: Ֆջախի հատակը շարված է մանր քարերով: Հաստ մոխրաշերտի վրա վաստ բրծված և փշրված կավի շերտ է: Մոխրաշերտից գտնվեցին վառված ոսկերներ, իսկ կավի շերտից՝ հենակներ: Ֆջախի կողքին գտնվեցին իլիկի գլուխ, խեցիներ, քարից կացնի և փոքր, նավածն աղորիքի բեկորներ: Ֆջախի հարավային եզրից քիչ հեռու պատի հիմքի և ժայռի բնական իջվածքը լցված էր մոխրի հաստ շերտով, որտեղից գտնվեցին մի քանի խեցի և քարից իր՝ նման հենակի ոտքի:

Բացվեց նաև այս պատի դրախ կողմը, որ հարում է երրորդ սենյակի արևմտյան պատի տակ կուտակված կավի շերտին: Կավի շերտը բլրածն լցված է մանր քարերի շարվածքով հատակին: Այս հատակի վրա, կավից ազատ հատվածում թերանքսիվայր դիրքով դրված կեղծ ունկով ամանի բեկորի տակ գտնվեցին տափակ բլրակի վրա միջանցիկ անցքով ոսկերներ երկու ասեղներ: Նոյն շերտից գտնվեցին խոյագլուխ օջախի հենակ, ձվածիր, տափակ ովունք, իլիկի գլուխ և օրսիդիանի ցլեա: Կավի շերտում գտնված վաղբրոնզիդարյան ուշ փուլի խեցեղենի հետ գտնվեցին նաև ալեի վաղ փուլի կարմիր աստառով և արտաքինով բեկորներ:

Նշված պատերի մեջ ներառված կառույցն ունի դեպի հյուսիսային լանջ բնական թեքությամբ իջնող դիրք: Կառույցի արևմտյան հատվածում 60սմ հզորությամբ վաղբրոնզիդարյան մշակութային երկու շերտերը քածանված են մանր քարերով շարված, ապա տափանված մոխրախառն հատակով: Հատակի վրա գտնվեցին վաղբրոնզիդարյան խեցեղենի բեկորներ, որոնց հետ նաև ծեծիչ, օրսիդիանի ցլեա, նավածն աղորիքի բեկոր, նաև շարժական օջախի շրջանաձև հիմքով լայն ոտք և խոշոր եղթերավոր անաստինի եղջյուր: Տափանված հատակի տակ մայր հողի վրա գտնված խեցեղենի մի քանի բեկորներ ունեն մուգ շագանակագույն արտաքին և աստառ, որ բնորոշ է վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլին: Արևելյան պատի հակառակ կողմում՝ կավաշերտի մեջ ևս գտնվեցին նման մի քանի բեկոր, որ կարող են նաև կավի հետ բերված լինել: Մակայն այստեղ կավի շերտից ներքև ունինացես մանր քարերով շարված հատակի տակ վաղբրոնզիդարյան վերջին փուլի խեցեղենի հետ գտնված շագանակագույն արտաքինով և աստառով խեցեղենի մի քանի բեկորը վկայում են ավելի վաղ նյութի առկայությունը, սակայն շերտ դեռևս փաստված չէ:

Պեղվեցին նաև հնավայրի արևմտյան եզրի երկարությամբ հավելված հատվածում դրված քառակուսիները: Այս հատվածում նպատակ ունեինք բացել հարավային սենյակի արևմտյան պատի դրսի երեսը, որ հարում էր դեռևս 2004թ. բացված կլոր կացարանին: Դրանով հնարավորություն կունենայինք կապել երկու հատվածները, հաս-

կանալ վաղմիջնադարյան կառույցի հարավային սենյակի մեջ բացված վաղբրոնզիդարյան պատի և կլոր կացարանի հարաբերակցությունը: Ընդարձակվող տարածքի մեջ ներառնվելու էր նաև նախորդ երկու տարիներին բացված, սակայն դեռևս չամբողջացած սրբարանը: Վերջինիս վրա նստած միջնադարյան կառույցից դեպի արևմուտք պեղումով կրացվելու նաև կլոր կացարանի և սրբարանի միջև ընկած հատվածները, ինչը հնարավորություն կտար այսպես երկու կառույցների ժամանակագրական և գործառութային կապը:

Դրված քառակուսիները պեղավայրի այս հատվածը բաժանեցին երկու մասի՝ հարավային և հյուսիսային: Նախ պեղվեց հարավային հատվածը (C-4 և C-5): C-4 քառակուսում մի եզրը երկար միջանցքի հյուսիսային պատն է: Տեղանքի թեքության պատճառով կառույցները տարբեր հարթակների վրա են: Այստեղ երկու հարթակների տարբերությունը 2,5մ է, և վլածքի հետևանքով վերին կառույցի քարերը բավիել ու ծածկել են ավելի ցածրում գտնվող կառույցները:

Սկսեցինք պեղել հարավային սենյակի արևմտյան պատի շարունակությունը կազմող բումբը (C-5), որն իջնում և ավարտվում է կլոր սենյակի մեջ (D-5): Արևմտյան պատը հարավային հատվածում ընդհատվում է: Գտնված հիմնական նյութը մ.ք.ա. III հազարամյակի է, կան նաև միջնադարյան խեցեղենի՝ դեղին, մանր գծազարդ բնեկորներ:

Կլոր կացարանի հարավային մասում բացվեց պատ: Պեղվեց նաև կացարանի վրա դրված վաղմիջնադարյան կառույցի արևելյան մասում նախորդ տարի բացված պատի շարունակությունը: Պեղվեց հարավարևելյան անկյունը, բացվեց հարավային պատին զուգահեռ մեկ այլ պատ: Բացվեցին նաև կլոր կացարանի վրա վաղմիջնադարյան կառույցի արևելյան պատից պահպանված մի քանի շարքերը և նրան կից մաստարած: Տարբեր եռիգոնների վրա պահպանվել են երկու սալահատակները, որոնք վերաբերում են վաղ միջնադարում կատարված երկու վերակառուցումների: Առաջին սալահատակի մակարդակից գտնված իրերը խոհանոցային կոպիտ խեցեղենի խառը բեկորներ են, որոնց մեծ մաս՝ մ.ք.ա. III հազարամյակին բնորոշ: Գտածների մեջ կան նաև միջնադարյան խեցեղենի բեկորներ և ոսկրից գործիք: Միջնադարյան պատերի հատվածից գտնվեց երկու միջանցքի անցք ունեցող ոսկրե կորով դանակի, ճան, ինչպես նաև խոշոր եղջերավոր անաստեղի կողովուրից քերիչ: Երկրորդ սալահատակը համապատասխանում է արևելյան պատի տակ դրված մաստարային:

Հարավային սենյակի մեջ (D-4) նախորդ տարի բացված և արևմտյան պատի շարունակությունը կազմող՝ կլորացող անկյուններով, անհանափ (2,5-2,8 մ) լայնությամբ հաստ պատի արևմտյան երեսը բացվում է կլոր կացարանի վրա միջնադարում կառուցված սենյակի մեջ, ապա նոյն ճակ շարունակվում դեպի արևմուտք և հյուսիսարևելյան անկյունում միանում միջնադարյան կառույցի արևելյան պատին: Այստեղ կացարանի մուտքն է, որ բացվում է մի միջանցքի մեջ՝ ունենալով մի կողմից օջախով սենյակի հարավային պատը, մյուս կողմից՝ կլորացող պատը: Մուտքի մոտ՝ մ.ք.ա. III հազարամյակի հատակին գտնվեցին կոցածն ունկով անորի բեկորներ:

Վաղմիջնադարյան սենյակի (C-5) արևմտյան պատը նույնական մեկ շարքով է շարված, իսկ պատի ետևում մեղքված քարերի լիցք է: Կարեկի էր կարծել, թե կառույցներն այստեղ ավարտվում են, և շինարարության ժամանակ օգտագործված քարերի թափոնը թողնվել է տեղում: Ավական պեղավայրի հարավային եզրին, 40սմ խորության վրա բացվեց մայր հողի վրա դրված տափակ սալերով շարված պատ, որ շարունակվում է արևմուտք: Այստեղ պեղավայրի արևմտյան սահմանն է, և միայն պեղման տարածքի ընդարձակմանը հնարավոր կլինի պարզեց պատի երկարությունն ու կազմ այս կառույցների հետ: Այս հատվածի վերին շերտի նյութերի մեջ կան նավածն աղորիքի բեկոր, գնածն ունել, օջախի բեկորներ, մ.ք.ա. III հազարամյակի նախշազարդ բեկորներ, միջնադարյան խեցեղենի բեկորներ (դեղնավուն, սանրաբաշ հիշեցնող գծազարդ, նախշով): Պատի հինքի մոտ գտնվեցին ողորկ մակերեսով, սեղմած զնիք ծև ունեցող երկու կոկիչներ:

Պեղավայրի արևմտյան կողմում (C-4) հավելված հատվածի պեղումների ժամանակ բացվեց նախորդ տարի պեղաված սրբարանի արևմտյան կեսը՝ արևմտյան և հյուսիսային պատերով: Արևմտյան պատի (լայն.՝ 73սմ) վրա սրբարանի մուտքն է

(բացվածքը՝ 60մ):Պատի շարունակությունը մնացել է վաղմիջնադարյան պատի տակ: Բացվեց նաև սրբարանի հյուսիսային պատը, որ կից է միջանցքին: Սակայն պատի երկու կողմերի շարվածքների տարրերությունը ենթադրում է, որ իրար հայլած տարրեր պատեր են: Միջանցքի պատի շարվածքը մեծ, անկանոն քարերով է, իսկ սրբարանինը՝ միաշափ և միջին մեծության: Սրբարանի այս պատը հավանաբար միանում է 2005թ. բացված կավածենի հատակի արևելյան եզրի վրա դրված միջնադարյան պատի ստորին հատվածում պահպանված նույնատիպ շարվածքով պատին, որն ըստ ամենայնի, սրբարանի արևելյան պատն է, քանի որ և պատերի շարվածքներն են նույնը, և նույն հատակի վրա են դրված: Իսկ վերջնական կծզգուումը հնարավոր է միայն հետագա պեղումներով: Միջնադարյան կառույցի արևմտյան պատի հիմքի տակ՝ վաղբրոնզիդարյան սրբարանի կավածենի հատակից 15սմ վերև, բացվեց հաստ մոխրաշերտ՝ փայտածխի կտորներով: Նույն տեղից գտնվեց փոքր հալոց (տախտ. III, նկ.7): Իսկ կավածենի հատակին բացվեցին զրհարերված վեց օայլերի գանգեր՝ առանց ներքին ծնունդների: Զոհարերությունների կողքին գտնվեցին կարմիր աստառով և սև, փայլեցված արտաքինով տարրեր ամանների բեկորներ, իսկ գանգերից ոչ հեռու, արևմտյան պատին կիա դրված՝ մեծ աղորիք: 2004 թ. սրբարանի արևելյան հատվածի պեղումների ժամանակ հատակի տարրեր մասերում գտնված գայլերի ծնուններն անշուշտ այս գանգերին են: Զոհարերությունից 60մ հեռու՝ սրբարանի հյուսիսային պատի տակ, կավածենի հատակին, ընդգծվում էր շրջանաձև սև հետք: Բացվեց մոխրախառն հողով լցված, ոչ խորը (15սմ) փոքր փոս, որտեղից գտնվեցին խեցիներ, դացիտից և վաճակատից պալեոլիթյան արտեֆակտեր և վաղբրոնզիդարյան պատվանդանի հենակ: Գտածոները զրհարերություններից ավելի վաղ են:


Հնավայրի վաղբրոնզիդարյան շերտն այս կամ այն չափով պահպանվել է պեղված բոլոր կառույցների ստորին մասերում: Այս շերտն առնված է երկու սահմանների մեջ: Ստորինը հրարխային ծագմամբ կարմիր ավազարարային մայր հողն է, իսկ վերին սահմանը՝ վաղմիջնադարյան կառույցների հիմնապատերին հասնող 60մ հաստությամբ շերտը, որի տակ էլ մնացել են վաղբրոնզիդարյան կառույցների պատերի մնացորդները: Շերտի խորությունը տարրեր տեղերում տատանվում է 50-60մ և 1,50-1,70մ միջև, իսկ հզորությունը՝ 40-50սմ: Փատուած են ավերման և վերաշինման հետքեր: Բացվել են պատերի մնացորդներ, որոնք սակայն մինչ այժմ հատակագծային որևէ ավարտուն պատկեր չեն տալիս: Սրբարանի հատակին դրված միջնադարյան կառույցի պատերը, ինչպես նաև սրբարանի արևմտյան և արևելյան պատերի որոշ հատվածների հետ դրանց հատումը թույլ չեն տալիս հատակագծային որոշակի պատկեր ունենալ: Սրբարանում զրհարերված գայլերի վեց գանգերի առկայությունը վկայում է ծխակարգի հնդեվրոպական հնագույն հավատալիքների և պաշտամունքի արմատները ունենալը և այս նշակույթը կրող ցեղերի երնիկ պատկանելիությունը պարզելու համար կարևոր փաստ է:

Մեծ Սեպասարի 2006թ. գտածոների մեծ մասը մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ վարդագույն աստառով և սև, փայլեցված արտաքինով ծխական և խոհանոցային բեկորային խեցեղեն է: Խեցեղենի մեջ կան նաև վաղ բրոնզի առաջին փուլին վերաբերող շագանակագույն արտաքինով և աստառով մի քանի բեկորներ, որոնք գտնվեցին լցված կավի շերտի մեջ, ինչպես նաև պեղավայրի հյուսիսային եզրագծի ստորին մասում մայր հողի վրա, ուշ փուլի նյութերի հետ: Խեցեղենի մեջ կան միջին բրոնզին վերաբերող երկու անորոշերի, ինչպես նաև՝ վաղմիջնադարյան բազմաթիվ բեկորներ:

Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենը հիմնականում նույնն է, ինչ նախորդ տարիների գտածոները: 2006թ. գտածոների մեջ կան նաև խոյազոլիս և ֆախիկավոր պայտաձև շարժական օջախների բեկորներ: Չարժական օջախներից մեկը պայտաձև է՝ լայն ծապավենաձև աղեղի արտաքին երեսի կենտրոնում կիսագնդաձև ունկով: ԵՎ կենտրոնի, և ծայրերի հենակները ֆալիկավոր են: Աղեղի ներսի կողմից, յուրաքանչյուր հենակի դիմաց մեկական փոքր ելուստ է՝ ամանը պահելու համար (տախտ. II, նկ.1): Գտնվեցին նման շարժական օջախների մի քանի այլ հենակներ ևս (տախտ. II, նկ. 3,4), որոնցից մեկի ֆալիկաձև վերջույթը խոյակերպ է (տախտ. II, նկ. 2), իսկ մյուս հենակը խոյագույն է (տախտ. II, նկ. 5): Բազմաթիվ են եռոտանի պատվանդանների

հենակները: Գտածոների մեջ կա նաև կավից կոպիտ, լայն, տափակ բերանով և կլորավուն արշով գրալ (տախտ. III, նկ. 2):

ՏԱԽՏԱԿ 1



Աշխատանքային գործիքները քարից են և ուկրից: Գտնվեցին բազալտից աղոռիքներ, կոկիչներ, ծնծիչ (տախտ. IV, նկ. 2), կացին (տախտ. IV, նկ. 3), կայծքարից ներդիքներ (տախտ. IV, նկ. 5-11) և անիվ (տախտ. III, նկ. 5), դացիտից արտէֆակտեր: Քարի իրերի մեջ կա նաև կայծքարից կոճակ (տախտ. V, նկ. 4) և երկու ուլունք մեկը՝ ձվածիք, մյուսը՝ ողակած (տախտակ V, նկ. 5, 6):

Ուկրե իրերի մեջ կան իիկի գուլիս (տախտ. III, նկ. 4), ասեղներ (տախտ. V, նկ. 2, 3), ինչպես նաև ծակող գործիքներ (տախտ. V, նկ. 1, տախտ. III, նկ. 3), իսկ հղկված և տափակ ծայրով գործիքը կարող էր օգտագործվել կավե վորք իրերի նուրբ անցումները հարթելու և կոկելու համար (տախտ. V, նկ. 7): Ուկրից գոտածների մեջ կա թիակուկրից անավարտ գործիք: Եզրին արված համաշափ ատամնավոր փորվածքները և խազկածքի հետքերը ենթադրում են, որ պատրաստվելիք իրը կարող էր լինել սանր (տախտ. IV, նկ. 4): Գտնվեց նաև կիսամշակ եղջյուր՝ տաշշածքի և կտրվածքի հետքերով (տախտ. IV, նկ. 1):

Բրոնզյա իրերից գտնվել են ոլորտուն ապարանջանի մի բեկոր (տախտ. V, նկ. 9) և բրոնզի թիթեղից ինչ-որ իրի մաս (տախտ. V, նկ. 8):


Քազմաքիվ են վանակատի ցլեպները և բացառված չեն, որ այս գոտածները կամի քարեր են: Սարի տակ աղբյուրների առատությունը, տարածքով հոսող Ախուրյան գետը, ինչպես նաև մերձակա դաշտավայրի հարուստ հողատարածքները նախադրյալներ էին հացահատիքի մշակության համար: Մանգանիների ներդիքների գյուտները և դրանց կողքին վանակատի ցլեպների առատությունը ենթադրում են, որ Մեծ Սեպասարում հացահատիկը կալսելու համար կարող էին օգտագործել կամք: Վանակատից մի ծավիչ գտնվեց ապահովակի տակ (տախտ. III, նկ. 1) վաղբրոնզիդարյան կարասի բեկորների և միջինբրոնզիդարյան անորների հետ:

Միջինբրոնզիդարյան նյութը ներկայանում է երկու անորով: Շագանակագույն արտաքինով, քիչ փքուն իրանով, նեղացող վզով և ուղիղ շուրբռով անոր վզի տակ քեզ գծերի խազերով, իրար հակադիր եռանկյունիների երկշաք նախշ է (տախտ. I, նկ. 2): Երկրորդ անորն ավելի մեծ է, սև, ունի քարձր, փքուն իրան, կարճ վիզ, շուրբռ ուղիղ է՝ քիչ դուրս քերպած կտրվածքով (տախտ. I, նկ. 1): Այս գոտածներն իրենց գուգահենքներն ունեն Հառիճի քիզ 4, 29 և 108 դամբարանների² և Շիրակի մեկ այլ համաժամանակյա հուշարձանի՝ Արեգակնայենում դիպակածքար բացված դամբարանի նյութերում:


Վաղմիջնադարյան նյութերի հիմնական մասը բեկորային խոհանոցային խելքեն է՝ անզարդ: Գտածների մեջ կան դեղնավուն, մանրահատիկ կավից ալիքածև և խազավոր նախշազարդ բեկորներ: Միջնադարյան գոտածների մեջ կա կավից, մի ծայրը քիզ քերի, պճեղածև ձիթաճրագ (տախտ. III, նկ. 2) և եռանկյունածև, պրածայր շեղով երկարյա դամակ (տախտ. III, նկ. 8):

² T. X a c a t r a n, Древняя культура Ширака, Ер., 1975, рис. 46, 60, 62.





ՏԱԿՏԱԿ 2




ՏԱԽՏԱԿ 3



ՏԱԽՏԱԿ 4



ՏԱԽՏԱԿ 5



ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐԻ 2006Բ. պեղումներով կուտակվեց նաև մեծ քանակությամբ ոսկրաբանական նյութ, որը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում լճատանի կենդանիների ոսկորներն են, որ դատելով գուածոների քանակից, ոչ մեծ հոտ է և բնակչության տնտեսության հիմքը (ձի, կով, ցուլ, ոչխար, այծ, խոզ): Յուլի ոսկորների մաշվածությունը ցույց է տալիս, որ տնտեսության մեջ օգտագործվել է քարշող անասունի ուժը: Երկրորդ խմբում վայրի կենդանիների ոսկորներն են (կզարիս և գայլ ...): Գտածոների մեջ կան նաև շան ոսկորներ: Ոսկրաբանական նյութի մեջ առանձնապես կարևոր է զոհաբերված գայլերի ոսկորները: Ենթադրվում է, որ ծեսը կատարողները հնդեվրոպական ցեղեր էին, քանի որ ըստ լեզվաբանական ուսումնասիրությունների, զոհաբերման նման ծեսը հասուն էր տվյալ լեզվախմբի նախնական ցեղերին:³

Այսպիսով, ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐԻ 2006Բ. պեղումներով ի հայտ եկան մ.թ.ա. 28-26/24 դդ. թվագրվող վաղբրոնզիդարյան հնավայրում⁴ բացված սրբարանի արևանյան և հյուսային պատերը, կլոր կացարանի վրա դրված վաղ միջնադարյան կառույցից պահպանված հատվածները, հատակեցվեց կլոր կացարանը և սրբարանը միասնող միջանցքը, ճշգրտվեց վաղմիջնադարյան կառույցի հարավյային և հյուսիսյային սենյակների տակ մնացած վաղբրոնզիդարյան պատերի և սալահատակների հարաբերակցությունը: Վաղբրոնզիդարյան սալահատակի տակ գտնվեցին միջինբրոնզիդարյան անորներ, պեղավայրի հյուսիսյային եզրում՝ վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլի մի քանի խեցիներ: ⁵ Սակայն ինչպես վաղբրոնզիդարի առաջին փուլի, այնպես էլ միջինբրոնզիդարյան շերտեր չկան: Պեղումներով փաստվեց նաև, որ ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐԻ վաղբրոնզիդարյան բնակավայրը միջին բրոնզի դարաշրջանում վեր է ածվել դամբարանադաշտի:

РАСКОПКИ с. МЕЦ СЕПАСАР В 2006 г.

Резюме

Л. Еганин

В 2006 году продолжались раскопки многослойного поселения Мец Сепасар.

В результате раскопок частично открыто святилище, уточнены соотношения стен средневековых и раннебронзовых помещений. Особый интерес представляет жертво-приношение волков, найденное глинобитном полу святилища. Корни ритуала жертво-приношения волков мы находим в индоевропейских традициях, что имеет очень важную роль для установления и уточнения племен, населявших Мец Сепасар в III тыс. до н.э.

Открытое под полом помещения III тыс. до н.э. погребение эпохи средней бронзы показывает, что после прекращения существования поселения во II тыс. до н.э. на месте поселения возник некрополь.

Археологический материал из раскопок Мец Сепасар богат и разнообразен: керамика, предметы из бронзы, кремня, кости, обсидиана и т.д., Богат и разнобразен также остеологический материал: лошадь, волк, собака, свинья, бык/корова, овцы/кошки, куница. Наличие в остеологическом материале костей лошади представляется важным в изучении вопроса по одомашниванию лошади.

Археологическое изучение памятника дает новые дополнительные ценные сведения по материальной и духовной культуре Ширака.

³ Т. Г а м կ ր ե լ ի ձ ե, Վյա. Ի վ ա ն օ վ, Ինդոեվրոպեйский язык и индоевропейцы, Тб. 1994, т. II, стр.893-894.

⁴ Լ. Ե զ ն ի շ ն ն, Շշվ. աշխ, էջ 21:

* Խեցեղենի վերականգնումը կատարվել է Շիրակի երկրագիտական թանգարանում.
վերականգնող մկարհներ՝ Հ. Ավետիսյան, Ռ. Մարգարյան, Վ. Թովմյանի:

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԶՈՐԻ ՔԱՐԱՆՉԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2005 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկածորի քարանձավային բնակավայրի 2005 թվականի պեղումները շարունակվեցին ֆրանսահայ քարերաբներ տեր և տիկին Թերզյանների հատկացրած միջոցներով: Շիրակի երկրագիտական բանգարանի հնագիտական արշավախմբի 2005 թվականի աշխատանքների հիմնական խնդիրներն էին:

ա) Լիովին ավարտել թիվ 1 քարանձավի առաջին հարկի II սրահի ներսույթի պեղումները՝ տեղանքի շերտագրական պատկերն ունենալու և դրա հարաբերակցությունը շինարարական հորիզոնների հետ կապելու նպատակով արտաքին կողմում թողելով մոտ 1,5 մ լայնով հատված:

բ) Տեղանքի միջնադարյան պատկերը վերականգնելու նպատակով շարունակել թիվ 1 քարանձավի առաջին հարկի I, II և III սրահների դիմացի հարթակի պեղումները:


զ) Քանի որ նախորդ տարում արդեն պեղվել էր թիվ 1 համալիրին հարավից հարող թիվ 4 քարանձավը, կից քարանձավների հարաբերակցությունը պարզելու և տվյալ հատվածի ամբողջական պատկերն ունենալու նպատակով խնդիր դրվեց պեղել նաև նշված համալիրին հյուսիսից հարող հատվածը (չափագրություն 1,2):

II սրահի պեղումների ընթացքում հեռացված շերտի տակից հայտնաբերվեցին երկու բոնիր և մեկ վառարան: Բացվեց քարանձավը արտաքին կողմից անջրապետող պատր: Այն հավանաբար երկրաշարժի ընթացքում փլուզվել էր և ներսի կողմից ամուացվել ավելի ցածր և անորոշ շարված մի այլ պատռվ: Նոյն պատկերը բացվեց նաև արտաքին կողմում հարթակի վրա: Այստեղ թափված ժայռաբեկորների վրա կամ դրանց օգտագործմանը կառուցվել էին նոր պատեր: Ուշ կառուցված պատերից մեկի տակ տեսանելի էր ևս մեկ լցված բոնիր: Չափագրելուց հետո՝ այս պատերը հեռացնելու ընթացքում բոնիրի մոտից հայտնաբերվեց քառանկյուն մեծ ձիթածրագ (նկ.1): Նման ճրագները մեծ տարածում ունեն X-XIII դդ.: Այս ճրագի, ինչպես նաև նոյն շերտից գտնված այլ ճյութերի բվագրությունից կարելի է եղրակացնել, որ վերջին մեծ վլուզումը Անի 1319թ. ավերիչ երկրաշարժի հետևանք է:

I, II, III սրահների դիմաց պեղումներով վերականգնվեց նախկին ռելիեֆը: Այս տեղ բնական ավագաքարը տաշելու միջոցով քարանձավների բնակեցման ժամանակաշրջանում պատրաստված էր հորիզոնական հարթակ, որի վրա պեղումներով բացվեցին վաղ ժամանակաշրջանի պատեր, բոնիր, հալորդի վառարան և ավագաքարի մեջ փորված ցորենի 3 ամբարներ: Վաղ շրջանի պատերի մնացորդները քարանձավներից ձգվում են դեպի գետը և իրենց մեջ ներառում են քարանձավների գծին գուգահետ փորված երեք ամբարներ: Ընդհանուր պատկերն այնպիսին է, որ քարանձավներին հարող հարթակը ամբողջությամբ ծածկված է եղել, այլապես բոնիրները, ամբարները և դեպի I և II սրահներ ձգվող միջանցքը կիայտնվելու բաց երկնքի տակ: Հարք հորիզոնական հարթակն ամբարներից հետո ձգվում է մոտ 1,5-2մ, այնուհետև, ինչպես ցույց տվեց I սրահի դիմաց արված հետախուզական փոստրակը, ավագաքարը մոտ 1,3մ ուղղահայց կտրված է, և այդ մակարդակից սկսվում է մեկ այլ հորիզոնական մակերես: Չնայած բացվեց մի փոքր հատված, սակայն արդեն իսկ տեսանելի է, որ լանջը գետից մինչև քարանձավները արենատականորեն վերածվել է աստիճանածն բարձրացող մի քանի հարթակների: I, II, III սրահների դիմացի հարթակի պեղումներով հստակորեն պարզվեց համալիրի նախնական կառուցվածքը, դրա առանձին մասերի տնտեսական բնույթը: Մեր կարծիքով, թիվ 1 ծեռակերտ քարանձավը հիմնականում ծառայել է որպես բնակարան, իսկ նրա առաջին հարկում գտնվող I, II, III սրահները և ծածկված հարթակը ունեցել են տնտեսական բնույթ:


Ենթերվ Շիրակի բնակլիմայական պայմաններից՝ կարելի է ենթադրել, որ ձեռակերտ քարանձավը հիմնականում օգտագործվել է ձնուանը, իսկ տարվա տար շրջանում տնտեսական և կենցաղային հիմնական գործառությունները կրել են I, II սրահները և հարթակը:

Գ. ՅԱՅԱՀՈՐ. ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ. ԵՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՏՐԱԾՔ



Հօգուս այս վարկածի են խոսում ձեռակերտ քարանձավում հայտնաբերված երկու՝ մեծ և փոքր բռնիքները: Ինչպես ցոյց են տալիս եռամյա պեղումների արդյունքները՝ I և II սրահներն օգտագործվել են կենցաղային կարիքների և հացարխման համար, III սրահը ծառայել է որպես անասնագով, ծածկված հարրավը, ըստ այսուղի հայտնաբերված հալոցքի վառարանվ, ցորենի ամբարներով և այլն, ունեցել է արտադրական, մթերքների պահեատավորման և այլ կենցաղային գործառույթներ: Ուշադրության է արժանի ամբարների առկայությունը: Դրանք ունեն հաստած կոնի ձև: Առաջինն ունի 1,9մ խորություն, հինգի տրանզաֆիծը մոտ 2մ, քերանի բացվածքը՝ 0,55մ, երկրորդը՝ համապատասխանարար 1,35մ x 1,4մ x 0,5մ, երրորդը՝ 1,6մ x 2,15մ x 0,57մ չափեր: II և III ամբարներն իրար հաղորդակից են և ունեն միջանցիկ անցք, որով փոքր ամբարում պակասելու ընթացքում ցորենը համեմատարար մեծ ամբարից ինքնահոս սրացել է և լրացրել պակասը: Այսինքն՝ մեծ ամբարը հաճախակի բացելու անհրաժեշտություն չի եղել: Առաջին ամբարը, որ կից ամբարներից փոքր ինչ հետու է, հնարավոր է, ծառայել է գարի պահեատավորելու համար: Այս ամբարների վաղ լինելը ապացուցվում է նրանով, որ III ամբարի վրա ընկած էր փլուզման հետևանքով միակտոր ժայրից պրկված տուֆի հակայական մի բնելոր, որի վերին մասը հետագայում նշակվել է. փորվել են պարան կապելու անցքեր: Ամբարի մեջ մնացել էին 3 տարրեր չափի կճումներ:

2005թ. աշխատանքներ ծավալեցին թիվ 1 քարանձավի՝ հյուսիսից հարող հաստածում: Սկզբում մաքրվեց թիվ 1 և 2 քարանձավների միջանկյալ հատվածը: Լցված հողի շերտը հասանում էր մինչև թիվ 1 քարանձավի երկրորդ պատուհանի եզրը՝ միանալով ժայռաքարի վրա երևացող միազիծ փոքր փորբաժրներին: Նախորդ հատվածների պեղումներից արդեն ունեինք ծածկի համար արված ննանատիպ փոտրակներ, և ենթադրվում էր, որ այստեղ ևս նոյն պատկերն ենք ունենալու: Առաջին շերտը հետացնելուց հետո պարզվեց, որ հողածածկույթի տակ մնացած հատվածում՝ պատի վրա, քիչ կորագծով արված են իրարից 20-30 սմ հեռավորությամբ փորբաժրներ, որոնք համապատասխան անցքեր ունեն մայր ժայռից պրկված հանդիպակաց հոկա ժայռակտորի վրա: Սա յուրահատուկ լուծում է՝ մասամբ փլուզված քարանձավները վերստին գործածական դարձնելու համար: Ժայռերի միջև տարածքն օգտագործել են վերակառուցման ժամանակ՝ ծածկի գերաններ դնելու համար: Քարանձավի պատի և այս ժայռաքարների միջև բացվեցին նաև XIn. վերակառուցված երկու պատեր: Երկրորդ պատի մեջ դրված ուղղանկյուն բուխարու դիմաց հատակին գտնվեցին բյուզանդական երկու պղնձեղբամներ: Պատերի խորությունը և ֆունկցիոնալ ու ժամանակագրական կապը կապրզվի հաջորդ շերտերը բացելուց հետո: Այն, որ պատերը տարածամանակյա են, հուշում է նաև իրար այդքան մոտ դրված լինելու փաստից:




Պեղումները շարունակվեցին պոկված ժայռակտորի և քարանձավի միջև ընկած հատվածում: Այստեղ՝ սրբավայրի և նրանից աջ գտնվող քարանձավի արանքում, բացվեց կամարաձև մուտքով սրան միացած մեկ այլ քարանձավ: Այս քարանձավի (թիվ 5) մի մասը միայն ակեղեց: Քարանձավը խորշով բաժանված է երկու մասի: Ի տարբերություն մյուս քարանձավների, այստեղ առաստաղը ռումբաձև նախազարդված է: Հատակին և պատերին բացվեցին բազմաթիվ խորշեր, օջախներ, ինչպես նաև, պատի մի անկյունում կիսված կավի զանգվածներ: Հատակի քարի շերտի մեջ փորված երկու ակով հորաննան փոսդ ենթադրել է տալիս այս քարանձավի նախապես արհեստանոց լինելը: Վերակառուցումների ժամանակ դրված պատերը, ինչպես նաև ընկած հսկա ժայռաբեկորները մասամբ փակել են փոսդ: Հետագա պեղումները հնարավորություն կտան պարզերու փոսդ նշանակությունը: Քարանձավում պահպանված են շինարարական հինգ հորիզոնների պատեր: Գտածոները, որ հիմնականում խեցեղեն են և մետաղյա իրեր, վերաբերում են X-XIVդդ.:

Երկու քարանձավները միացնելով նապատակով հեռացվեցին փլվածքի հետևանաբռով սրբավայրից ազ գտնվող քարանձավի մուտքը փակող և ներսը լցված բազալտի և տուֆի հսկա թեկորները: Պեղվեց քարանձավի միայն ձախ թևը, քանի որ ազ կողմը առավել փլված է, և հսկա քարերը հճարասկոր չենացնել: Այսուղ բացվեցին պատերի մեջ և պատերի վրա արված խորշեր, հատակների վրա՝ օջախներ, բռնիրներ, տնտեսական ամբարներ, որոնք վերաբերում են X-XIդր.: Թոնքի ակի մեջ գտնվեց Անիի քաղաքային որամ:

Պեղվեց նաև այս քարանձավերի դիմացի հարթակը: Բացվեցին շինարարական տարբեր հորիզոնների վերաբերող պատեր: Ինչպես պարզվեց, այսուել ևս վերակառուցման մի քանի փուլ է եղել՝ կապված երկրաշարժերի ժամանակ հսկա քարաժայռերի՝ քարանձավի հարթակի վրա ընկնելու հետ:

ՀԱՅԿԱԶՈՐ, ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

քարանձավ-5,
հարթակի կտրվածք



Ծկարողանալով հեռացնել ընկած ժայռերը, կտրել են որոշ հատվածներ, ապա հարքեցրել, դարձնելով հատակ, պատեր դրել և վերաշինել են արդեն նոր կառույցի ձևով: Այսուեղ, հարթակի վրա զտնվեց վերջին փլուզման տակ մնացած կանացիակերպ աղաման, որ վերաբերում է XIII-XIVդդ. (նկ. 1): Խոկ քիչ ներքև՝ կանգուն մնացած պատի հիմքի տակ, մոտ 0,6 մ ավելի խորքուն, մեկ այլ նման հարթակի վրա, հատակին փորված փոսի մեջ զտնվեց ամբողջական մի կարս, կային նաև փշրված տարրեր կարասների բեկորներ, որոնք արդեն վերաբերում են XI-XIIIդդ. (շափագրություն 3):

Հայկածորի 2005թ. պեղումները խիստ աշխատատար էին: Տարրեր փլուզումների հետևանքով բափկած տուֆի և բազալտի հակա ժայռաբեկորների հեռացման միակ հնարավորությունը տեխնիկական միջոցների կիրառման անհնարինության պատճառով դրանք՝ ճեղքի գործիքներով ջարդուելու էր: Գտածները բազմազան են. բյուզանդական և արաբական պղնձերամներ, խոհանոցային ամենօրյա օգտագործման կճուններ, պուտուկներ, գալեր, բասեր, քառանկյուն (նկ. 2) և բրակավոր ճրագներ, ջնարակած բարձրորակ անթների բեկորներ, նաև մետաղյա իրեր, ապակու բեկորներ, խարամներ և այլն: Առանձնահատուկ ուշադրության է արժանի միջնադարյան աղամանի գյուտը, որն առայժմ միակն է Հայաստանում և ապացուցում է XIX-XXդդ. հայկական կանացիակերպ աղամանների բուն հայկական ծագումնաբանությունը: Աղամանը բաց շագանակագույն, ավազախառն կավից է (բարձրությունը՝ 38սմ, իրանի

տրամագիծը՝ 25,5սմ, նառուկիմը՝ 11,5 սմ): Երկրեք իրանն ավարտվում է նեղ վզի վրա նառած, բարակ շուրջով և ոչ խորը թաս-ճրագարարով: Ունեցել է իրանից վզին միացնող հակադիր, աղեղնածև զոյզ ունկեր, որոնցից մեկն է պահպանվել: Ամենալայն մասում ունի կոր բացվածք (պարզաբերման օրգան՝ կտեխ), զարդարված է վերադիր նախշերով, որոնք զբաղեցնում են բացվածքի երկու կողմերը՝ ավարտվելով ճրագարարի տակ: Պատկերված են շուրջպար բռնած վեց մարդ: Բոլորը, բացի ամենափոքրից, զիսից վեր ունեն լուսապսակ հիշեցնող, աղեղի բարակող ծայրերով պայտաձև դետալ: Աղամանի տարրեր մասերում՝ ունկի վրա և վզի տակ, կամ օձերի մի քանի վերադիր գայարձեր:

Եզակի գտածների շարքին կարելի է դասել II սրահի մեծ քոնիրի մոխրի միջից գտնված ծալծըլված և այրված լավաշի մնացորդները, ինչպես նաև դրանազարդ խնցելեննի բնկորմերը:

Ինչպես ցույց տվեցին Հայկածորի 2005թ. պեղումները, քարանձավային բնակավայրն ընդգրկել է ոչ միայն բնական և ձեռակերտ քարանձավները, այլ նաև ծավալվել է դեպի արևելք՝ ներսուածվով քարանձավների դիմացի հարթակները: Վերջիններս կառուցվել են աստիճանաբար ցած իշխող որոշակի համակարգով՝ հավանաբար հասնելով Ախուրյանի ափի:

Պեղումների արդյունքում խոչոր փլուզումների և հետագա վերակառուցումների տեսքով բացվեցին Անիի բոլոր 3 մեծ երկրաշարժերի հետևանքները: Ընդհանուր պատկերը ապացուցում է, որ կյանքն Անիում, զոնե նրա արվարձաններում, չի դադարել և շարունակվել է մինչև ուշ միջնադար: Հուշարձանախումբը մանրամասն նկարագրվել է, կատարվել են չափագրական, լրասանկարչական աշխատանքներ: Հայտնաբերված հյութերը ենթարկվել են կամերալ մշակման, կոմսերվացվել կամ վերականգնվել են:

РАСКОПКИ ПЕЩЕРНОГО ПОСЕЛЕНИЯ АЙКАДЗОРА В 2005 г.

Резюме

A. Хачатрян

В 2005 археологическая экспедиция продолжила раскопки пещерного пригорода Ани близ села Айкадзор. Основные работы проводились на противоположной от двухэтажного пещерного комплекса 1 террасе и на северной стороне. На террасе обнаружены некоторые поздние перестройки и выкопанные в слое песчаника три амбара для зерна первого периода. На северной стороне по соседству со святилищем (пещера 2) обнаружена большая пещера (5), состоящая из двух помещений. В результате раскопок выяснилось что культурный слой террасы напротив этой пещеры составляет более 3 м. Были обнаружены железные и каменные орудия труда, кухонная керамика, в том числе фрагменты глазурированной, со штампованными узорами и расписной керамики.

Особый интерес представляют медные и серебряные монеты монгольской и византинской чеканки, большая антропоморфная солонка с барельефным изображением танцующих в круговом танце 6 человеческих фигур, фрагменты обгорелого хлеба лаваш. Нахodka высшеупомянутой солонки (пока единственная из средневековья) доказывает местное происхождение широких распространенных в 19-20 веках подобных солонок.



Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՍՏԵՓԱՆՅԱՆ) Հասմիկ ՍՓԻՆՅԱՆ

ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՒՄ

Համաշխարհային երաժշտության պատմության հնագույն շերտերի մեջ են ձևավորվել ռազմական իրադարձություններին առնչվող երաժշտական ավանդույթները: Ձերազատվելով ծիսահավատալիքային գործառությից (օրինակ՝ որսի ծիսապարեր) ռազմի երգն ու նվազն ամենատարբեր դրսւորումներով են ներկայացել թե՝ ռազմական պարերում և թե՝ բուն պատերազմական գործողություններում:

Իբրև կարևոր բաղադրիչ տարր՝ հայոց միապետների բանակներում և հնչել են նվազարանային կոչ-մեղենիներ, որոնց գործառույթը պայմանավորվել է մարտական գործողության կոնկրետ իրադրությամբ: Այս ոլորտին ենք անդրադարձել ներկա հրապարակման մեջ՝ քննության առնելով V-XVդդ. հայ պատմագրության տվյալները՝ իբրև հավաստի և արժեքավոր աղբյուրներ: Թեև հիշատակված նյութը վերաբերում է իմբնականում միջնադարին, այդուհանդերձ ակնհայտ է, որ ավանդույթը՝ որպես հելլենիստական մշակութային արժեքների համակարգի արգասիք, ժառանգված է և, բայց է, անդրադարձնում է համընդհանրական երևույթներ, ինչպես օրինակ՝ ռազմի դաշտում հնչող նվազարանային ազդանշան-մեղենիների միևնույն համակարգի գործառույթը տարբեր ժողովուրդների բանակներում: Միևնույն ժամանակ պատմագրական աղբյուրներից անհնար է դուրս բերել բուն հնչող նյութի երաժշտարտահայտական բնորոշչները: Հետևաբար, հնարավոր է ենթադրել, որ համընդհանուր կոչ-մեղենիներից զատ, հիշյալ ժամանակաշրջանում կարող էին հնչել նաև տվյալ ժողովրդի երաժշտամտածողությանը բնորոշ մեղենիական դարձվածքներ:

Պատմագրական տվյալները հավաստի աղբյուրներ են հիշյալ ոլորտում կիրառված նվազարանների տեսականու և առանձին դեպքերում՝ դրանց կառուցվածքի և հնչերանցի առանձնահատկությունների ուսումնասիրման համար:

Այդ վկայությունները բազմազան են: Կարելի է վստահարար նշել՝ որ ռազմական տարրեր իրավիճակների ժամանակ հին հայոց բանակում հնչել է համապատասխան փողավոր նվազարաններով կատարվող երաժշտություն: Այսպես, Կվասոս զյուղարադարի քորմ Արձանի դեմ Գրիգոր Լուսավորչի մղած զինված պայքարի նկարագրության դրվագներում Հովհանն Սամիկոնյանը գրում է ճակատամարտի սկիզբն ազդարարող պատերազմական փողերի մասին. «Բայ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Արձունեաց, և իշխանն Անձևացեաց, և զիշխանն Անգեղ տան, և սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհարիւր, ենալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Արձանն էր: ...Եւ իբրև մերձ եղեն ընդ եւս զառ ի վերին, յառաջ մատուցեալ Արձանն ու Դեմետր, և հնչեցուցին զվողսն պատերազմին, և յանդզնարար յարձակեաց ի վերայ»:¹ Ապա՝ «Արդ իբրև հարստացան երկորին կողմանքն, և էին 6940 և վեց արք քրմացն, իսկ 5000 և 80 զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զվողսն պատերազմացն»:² IVդ. հայոց Տրդատ թագավորի և հունաց բանակների ճակատամարտի նկարագրության մեջ նշված է. «Զի զատին կողմ զեղջն պաշարեցին հետևակըն, և զներքին հեծեալքն: Եւ սկսան հնչեցուցանել զվողսն պատերազմաց, և թնդին սաստիկ շորջանակի»:³ VII դարում հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ պատմիչը գրում է. «Եւ իբրւու զնացին յեզր գետոյն Սեղտեայ, յայս կոյս իջոյց զնոսա ի քուն առեալ և ինքն պատրաստի արարեալ զդարանակալսն՝ հրամայեաց ծառայիցն կտրել զերիւարսն արաւտի պատճառանաւք և զնոսա յանհոգս արարեալ՝ յանկարծակի հնչեցուցին

¹ Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ (այսուհետև՝ Յովհան Սամիկոննեան), Եր., 1941, էջ 45:

² Նույն տեղում, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 64, 180, 186:

*զիողսմ յետոյ և յառաջոյ, և ի մէջ առին զնոսա»:*⁴ Գագիկ Բագրատունու որդիներ՝ Աշոտի և Հովհաննեսի երկպառակտության առիթով նշվում է. «Եւ իրք լուաւ Յովհաննեսի զգան Աշոտոյ երօր իրոյ, իրամայեաց վող պատերազմի հարկանել»:⁵ Պարսկիերի դեմ Վահան Մամիկոնյանի կազմակերպած ապստամբության նկարագրության մեջ կարդում ենք. «... և յարձակին ի միմեանս ի ճայն վողոց տագնապաւ ի դաշտին Գերանյա»:⁶

Որոշ վկայություններում հիշատակվում է ճակատամարտի ավարտմ ազդարարող վողերի մասին: Հովհան Մամիկոնյանի աշխատության վերը նշված դրագմերից մեկով նշվում է. «Արդ իբրև մետաւ Դեմետր ի նոյն պատերազմին, հնչեցոյ իշխանն Սինեաց զիող պատերազմին ի խաղաղութիւն»:⁷

Հովհան Մամիկոնյանը և Թովմա Արծրունին պատերազմական վողի մասնակցությունը հիշատակել են նաև ճակատամարտի ընթացքում: Այսպես, VII դարում տեղի ունեցած հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Հովհան Մամիկոնյանը գրում է. «Եւ խմբեցաւ պատերազմն այնչափ, որ ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ի ճայն վողոցն և ի տեսս դրօշացն»:⁸ 851թ. հայ-արաբական մարտերից մեկի նկարագրության մեջ Թովմա Արծրունին հիշատակում է. «Սինչ նորա... ընդդեմ միմեանց ճակատեալ կազմէին զոազմն, և վողըն գռչէին և դրօշըն տարածէին»:⁹

Դատելով առանձին վկայություններից՝ ռազմական վողերի քանակը հայոց բանակում բավական մեծ է եղել: Ըստ Եղիշեի՝ հայկական յուրաքանչյուր զորագունդը մի քանի վողեար է ունեցել: Ավարայրի ճակատամարտի նախօրեին պարսից զրավար Սիհրներստեր Վասակին հարցրել է. «քէ ... քանի վողահարը ի մէջ գնդին ճայնիցեն»:¹⁰

Ներկայացված նյութից ակներև է դառնում պատերազմական վողի գործառույթի բազմազնությունը, ինչից ենթադրելի է նաև համարժեք հնչող նյութի առկայությունը: Այստեղից էլ օրինաչափորեն ծագում է այն հարցը, թե ռազմական այս կամ այն իրադարձության ժամանակ բանակում արդյոք միևնույն վող նվազարա՞ն է գործածվել: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ զրավոր այն հիշատակություններին, որոնցում տեղ են գտել նաև հակառակորդ բանակների նկարագրությունները: Այստեղ կարևորել ենք երկու իրողություն. նախ՝ հիշատակվող նվազարանների բացառապես հայերեն անվանումները (վող, քմրուկ, քնար, ջնար), ապա՝ այդ նոյն նվազարանների հիշատակումները հայ իրականության առնչվող այլ նկարագրություններում: Այստեղից էլ այն մեծ հավանականությունը, որ հիշատակված ռազմի նվազարանները կիրառվել են նաև հայոց բանակում: Նշենք նաև հակառակի մասին: Այսպես, նույն «պատերազմական վողերը» վկայված են նաև հունաց բանակում: Անդրադառնալով հայոց Տրդատ թագավորի երիտասարդ տարիներին, Ազարանգեղոսը գրում է հունական բանակուն նրա քաջագործությունների մասին. «Եւ նորա առեալ զգունդն օրաց բազմութեան՝ ի ճայն վողոց տագնապաւ յառաջ մատուցաներ մինչև յանդիման քշնամեացն»:¹¹ Բյուզանդական բանակի՝ IX դարին վերաբերող նկարագրության մեջ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Եւ ինքն քազարոն ցամաքաւ եկեալ մեր ծննայ ի բանակն... և հնչեցուցանել իրամայէր զատերազմական վողսն»:¹²

⁴ Նոյն տեղում, էջ 222:

⁵ Յ ո վ հ ա ն Մ ա մ ի ո ն ե ա ն, էջ 91:

⁶ Նոյն տեղում, էջ 186, 190:

⁷ Նոյն տեղում, էջ 200:

⁸ Նոյն տեղում, էջ 210:

⁹ Թ ո վ մ ա Մ ը ը ր ո ն ի, Պատմութիւն Տանն Արծրունեաց(այսուհետև՝ Թովմա Արծրունի), Թիֆլիս, 1917, էջ 118:

¹⁰ Ե դ ի շ ե, Վարդամի և հայոց պատերազմի մասին (այսուհետև՝ Եղիշե), Եր., 1978, էջ 74:

¹¹ Ա զ ա թ ա ն զ ե դ ո ս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909, էջ 29:

¹² Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ե ե ց ի Ս ս ո դ ի կ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 249:

Մատքես Ուռհայեցին, պատմելով 1055թ. Տուղրի Սուլթանի արշավանքի մասին, գրում է. «... Իսկ յորժամ բաժաներ առաւոտն, հրամայեր հարկանել պատերազմական փողսն»:¹³

Այժմ անդրադառնանք փողերի տեսակներին վերաբերող հիշատակություններին: Եղիշեի երկու հիշատակությունները մեծ փող և մեծ գալարափող նվազարանները. «Նշանս բաշխեր, դրօշ արձակէր, և ի ճայն մեծի փողոյն պատրաստ հրամայեր լինել»:¹⁴ Ապա՝ «Զայն իբրև ետև Սուշկան Նիւսալաւուրտն, ... ի ճայն մեծ գալարափողոց զիր գունդսն ստիպէր»:¹⁵

Կայսերակարգը փողեր է հիշատակել Թովմա Արծրունին՝ IV դարում Սերուժան Արծրունու դեմ Սմբատ Բագրատունու տարած հաղթական ճակատամարտի նկարագրության մեջ. «Ընդդեմ զօրաժողով եղիալ Սմբատ սպարապետ Հայոց ... ունելով ընդ իր զօրն Յունաց բազմամբոյն վահանաւորաց և դրօշաց սաւառնացելոց, և փողը կայսերակարգը և զունդը վառելոցն վաշտիցն»:¹⁶ Մատքես ՈՒռհայեցու Պատմության ձեռագրերից մի քանիսում պատերազմական փողի փոխարեն հանդիպում է պատերազմական շեփոր անվանումը:

Քննվոր գրավոր առյուրներում տեղ են գտել նաև բացառիկ արժեք ներկայացնող հիշատակություններ, որոնք վերաբերում են ռազմի փողերի նկարագրին, մասնավորապես հնչերանգին և կառուցվածքին: Արտաշես Ա-ի օրոք հայոց բանակում, լաւ Սովուս Խորենացու հնչել են պղնձել փողեր. «Եւ Սմբատ հրամայեր զփողսն պղնձիս հնչեցուցանել և յառաջեալ զճակատն իր, իբրև արծի յերան կաքաւուց խոյանայր»:¹⁷ Նոյնը՝ նաև Արտաշես Ա-ի հուղարկավորության նկարագրության մեջ. «... և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինիս՝ ճայնարկու կուսանք, սևազգեստ և աշխարող կանայք ...»:¹⁸

Իրենց հնչերանցով այլ գործառույթ են ունեցել եղջերափողերը: Այսպես, Շապուհ Բագրատունին, նկարագրելով VIII դարում արարական զորաբանակներից մեկը, նշում է. «Հնչեցուցին զփողն եղջիկը ի բանակն անօրինաց»:¹⁹ 1098թ. Անտիոքի գրավման պատմության մանրամասների մեջ Մատքես ՈՒռհայեցին հատուկ նշել է. «... և ամենայն բանակն Ֆոնանկաց մտին ի քաղաքն Անտիոք. և ընդ առաւոտն միաբան հնչեցուցին զփող եղջերացն ամենայն զօրքն»:²⁰

Պղնձել և եղջուրել փողերի հնչերանզային տարբերաթյունները դարձյալ հնարավոր է դիտարկել փող նվազարակի գործառույթային բազմազանության շրջանակներում: Նոյնը կարելի է նշել նաև այդ նվազարանների կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Սովուս Կաղանիատվացին հիշատակում է բազմաձայն փողեր: Աղվանքի բազավոր Վաշեին ուղղված նամակում ասկում է. «Եկն եհաս ի վերայ քը միանզամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոք գազանօք, խառնադրոշն նշանօք, բազմաձայն փողովք, գալարափող գոչմամք, անտառախիտ միզակօք»:²¹

Բազմաձայն բնորոշումը կարող է վերաբերվել և նվազարանների քանակին և հնչողության բազմաձայն կերտվածքին: Համանման եզրակացությունների ենք հանգում նաև Սերեսի հիշատակություններից մեկի բննության մեջ: Այսպես, անդրադառնալով 607թ. Սմբատ Բագրատունու և պարսից Խոսրով արքայի համագործակցությանը, պատմագիրը գրում է. «Յայնժամ տայ նմա արքայ արքայ զիրեք-

¹³ Մատքես Ուռհայեցի, Ժամանակագրություն (այսուհետև՝ Մատքես Ուռհայեցի), Վաղարշապատ, 1898, էջ 264:

¹⁴ Եղիշե, էջ 90:

¹⁵ Նոյն տեղում, էջ 92:

¹⁶ Թուղթապատճեն, Արծրունի, էջ 211:

¹⁷ Մատքես Խորենացի, Հայոց Պատմութիւն, Տիգրան, 1913, էջ 138:

¹⁸ Նոյն տեղում, էջ 250:

¹⁹ Պատմութիւն Շապիու Բագրատունու արքայի համագործակցությանը, 1921, էջ 23:

²⁰ Մատքես Ուռհայեցի, Աղվանքի աշխարհի, Մ., 1860, էջ 17:

²¹ Մատքես Կաղանիատվացին Պատմութիւն Աղվանքից աշխարհի, Մ., 1860, էջ 17:

ձայնեանս»:²² Այս դեպքում ևս չորեքճայնյա փողերը կարող են ստուգաբանական տարրեր մեկնությունների ենթարկվել: Կարելի է ենթադրել, որ փողերից յուրաքանչյուրը արձակել է չորս հնչյուն, կամ ունեցել է չորս ձայնանցք: Հնարավոր է դրանք դիտել նաև որպես մեկ հնչյուն արձակող չորս փողերի խումբ և այլը: Տվյալ դեպքում փողերի չորեքճայնյա լինելը դրանց որոշակի տեսակն է վկայում: Նույնը կարելի է ասել նաև պղնձե փողերի, եղջերափողերի, զալարափողերի, ինչպես նաև շեփորի մասին: Հնարավոր է, որ փող անվանումը պատմագիրների երկերում հաճախ ընդհանրացված անվանումի իմաստ է ունեցել և օգտագործվել որպես յուրահատուկ եզր:

Ի մի բերելով նվագաբաններին վերաբերող պատմագրական բնութագրումները՝ նշենք, որ դրանցից մի քանիսում հիշատակվում են նաև տարրեր նվագարաններից բաղկացած նվագախմբերի մասին: IX դարում հայ-արաբական ռազմական ընդհարումներից մեկի նախօրեին, ըստ Թովմա Արծրունու, արար բազավոր Զափրը «խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ փողը զոչցին, և կամ քանի՛ թմրուկ դափցին»:²³ Արար զորապետ Բուղայի արշավանքներից մեկի նկարագրության մեջ ասվում է. «...նշանն կանգնեալ և քնարը հնչէին, և թմրուկն դափէին»:²⁴ Նույն ճակատամարտի նկարագրության մեջ նշվում է. «Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ.և ահա աղաղակ և փողը և քնարը և ջնարը, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն»:²⁵

Ընդհանուր առմամբ քննվող ոլորտը դիտարկելով երևոյթի ամբողջական համայնապատկերի մեջ՝ նշենք, որ բացի նվագարանային երաժշտությունից, ռազմական իրադարձությունների ժամանակ և առհասարակ հին հայոց բանակում հնչել են նաև այլ ժանրի և տիպի երաժշտական ստեղծագործություններ (ինա՞ ժողովրդական և հոգևոր երգեր, պարեր): Քննության մասնավորեցումը սովոր նվագառանային երաժշտության ոլորտով, ակնկալում է այլ աղբյուրների՝ հնագիտության, կերպարվեստի (հաստկապես՝ մանրանկարչության), ինչպես նաև հարևան ժողովուրդների համապատասխան և համարժեք աղբյուրների տվյալների համադրական ուսումնասիրություն: Պատմագրական նյութը լուրջ հիմք է տալիս հայոց քանակում կիրառված նվագարանային երաժշտությունը արժեորելու ժամանակի երաժշտարվեստի ինքնատիպ ոլորտ, որտեղ բազմապիսի գործառույթի մեջ են դրվել ինչպես մասնահատուկ, այնպես էլ ավանդական նվագարաններ:

МУЗЫКАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ В ВОЙСКЕ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Резюме

A. Арутюнян, A. Апинян

В письменных исторических источниках средневековой Армении сохранились сведения о музыкальных инструментах, которые использовались в военных походах. Сбор и систематизация этих свидетельств показывают, что еще с древнейших времен в войске армян использовались духовые, струнные и ударные инструменты. В некоторых источниках присутствует также инструментоведческая информация, которая может играть важную роль в этимологических исследованиях.

²² Պատմութիւն Սերենիսի, Եր., 1979, էջ 101:

²³ Թռվակմա Արծրունի, էջ 211:

²⁴ Նույնը:

²⁵ Նույն տեղում, էջ 296:

Սիր ՆԱՎՈՅԱՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՁՆԱԿԱՐԳԵՐԸ
ՀԱՅ ՀԻՄՆԵՐԳՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՍԱՆ ՀԱՍՏԵՔԱՆՈՒ

ԱՅ. Ծիրակացու հեղինակությանն են վերագրվում Հարության ԱԶ - ԴԿ հարցարգերի մեծ մասը և Հոգեգալստի ու Վարդապառի առաջին օրերի կանոնների երգենքը. ըստ Ն. Թահմանյանի հաշվարկի՝ շուրջ երկու հարյուր ատելագործություն։¹

Հայ հիմներգործքան կարևոր ժամերից մեկի՝ կարգի ձևակորման և զարգացման ճանապարհին հատկապես Հարության հարցնակարգերը երաժշտաբանաստեղծական կարևոր դրսևորումներ են: Դրանց առկայության վաստան արդեն իսկ վկայում է մինչև VIII դարը, այսինքն՝ մինչև Ս. Ստեփանոս Սյունեցին, կարգ ժամերի գոյության մասին մեզանում: Սյուս կողմից՝ դրանք զայիս են վկայելու, որ կարգը մեզանում ոչ քե ներության մուտքած պատրաստի ժամանակին նորել է (կամ նույնիսկ օտար ավանդույթի «ստեղծագործաբար» յուրացված դրսևորում), այլ հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի պատմության ընթացքում զարգացում ապրած երևույթ, որի ձևակորման և զարգացման ամբողջ տրամաբանությունը բխել է հիմնականում Հայ Առաքելական Ս. Եկեղեցու ծիսական համակարգից և պայմանաբարպես նրա ներքին անհրաժեշտություններով, ինչի մասին առիր ունեցել ենք խոսելու: ²

Այլ խորով, կարգն անցել է զարգացման երկար ճանապարհ՝ պայմանավորված հայ միջնադարյան հոգևոր մշակույթի մի շարք իրողություններով, և զարգացման այդ ընթացքի տարրեր փուլերում ունեցել է տարրեր նկարագիր: Ուստի, կսխալվենք, եթե կարգ ասելով պատկերացնենք սույն ուրիշ մասերից բաղկացած մի երգաշար, որի հայութ է եկեղ մեջանում պատրաստի կազմով և նմանակնան կամ մշակութային «պատվաստ» կամ էլ նոյնիսկ որոշակի սկզբունքներով ներմուծման հետևանքով: Չարակնոցի ներկա կազմն անգամ բազմաթիվ առիթներ է տալիս կառուցվածքաբանական նման սրենատիկ մոտեցումը հերթելու համար:

Սյուս կողմից, եթե կարգ ժամի տեսական արտացոլանքն առաջին անգամ գտնում ենք Ա. Հովհաննես Գ. Օձիցու կանոններում, ապա դրա համեմատաբար անփոփոխ մնացած բուն դրսաբումներից են հենց Անանիա Շիրակացու Հարության հարցնակարգերը:

Ավագձու ոչ մի կերպ չի հաստատում այն տեսակետը, թե հայ հիմներգործյան զարգացման, ծաղկման, առավել ևս ձևավորման փուլը VII դարն է:³ Դրա հիման վրա, իբրև թե, կարող է հիմնավորվել նաև հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաքանակական արվեստի բյուզանդական հիմներգործյանը քայլ առ քայլ հետևելու տեսակետը: Տեսակետի գիտական անկարությանն այս կամ այն առիթով անդրադարձել ենք և դեռ կանորադառնամբ: Այստեղ շեշտենք, որ միջնադարյան առյուրներում հիշատակվող հայ հիմներգործյան առաջին հետինակները IV-V դդ. ներկայացնուինենք և, այս առյուրներին շվատահելու որևէ հիմնավոր պատճառ ցայսօր չի առաջարկված: Այսու կողմից՝ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու ծխական համակարգի բյուրեղացումը և այդ համակարգի մեջ մասնագիտացված երաժշտաքանակական արվեստի արտահայտությունների ներգրավումը որպես դրանց կանոնացման ձև, հետևանքը և փաստ, արդեն իսկ կարգ ժամանակակից գործընթաց է նշանակում: Հետևապես, IV-V դդ. վերագրվող ստեղծագործություններն այս տեսանկյունից ոչ մի կերպ շրջանցել չենք կարող:

¹ Ն. Թօ-ահմէից ան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Եր., 1985, էջ 163-164; Նույնի՛ Անամիս Ծիրակացին և Հարության ԱԶ - ԴԿ հարցնակարգերը, «Էջմիածին», 1984, Եր., էջ 25-35:

² У. Ն ա վ յ ա ն ա ն, Մենակու Մահապողը և հայ ի մ ն ե ր գ ո ւ թ յ ա ն ձ և ս պ ր մ ա ն հ ա ր ց ե ր ք, Հ ա յ ո ց գ ր ե ր ի գ լ ո ւ թ յ ա ն 1600 - ա մ ս ա կ ո ւ ն ն վ ի ր վ ա ծ մ ի ջ ա զ ա յ ի ն զ ի տ ա ժ ո ղ ո վ ի զ ե կ ո ւ ց ո ւ մ ն ե ր ի դ ր ո ւ յ ր ն ե ր, Ե ր., 2005, է ջ 157-158:

³ Ն. Թափնիզյանն անդրադարձել է այս խնդրին: *Տե՛ս Ն. Թափնիզյան, Սեպտմ Մաշտոցն ու հայոց եղանակը երգարիթմատը, «Բանքեր Մատենադարանի», Եր., 1964, N 7, էջ 187:*

Կարգ ժանրի առաջին, սաղմնային կամ սկզբնական դրսևումների մասին խոսելիս կարելի էր ամրապնաման հաճախայան կարգի հիմ երգերին, որոնց հետինակ է հիշատակվում Ս. Ներսես Ա. Պարքելը:⁴ Սակայն, եթե նույնիսկ կարողանայինք ամբողջացնել հիշյալ կարգի երաժշտարանաստեղծական հիմ կազմը, դարձյալ նման ծիսակարգերը, հնքնին, կարգ ժանրի ձևավորման նախապայման չէին կարող դիտվել: Երանք ընդգրկված են Սաշտոց ծիսարանում, չնայած որ նման ծիսական կարգերի բաղադրիչ հանդիսացող երգերն ել մաս են կազմում հայ եկեղեցու ժամերգությունների և շարականների ընդհանուր զանգվածի: Այլ մոտեցման դեպքում դրանք կարող են համարվել առանձին, փոփոխական կամ շարժական երգաշարեր, այլ ձևակերպմամբ՝ առանձին ժանրային անսամբլներ:

Մեր եղակետն այն է, որ Աղոքամատույց-ժամագրքի ծիսական կարգերը և հատկապես առավոտյան ժամերգությունն են Շարականցի կարգ ժանրի ձևավորման առանցքը: Նկատի ունենք այն միավորները, որոնք նոյն ժամերգության մաս են կազմում, այսինքն՝ կնշանակի, որ, իր միավորների փոփոխականությամբ հանդերձ, կարգի բաղկացուցիչները հիմնականուն երեք կամ չորսն են եղել՝ Հարցի գլխավորությամբ (ներառյալ գործառները): Այլ կերպ ասած՝ խոսք Հարցի կարգի մասին է Ողորմյայի և *Տեր Հերկնիցի հետ*:⁵ Այստեղ նկատենք, որ Հարության հարցնակարգերուն հանդիպում ենք այլ միավորների և: Հարկ է նկատի ունենալ, որ դրանցից Սեծացուցեն ամենօրյա գործածություն չի ունեցել, այլ միայն կիրակի օրերը՝ Յուղարերից կարգի մեջ:⁶ Սեծացուցեի ամենօրյա կիրառությունը, նաև որպես քաղվածք երգվելը համեմատարար ուշ շրջանի նորամուծություն է: Դրանցից առաջինը վերագրվում է Գրիգոր Գ Անավարզեցու ժամանակներին,⁷ իսկ մյուսը պետք է որ Սովուս Գ Տարեացուց հետո մոտք գործած լիներ: Սակայն դա չի բացառում Հարցնակարգերի մեջ նրանց կիրառվելը նաև վաղ միջնարարում՝ արդեն հիշատակված ծիսական կարգավորությամբ:

Սեծացուցեների հարցը սերտորեն առնչվում է Հարության հարցնակարգերի հետինակների խնդիրն: Ն. Թահմիզյանն արդեն նկատել է, որ դրանցում ընդգրկված բոլոր երգերը նոյն հետինակի երկերը չեն:⁸ Սակայն, եթե Հարության հարցնակարգերի գլխավոր հետինակ ենք համարում Անանիա Շիրակացուն, ինչպես ճիշտ նշել է Ն. Թահմիզյանը՝ հենվելով Վանական Վարդապետի և Սարգիս Երեցի հիշատակությունների վրա,⁹ ասս հարկ է լուծում տալ նաև մյուս տեսակնետին, որի համաձայն հիշատակում է Ս. Սովուս Խորենացին, մանավանդ, որ տեսակնետը շրջանառու է Վարդան Արեւելու պես խոշոր հետինակից սկսած:

Հարության քառասուներկու հարցնակարգերից (քնականարար չենք հաշվել միջանկյալ տոների կարգերը) քանենք ունեն «Ծղվող», մեջքերվող Սեծացուցեները, այսինքն՝ Սեծացուցեների կեսից ավելին քաղվում, մեջքերվում է այլ կարգերից, ընդամենք ոչ միշտ Սեծացուցեն շարականներից: Դա կարող էր հետևանք լինել այն բանի, որ, նշվածի համաձայն, Սեծացուցեի կիրառությունը VII դարում սահմանափակ էր, իսկ հետագայում ամենօրյա կիրառության համար կարիք առաջացավ դրանց թիվն ավելացնելու: Այժմ նույնիսկ նժկար է ասել, թե Սեծացուցեների որ մասն ունի ավելի հիմ կիրառություն. այն որ հարցնակարգերի մեջ՝ զետեղված, թե՝ այն, որ հղվում է: Հավանարար վերջինը, քանի որ, շեշտում ենք, Ս. Հովհաննես Գ Օճնեցին Սեծացուցեի մասին առանձին է խոսում, այլ ոչ Հարցի սարքի առնչությամբ: ՈՒրեմն, դրանք օգ-

⁴ *Տես Ս. Նավոյան, Հայ հիմներգության առաջին հետինակի հարցը, Երիտասարդ հայ արվեստաբանների առաջին նատաշրջամի նույրեր, Եր., 2005, էջ 19:*

⁵ *Տես Սաղաթաղիս արք ի արք. Օքսան ն ե ա ն, Ծիսազիտութիւն Հայաստաննայց Սուրբ Եկեղեցւոյ, Երևանին, 1977, էջ 45:*

⁶ *Դա արտացոլված է նաև Ս. Հովհաննես Գ Օճնեցու կամոններում: Տես Կամոնազիրը հայոց, հ. Ա, Եր., 1964, էջ 527-530, կամոն ՈՂՄ (ՈՂԲ) Ի՞՞Դ: Նաև՝ Սաղաթաղիս արք. Օքսաննան, նոյն տեղում, Նորայր արք. Պողարյան, Ծիսազիտութիւն, Նիւ Երքը, 1990, էջ 36:*

⁷ *Նոյնիք:*

⁸ *Խոսքը, մասնավորաբար, Ս. Գրիգոր Նարեկացուն վերագրված Հարության ԴԿ Տեր Հերկնիցի մասին է: Տես Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V – XV դարերում, Եր., 1985, էջ 85 -88, 108 - 109:*

⁹ *Ն. Թաղամիշյան աշխատանք, աշխատանք, էջ 25:*

տագործվում էին կիրակի օրերին, սակայն, որպես առանձին վերապահություն: Հետևաան կարող էին քաղաքածարար բերվել այլ կարգերից:

Ծննդյան և Հարության մի շաբթ ընդհանուր Սեծացուցեների խնդիրը նկատել է Ն. Թահմիջյանը, սակայն դրանց մեծ մասի հեղինակ նա համարում է Բարսեղ Շննին:¹⁰ Եթե նոյնիսկ ընդունենք այս տեսակետը՝ վերապահելով, որ Սեծացուցեների հեղինակ ավանդաբար իշխատակվում է Ս. Մովսես Խորենացին, ապա, այդուհանդերձ, Բարսեղ Շննին կարող են վերագրել բուն հարցմակարգերում զետեղված քանի Սեծացուցեները: Այդ բաղադրիչի մյուս, գերակշիռ մասի հեղինակն (կամ հեղինակները) ուրիշ է: Դա հստակ երևում է, քանի որ նշված քաներկու Սեծացուցեներից երկուսը մեջքերվում են Հարության ԱԿ հիճգերորդ և ԲԿ չորրորդ հարցմակարգերում՝ համապատասխանաբար Պահոց երկրորդ և երրորդ կիրակիների կարգերից, Հարության ԱԿ չորրորդ հարցմակարգում՝ Վարդապատի առաջին օրվա կարգից, Հարության ԲԿ երրորդ հարցմակարգում՝ Աստվածածնի ծննդյան կարգից, Հարության ԳԶ առաջին հարցմակարգում՝ Աշխարհամատրան կիրակիի կարգից,¹¹ Հարության ԴԶ յոթերորդ հարցմակարգում՝ Աստվածածնի վերափոխման երրորդ օրվա կարգից: Մնացած տասնվեց Սեծացուցեները ծննդյան և Աստվածահայտնության տարրեր կարգերից են քաղվում: Բնականաբար, դրանց հեղինակը Ս. Խորենացին է: Նշվածն ամենամեծ պատճառն է համարվել, որի հետևանքով Հարության հարցմակարգերի հեղինակի՝ Ան. Շիրակացու անոնքը շփորվել է, ըստ Էության, նոյն կարգերի համահեղինակներից մեկի՝ Ս. Խորենացու անվան հետ, ինչը նկատում, սակայն չի ընդունում Ն. Թահմիջյանը.¹²

Կարգի մեջ Հարցերը դիտվում են որպես ավելի հին միավորներ, քան Օրինությունները:¹³ Հետևաակեն հարցմակարգն էլ կարգի առավել վաղ ձևակերպումը պետք է դիտել: Դա չի նշանակում, որ Օրինություններ չեն կարող ստեղծվել կամ երգվել այդ շրջանում, այլ այն, որ Օրինությունների կամ դրանց նախատիպ Մարգարեական Օրինությունների համար նախատեսված ծիսական կիրառության հետևանքով նշված միավորները կարգի մեջ չեն տեղափորվում մինչև Շարակնոցների համապատասխան խմբագրությունների ի հայտ գալը:

Սա ենթադրություն է, որի օգտին է խոսում նաև այն, որ Օրինությունը հետագայում էլ մնաց որպես հարաբերականորեն կամ նոյնիսկ ամբողջապես ինքնուրույն և բազմանաս միավոր: Նկատի ունենք թե՛ Ս. Ստեփանոս Սյունեցու Ավագ օրինությունները, թե՛ միջնադարում Մովսես Գ Տարեացու ներմուծած քաղվածքներով երգվող Օրինության բազմանաս և փոփոխիկ ամբողջությունը:¹⁴ Նշված դեպքերում Օրինությունը հստակորեն զատվում է Շարակնոցի հիշյալ ութ, ինը բաղկացուցիչներից՝ սոսկ «պատկեր աւուր» ենթադրյալ նախնական¹⁵ կիրառության կողքին առաջացնելով իր երկու բազմանաս ենթատեսակները: Դրանցից առաջինը կառուցվածքային կայուն և անփոփոխ կազմ է ենթադրում, իսկ մյուսը՝ կառուցի հարաբերական կայունություն, կազմի և կատարման հարաբերակնորեն ազատ ընտրություն:¹⁶ Նմանատիպ դիտարկումներ հնարավոր են նաև կարգի և Հարության հարցմակարգի մյուս բաղադրիչների վերաբերյալ, որոնք Հարցի կարգի (կամ սարքի) նաև չեն կազմում, առանձին դեպքերում հանդիս են զայլս ողջ կարգի միասնական ամբողջության մեջ, իսկ ավելի հաճախ՝ առանձին և ժամբարյան բաղադրյալ «անսամբլներում»:

Կարելի է ենթադրել, որ ննան տարբերակված վերաբերմունքի արդյունքում կարգի՝ որպես ամբողջական ժամբի նկարագիրը դառնում է անհստակ և աղճատված: Սակայն, խնդիրն առավել բարդ է, քանի որ մնեն չենք կարող շրջանցել կարգի մի քանի

¹⁰ Ն. Թահմիջյան, էջ 26: Տես նաև Նոյնի՝ Բարսեղ Շննի և երգաստեղծության ծաղկումը Հայաստանում Vll դարում, «Բաներեր Երևանի համալսարամի», Եր., 1973, N1, 15 216 – 217:

¹¹ Թերևս, այս մեկը ևս, Ն. Թահմիջյանի տեսակետի համաձայն, Բարսեղ Շննի համարվի:

¹² Ն. Թահմիջյան, Անամիա Շիրակացին ..., էջ 26: Նոյնի, Բարսեղ Շննի ..., էջ 216 – 217:

¹³ Նորայր արք. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 36: Նաև՝ Մաղաքիս արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., էջ 161:

¹⁴ Մաղաքիս արք. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 163:

¹⁵ Նոյնիը:

¹⁶ Օրինության ենթատեսակների մասին ավելի ուշ առիթ կունենանք խոսելու:

Ենթատեսակների գոյությունը, ըստ ծխական կիրառության, այսինքն՝ ըստ գործնականում կիրառվող, հնչող տարրերակների: Եվ ավելին, այդ մի քանի տարրերակները պատմական զարգացման տեսանկյունից ձևավորվել են հաջորդաբար:

Ինչպես, եթե հարցնակարգը¹⁷ դիտում ենք որպես կարգի նախնական դրսուում, ապա Շարակնոցի կարգի մյուս բաղադրիչները (Օրինություն, երբեմն հանդիպող ճաշու) ենթագա դարերում են ներմուծվել՝ կանու ուշ ձևավորվելու, կան կարգի կազմի մեջ ուշ մտնելու ենթաներով (Հվարել եկեղեցում «ազատ» կիրառման և ուշ կանոնացման տեսակնուի ենթ, որը չիմնավորված ենք համարում): Ինչպես էլ որ եղած լինի, դրանք կարգի այլ ենթատեսակի ձևավորման հատկանիշ պետք է դիտել: Մասնակն, որ այդ ենթատեսակների՝ որպես մեկ ամրողությամբ ներկայացվող երգաշարերի կատարման ծխական սահմանումները որոշակիորեն տարբեր են: Հետևապես, նշանակած «հավելվող» բաղադրիչների և հատկապես Օրինության կարգին նախադասվելու որոշ հանգամանքներ հաշվի առնելու դեպքում կարգի նախնական բնութագրով հայ իմներության զարգացման տեսանկյունից, խիստ կարևոր կողմնով հստակվում է:

Օրինության շարականների մասին Մաղարիա արք. Օրմանյանը գրում է, որ դրանք երեք մասից են բաղկացած և որ այդ երեքից ենթադրաբար առավել ինչ է «պատկեր ավուր» նաև:¹⁸ Իր երեքին օրվա պատկերը «հատուկ» է կամ «քաղվածարար» կազմված՝ «ընդհանուր»:¹⁹ Ընդունին, Օրինության «հատուկ պատկեր ավուրը» առանձին, տվյալ տոնի կարգի համար է ստեղծվել և, բնականաբար, նույն օրվա Հարցերից ավելի ուշ շրջանում, իսկ Օրինության ընդհանուր, քաղվածարար կազմվող օրվա պատկերը նախադասվել է դարձյալ ավելի ուշ շրջանում, սակայն հարցնակարգի ինչ մասերից առնվելով:²⁰ Այս այս ընդհանուր օրվա պատկերով Օրինություններ ունեցող կարգերի թվում են Պահոց, Մարտիրոսաց և Հարության կարգերը: Հարության հարցնակարգերի համար քաղվածարար ակնոր պատկերով Օրինություններ են գործածվում սույլ Զատկի շարաբվա ընթացքում, իսկ Հինունքի մյուս օրերին հարցնակարգերին նախադասվում է Ավագ օրինություն: Զատկի շարաբվա օրինություններն եւ, ինչպես նշվեց, քաղվում են հարցնակարգերի համապատասխան ձայնեղանակի Տեր երկնիցներից:²¹ Ուստի պահպանվում է Հարության հարցնակարգերից յուրաքանչյուրի ձայնեղանակային միատարրությունը,²² անշուշտ, ձայնն ու իր դարձվածքը մեկ նշումի տակ դիտելով: Դրանց տարրերակումը, պատմական շերտերով դիտելը մեզ հեռու կտաներ:

Սենք հակված ենք այս երևույթը հայ իմներության զարգացման ընթացքում որոշակիորեն եղծված, սակայն կարևորագույն հատկանիշներից մեկը համարելու: Բանն այն է, որ վերը հիշատակված Օրինության ընդհանուր օրվա պատկեր ունեցող Աղոփակցից կարգերը նույնապես որոշակիորեն ցուցաբերում են նման ներկարգային ձայնական միատարրություն,²³ սակայն, մեկ խոշոր և մեզ համար կարևոր վերապա-

¹⁷ Այսուղի չունենք Հարության հարցնակարգերի կազմը, որտեղ բացի միավորների կրկնապատկումից հանդիպում ենք նաև ճաշուների և քաղվածարար երգվող Օրինությունների, այլ Հարցն իր ավորով:

¹⁸ Մաղ աք ի ա արք. Օ մ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 163:

¹⁹ Նոյն տեղում, էջ 161 – 162:

²⁰ Նոյնը:

²¹ Հենց Օրմանյանի բերած պատճառներով Լամբրոնացու երկու հատուկ օրինությունները չենք դիտարկում: Նոյն տեղում, էջ 163:

²² Կարծում ենք, Զայնազրյալ շարակնոցում Հարության ԴԿ իինգերորդ հարցնակարգի գույզ Տեր երկնիցների ԴԿ նշումները շփոթաթյուն պետք է համարել: Տեսն Զայնազրեալ շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 609:

²³ Դարձյալ շփոթություն կամ վիճակ կարելի է համարել Պահոց երկրորդ շարաբվա ԱԿ իինգերորդ կարգի Ողորմյայի ԱՉ ցուցիչը (Զայնազրյալ շարակնոց, էջ 224), իինգերորդ շարաբվա ԴՉ ցորորդ կարգի Ողորմյայի ԳՉ նշումը (Զայնազրյալ շարակնոց, էջ 313), նմանատիպ երևոյթ է Պահոց վեցերորդ շարաբվա չորրորդ կարգի ՀՉ ցուցումը (Զայնազրյալ շարակնոց, էջ 609): Այսու, Մաղարիա արք. Օրմանյանը գրում է. «Հնդիանապես Ողորմեան և Տեր յերկնից շարականներն կը հետուին Հարցերն ձայնին, միայն 15 Հարցերն կը զունեմ, որոց Ողորմեան և Տեր յերկնից ձայն կը փոխեմ, և մի Հարց միայն՝ որոյ Տեր յերկնիցն ձայն կը փոխէ: Այդ փոփոխութիւններն թերևս նշան լինին զանազան առիթներու և զանազան գործոց ի մի հաւաքուելուն»: Մաղարիա արք. Օրմանյան, Ծխագիտութիւն, էջ 44:

հությամբ: Պահոց կիրակիներն ունեն Օրինության օրվա հասող պատկերներ, որոնք բոլոր վեց կիրակիների կարգերում այլ ձայնեղանակային ցուցիչ ունեն, քան նույն կարգի Հարցն ու իր սարքը: Վերջիններս պահպանում են ձայնային միատարրությունը: Ավելին, Պահոց կարգերում ձայնեղանակային միատարրությունը խախտող մյուս դեպքը երրորդ շարարվա ԲԿ ստեղի (դիտում ենք որպես ԲԿ-ի տիրույթ) վեցերորդ կարգի Մանկունքն է իր ԲՀ եղանակով:²⁴

Այս դիտարկումները գալիս են ապացուցելու, որ Պահոց կարգերը, ունենալով այլ բաղադրիչներ ևս, քան հարցնակարգերը, հիմնականում պահպանում են ձայնեղանակային միատարրությունը: Ակզրութային խախտումներն առաջանում են հարցնակարգերին, այսպիս ասած, «հավելվող» միավորների ձայնային տարրերության հետևանքով՝ կիրակիների կարգերի բոլոր Օրինությունների և մեկ Մանկունքի դեպքում: Դա հաստատում է մեր այն պնդումը, որ առավոտյան ժամերգության շարականները և հասկապես Հարցի սարքն է կարգ ժամերի նախնական դրսւորումը: Չանի որ այն հանդես է գալիս որպես մեկ որոշակի աճրողություն թե՛ ծխական գործառույթի, թե՛ երաժշտական նկարագրի իմաստով: Մյուս կողմից՝ այն իր կիրառությամբ առավել հիմն է, քան կարգում Օրինության հաստատումը:

Չուտ պատմական տեսանկյունից երկու դեպքն ել՝ Պահոց կարգերն ել, Հարուրյան հարցնակարգերն ել հայ հիմներգության վաղմիջնադարյան շերտն են ներկայացնում: ՈՒստի, կարելի էր ենթադրել, որ երևույթը բնորոշ է հայ հոգևոր երգի զարգացման վաղ շրջանին: Սակայն, եթե ընդունենք, որ Մարտիրոսաց կարգերի հետինակը Պետրոս Ա Գետադարձն է, ապա XI դարի երգաստեղծությունը նույնական ցուցաբերում է հավատարմություն ձայնեղանակային միատարրության հանդեպ: Հիշեցնենք, որ այս կարգերը նույնպես նախորդների նման ունեն քաղվածորեն երգվող Օրինության օրվա պատկեր:²⁵

Իհարկե, առանձին ուսումնասիրության նյութ է Օրինության հասող պատկերով մյուս յոթանասունինը (ըստ Օրմանյանի) կարգերում Օրինության և Հարցի սարքի բոլոր միավորների ձայնեղանակային հարաբերությունները: Սակայն, բուցիկ ակնարկն ել բավկական է նկատելու համար, որ յոթանցում մեր նշած օրինաչափությունը հիմնականում պահպանվում է:

Հասող վերապահությամբ հարկ ենք համարում շեշտել, որ ձայնային միատարրություն ասելով՝ հասկանում ենք, ոչ թե սուս մայր ձայնեղանակը, այլ տվյալ ձայնի տիրույթը: Հայտնի է ձայնեղանակային համակարգի զարգացման ընթացքը ևս, ուստի նրա առաջացրած ձայնեղանակային տարատեսակները նույնական պես են է խմբավորվեն ըստ բուն ձայնեղանակների, ինչպես որ լուրունված էր միջնադարում:²⁶

Նման ձայնային միատարրության միակ հմարավոր բացատրությունն այն է, որ վաղ միջնադարում օրվա ժամերգությունները կատարվում էին նույն ձայնեղանակի շրջանակներում: օրինակը կանոն-սաղմոսն է: Նկատենք նաև, որ ձայնեղանակի ժամանակի ընկալումն ուներ զուտ հոգևոր խորիրդարանական, զաղախարական բովանդակություն:

Ժամերգություններից մեկի՝ առավոտյան ժամերգության երգասացությունները, հիմք դառնալով շարականի կարգին, ժառանգում են նաև կարգի շրջանակներում ձայնային միատարրության հասկանիշը: Ինչը զարգացման հետագա ընթացքներով եղծվում է ավելի ուշ ժամանակներում: Դրա պատճառներից մեկը, ինչպես վերը նշեցինք, «հավելվող» միավորներն են, թեև ընդհանուր կամ մասնավոր բնույթի այլ պատճառներ ևս կան, ինչի մասին Օրմանյանը ևս նշում է:

Անանիա Շիրակացու Հարուրյան հարցնակարգերն այս ավանդույթի կապող օղակն են, մեկ կողմից՝ Մաշտոցին վերագրվող Պահոց կարգերի, մյուս կողմից՝ Մարտիրոսաց կարգերի միջև, եթե համարենք, որ վերջինս կամ դրա մի մասը, զուցե նախաստեղծ այլ օրինակների հիման վրա, հեղինակել է Պետրոս Ա Գետադարձը:

²⁴ Տե՛ս Զայնագոյալ շարականոց, էջ 262:

²⁵ Ըփոք ենք համարում ԳԿ կարգի մեջ Տեր հերկմիցի ԴԿ նշումը: Տե՛ս Զայնագոյալ շարականոց, էջ 951:

²⁶ Տե՛ս Կոմիտաս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., Պետիրաս, 1941, էջ 121:

Եվ վերջապես, մեր նշած ձայնեղանակային հատկանիշը գալիս է վկայելու, որ Ստեփանոս Սյունեցին Ավագ Օրինություններն առեղծելիս կամ դասակարգելիս նախօրինակ ուներ Սարգարեական Օրինությունները երգելու հնավանդ ձևը, ապա նաև Հարության հարցնակարգերի ձայնեղանակային միատարր նկարագիրը։ Հարկ էր նկատի ունենալ, որ դրանք միասին էին կատարվելու, ըստ ուր ձայնեղանակների դասավորված շարքերի։ Ուստի, Ավագ օրինությունների ստեղծումը բնիկ տեղային ավանդույթի շարունակություն էր ընդամենը, այլ ոչ օտար ժողովածուների նմանակում,²⁷ ժանրային ավանդույթի կրկնօրինակություն։

АРЦНАКАРГИ ВОСКРЕСЕНИЯ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ГИМНОТВОРЧЕСТВА

Резюме

M. Навоян

Процесс формирования армянского Гимнария и в частности жанра канона, начинается с IV-Vвв. Среди прочих составляющих песнопений здесь важное место занимают песни Арцнакарга, автором которых считается Анания Ширакаци (VIIв.). Эти циклы духовных песен являются промежуточным звеном в процессе исторического развития жанра канон в армянской гимнографии.

²⁷ Հմնակարգի համար Տագմազյան, *Теория музыки в древней Армении*, изд. АН Арм. ССР, 1977, стр. 169.

Մեներիմ Մելրոնյան

Ենթադրական և աղաճակի ժխտական ձևերը Թումանյանի ստեղծագործություններում

Գրողի լեզվի ձևաբանական, շարահյուսական իրակությունների ուսումնասիրման կարևորությունն ավելի է ընդգծվում, եթե խոսքը վերաբերում է այնպիսի հեղինակների, որոնց գործունեությունը համընկնում է գրական լեզվի զարգացման վաղ շրջանին, եթե դրա քերականական շատ իրողություններ գրական մշակման, կայունացման և միօրինականացման ընթացքի մեջ են գտնվում: Նման պարագայում գրողի լեզվի քերականական իրողությունների ուսումնասիրությունը կարևոր նպաստ կրերի նաև գրական լեզվի զիտական պատմության ստեղծման գործին: Եթե համապատասխան շրջանի մեր գրողների, բանաստեղծների լեզվի ձևաբանական իրողությունները հանգամանորեն ուսումնասիրված լինեին, մենք ավելի հավաստի տեղեկություն կունենայինք, ասենք, այնպիսի հարցերի մասին, թե երբվանից են սկսվել նոր գրական լեզվում գործածվել և եթե են ընդհանուր ճանաչում գտնվել ենթադրական եղանակի ժխտական խոնարհման այժմյան ձևերը, ստացականության հոգնակին և այլն: Այս հարցերից առաջինի մասին արդի հայերենի բայր մենագրական ուսումնասիրության նյութ դարձրած անվանի լեզվաբաններ Հ. Բարսեղյանը և Ա. Աբրահամյանը քավական ընդիհանուր ձևով են արտահայտվում: «Նախաստվետական շրջանի հայերենում,- գրում է Հ. Բարսեղյանը,- հանդիպում ենք պայմանական եղանակի բազմաթիվ ժխտական ձևերի, որոնք անորոշ դերբայով են կազմված»¹: «Հետագայում,- գրում է Ա. Աբրահամյանը,- տեղի է ունենում Լ ձայնորդի անկում: Պետք է ասե, որ այդ երևոյթը լայն տարածում ստացավ և դարձավ տիրապետող, բայց այդ անցյալում էլ կար. օրինակ՝ Հովհաննես Թումանյանի մոտ գտնում ենք նաև առանց Լ ձայնորդի ձեզ՝ «...Նա ձեզ էնքան շատ է սիրում... Նա չի թողնի ձեզ սոված»²: Լ ձայնորդի անկման ժամանակը մատնանշելու նպատակով Ա. Աբրահամյանի կողմից քերված այս միակ օրինակը՝ վերցված Հ. Թումանյանից, գուրկ է հավաստիությունից, որովհետև քաղված է հեղինակի 1939 թ. Սրիատորյակից, որտեղ այդ ձեզ ամենայն հավանականությամբ տեղ է գտնվել անզգույշ խմբագրման պատճառով: Թումանյանի Երկերի զիտական հրատարակության մեջ անձշտությունը վերացված է «Նա չի թողնի ձեզ սոված»³: Հասկանալի է, որ այս մասնավոր խնդրին ավելի կոնկրետ պատասխան տալու համար հիշատակված լեզվաբաններն ստիպված պիտի լինեին ուսումնասիրել բավական ծավալուն գրականություն, որ եթե ոչ անհնար, ապա այնքան էլ արդյունավետ չեր լինի: Բայց ահա այդ հարցին անդրադառնում է Ա. Մարգարյանը Մ. Նալբանդյանի լեզվի ուսումնասիրության կազմակցությանը: Նա նպատակ է դրել պարզել, թե Մ. Նալբանդյանն ինչպես է նպաստել նոր գրական լեզվի քերականական իրողությունների ծավալմանն ու զարգացմանը և այժմ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ, հասկանալի պատճառով, կանգնել է որոշակի դժվարության առջև: Նա ստիպված է լինում իրողությունը ներկայացնել Մ. Նալբանդյանի ստեղծագործության ընձեռած հնարավորությունների սահմաններում: Բայց մեզ գոհացուցիչ չի թվում նրա վկայությունը, ըստ որի իրը Նալբանդյանն իր լեզվի զարգացման երեք շրջաններից առաջինում և վերջինում ժխտական դերբայն օգտագործել է անորոշ դերբայի ձևով (չի խոսի, չի կարդա), իսկ միջին շրջանի շորջ

¹. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայր և խոնարհման տեսություն, 1953, էջ 235:

². Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, էջ 260: Ընդգծումը մերն է:

³. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1, 1950, էջ 111:

Երեք տարվա ընթացքում՝ այժմյան, գրական ձևով¹: Սա անհավանական է թվում, մանավանդ որ ժխտման դերբայի՝ Նալբանդյանի կողմից գրական ձևով օգտագործման և ոչ մի օրինակ չի բերված:

Ո. Իշխանյանը նշելով, թե Վ. Տերյանի «Մթնշաղի անորջներ»-ում սովորականը Ենթադրական եղանակի ժխտական ձևերում դերբայն առանց 1-ի գործածությունն է, չի կամենալ ձևը դեպք է համարում: Նա գրում է. «Անորջներում» ունենք չի կամենալ դեպքը («Չի կամենալ նա վերստին քեզ տանջել») ²: Բայց Տերյանի բանաստեղծություններում Ենթադրական եղանակի ժխտական ձևերը լով գործածելու այլ փաստեր էլ ենք նկատում: Օրինակ՝ «Չեն խավարի խավարում»³: «Չեմ լսի նոցա ձայները...»⁴:

Ենթադրական եղանակի ժխտական ձևերի գործածության հարցում Թումանյանի վերաբերմունքն ստույգ ձևով ներկայացնելը որոշակի դժվարություն է ներկայացնում նաև հետևյալ պատճառով: Վերը նշվեց, թե ինչպես բանաստեղծի միհատորյակում անհիմն ձևով տեղ է գտնած եղել «չի բողմի» (փոխ. չի բողմիլ) ժխտական ձևը: Բայց դա եղակի դեպք չէ: Ինչպես ուշադիր դիտարկումն է ցույց տալիս, Թումանյանի ստեղծագործությունների տարբեր հրատարակություններում, նույնիսկ գիտական հրատարակություննե-

րում այժմ մեզ հետաքրքրող որոշ իրողություններ տարբեր ձևով են ներկայացված, թոյլ են տրվել անձշտություններ, անհարկի միջամտություններ, որոնց մի մասը, ինչպես ստորև ցույց կտրվի, մինչև օրս էլ պատճառ է դառնում, որ ճիշտ չընկալվի հեղինակի ասելիքը: Նախ նշենք Ենթադրական եղանակի ժխտական ձևերի ոչ ճիշտ ներկայացված մի քանի ձևեր:

Սի՞թե, հայրիկ, ինձ մոռացան,
Ել չեն բերի հուրն անշեց⁵:

Ընդգծված բայաձեկի գործածությունը ճշգրտվել է բավական ուշ, բանաստեղծի Երկերի երկրորդ գիտական հրատարակությունում. «Ել չեն բերի հուրն անշեց»⁶:

-Ո՞հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սեր
Ճար չի անիլ իմ սըրտին,
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Չեք դիմանալ էս դարդին...

Այսպես է Թումանյանի 1903թ. Թրիլիսիում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում¹: Իսկ 1908թ. Բարվում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում ընդգծված ձևերը տեղ են գտել առանց 1 վերջնահնչյունի՝ «Ճար չի անի», «Հեք դիմանա»²: Կարո՞ղ ենք ասել, թե 1-ի կրճատումները Թումանյանի կողմից են կատարված: Դժվար է հարցին դրական պատասխան տալ: Հայտնի է, որ Թումանյանը դժվար է եղել Բարվի ժողովածուի հրատարակությունից, որտեղ անհարկի խմբագրումներ են կատարվել հրատարակչի կողմից, առանց Թումանյանի գիտության: Սի ձեռագիր պատառիկի վրա Թումանյանն այսպիսի դիտողություն ունի. «Խսալներով լիքն է Բարվի

¹. Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեություններ, 1957, էջ 199:

². Ո. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, էջ 330:

³. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Երեք հասորով, հ. 1-ին, 1960, էջ 182:

⁴. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2-րդ, 1973, էջ 169:

⁵. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1-ին, 1950, էջ 295:

⁶. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2-րդ, 1990, էջ 124:

¹. Հ. Թումանյան, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903, էջ 34:

². Հ. Թումանյան, Բանաստեղծություններ, Բարվ, 1908, էջ 50:

հրատարակությունը»³: Մեզ միանգամայն հավանական է թվում, որ Բարձի ժողովածովի մեջ տեղ գտած «ճար չի անի», «չեք դիմանա» ձևերը հրատարակության կողմից կատարված «ճշգրտումներ» են: Բանաստեղծի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ տեղ են գտել «ճար չի անի», «չեք դիմանա» ձևերը(h.1, 1950, էջ 134), իսկ երկրորդ գիտական հրատարակությունում առաջինը գործածված է լով («ճար չի անի»), իսկ երկրորդը՝ առանց լ-ի («չեք դիմանա»)⁴:

Միևնույն ստեղծագործության մեջ նույն բայի Ժխտական Ենթադրականը երկու ձևով ներկայացված լինելու առումով առանձնապես ուշագրավ փաստեր կան «Խոսող ծովկը» հերթաբում: Այդտեղ կորչել, հասմել բայերի Ենթադրական Եղանակի Ժխտականը ներկայացված է և անորոշ, և Ժխտման դերայներով: «-Ի՞նչ թզուկ, ծնկան ծերին աքլոր ծուլուդու կանչի, ծենք ականջը չի հասմի»⁵: «-Ի՞նչ փոքրիկ, նապաստակը մի ծայրից մյուսը չի հասմի»⁶: «Լավություն արա ո թեկուզ ջուրը զցի՝ չի կորչի»⁷: «... ջուրը զցի՝ չի կորչի»⁸:

Մինչև այժմ ուշագրության արժանացած Ենթադրական Եղանակի Ժխտականի գուգահեռ ձևերը, անկախ այն բանից դրանցում անորոշ դերայը վերջադիր լով է ներկայացված եղել, թե առանց դրան, խոսքի բովանդակության վրա չեն անդրադառնում: Բայց Թումանյանի արձակ ստեղծագործությունների, հատկապես հոդվածների տպագրության ժամանակ տեղ են գտել Ենթադրական Եղանակի նաև այնպիսի Ժխտական ձևեր, որոնք նախադասության միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով են ներկայացնում: Այդպիսի գործածություն Ենք նկատում «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում: Նշելով, թե դեռ 18-րդ դարի սկզբում Խորայել Օրին, հայոց բարձր հոգևորականությունը, մելիքները բանակցության մեջ են մտել Պիալցի գերմանական կուրֆյուրստի հետ, խնդրել են աջակցել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից ազատելու գործում, Թումանյանն ավելացնում է, թե այն ժամանակ, այսինքն՝ 18-րդ դարի սկզբում «գերմանական կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, թե եվրոպական պետությունները հականարս շահեր ունեն Արևելքում Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա...»¹: Մի՞թե եվրոպական պետությունները 18-րդ դարի սկզբին կամ դրանից առաջ հայկական հարցը քննարկման առարկա են դարձրել և չեն միաբանել: Կարծում ենք՝ ընդգծված ձևը տպագրական վրիպակի հետևանք է, որ տեղ է գտել Թումանյանի Երկերի ինչպես առաջին, այնպես էլ Երկրորդ(h.7, էջ10) գիտական հրատարակություններում: Ամենայն հավանականությամբ ընդգծված այդ ձևի փոխարեն Թումանյանի կողմից գործածված է եղել՝ չեն միաբանի, այսինքն՝ գերմանական կուրֆյուրստն Խորայել Օրուն և նրա համախոհներին ասել է, թե եվրոպական պետությունները չեն միաբանվի հայկական հարցի վրա (և ոչ թե՝ չեն միաբանվել): Եվ մեջքերման անմիջական շարունակությունն էլ հօգուտ այսպիսի ըմբռնման է խոսում: Ավելացնենք նաև, որ հայտնի իրողություն է, որ Թումանյանի ժամանակներում Ենթադրական Եղանակի Ժխտական ձևերում անորոշ «դերբայի և լորրդ միշտ փոխվում է և ձայնավորի»³: Այսպիսի բազմաթիվ գործածություններում: Նշենք դրանցից մի երկուը. «...Ղ.Աղայանը,մեր

³. Գ.Ա.Թ, Թա, թ. 1272:

⁴. Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.1,1988, էջ 188:

⁵. Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.5, 1994, էջ 189:

⁶. Նոյն տեղում:

⁷. Նոյն տեղում, էջ 190:

⁸. Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ.3-րդ, 1949, էջ 161:

¹. Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7,1995, էջ 10: Ընդգծումը մերս է:

². Տե՛ս Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 227:

³. Մ.Արեգեան, Աշխարհաբարի բերականութիւն, 1906, էջ 131: Ընդգծումը հեղինակին է:

աշխարհի խեղուկ մթնոլորտից նեղվելով եթև աղաղակում է թե՛ քիչ է մնում փախչեմ և՝ գրականությունից, և՝ մեր միջավայրից, չի փախչի ու շատ ուրախ օրեր կտեսնի...»⁴: «Իսկի մարդն էլ չի եղ բանին հավանիլ, - համաձայնեց Գորորը»⁵:

Առանց մանրամասնելու նշենք, որ վրիպակի հետևանքով ի լծորդի փոփոխություն տեղ է գտել Թումանյանի նաև մեկ այլ հոդվածում, հետևյալ նախադասության մեջ. «Սակայն նորա չեն խարել ընթերցող հասարակությանը և հայոց մուսայի համար ընդհանուր արհամարհանք են վաստակել»⁶: Ավելի ճիշտ մոտեցում է ցուցաբերված եղել Թումանյանի Երկերի առաջին գիտական հրատարակությունում, որտեղ ընդգծված բայաձևը ներկայացված է «չեն խարիլ» ձևով⁷: Նորա, այսինքն՝ բանաստեղծի հոչակ ունենալու ցանկությամբ տարված ապահնորհները, որ «հանգեր թիւելով» ուզում են Ոլիմպոս բարձրանալ, չեն խարիլ (= չեն խարի), չեն կարող խարել ընթերցողին:

Արտաստոր երևոյթ չէ, երբ գրական ճանաչված քերականական ձևը լեզվի զարգացման ընթացքում իր տեղը զիջում է բարբառային, խոսակցական համարված ձևին կամ հավասար գործածություն ունեցող գուգածներից մեկն է հաղորդ հանդիսանում՝ նվաճելով գրական նորմայի իրավունք: Արևելահայերենում զարգացման այդպիսի ընթացք է ունեցել, օրինակ, օժանդակ բայի եզակի թվի 3-րդ դեմքի ժմտակն ձևը: 1906թ. հրատարակված իր «Աշխարհաբարի քերականություն» աշխատության մեջ Մ.Աբեղյանը հետևյալն է նշում. «Ներկայ ժամանակների մեջ եմ օժանդակի բացասական երրորդ դեմքը չէ յաճախ ժողովրդական ձևով դառնում է չի. ինչպես՝ չէ ասում, չէ ասել, չէ ասելու դառնում եմ՝ չի ասում, չի ասել, չի ասելու»¹: Բայց այժմ, ինչպես հայտնի է, վերջին ձևերն են գրական ճանաչվում: Նոյյանպիսի ընթացք է ունեցել նաև ենթադրական եղանակի ժմտական ձևերի զարգացումը: Արևելահայերենի առաջին քերականագետների կողմից զավառական բարբառներին, խոսակցական լեզվին բնորոշ ճանաչված չեմ սիրի, չեմ կարդալ և նման ձևերը հարդող հանդիսացան գրական համարված չեմ սիրի, չեմ կարդալ և նման ձևերի հանդեավ: «Գավառական բարբառներում, - գրում է Ս. Պալասանյանը, - երբեմն 1 տառը բաց է թողփում չեմ խօսի, չեմ ուշանայ, չեմ ասի, չի գնա.- որ ոմանք գրաւօրի մեջ էլ են գործածում»²: Նոյյան է արձանագրում նաև Ս. Աբեղյանը. « Անորոշ դերբայի 1 վերջաւորութիւնը խոսակցական, երբեմն և գրական լեզուի մեջ յաճախ դուրս է ընկնում: Օրինակ՝ չեմ գրի, չեմ խօսի, չեմ գնա(1), չեմ զարմանա(1) »³:

Ընդհուած մինչև 20-րդ դարի 20-30-ական թվականները ենթադրական եղանակի ժմտական ձևերը զուգադիր գործածություն են ունեցել, և բնականաբար նման գործածությունը պիտի արտացոլված լիներ նաև Թումանյանի ստեղծագործություններում: Պատմական մոտեցում ցուցաբերելու դեպքում միայն կարելի է ժամանակի գրական նորմայից շեղում դիտել ենթադրական եղանակի ժմտական ձևերի լով կազմությունները, որոնք՝ որպես ժամանակի գրական նորմայի դրսևորումներ, բավական բարձր հաճախականություն ունեն Թումանյանի գեղարվեստական և հրատարակախոսական ստեղծագործություններում: Նշենք համապատասխան մի քանի օրինակներ. «Էլ չեն խարիլ մեզ նրանց մեքենաներն ու ճարտար արվեստները» (հ. 7, էջ 148): «Կստվորի, հո էրպես չի մնալ...» (հ. 5, էջ 41):

⁴ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1994, էջ 287:

⁵ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, 1994, էջ 12:

⁶ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1994, էջ 13:

⁷ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4-րդ, 1951, էջ 9:

¹ Ս. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 133:

² Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1974, էջ 160:

³ Ս. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 132:

«ՏԵղն ընկած տեղը ոչինչ չի խնայի նրա գործին վնասելու» (հ. 6, էջ 223): «Էդ տեսակ կարծիք չի լինի» (հ. 7, էջ 41):

Ահա և ենթադրական եղանակի ժխտական ձևերի առանց լի կազմություններ. «Ենպես չեմ անի, որ բռնի» (հ. 5, էջ 63): «Հյուր չե՞ր բնդունի ձեր տունն էս զիշեր» (հ 5, էջ 188): «Չենք բռդնի որ չենք բռնի» (հ 5, էջ 189): «Վախենում է մի «խաթարալա» չի դուրս գա միշից» (հ 6, էջ 8) և այլն:

Այսպիսով, Թումանյանի ստեղծագործություններում ենթադրական եղանակի գուգադիր ժխտական ձևերի գործածորյունը (չեմ կարդալ, չեմ գրիլ - չեմ կարդա, չեմ գրի) պայմանավորված է ժամանակի արևելահայ գրական լեզվի զարգացման վիճակով և ոչ թե անհատական մոտեցման հետևանք է: Այդ գուգադիր ձևերը ճշգրտորեն արտացոլված չեն հեղինակի երկերի նույնիսկ գիտական հրատարակություններում:

Ե խոնարհման բայերի ենթադրական եղանակի ժխտական որոշ ձևեր ոչ ճիշտ ներկայացված լինելու պատճառով (չեն միարանել - փոխանակ՝ չեն միարանիլ և այլն) Թումանյանի կողմից արտահայտվող միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով է ներկայացվել:

Употребление параллельных отрицательных форм сослагательного (гипотетического) наклонения в произведениях Ов. Туманяна

Резюме

C. Мелконян

В произведениях Ов. Туманяна употребление параллельных отрицательных форм сослагательного наклонения (չեմ կարդալ, չեմ գրիլ - չեմ կարդա, չեմ գրի) обусловлено состоянием развития восточноармянского литературного языка в тот период, а не является следствием индивидуального подхода.

Эти параллельные формы не точно отражены даже в академических изданиях автора. По причине неточной передачи некоторых отрицательных форм сослагательного наклонения глаголов "Ե" спряжения (չեն միարանել-вместо չեն միարանիլ) мысль, выраженная Туманяном, представлена двусмысленно, просто неверно.

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Վ. ՇՈՒԾԱՆՅԱՆԻ «ՄԹԻՆ ՊԱՏԱՆՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

Վ. Շուշանյանի «Մթին պատանություն» վիպակը եղենին հաջորդող ժամանակահատվածում ստեղծված ավագութահայ գրականության լավագույն երկերից մեկն է: Այն յուրահատուկ ամբողջություն է կարոտի ու նահանջի և վերադարձի ու որոնման՝ ճակատագրորեն հայերին վերապահված գրականությունների: Բնշանու նշված ողջ գրականության, այնպես էլ խնդրո առարկա վիպակում գերիշխող է նախատեղծ մաքրության մի ընդհանուր տրամադրություն, և դա հասկանալի է, քանի որ խոսքն անդանալիորեն կորած հայրենական տաճ ու հարազատ եզերքի մասին է, որոնցից դուրս ամեն ինչ օտար է: Կենսագրական այս հրաշալի վիպակի պատանի հերոսի համար հարազաների տունն իսկ օտար է. «օտարի տաճ մթնոլորտում» նա չի կարող հոգու անդորր գտնել, մինչդեռ «հոգվոյն խորը միշտ արքուն էր իր հայրենի տաճ պատկերը»:¹

Հեղինակը մի վերին շնորհով անընդմեջ վերաբարություն է հայրենի տաճ անխամրելի պատկերը, որը կրկին տեսնելու համար «արտևանունքները խոնարհելու պետք իսկ չունեն», և ընթերցողը տեսնում է պատկերագրված «զայնատարած թզենին, որ դրացի պատին կիննվեր.... Վարը՝ ածոնի մը եզերքը ճերմակ շահապակներն կային, որ խունի ու անմահություն կրուրեին: Առանձին, այդ շահապակները կրավեին ողջ զարունը բուրավետելու համար» (193):

Վերիուշ է և որպես այդպիսին՝ հուզիչ ու գեղեցիկ, իսկ որպես հայրենի տաճ ու մանկության վերիուշ՝ առավել գեղեցիկ, որտեսն հասկանալի է «փոքրիկ սրբազնություններով զայն երազին մոտեցնելու» հեղինակի ձգոտումը:

Այդ «անցյալը ամեն վայրկյան կլոստար ին վերքի մը պես», սակայն ողջ սերնդի դրումների և ապագայի ձգուման միակ հուսալի օրեանն էր, որ «հակառակ իր պատճառած վերքերուն՝ ներսեն կլոսսավորեր» հանկարծակի որբացած բյուրավոր պատանիների և երիտասարդների, ընդհանրապես ամեն մի վերապրողի:

«Ո՞վ կրնա երքեկցե երկու հայրենի տուն ունենալ» ճարտասանական իր հարցին հեղինակը տալիս է սահմանում արժեք ունեցող ապառիչ պատասխան. «Մարդուն մը համար մեկ հայրենի տուն գոյություն ունի, որ կրնակին ողջ սիրելիներն ու սիրելի մեռելները» (193):

Այս գիտակցությունն է ապրեցնում սերնդին, որ «ուր որ ալ ըլլար կտեսներ հեռուեն՝ վերաբարձի շրեա աստոր»: Այս դեռասի տողոց ոգևորված բազմությունը, «որ խումբ-խումբ գեղեցկության տաճարին դրուզ կը վազե՞ ներս մտնելու անհամբեր»², ցավով հասկանում է. «Ոչ, աշխարհը նույն աշխարհը չէր ու վերադարձ հաղթական ոչինչ ուներ և ոչ ոք կրնար իրեն վերադարձնել՝ ինչ որ կորուսյալ էր առհավետ» (243): Ս. Արքահամյանը, խոսելով 1920-30-ական թվականների սիյուռքահայ արձակի նասսին, նշում է, որ «զեզուն բնաշխարիկ և միակ իմաստային-հոգենոր հանգրվանն է, որով պարզում էր հայ գրողը և պատմական-կիրառական, և հոգենոր արժեքային իր եռթյան «կողմնորոշումը»»³: Ընդարձակելով միտքը կարելի է ասել, որ լեզուն իր բնաշխարից արտաքսված հայության ողջ մնացած բնեկություն միակ ատաղճն էր, միակ օրեանը, ազգապահպան զորությունը, ցավերի բալասանը, ի վերջու հայրենի տունը:

Նաև հոգենոր որբությամբ տառապող Վ. Շուշանյանի «Մթին պատանություն» վիպակը գեղարվեստական լեզվի անօրինակ գեղեցիկ նմուշ է, այն ունի իրոք շողարձակ մի լեզու՝ նվազում ու աստղածոր, բայց ներկայացնում է մայրենի լեզուն ու բարբառ՝ իրքի «հիշատակաց երկրի» յարադանից չեղծված ու անխորտակ մնացած միակ սյունը, որն այժմ պահպանության ու պաշտպանության է կարոտ:

¹ Վ. Շուշանյան, «Մթին պատանություն», Եր., 1983, էջ 193: Այսուհետ մեջքերումների էջերը կնշվեն վիպակագծերով:

² Հ. Միքունի, «Նաևսարդ» տարեգիրք, Պուրքեց, Ա.

³ «Հայոց լեզու գրականություն», Եր., 2003, 1-2, էջ 35:

Հեղինակ-հերոսը, հիշելով իր և Արուսի գրույցները գրականության հավերժական արժեքների և լեզվի մասին, գրում է. «Մասամբ այս հաճախակի խոսակցություններուն է, որ կայարարիմ հայերենի ուժեղ կիրք» (282): Կամ մի՞թե պատահական է օտար բառերի հայերեն տարրերակները, թևակիր խոսքեր, շրջատույթներ վիպական հորինվածքի մեջ մոցնելը, ընդ որում այդ ամենը «հիշատակների երկրի» կարուսով ապրող երիտասարդների շուրջերին է, ինչպես՝ «Օփերային հարկ է քնարախաղ ըսել, ենքրիկին՝ դիպախաղ, մերտիմն՝ մեղտի, մարիներին՝ ցերեկույր, նաև

- Կավոռչին հայերեն ի՞նչ կըսեն...

- Փարիզյան ստահակ:

Այս. «Ի՞նչ է Արփիլեսի կրունկը: Ո՞վ է Պրոմեթեոս շղթայալ: Ո՞վ էին Թրուպասոորները» (282-283):

- Քորերին ի՞նչ կըսեն հայերեն:

- Կարենի է վայելչասեր բարօմանել, կամ պճնասեր, պշրասեր, պշրոս (283):

Հայրենական հող ու եզերը կորցրած հայր հոգևոր հայրենիքի սահմաններն է նախանշում, և դրականի ու բացասականի բաժանարարը մայրենի լեզվի հանդեպ վեռաբերմունք է: Պատահի Զարեհի սերը Բարկենի հանդեպ իր բացատրությունն ունի. «Զիս սիրելու զիսավոր պատճառներեն մեկն ալ՝ իր մանուկ, բայց անըմբունելիորեն խորունկ սերն էր դեպի գրականությունն ու հայ լեզուն» (260):

Հայոց լեզվի ոչ արժանավոր ուսուցչի մասին նաև խոսում է առանց դույզն համակրանքի «...Այդ հանդիսավոր ավանակը ոչ միայն չէր ջանար մեր քաղցր լեզվին կրակը ձգել մեր արյան մեջ, այլև կհանդգներ ծաղրել մեր բարախուն սերը» (265):

Ահա թե ինչու «քաղցր լեզվի» ազնվագոյն մշակը զարմանալիորեն շքել իր պատկերապնակից ընտրել է բոլորովին ոչ նախանձենի համենաստություն ուսուցչի կերպարն ամբողջացնելու համար. «Երբ հասավ դժվար տողին՝ անմիտ ժայիտ մը կաղամքի պես բացվեցավ մորութին մեջ...» (265):

Ուշադրություն դարձնենք հակադրությանը. «Թուվմաս Թերզյանի մեկ գոհարի պես սիրուն ոտանակորը զրի կառնենք: Այդ ծերունի խրտվիլակը կկարդար զայն առանց ջերմության, առանց սիրո...» (265): Մինչդեռ ինքը՝ հեղինակը, ոչ միայն սեր ու ջերմություն է տածում մայրենի բառ ու բանի հանդեպ, այլև նրա անարատության պահպանման մեջ է պատկերացնում հայ հոգու պահպանումը: Իր հերոսուհու լեզվի մասին նա գրում է. «Առանց նասնավոր ճիզի էր, որ կխոսեր այդ ճիշտ հայերենով ու առանց դույզն ցուցանոլության էր նաև, որ հրաժարած էր քաղցրի շեշտեն ու կոպիտ ասույթներեն: Ու կարծես ձայնն իսկ կիարմարեր իր լեզվին մաքրության ու զինջ շեշտին» (187): Հասկանալի է, որ սա հեղինակի լեզվական դավանանքն է և վիպակի բնարուիս, պերճ հայերենը դրա վկայությունն է:

«Մին պատանություն» վիպակի լեզուն գեղարվեստական լեզվի, այսինքն՝ լեզվանական հնարավորությունների հմուտ գործածության հրաշալի նմուշ է, ճշմարիտ լեզվական արվեստ, որը՝ որպես այդպիսին, նախ և առաջ գեղագիտական արժեք ունի. այն արևագոյնի ու լուսներանգի ներքափանցումներով՝ գեղանկարչական, «ծառերի ծափով» և բնության կենդանի շնչառությամբ երաժշտական մշակույթների առնչություններ է բացահայտում:

Հայտնի է, որ գեղարվեստական մտածողությունն իրականացվում է լեզվանական միջոցների և հնարամքների շափակող ու դիպուկ կիրառությամբ, որը և բնութագրական է քննարկվող վիպակի լեզվի համար. «Շոշանյանը զարմանահարույց առաստությամբ գործածել է լեզվի պատկերավորության և արտահայտչականության միջոցներ, դրանք շատ տվել պերճ զարդերի նման, դրանց առաստությունը, սակայն, չի հոգնեցնում, չի ծանրաբեռնում խոսքը, ընդհակառակը, այն մոտեցնում է արձակ բանաստեղծության:

Բատի հմուտ, վարպետ գործածությունն արդեն խոսքի բանաստեղծականացում է, իսկ նման գործածության օրինակներ կարելի է շատ վկայակոչել, այսպես՝ հեղոսուհու գեղեցկության չափը ներկայացրել է «համբուրելիորեն սիրուն» և «երիտասարդությամբ զվարք» արտահայտությունների վարպետ բառագործածությամբ (280), կամ աղջկական հուշիկ պատասխանը բնութագրել է «մնջեր» բայով, որը տվյալ դեպում անփոխարինելի է. «Այո՛, մնջեց հազիվ լսելի ձայնով մը» (281), նաև որքան խո-

սուն է «խառնագնաց կիոսեր» կապակցությունը (285) նախադասության գեղարվեստական նպատակադրումն իրականացնելու գործում: Հաճախ Շոշանյանը գեղարվեստական տարրեր հնարանքներ համատեղ է գործածում, կուտակումներ է ստեղծում, և այդայսով կարծեն անհետանում է սահմանագիծը գեղանկարչության, երաժշտության և բանաստեղծական խոսքի միջև: Բերենք օրինակներ. «Որքան հուզիչ ու անուշ էր այդ երգը իր շրբներուն վրա: Ինձ թվեցավ, թե երջանկութենես այսին տկարանամ: Ապշահար մտիկ կը նեփիք զայն ու ինձ կրվեր, թե զարնան խորունկն էի, թե եռվը մեղմ ալիքներով կսուրար մարմանդներուն մեջեն, թե զնայլեի ծառեր իրենց կատարներով կհամբուրեին իրար: Գուցե զիշեր էր ու կայծողիներ պճտուն լույսեր կարձակեին» (281):

Մակդիմների, համեմատության, հակադրության, փոխարերության համատեղ գործածությամբ հեղինակն ստեղծել է զգացմունքների և վերաբերմունքի ամբողջական համակարգ, որը նաև լավագույն ծառայում է կերպավորման արվեստին: Այդ նույն գեղարվեստական խնդիրն են լուծում աննախադեպ քառորդ, երդեմն անակնկալ մակդիմները, որոնց սուսկ բվարկումն անգամ անհնար է: Եթե քաղցր մանկություն, աղու (քաղցր) ձայն, զարնանային դեմք կապակցություններում ընդգծված մակդիմները գեղագիտական արժեք ձեռք են բերում հեղինակի վարպետության շնորհիվ, ապա ինքնին վարպետություն է ներքոնիշյալ մակդիմների գործածությունը՝ սակավիկ նը արև (801), երփիներզյան ծաղիկ (305), սանձարեկ սիրտ (309), իհացիկ ապշություն (310), խարխուլ անձրև (170), ապստամբ մազեր (178), թերև աճապարանք, տաք դեմք (173), արծաթավառ ծառեր (181) և այլն: Անհ թե որքան բրբուն են աղմկարար, որոտագոռ, զարնան առաջին ալեսիսը բերող մակդիմները «հեղինակները» զոյականի համար (295), կամ որքացած պատաճնեների կյանքը «իին ու շրեղ քաղաքին մեջ» արձակունակ էր, պատաճությունը հապաղած (170): Հոգերանական հրաշալի զուգորդումներ են ստեղծում պղտոր (աշուն - 171), համեստ (տրտություն - 177), հալածական (տառապանք - 180) մակդիմները, մինչդեռ դույզն մակդիմը «մայրություն» (178) քառի համար խորինաստ գործածություն է, որը բացահայտում է և Բարկենի խոր ցավը, և մեծ մոր կերպարը, և ընդհանրապես մայրական գորովից զրկված պատաճնեների հոգու տառապանքը: Նման բովանդակություն ունեն անհորիզոն հոգիներ, խոպան հոգի, փափուկ տրտություն, անկարեկիր ժամանակ, անհանդարտ հոգի, կիրակնօրյա պատաճնեկություն կապակցություններում ընդգծված մակդիմները:

Զանի որ մակդիմը նաև խոսքի հեղինակի վերաբերմունքի դրսւորման լավագույն միջոց է, ապա հետաքրքիր կինի համեմատել կապակցությունները՝ ըստ այդ հանգամանքի, այսպես՝ վարկածային միամտություն, հանդիսավոր ապուշներ, խոշորածայն, աղմկարար գորոգություն և հեղինակավոր ծերություն, հանդարտ ու գորովալի գեղեցկություն, աստվածածեմ ու աստվածագեղ մարդ, տերունական օր, լուսավորչական ձայն, արքայական ու զվարք առավոտ կամ ապերասան մանկություն, արեգակի վաշկատան ճառագայթներ, անպատկառ պեխեր և այլն:

Բերված մակդիմները միանգամայն ինքնատիպ են, և դրանցից շատերը (օր՝ գորեղ կարոտ) հուզահոգերանական մեծ ներուժ ունեն: Լ. Եզկելյանն իրավացիորեն նկատել է, որ «Նման ինքնատիպ մակդիմների ընտրությամբ արտահայտվում են ոչ միայն հեղինակի կամ որևէ կերպարի ընկալումն ու պատկերացումները կյանքի առանձին երևույթների, իրականության նկատմամբ, այլև ներկայացվում նրանց համապատասխան վերաբերմունքն ու զնահատականն այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ տվյալ իրավիճակում»⁴: Անհ բերված կարծիքը հաստատող մեկ դիպուկ օրինակ ևս «...Զանի որ իր մորք աշքերը ուներ, մորք իրիկնային ժամերու գորովով լուսերինյալ աշքերը» (171):

Վիպակի լեզվում արտահայտչականության տեսակետից անփոխարինելի դեր են կատարում Շոշանյանի կերտած բազմաթիվ և բազմաբնույթ համեմատությունները՝ ամենատարբեր հարիմանատներով: Ըստ ասելիքի, ըստ խոսքի բովանդակության՝ և պարզ են, անմիջական համեմատվում են հայտնի, ծանոթ, ամենօրյա երևույթներ և առարկաներ, և գեղարվեստական տեսակետից պերճ են, ունեն վեմ խոսքի այն նակարդակը, որն ընդհանրապես բնութագրական է վերհուշի ու կարտու հոգեհույզ գրա-

⁴ L. Եզկելյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 337:

կանոթյանը, մասնավորաբար իրեն՝ Վազգեն Շուշանյանին: Երբեմն ժողովրդական պարզ խորի հաճգոյն կազմում է համեմատություններ «պես» կապով՝ դրա մեջ դնելով, սակայն, կենդանի բրիո, բնականություն, օրինակ՝ «Պատերազմը, կերպով մը, անսպառ լուսանցքի մը պես էր, որ կյանքի մի էջ մը կրածն մյուս էջն ու մահը՝ երկար բացակայություն մը» (175), կամ «Գյուղին դեռ չնոտեցած՝ ձիերու զվարք վրճյունը կրախեր դեմքիդ, ցնցելով քեզ, վրադ ճգելով տոք հուշերու արու ծիծաղը, անապատային թերև կապարի մը պես» (173): Ուշադրություն դարձնենք նաև փոխարերություններին, մակդիրներին, որոնք նույնքան նոր ու բարմ են, որքան և համեմատություններ: Ապա՝ «Չեռքերը...կիշեին սալորենիին բունը՝ որուն կալվեր խոլ սիրեկանի մը պես» (173): Եթե հարիմասոր փոխվում է, համեմատության եզրերը համապատասխան հնչեղություն են ստանում», «Եթե կը ընար շրբները բանալ, բառերը կրնային գոռավեն վազել ջրվեժի մը սահանքներուն պես» (178), «Քր հեռավոր երևակայության հորիզոններուն վրա՝ այդ աստվածածեմ ու աստվածագել մարդը, որը օր մը նշանած էր, անգուական տեսիքի մը պես, խորին խորհուրդի մը և հրաշքի մը պես էր» (189,):

Որքան վսեմություն կա վերհուշի հերթական զեղումից բերվող հետևյալ համեմատության մեջ «Պատանի աստվածներու պես կննչեին, իրենց ճակատները լուսնկային» (182): Իհարկե, բացարձակ իմաստով նմանություն չկա նկարագրվող երևոյթների միջև, սակայն բացառիկ ու անվեպ ներքնատեսությամբ օժտված գրողը ի հայտ է բերում սովորական աշքի համար անտեսանելի նորաքելեր:

Ինքնարուխ ու բարձրարվեստ այս լեզուն ենթադրում է ամենատարբեր կառույցների համեմատություններ: Ահա երկու համեմատություններ, որ տարբեր են կազմությամբ. երկրորդը մի տեսակ ազատ համեմատություն է, որ քննուշ հուզականություն է հաղորդում խոսքին. «Սոռաջին անգամ չէր, որ երևակայությունը շեն մտրակի մը պես կատրար ազատության ճամբաններն: Ու վերադարձի զաղափարը միշտ հարսանեկան շրջազգեստի փրկութներուն, ճերմակ ժանյակներուն հետ հեռավոր առնչություն մը ուներ» (170):

Նոյնային առանձնահատուկ, այսպես ասած, նկարագրական համեմատությամբ շնորհալի գրողը առնչություններ է ստեղծում արտաքուստ միմյանց հետ չկապված երևույթների միջև. «Տաք դեմքով լսկուս մը կտուեր սիրո անընդրություններն տրտում երզը, որուն անարվեստ նիշերուն միջնեն, եթե սակավիկ մը ականջդ լարեիր՝ կրնայիր լսել հավերժական Տիրոջ այգիներուն զովքն ու երգ երգոցի Սուլամիթին սրտակեղեք զանգատը», ապա՝ «Որևէ գյուղ կրնայիր մտնել, կարծես թե Տիրոջը տունը ըլլար» (173), նաև՝ «...պատարազիշ քահանան, սրբուն համերձայլ կմերճնար խորանին, ինձ կրվեր, թե իրավես Քրիստոս կպատարագեր» (305)

Պարզապես անհնար է ընտրություն կատարել և չենքարկալ մեջքերումների զայրակությանը, մասնավանը, եթե պետք է մատնանշել կապը ասելիքի և լեզվառակի միջև: Հաճախ իրար հաջորդող պարբերություններն ասես կապվում են միևնույն այս միջոցի կիրառությամբ, և խոսքը գնալով զեղեցկանում է: Ահա մի օրինակ ևս՝ «Մեր քաղաքին արբյուրներուն պես՝ ողջ գիշերը կկարկաչն այդ ծածուկ ձայնը: Մեր քաղաքին սլացիկ ծառերուն պես՝ ողջ գիշերը կսարսա այդ պատկերը հոգիւս ջրերուն վրա:

Ու ինչո՞ւ միշտ զարմած քոչունի մը պես են, որ արշալույսին երկնքին խորը կուզե իր վերջին գեղգեղանքը արձակել՝ իր շունչը ավանդել առաջ» (294):

Ս. Մելքոնյանը ճիշտ է բնորոշում փոխարերության դիրք պատկերավորության միջոցների շարքում՝ մասնակիրաբար նշելով, որ «գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոցով այնքան բնույթ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխարերության օգտագործումով...»:⁵ Եթե հավելենք նաև այն, որ փոխարերության հիմքում ընկած երևույթների նմանությունը կարող է նաև անձնական վերաբերմունքի արդյունք լինել, ապա կարելի է ասել, որ հեղինակի գեղարվեստական մտածողության առաջնային ցուցանիշը նաև նրա կերտած փոխարերություններն են: Վ. Շուշանյանի խորի անհատականությունը վկայող հրաշալի փոխարերություններ կան «Միջն պատանություն» վկայական լեզվում, որի վերնագրի «միջն» բնորոշումն ինքնին խոսուն և տարրողունակ է:

⁵ U. Մելքոնյանը և այլն, Աղմարկներ հայոց լեզվի ոճարանության, Եր., 1984, էջ 93:

Տարբեր հարիմաստներով կառուցված փոխարերությունները շահեկանորեն ինքնատիպ են և այնքան ակնառու արժեք ունեն, որ մեկնությունների կարիք չկա: Ահա մի քանի բնորոշ օրինակ՝ «Արևելի ճամբաններուն վրա, երբ անորության հետ օրն ի բուն կովելով կհառաջանար, ինվը կվար դեմքը, արևը կիրկիզեր իր շեն մարմինը և որ որ ալ ըլլար կտեսներ հեռուեն՝ վերադարձի շքեղ աստղը» (173):

«Հիշատակնե՞ր, որքան անուշ է ձեր գինին», «Մանուկ մը, որ անեն առավոտ վերստին գյուտը կըներ երկրի ողջ գեղեցկության: Հիշատակնե՞ր, որքա՞ն, թերն է ձեր շղարշը վրաս» (295): «Կասնզի շատ կանուխեն իր արյունը կրաքախեր գարնան քայլերուն հետքերով» (91): «Ի՞ր բոլոր շարժումներուն մեջ՝ երկրին ծածուկ բանաստեղծությունը կար», «Գարուն կար նաև Արուսյակի շարժումներուն մեջ, զարուն կար անոր ձեռքերուն վրա» (191) կամ «...վերադարձը կերևներ..հարս ելած խնձորենիի մը տակ», նաև «Օք լուրջամբ կհավաքեր իր փեշերը» (171): «Ամեն ինչ շարականներու ալիքներուն վրայեն կհասներ իրեն» (194):

Ուշադրություն դարձնենք՝ «Փարերն անգամ տաք բռնկումներ ունեին» (161), «Արևի փշուրներ կան իր մազերուն մեջ» (294), կամ «...երկիրը կոկտեր ծափել» (193), «...մեկնեն պատերը կնախանջեին» փոխարերությունները սեղմ ու կուտ կառուցվածքով ինչպիսի արտահայտչականություն են հաղորդել խոսքին: Շուշանյանի կերտած փոխարերությունների արժեքը, անշուշտ, առարկաների, երևոյների, երանց որոշակի հատկանիշների ննանության գեղարվեստական ըմբռնումն է, և նկատելի է համեմատվող երևոյներից մեկի՝ իրենց համար ընդհանուր հատկանիշների և երևոյների՝ մյուսին անցնելը: Ահա այս երևոյթի դրսմումը այլ երբինաստի փոխարերություններում՝ «Կզգար թե դեռ ամիսներ շարունակ այս բոլոր բարի նարդիկը պիտի փորեին իր վերքերը» (180), կամ «Այլ ծածկված այդ դրան եւու, պզուիկ հանցավորի մը պես, դառն հիասքափություն մը մոլտաց» (185): «Սեծ մայր կրսե, թե երեսեա բույն կվարի» (193): «Զնրան դաժան զիշերներուն, երբ ինվը կոռնար դուրսը, խոշտանգելով ծառերը՝ քունի ժամը կրնա՞ր միբեն հնչել...» (193) և այլն, և այլն:

Քերված թե՛ բասային, թե՛ ծավալուն փոխարերությունները, միանգամայն նոր են, աննախադեպ, գեղեցիկ: Եվ սրանցով չի ամրողանում գեղագիտական հնարանքների համակարգը քննարկվող նյութի սահմաններում: Ներկայացված պատկերավորության միջոցներին իրենց անակնկալ գեղեցկությամբ և գեղարվեստական արժեքով չեն զիջում նաև արտահայտչականության միջոցները՝ հակադրություններ, ճարտասանական դարձույթներ, պատկերավորում, դիմանկար, բնանկար և այլն, որոնք առանձին ուշադրության են արժանի:

ИЗОБРАЗИТЕЛЬНО-ЯЗЫКОВЫЕ СРЕДСТВА В ЯЗЫКЕ ПОВЕСТИ В. ШУШАНЯНА “ТЯЖКАЯ ЮНОСТЬ”

Резюме

M. Хачатрян

В повести представлена национально-освободительная роль родного языка в постреволюционный период для всего осиротевшего поколения. Особенно выделяется образ духовной Армении.

Главной особенностью повести является автобиографичность, боль потери родного очага и Родины. Важнейшими стилистическими особенностями повести является точность художественного слова и образность мышления. В статье анализированы различные тропы – эпитеты, сравнения, метафоры, которые являются изобразительными средствами образной речи. Из лексических средств образности определены стилистические функции заимствований.

Լիլիթ ԱՎԵՏԻԿՈՎԱՆ

ՀՈՍՍՆԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՍԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

Լեզվի դարձվածային կազմում առանձնահատուկ տեղ ունեն համեմատություն – կայուն կապակցությունները, որոնք լեզվաբանական գրականության մեջ կոչվում են նաև համեմատական դարձվածային միավորներ (*ՀԴՄ*) կամ համեմատություն - դարձվածային արտահայտություններ։¹ ՀԴՄ-ների հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որն արտահայտում է մի առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության ու նրա հատկանիշի հարաբերությունը մեկ որիշ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ։

ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ են երեք անդամներ. համեմատության առարկան կամ սուբյեկտը, համեմատության հենակետը, որը պատկերավորության կրողն է և այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ սուբյեկտին, թե՛ համեմատության հենակետին։² Հնմուն. Եղիսան (1) ձկան պես (2) լուռ է (3)/ Եղիսան (1) լուռ է (3) ինչպես ձուկը (2): Աղջիկը (1) մոմի պես (2) հալվում է (3)/ Աղջիկը (1) հալվում է (3) ինչպես մոմը (2): ՀԴՄ-ների կազմում մշտական անդամներ համարվում են վերջին երկուսը։

Արդի հայերենի ՀԴՄ-ները կազմվում են պես և նման կապերով, այլև՝ չափ, ինչպես (*որպես*), *իբրև*, *ասես*, *կարծես*, *ոճց որ* համեմատական բառերով: Հնմուն. քարի նման լուռ, բոչունի պես ազատ, տաշեղի նման թերև, գրանիտի պես ամուր, մի բաժակ ջուր խմելու չափ հեշտ, քափվել ինչպես առատության եղջյուրից, իբրև մորից նոր ծնված, ասես որուս պարզ երկնրից, կարծես ասենեների վրա նստած լինել:

ՀԴՄ-ների առանձնահատկություններից մեկն է հոմանշային հարաբերությունների մեջ նտնելու կարողությունն է: Նրանցում քիչ են այն դարձվածքները, որոնք չունեն դարձվածային հոմանիշներ: Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կամ նոյնական են, կամ ունեն նրբերանգային, հուզարտահայտչական կամ ոճական և գործառական տարբերություններ։³

Դարձվածաբանական գրականության մեջ գոյություն ունեն դարձվածային հոմանշային տարբեր, այլև միմյանց լրացնող սահմանումներ։⁴ Առավել հիմնավորը և ամբողջականը մեր կարծիքով հետևյալ սահմանումն է. «Դարձվածային հոմանիշներ են այն տարակազմ և նոյնակազմ դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն նշանակությունը՝ միավորների ձևային պատճառաբանվածության անհամապատասխանությամբ և իմաստային նրբերանգների, ոճական-գործառական պատկանելության ու կապակցելիության հնարավոր տարբերություններով հանդերձ»:⁵

Այսպիսով, ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշներին հատուկ են՝ ա) տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը, բ) իմաստային ու ոճական տարբեր երանգներ արտահայտելը:

¹ *Л. И г н а т ь е в а, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразеообразующим компонентом «как» в современном русском языке (АКД), Л., 1976, стр. 3-4; Հնմուն. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 126, 261, 263, 271; Պ. Բեղիկյան, Ժամանակակից հայերենի ոչ վոխսաբերակամ կայտն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50 – 51:*

² *Ա. Խ ա զ ա ր յ ա ն, Ֆրազеология современного французского языка, М., 1987, стр. 112.*

³ *Վ. Ա ռ ք բ ե լ լ ա ն, Ա. Խ ա զ ա ր յ ա ն, Ա. Է լ լ ո յ ա ս տ ը ր յ ա ն, Ժամանակակից հայերենի ոչ վոխսաբերակամ կայտն բառակապակցությունները, Եր., 1979, էջ 201:*

⁴ *Հնմուն. Ս. Արքահամյան, Հայոց լեզու, Բառ և խոր, Եր., 1978, էջ 158: Ս. Սուրիանյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 270: Ա. Մոլոտկով, Основы фразеологии русского языка, Л., 1977, стр. 163; Ա. Назарян, Образные сравнения французского языка, М., 1965, стр. 8.*

⁵ *Ի. Կ ե ր ն ա շ ե վ ա, Ֆրազеология современного немецкого языка, М., 1970, стр. 81:*

Ա. Հոմանշից ՀԴՄ-ների դասակարգումն՝ ըստ իմաստային և ոճական - գործառական հատկանիշների: Դարձվածարանական գրականության մեջ այս առումով առանձնացվում են հոմանիշների երեք տիպեր:

1. Տարբեր կառուցվածքով, բայց մեկ ընդհանուր անդամով հոմանիշ դարձվածներ
2. Տարբեր բառային կազմով հոմանիշ դարձվածներ կամ բուն համանիշներ:⁶
3. Ոճական հոմանիշներ:

Հոմանշային տարբերակները հաճախ միևնույն իմաստուն են արտահայտում՝ հանդես գալով որպես դարձվածային նույնանիշներ: Հննտ. աղբյուրի պես հոսել // հորդել // խփել // եռալ // բխել (առատորեն և անվերջ զայ), դանակի // դաշույնի պես սիրու խրվել (խոր խոցվել), խելագարի // խենքի պես սիրել (չափազանց շատ, ինքնամոռաց սիրել): Հննտ. Նա խենքի պես սիրում էր մանավանդ Ավանի բարձր պարհապներով շրջապատված այգին....(ՍԽՀ, 501): -Իմացիր, Արևիկը խելագարի պես սիրում է Քաջանց Գարեգինին (ն.տ., 584):

Բուն դարձվածային համանիշները, որոնք կազմվում են տարբեր բառային միջոցներով, ունենում են իմաստային և հոգարտահայտչական տարբերություններ: Հննտ. Ասես գետնի տակն անցավ, ասես ջրի տակը սուզվեց, ասես քամին տարավ, ասես երկինք համբարձվեց, ոնց որ դանակով կտրես (անհետանալ, չքանալ, չքվե): Տերևի նման բիբրալ, ուռու պես դրղալ, շան պես վախենալ (սաստիկ վախենալ): Զամու նման բոչել, կայծակի նման պլանալ, հողմի պես սուրալ (շատ արագ բռչել, պլանալ):

Դանակի//դաշույնի պես սիրու խրվել, նետի նման ցցվել սրտում, սուր սլաքների պես քափանցել մինչև սրտի խորքը, ծանր մուրճի պես հարվածել զիսին, օճի պես խայթել, կայծակի պես շանքել, գանգի մեջ ասես ասեղներ տնկվել («խոր խոցվել» ընդհանուր իմաստով): Հննտ. Ամեն մի բառդ մի դաշույնի պես ականջու է խրվում (ՍՍ, 327): Վերջին խոսքը այնպիսի նադառու ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման ցցվեցավ մեծափառ Պարթևի սրտում (Բ, 83): Նրա ականջների մեջ դեռ զարկում էին մոր կծու խոսքերը և սուր պաքների նման քափանցում էին մինչև սրտի խորքը (ն.տ., 360): Ծանր մուրճի պես հարվածեց այդ ամենը նրա զլսին (Դ-Բ, 168): Այս եր արտահայտում նրա դիմացին ժամանեց Սիրայելին (ԱԸ, 4, 343): Վերջին խոսքերը կայծակի պես շանքեցին Սերուժանի քարացած սրտին (Բ, 535): Սլիքարի գանգի մեջ ասես ասեղներ ցցվեցին (ՍԽՍ, 548):

Ինչպես տեսնում ենք, այսուեղ առկա են «շատ խոր խոցել» ընդհանուր իմաստով հոմանիշ ՀԴՄ-ներ, որոնց միջև առկա է իմաստային սաստկության աստիճանականություն (գրադացիա): Իսկ, ասենք ուռու պես դրղալ, շան պես վախենալ հոմանշային զույգը դրսմարտում է հոգարտահայտչական տարբերություններ:

Դարձվածային ոճական հոմանիշներն առանձնանում են լեզվի գործառական տարբեր ոճերում ունեցած կիրառությամբ:

Հննտ. Գիսավոր աստղի պես փայլել (գրք.), պոշով աստղի պես երևալ (խսկց.) - ուշ-ուշ երևալ: Ձքի նման սորացնել (խսկց.), ջաղացի պես սորոր տալով անցնել (բրք.) - արագ-արագ կարդալ: Ապուշի պես (արհմրի), իշացածի պես, տավարի պես (գրիկ) - հինարարար: Աղբյուրի պես գալ (համագործած.), վարար գետի նման հոսել (գր.), թափվել ինչպես առատության եղջյուրից (գրք.), սելավի պես թափվել (բրք.) - ուժեղ հորդել:

Հննտ. Գալիս է նավքը, գալիս աղբյուրի պես (ԱԸ, 7, 75): Սեր կյանքում ուազմական փողի նման թնդում էին Գալան - Քարիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Բաֆֆու վեպերը՝ ամրնիատ խորիրդավոր (ՀԹ, 476): - Սելավի պես կար է տալիս (ՆԶ, 427):

⁶ U. Արքահամայն նշան, նշվ. աշխ., էջ 158: A. Հազարյան, նշվ. աշխ., էջ 9: I. Չերնյաշևա, նշվ. աշխ., էջ 144:

⁷ О. Н е в е д о м с к а я, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими (АКД), Л., 1973, стр. 7; М. Фомина, Русская лексика и фразеология, ч. 1, М., 1965, стр. 25 - 27; И. Чернйашева, նշվ. աշխ., էջ 91:

Բ. ՀԴՄ-ների հոմանշային շարքը: Ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սիմիլարմիկ) լեզվական կարգ է: Դարձվածային հոմանիշների շարքը երկու կամ ավելի դարձվածքների փունջն է: Թե՛ բառային, թե՛ դարձվածային հոմանիշների համար «հոմանշային շարք» տերմինից բացի կիրառվում են նաև «հոմանիշների փունջ» կամ «հոմանիշների բույն» տերմինները:⁸

ՀԴՄ-ների դեպքում դարձվածային հոմանիշների շարքերը բանակական ընդգրկումներով կարող են տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչև տասնիններ, երբեմն ավելի ՀԴՄ-ներ: Չենքող դարձվածքների հոմանշային շարքերի մեջ մեծամասնություն են կազմում երկու, երեք և չորս դարձվածքներ ընդգրկողները: Սեր տվյալներով առավել շատ հոմանիշ ՀԴՄ-ներ ունեցող շարքերից է «պնդակազմ» ընդհանուր իմաստով միազգագրա հոմանիշ դարձվածքների հետևյալ շարքը:⁹

Երկարի պես, պողպատի պես, գրանիտի նման, պատի պես, պարսպի նման, կոճղի նման, կաղնու պես, ծաղի պես, ցուլի պես, առյուծի պես, փոխ նման, ժայռի պես, սարի պես, լոռան նման, Գարոսայի նման (15 դարձվածք):

Իր ընդգրկունությամբ աշքի ընկնող հոմանիշ ՀԴՄ-ների շարքերից է նաև որպես նվազաւոյթ հանդես եկող «չափազանց փոքր» ընդհանուր իմաստով ՀԴՄ-ների հետևյալ փունջը. Ասեղի ծայրի չափ, քորոցի զիսի չափ, եղունզի չափ, թռչունի կոտոցի չափ, ծտի աշքի չափ, կորեկի չափ, մասուրի չափ, բալի նման /չափ, լուցկու տուփի չափ, մազի չափ (10 դարձվածք):

«Անմտաքար, մոլեզնած» ընդհանուր իմաստով հետևյալ հոմանշային շարքը ներառում է ինը հոմանիշ ՀԴՄ-ներ. Գծի պես, ցնդվածի պես, խենքի պես, խելազարի պես, կրակից փախչողի պես, խայրվածի պես, կայծակնահարի պես, շանքահարի պես, սպանվածի պես (վազել, փախչել, դուրս գալ, ցատկել տեղից, վեր թռչել և այլն):

Գ. Հոմանշուրյուն և բազմինաստուրյուն: Լեզվական այս երկու երևույթներն ակնառու ընդհանրություններ ունեն: Դարձվածքների՝ հոմանշային կապերի մեջ մտնելու հնարավորությունը զգայինը առնչվում է նրանց բազմիմաստուրյան հետ: Բազմիմաստ դարձվածքի իմաստային տարբերակները գործածվում են ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոմանշային շարքերում:

Դարձվածային հոմանշային շարքի անդամները նրբիմաստային և հուզարտահայտչական տարբերություններով հանդերձ՝ միավորվում են ըստ ընդհանուր իմաստի: Այդ իմաստի ծավալային ընդգրկումը կարող է հանգեցնել նրան, որ հոմանշային նոյն շարքի ներառում կազմվեն իմաստով իրար ավելի մոտ խմբեր: Հնմոտ. Գրանիտի պես, երկարի պես, պողպատի նման, պատի պես, պարսպի նման, կոճղի նման, ծաղի պես, կաղնու պես, ժայռի պես:

Չենքող ՀԴՄ-ների հոմանշային շարքի ներառում գրանիտի պես, երկարի պես, պողպատի պես, պատի պես, պարսպի նման դարձվածքները կազմում են հոմանշային մի խումբ՝ «ամուր, դիմացկուն» իմաստով, իսկ կոճղի նման, ծաղի պես, կաղնու պես, ժայռի նման, սարի պես ՀԴՄ-ները՝ մի այլ խումբ՝ «մնայուն, հաստատուն» նրբիմաստով: Հնմոտ. 1. Միջրոյի՝ գրանիտի պես ամուր այդ մարդու պատմությունը 1915-1920 թվականների արևանտահայության ճակատագրի կարդինալը է (ՎՊ, 458): -Ականաներս այժմ, տես, երկարի պես են (ԱԾ, 2, 148): Բայց ես ամուր էի՝ պողպատի նման (ՎԱ, 367): Պատի պես ամուր շարվեցե՞ք կանգուն (ՄԲ, 275): Ողջ գյուղը կանգնեց՝ պարսպի նման (ՀԹ, 178): 2. Նրանցից առաջ եկալ մի գորական, կարճահասակ, կոճղի նման հաստատուն (ԴՊ, 398): Չոր ծաղի պես ես եմ կեցել, ընկերներս հող են դառել (ՄԲ, 122): Հարյուր տարի էն ծնակի կաղնու պես կանգնած էի (ՎԱ, 195): Այս կրծքով ժայռի պես կանգնեմ Միլեզնած հետիւնի ճամփին (ՀՍ, 283): -Եքա տղեղ լուտեղ սարի պես կանգնած, անխոս թռչունքին ես ասու՞ն, - կանչեց նա զայրազին (ՆԴ, 83):

Հոմանշային հարաբերությունների մեջ մտնում են ինչպես մեմիմաստ, այնպես էլ բազմիմաստ ՀԴՄ-ները: Ինչքան իմաստներ ունի տվյալ բազմիմաստ ՀԴՄ-ն, այնպան հոմանշային շարքեր կարող են կազմել: Հնմոտ. «Զրի պես» դարձվածքը

⁸Ա. Մոքիայսյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 135:

⁹Միազգագր ՀԴՄ-ների մասին տես Խ. Բաղրամյան, Եղվ. աշխ., էջ 139, 259-261: Ա. Հազարյան, Եղվ. աշխ., էջ 115:

բազմիմաստ է, ունի՝ 1. շատ վարժ, անգիր (իմանալ), 2. անխնա, շռայլորեն (փող ծախսել), 3. առատորեն (հոսել) իմաստություն:

Իր առաջին իմաստով այն մտնում է հետևյալ հոմանշային շարքի մեջ. Զրի պես, իինց մատի պես, փրփորի պես, Հայր մերի պես, Ավետարանի պես (գիտենալ, իմանալ, ճանաչել):

Իր երկրորդ իմաստով այն հոմանիշ է թածա հացի պես (գնալ, փող ծախսել) դարձվածքին, իսկ երկրորդ իմաստով՝ աղբյուրի պես, գետի պես, ինդեղի պես (հոսել, թխել հորդել) դարձվածքներին:

«Լոյսի պես» ՀԴՄ-ն ունի՝ 1. շատ գեղեցիկ, 2. մարմնով սպիտակ, 3. շատ պարզ, ակնհայտ իմաստները և համապատասխանաբար հանդես է գալիս երեք տարբեր հոմանշային շարքերում: Հմնտ. 1. լոյսի պես, հրեշտակի պես, ինչպես մի պատկեր, ինչպես նախշ ու նկար: 2. Լոյսի պես, կարի պես, բամբակի նման, ձյունի պես (սպիտակ), փրփորի պես (ճերմակ): 3. Լոյսի պես, օրվա պես, արևի պես, երկու անգամ երկու՝ չորսի պես (պարզ):

«Կրակի նման» ՀԴՄ-ն ունի՝ 1. շատ ճարպիկ, աշխույժ, 2. չափազանց արագ իմաստները, որոնցով էլ առանձին - առանձին հոմանշային շարքեր է կազմում: Հմնտ. 1. Կրակի նման, կատովի նման (ճարպիկ): 2. Կրակի նման, ծոփ պես, քանու նման, կայծակի նման, հողմի պես (շատ արագ վլանալ, քոչել):

«Ծոփ պես» դարձվածքը բացի «շատ արագ» իմաստը, ունի նաև «շատ քերև» նշանակությունը, որով էլ այն համանիշ է տաշեղի նման, հովի պես, փետուրի պես (քերև) ՀԴՄ-ներին և այլն:

Դ. Հոմանիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ծևարանական արժեքի: Դարձվածային հոմանիշների մեջ առանձին խումբ են կազմում տրամարանորեն հասկացություն արտահայտող դարձվածային միավորները: Դարձվածքի ծևարանական արժեք ասելիս նկատի է առնվազն նրանով արտահայտված հասկացությունը, խորիմասային պատկանելությունը. դարձվածքն այս կամ այն խոսքի մասին համարժեք է առաջին հերթին իր արտահայտած իմաստով:

Ըստ ծևարանական արժեքի՝ հայերենում հանդիպում են մեծ մասամբ ածականական, բայական և մակրայական հոմանիշ ՀԴՄ-ներ.¹⁰

1. Ածականի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ: Այդպիսիք հանդես են գալիս կապական կառույց + ածական կամ ածական + կապային կառույց տարրերակներով: Հմնտ. 1. Կոճորի պես, քարի պես, գերեզմանի պես, ծկան պես (լուռ, սառն, համը): 2. Կարմիր ինչպես վարդը, կարմիր ինչպես հորդը, բոսոր ինչպես արյունը: 3. Հին ինչպես աշխարհը, երկրագնդի պես իին, Արամի շափ ծեր:

Ինչպես տեսնում ենք, ածականի արժեքով հոմանիշ ՀԴՄ-ների կառուցվածքային տարրերակները հանդիպում են նաև միևնույն հոմանշային շարքում: Ածականական հոմանիշ ՀԴՄ-ներն արտահայտում են մարդկանց և իրերը բնութագրող հասկացությունները: Հմնտ. 1. Ինչպես ջրի երկու կարի, ինչպես մի խճոր՝ երկու կես արած, ինչպես մի սաշի հաց, ինչպես մի ծառի պտուղ (իրար շատ նման ներքինով, արտաքինով): 2. Ածուխի պես սև, կուպրի նման սև, մրի պես սև, սաքի պես սև, սարյակի թևի նման սև, խեժի պես սև (գերազանցապես ասվում է դեմքի, ձեռքերի, հագուստի շափանց սև լինելու դեպքում):

Հոմանիշ ՀԴՄ-ների այս փնջում առկա են «աև» գունանիշ ածականով դարձվածքներ: Ածականական ՀԴՄ-ների շատ հոմանշային շարքեր կազմվում են հենց գունանուն բաղադրիչով դարձվածքներով:¹¹

2. Սակրայի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ: Սակրայական ՀԴՄ-ները ևս դասվում են ոչ հաղորդակցական դարձվածքների թվին: Սակրայի արժեքով ՀԴՄ-նե-

¹⁰Հազվադեպ համակառում են եղանակավորող հոմանիշ ՀԴՄ-ներ: Դրանք խոսքը երանգավորող համեմատություն-դարձվածքներ են: Հանդիպում են կապ+կապ խնդիր կառուցվածքով: Հմնտ. Հակառակի պես, քարի պես, սատանայի պես: Ալսայոր պես, եղբոր նման և այլն:

¹¹Գունանունների դարձվածակազմից դերի մասին տես L. Խաչատրյան, Խորիմասային տարածեքությունն արդի հայերենի կայտն կապակցություններում, Եր., 1996, էջ 94-106, Գունանուն ՀԴՄ-ների քննությունը տես L. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում («Բանքեր ԵՊՀ-ի», Եր., 1999):

ուսմ մակրայի առկայությունը պարտադիր չէ: Ավելացնենք, որ բուն մակրայներով ՀԴՄ-ներ հայերենում գրեթե չկան, առկայն նրանցում կարող են լինել այնափառ, որոնք խոսքային միջավայրում, նայած լրացյալն, դիտվեն կամ իրքն ածականներ, կամ իրքն մակրայներ: Հմնտ. Ու բիրու, վայրենի, կանգնեց, ինչպես սար (մակրայ/ձևի պարագա), (ՀՇ,151): Սի քանի սև փողերի համար սարի պես տղամարդը շուր անցավ (ածական /որոշիչ), (ՊՊ,51):

Ասվածը կարելի է դիտել նաև ՀԴՄ-ների միևնույն հոմանշային շարքում:

Հմնտ. Բացարձակ անհերեթ ուսմունքներ հավանաբար չկան, յուրաքանչյուրը թեկուզ քորոցի գիշի չափ ճշմարտություն պետք է ունենա իր հիմքում, որ հենվի նրան (ածական/որոշիչ), (ԱԱ,302): Գեղեցիկ էին նրա սլացիկ իրանը, բայի նման փոքրիկ թերանը, բարեկազմ մերկ ոտքերը (ածական/որոշիչ), (ԱԽՀ,13): Ո՞ւմ բախտից եր, թեկի դստե՞ր, թե՞ բախտից եր պատանու, Որ սև դամեն կողն եր խրվել կտուցի չափ աղավնու (մակրայ/չափ ու քանակի պ.), (ՀԸ,57): Բայց ոչինչ...չպիտի մազու չափ հուսահատվել (մակրայ/չափ ու քանակի պ.), (ԱԾ,2,233):

Հայերենում մեծ մասամբ առկա են մեկ լիմիմաստ և մեկ թերիմաստ բառից՝ կապից կամ կապական բառից կազմված հոմանիշ մակրայական ՀԴՄ-ներ, այլ կերպ ասած՝ նիսագագար (ածանաւերասինիու ԿՓԵ) ՀԴՄ-ներ: Կարող են պատահել այս կառույցի ծավալումներով մակրայական հոմանիշ ՀԴՄ-ներ: Հմնտ. աշխարհի չափ, ծովի պես, բայց՝ մազերի համրանքի չափ, երկնքի աստղերի չափ, ծովի ակազի չափ (անչափ, անքանակի):

Միսագագար ՀԴՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմնտ. մոլորվածի նման, մի քան կորցրածի պես, սպանվածի պես (Վշտարեկ, ընկճված): Հոմանիշ մակրայական ՀԴՄ-ները առավել արտահայտիչ են դարձնում գործողությունների հատկանիշները՝ պատկերավորություն տալով խոսքին:

3. Բայական հոմանիշ ՀԴՄ-ներ: Բայական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչը պարտադիր բայ է: Դքանք հանդես են գալիս բայ + գոյական + կապ կառույցով, ինչպես նաև սոռորադասական նախադասության ձևավորումով: Հմնտ. Սպունզի պես ծծել, խողովակի պես ընդունել, ծծանի պես կլանել (արագ, անմիջապես յուրացնել): Ծիի պես անցնել, երազի նման անձանալ, միրաժի պես չքանալ (աննկատելի և արագ անցնել, անձանալ): Կարծես այս աշխարհում չինել, ասես մորից նոր ծնվել (ցնծորյան մեջ լինել): Կարծես երկնքից է, կարծես լուսնից է իջել, կարծես այս աշխարհից չէ (արտահայտում է զարմանք կամ զայրույթ նրա նկատմամբ, ով չզիտի որևէ հանրահայտ քան): Փոխվել ինչպես երազում, շուր գալ ինչպես հերիաքում (արագ և հիմնովին փոխվել): Տարբերվել ինչպես սև սպիտակից, հեռու լինել ինչպես երկնքը երկրից (չափազանց տարբեր լինել):

Բայական ՀԴՄ-ները, ինչպես առհասարակ բայական կապակցությունները, ծավալման ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան մյուս ՀԴՄ-ները: Բայական ՀԴՄ-ների հոմանշային շարքերում հանդիպում են ինչպես երկանդամ, այնպես էլ բազմանդամ ՀԴՄ-ներ: Հմնտ. Հորի պես պտտվել, որովհետ բարակի պես վազել, սատանի շարիսի պես դառնալ (անընդհատ շարժման մեջ լինել):

Ասես երկինք համբարձվեց, ասես գետնի տակն անցավ, կարծես քամին տառվ, ասես ջրի տակը սուզվեց, ոճոց որ դանակով կտրես (անհետանալու, չքանալու մասին): Կոտրած գդալի պես մեջ ընկնել, քանի ճանճի նման մեծատեղ ընկնել (խառնվել իրեն չվերաբերող գործերին): Իրեն զգալ ինչպես մոր փորում, ապրել ինչպես Աքրահամի գոգում (լիուրյան մեջ ապրել):

Բայական հոմանիշ ՀԴՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմնտ. Մոմի նման ամեն կողմ շուր տալ, բայց՝ ուզածի պես խաղացնել (մեկին ստիպել իր ուզածի պես վարվել):

Այսպիսով՝

1. ՀԴՄ-ները երկանդամ, կայուն, վերահմաստավորված բառակապակցություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատություններ:

2. ՀԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ կարող է ունենալ հոմանշային զոյզեր կամ շարքեր:

3. Հոմանիշ ՀԴ-ներում առանձնանում են հոմանշային տարբերակները, որոնք մեծ մասամբ հանդիպում են նոյնանշիների հետ, քեզ դրսևորում են նրբինաստային ու հոլովատահայտչական տարբերություններ, և միմյանց նկատմամբ ոճական - գործառական տարբերություններ դրսևորող ոճական հոմանիշները:

4. Դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սինխրոնիկ) իրողություն է: ՀԴ-ների հոմանշային փունջը կազմվում է երկու և ավելի (մինչև տասնվեց) դարձվածքներից:

5. Դարձվածային հոմանիշները պատկանում են միևնույն քերականական կարգին: Արդի հայերենում ավելի շատ հանդիպում են ածականական, բայական և մակրայական հոմանիշ ՀԴ-ներ:

ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

- ԱԻ - Ալ. Խսահակյան, Երկեր, հ. 1, Եր., 1958:
ԱԾ - Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, 4, 7, Եր., 1950 – 51:
ԱՍ - Ա. Սահինյան, Կեռաններ, Եր., 1976:
ՎԴ - Վ. Գևորգյան, Վարդանանց, Եր., 1987:
ՀԹ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1991, հ. 4:
ՀԸ - Հովհ. Շիրազ, Միամանը և Խցեզարե, Եր., 1970:
ՀՍ - Հ. Սահյան, Բանաստեղծություններ, հ. 1, Եր., 1967:
ՆԴ - Նար - Դու, Պատմվածքներ և վիպակներ, Եր., 1978:
ՆԶ - Ն. Զարյան, Հացավան, Եր., 1960:
ՊՊ - Պ. Պողյան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1963:
ՍԽՀ - Ս. Խանգայան, Հոռը, Եր., 1957:
ՍԽՆԸ - Ս. Խանգայան, Միսիար Սպարապետ, Եր., 1963:
ՍՍ - Ս. Սեֆերյան, Խմաստախու Շերսայիր, Եր., 1986:
ՎԱ - Վ. Անանյան, Լեմեր Հայենի, Եր., 1963:
ՎՊ - Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977:
Ք - Քաֆֆի, Սամվել, Եր., 1967:

СИНОНИМИЯ КОМПАРАТИВНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Л. Аветисян

Компаративные фразеологизмы (КФ) активно синонимизируются. В семантическом и функционально-стилистическом аспектах у КФ-синонимов различаются равноценные, неравноценные и стилистические синонимы. КФ-синонимы выступают в функции одной и той же части речи. В современном армянском языке встречаются глагольные, адъективные, наречные КФ-синонимы.

Արմենուհի ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՐՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ. ԱՆԱՆՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Խոսել Վախթանգ Անանյանի վեպերի լեզվական առանձնահատկությունների մասին ընդհանրապես, նշանակում է ներկայացնել ժողովրդի լեզուն ու նրա արտահայտչամիջոցները, քանզի Անանյանի լեզվանտածողությունը ժողովրդական է՝ պարզ ու անպաճույժ, հասու թե՛ մեծերին և թե՛ փոքրերին: Դիպոլ է նկատել գրականագետն Ա. Աղարաբյանը. «Հայրենի բնությունը, նրա գրկում ապրող կենսուրախ ու հոգով առողջ մարդկանց կենցաղը, ժողովրդական կենդանի լեզուն, ժողովրդի բառ ու բանը, ժողովրդական ասմունքողների արվեստը, ահա Անանյանի ստեղծագործության և տարրքը, և ակզենալրյուրը»:¹

Հենց այդ ժողովրդական լեզվանտածողության և լեզվագգացողության արդյունքն են Վ. Անանյանի արձակում հետաքրքիր դրսարդումներ ունեցող մի շարք շառայիսալական իրություններ, և դրանց թվում նաև հարցական նախադասությունների տարրեր տեսակների (հատկապես ճարտասանական հարցումների) առատ կիրառություններ, որոնք Անանյանի լեզվում ինքնանպատակ չեն որպես լեզվական տվյալ իրողության տակ փաստացի դրսարդում, այլ որոշակի ինքնատիպություն ունեն և ծառայում են նրա վիպական խոսքի ոճական գունավորմանը:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է, որ հարցական նախադասությունների ձևավորման գործում մեծ դեր ունեն «հասուլ հարցական արտաքերությունը /ինչերանգը-Ա.Ա./ և առանձնահատուկ հարցական բառերը (դերանուններ, շաղկապներ, մակրայներ), որոնց վրա էլ հաճախ ընկննում է հարցական արտաքերությունը»:² Միևնույն ժամանակ հարցական նախադասություններում, որոնք խոսակցական տարրեր իրավիճակներում ծառայում են համապատասխան վերաբերմունքի, հոյզի կամ զգացմունքի արտահայտմանը, պայմանավորված նյորի թելարդանքով, գրողի աշխարհայացքով կամ խոսակցական իրադրությամբ հարցական ինչերանգով կարող է օժտվել նախադասության ցանկացած անդամ: Ավելին, ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես վկայում է նաև Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվի քննությունը, հարցական նախադասությունները ձևավորվում և դրսարդվում են ոչ այնքան հարցական իմաստ արտահայտող բառերի միջոցով, որքան տրամարանական շեշտի և համապատասխան ինչերանգի շնորհիլ, երբ հարցական ինչերանգով կարող է արտաքրվել ցանկացած բառ. «Ուրեմն առողջ ե՞ք...ոչինչ չպատահե՞ց...» /ՍԱ, 161/, «Ինձ ծեռ ես առնո՞ւմ, տո փալերու ծծկեր...» /ՍԱ, 161/, «Զահել ժամանակդ ա՞յս շավիրով գնացիր, պայի» /ՍԱ, 158/:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է տարրերակել հարցական նախադասությունների երեք տեսակ՝ հավաստիական կամ բուն հարցական, լրացական և ճարտասանական կամ հորեսորական:

Բուն կամ հավաստիական հարցումները Վ. Անանյանի վեպերում շատ են, և դա բնական է, քանի որ վեպերում հաճախ են երկխոսությունները, չինացածի մասին հետաքրքրվել իմանալու պահերը. «Իսկ սա ո՞վ է, այս փոքրիկը» /Կօմ, 65/, «Քռավո, ճուտիկ, է՞լ ինչ են արել թեզ» /Կօմ, 66/:

Առանձին ուշադրության են արժանի այն հավաստիական հարցական նախադասությունները, որոնք բազմեզր են, և իմնականում բարդ նախադասությամբ արտահայտվում են մի քանի հարցում չինացածի վերաբերյալ: Այսպիսի բարդ նախադասությունները բնույթով իմնականում համադասական են, և այդ հարցումները հնարավոր են ներկայացնել նաև առանձին նախադասություններով: Այսպես՝ «-Ո՞վ է թեզ ուղարկել և ի՞նչ խնդիր է տվել,- ձայնը կեղծ խստացրեց խմբավետը» /Կօմ, 258/, «Չեզ մոտ գործերը ո՞նց է, իմի՞ Դիլիջանն ո՞ւմ ձեռքին է, Ալեքպոլից ի՞նչ տեղեկություն կա, Պետին,

¹ «Գրական թերթ», Եր., 1955, 30 սեպտեմբերի, N 36, էջ 4:

² Վ. Առաքելյան, Հայերենի շարակայություն, հ 1, Եր., 1958, էջ 14:

Գիքորը սաղ-սալամա՞թ են...,- վրա տվեց Ակոփին ու անհամբեր պատասխանի սպասեց» /Կօմ.262/³ «Քսկապես,- ինչպես միշտ՝ այս անգամ դարձյալ ուշ գիսի ընկա են:- Համ է ի ինչո՞ւ էր մրության մեջ մնում, ինչի՞ կրակին մտնեցավ... կամ էս անձրկին, էս խավարին ո՞ւր էր զնում ասել մաշկող Սինար» /Հվիք.173/:

Այս և նման կիրառությունները, հաջորդական հարցումների միջոցով շտապողականության, անհանգիստ լինելու կամ կարծ ժամանակում շատ բան ինանալու ձգտման արտահայտություն են:

Վ. Անանյանի ստեղծագործություններում հաճախ ենք համդիպում երկրայական վերաբերմունք, երկրներանք արտահայտող հավաստիական հարցական նախադասությունների: Մրանցում հարցում արտահայտող երկու և ավելի անդամներ իրար հետ կապվում են թե շաղկապով, որն իր իմաստով լինելով թեական՝ այդպիսի երանգով է օժտում ամրող նախադասությունը: Մենք նախընտրում ենք նման նախադասություններն անվանել երկրայական հարցական նախադասությունները: Ա. Արրահանջանք դրանք կոչում է երկրայական վերաբերմունք և երկրներանք արտահայտող հարցական նախադասություններ՝ որպես իրարից անկախ հավաստիական հարցական նախադասության երկու տեսակ:⁴ Ս.Դուկայանը այս նախադասություններն անվանում է «ընտրանքային կամ թե՝ հարցում»,⁵ առանձնացնելով դրանց երկու տեսակներ՝ երկեզր և բազմեզր՝ հարցումների բվով պայմանավորված: Ընդ որում, երկեզր հարցման տակ նկատի է առնում միայն այն երկու եզրերը, որոնցից առաջնում տրվում է հարցը իր դրական ձևով, երկրորդում՝ դրա ժխտական ձևն է: Պատասխանողին մնում է ընտրություն կատարել այդ երկու ձևերի միջև՝ ընտրելով կամ դրական, կամ բացասական պատասխանը: «Ախ, սրան էլ վերջ կա՞, թե՞ չէ» /Կօմ.255/, «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր՝ մտնե՞լ, թե՞ոչ» /ՍԱ.87/:

Մենք ևս, ընդունելով նման նախադասությունների բաժանումը երկեզր և բազմեզր՝ տեսակների, երկեզր երկրայական հարցականներ ենք համարում այն նախադասությունները, որոնցում հարցման տակ են առնվում երկու կասկած հարուցող, բայց հավանական եզրերը: Ընդ որում, այստեղ նկատի ենք ունենում ինչպես վերոբերյալ օրինակները և դրանց նմանները, որոնցում ընտրությունը մի բարի դրական և ժխտական ձևերի միջև է, այլև նրանք, որոնք ընտրության երկու տարրեր, իրարից անկախ առաջարկ են ներկայացնում, և կամ պատասխանողը, կամ հենց հարց տվողը պետք է այդ տարրերակներից ընտրի մեկն ու մեկը: Մրանք ևս Ս. Դուկայանը դասում է բազմեզր տիպի մեջ: Մինչդեռ սրանք ընտրության մեջ գուգակցվող ձևեր են, անկախ նրանց՝ հականիշ բառերով են, թե իրարից բոլորովին անկախ ձևերով: Մեզ հետաքրքրողը դրանց ձևերի թիվն է: Օրինակ՝ «Ո՞ւր մնացին ընկերները: Արդյոք ազատվեցի՞ն, թե՞ ընկել են գիշակերների ճամփը» /Կօմ.129/, «Եվ այժմ նա անհարմար վիճակում տատանվում էր. շարունակե՞լ համոզել այդ հիմար միջոցից» /ՍԱ.124/:

Ընդ որում, ընտրանք հարուցող երկրորդ եզրը կարող է արտահայտված լինել և բարդ նախադասությամբ, ինչը չի ազդում նրա ընտրության եզրերի թվի վրա: Օրինակ՝ «Ապարատի չվկողի՞ց, թե՞ նրանց, որ մարդիկ համաստեն չեն հեռանում իր մորից, բայց ստիպված բռավի» /ՍԱ.53/:

Երկեզր երկրայական հարցական նախադասությունների ձևավորման գործում հատկապես մեծ է հականիշ բառերի դերը: Այսպես, «Արդյոք երձվո՞ն էր նա մոտայուս հարքանակի հավատով, թե՞ արտավալում էր հարազատներին դեռ չտեսած մտնելու համար» /Կօմ.203/, «-Չգիտեմ, կատա՞կ է անում, թե՞ լորջ է ասում» /ՍԱ.174/, «-Խանգարելո՞ւ եր եկել, թե՞ օգնելու, գոռաց բազմության վրա» /ՍԱ.97/:

Երկեզր երկրայական կառույցը բնորոշ է հատկապես ամեն հարցական նախադասություններին, որոնք մեծամասամբ ձևավորվում են անորոշ դերայի դրական և ժխտական ձևերով («Լին՞ թե՞ չինել»):

³ Այս և հետագա օրինակներում ընդգծում ենք հարցման բոլորակությունն արտահայտող բառերն ու կապակցությունները՝ հարցում ծիշտ բնկավելու նկատմամբ:

⁴ Ս. Արքա և ամյա ն, Հայոց լեզու (Հարակյալաւություն), Եր., 2004, էջ 85:

⁵ Լեզվի և ոճի հարցեր, V, Եր., 1978, էջ 122:

⁶ Օրինակները բերում ենք Վախրանգ Անանյանի ստեղծագործություններից:

Վ. Անանյանի ստեղծագործություններում երկեզր հարցական նախադասությունները ձևակիրկել են.

ա) անորոշ դերքայով՝ «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր, մտնել, թե՞ոչ» /ԱԱ, 87/:

բ) բայի եղանակային ձևերով՝ «Գիբորը տատանվում էր. առաջ գնա՞», թե՞ վերադասնա» /ԱԱ, 196/, «Վերևում պատվող կրունկը մնացել էր նոլորված՝ խմբին հետևի, թե՞ իշնի ընկերոց մոտ» /Հգ, 130/:

գ) անվանական բաղադրյալ ստորոգյալով՝ «Չէ, ասա բայլշկին ես, թե՞չ» /Կօմ, 138/:

դ) գոյականի տարրեր հողովածներով, որոնք հանդես են զայիս հիմնականում լրացման դերով՝ «Ի՞նչ իմացար ինչի՞ց է վեր ընկել, բանո՞ց, թե՞ անզօտշությունից» /ԱԱ, 150/, «Առաջ ո՞ր արտք հնձենք, Կաղնուտի՞նը, թե՞ Ռգերինը...» /Հվիք, 102/:

Բազմեզր երկրայական կամ ընտրանքային են համարվում այն հարցական նախադասությունները, որոնցում ընտրության օբյեկտ են դառնում երեք և ավելի եզրեր: Օրինակ՝ «Քարի նախա՞նձ էր դա, մրցույթո՞ն, թե՞ մի այլ զգացմունք, նա իրեն հաշիվ տալ չէր կարողանում» /Հգ, 16/, «Չհասկացանք՝ թե՞ն էր վնասվել, հիվա՞նդ էր, թե՞ ուժասպառ էր եղել երկար ճանապարհորդությունից» /Հգ, 130/, «Աղջկա մատների հպումի՞ց, սրտազին այդ նվերի՞ց, թե՞ Վարսիկի ժախտից շորան պատանին շփոքեց ու շառագունեց» /Կօմ, 40/: Սրանցում բարեկվում են բոլոր հնարավոր տարրերակները, և դրանցից մեկի ճիշտ լինելը կվերացնի այդ երկրայական վիճակը:

Վ. Անանյանի վեպերում բավական հաճախ ենք հանդիպում լրացական հարցական նախադասությունների, որոնք դրսորվում են և գրական նորմին համապատասխան լեզվամիջոցներով և խոսակցական ու բարբառային ձևերով: Վերջիններս հատկապես հանդիպում են ենթասների խոսքում՝ կերպարի տիպականացման, տվյալ լեզվական միջավայրի կերտման նպատակով: Օրինակ՝ «-Չանի՞ օրվա ուտելիք դնենք ձեզ հետ» /ԱԱ, 217/, կամ «-Ծո օդո՞ւ, որկե՞ կուզա» /Կօմ, 227/, «-Մի տես, նա՞ն, դեռ բաց է: Հինա ձվի դեղնուց շտա՞նք» /ԱԱ, 127/, «-Են սիրու փոնմիուավոր քոչուններին ի՞նչ են ասում քո գրքում, գիտնական բայա» /ԱԱ, 223/:

Ի տարբերություն հավաստիական հարցական նախադասությունների, լրացական հարցական նախադասությունները ենթադրում են պատասխան այս կամ ոչ պատասխանական բառերով, ինչպես նաև՝ դրանց գուգահեռ հարցման բովանդակությանը համապատասխան պատասխան նախադասությամբ կամ բառով. օրինակ՝ «-Չանի դինջացա՞վ... - Հա... լազար տվեց...» /Հվիք, 158/:

Չատ դեպքերում էլ հարցման տակ վերցվող բառն է հաստատական հնչերանց գով դառնում պատասխան, որին կարող է հաջորդել կամ չհաջորդել լրացուցիչ տեղեկություն: Այսպես՝ «Ուրեմն Հայաստանը հիմի կառավարություն ունի՞...»

- Ունի, - բնծիծաղ տվեց Գրիգորի ազգական Սկրտիչը» /ՈւՏԿ, 343/, «- Ուրեմն մեր բուրքերը սրանց հարազատներն են...

- Հրամանիք, հարազատներն են»:

Չատ անգամ այսպիսի նախադասություններում պատասխանը հարցով է տրվում: Այսպես՝ «- Ուրեմն քո մերն է՞լ է խորը:

- Իմո՞ն է խորը, - բողոքեց Արեգնազը» /Հվիք, 108/:

Վ. Անանյանի ստեղծագործության մեջ ոճարտահայտչական մեծ դեր ունեն ճարտասանական հարցական նախադասությունները:

Ժողովրդի ծոցից ելած, նրա բառ ու բանով սնված զավակի՝ Վ. Անանյանի վիպական խոտքը չափազանց հարուստ է ճարտասանական հարցմանը, ինչի այդքան ազատ ու առատ կիրառումն առաջնահերթորեն պայմանավորված է նրա վեպերի թեմատիկայով: Ե՛վ պատերազմական թեմայով («Կրակե օպակի մեջ», «Դժոխիք դռան զաղունիքը»), և գիտարկածային («Սևանի ափին», «Հովազածորի գերիները») և հիմնակենսագրական («Հին վրանի փոքրիկ բնակիչը», «Ո՞ր են տանում կածանները») բնույթի գործերում նման նախադասությունների օգտագործման նպատակը մեկն է. կենտրոնացնել ընթերցողի ուշադրությունը որևէ հարցի վրա, սրել իրադրությունը, առաջանել լարված հետաքրքրություն, որից հետո ցոյց տալ դրանց, լուծման ճանապարհը: Իսկ հատկապես գիտարկածային վեպերում ճարտասանական հարցման առավել հաճախակի գործածությունը պայմանավորված էր նրանով, որ մանկապատա-

նեկան ժանրի այս գործերն իրենց արկածային բովանդակությամբ և սյուժետային կտրուկ փոփոխություններով հանդերձ պահանջում են ոչ միայն առաջադրվող հարցերի ճիշտ, գիտական մեկնաբանություն, արկածային ինտրիգների հմուտ ստեղծում ու լուծում, այլև ունեն նկարագրվող երևույթների ճանաչումը ապահովող դաստիարակչական նշանակություն. ճարտասանական հարցմանը ընթերցողի ուշադրությունը կենտրոնանում է տվյալ երևույթի վրա՝ չքուլացնելով հետաքրքրությունը մինչև նրա վերջնական պարզաբանումը: Ընդ որում, ճարտասանական հարցումն առատ է ոչ միայն հեղինակի, այլև հերոսների խոսքում՝ ժողովրդականին բնորոշ հետաքրքիր ձևերով ու միջոցներով:

Հեղինակային խոսքում ճարտասանական հարցական նախադասությունները հիմնականում ներկայանում են որպես Անանյան-քնագետի, Անանյան-մարդու տարիներով կուտակած փորձի, գիտելիքների փոխանցման միջոց, կամ էլ հեղինակի քնարական խոհ, օրինակ՝ «Ավոր ինչպես՞ն գրյացալ ու հոսեց ցեխն այն լեռներից, որոնց լանջերում ես միայն ծաղիկ ու կանաչ եմ տեսել և մեկ էլ ձյուն» /Կոմ, 45/, «Ժողովանով մենք ձկներին չենք զրկում սերունդ տալու հնարավորություննեց» /ՍՍ, 20/, «Ինչո՞ւ էր այդպես վտխվել մեր սրտարաց Սաքը ամին» /Հվիք, 110/:

Ճարտասանական հարցումը Վ. Անանյանի հերոսների խոսքում տիպականացման, խոսակցական իրական միջավայր ստեղծելու, հետաքրքիր խոսք կառուցելու արդյունավետ միջոց է: Այսպես՝ «Թոշունները աշնան վերջին կշվեն կգնան հարավ և նրանցից շատերը չչենանան ով գիտի որ աշխարհում Սուլան՝ մ, Իրան՝ մ, թէ՞ Աֆրիկայում...» /ՍՍ, 220/: «Եվ ի՞նչ ես կարծում, ինչի է եղան շատ ման զալիս: Մեղրի կարոսից» /ՍՍ, 236/, «Ես հուսահա՞տ... Չէ... Ինչի՞ պիտի հուսահատ լինեմ, ճեզ պես ընկերներ ունեմ» /ՀԳ, 84/:

Ընդ որում, Վ. Անանյանի օգտագործած այդպիսի ճարտասանական հարցականների մեծ մասը ժողովրդական լեզվանտածողության արդյունք են: Մասնավորաբար նկատի ունենք կերպարների խոսքում դրանց բավականին հաճախ դրսուրվող այն տեսակը, երբ ժխտական կառուցով դրական, իսկ դրականով ժխտական, մերժողական միտք է արտահայտվում, հաղորդվում: Ժողովրդական խոսքին բնորոշ այս երևույթը, երբ «գրական ճարտասանական հարցերն ունեն բացասական նշանակություն, իսկ բացասականները՝ դրական», ժամանակին դիպուկ նկատել է Մ. Աքելյանը:⁷ Այսպես՝ «...Լավ, Բագրատն էրայն խամ բան կանի՞ որ ... մինչև ճներն աշքովս չտեսնեմ ես ձու բաց կը ողոնե՞մ» /ՍՍ, 116/:

Այսուղեա բացասվող միտքն արտահայտվել է դրական կառուցոյի միջոցով՝ հերոսի խոսքը դարձնելով ավելի հասու, կարծիքը՝ անբեկանելի: Եթե հեղինակը փոխարենը օգտագործեր «չի ամի» և «չեմ բրոնի» ժխտական ստորոգյաներով կառույցը, ժխտման զաղափարը անշուշտ նոյնքան ընդգծված չէր դրսուրվի, ինչպեսայս դեպքում. երբ դրական ճարտասանական հարցմանը ժխտումը վերջնական է, մտավորիչությունը՝ բացառված: Նման կառուցներում նախադասության ցանկացած անդամ, կախված խոսակցության բնույթից ու իրադրություննեց, կարող է դրվել հարցման տակ. «Աշխարհում կա՞» շուն, որ հանգիստ մնա այն պահին, երբ իր տերը վստանի մեջ է...» /ՍՍ, 66/, «Ո՞ր նկարիչը կարող էր կտավի վրա տալ այն նրին ու ներդաշնակ, նրբերանգները» /ՍՍ, 145/, «Ինչպես՞ն կարելի է առանց ակադեմիայի այսպիսի հնորդյունները կտրել իրենց միջավայրից...» /ՍՍ, 215/, «Սեր մեջ նրանից շատ ո՞վ է մնշվել» /Կոմ, 58/, «Ո՞ւմ մտքով կանցներ, որ քշքառ այդ գեղջկուհու կրծքի տակ բարախում է անձնուրաց բայլշկի սիրտը...» /Կոմ, 183/:

Հակառակ երևույթը՝ ժխտական կառույցի միջոցով ճարտասանական հարցմանը հաստատական միտք արտահայտելը, որը նոյնպես առկա է Անանյանի ստեղծագործություններում ընդ որում, ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքին՝ վերջինի գերակայությամբ:

Հեղինակային խոսքում սրանք իմբնականում քնարական շունչ ունեն, դառնում են հեղինակի քնարական խոհ՝ հարցական հնչերանգով. «... Ավելի շատ էր բորբոքվում իր մեջ հովի կարտուց, մեր սարերի կարտուց: Եվ ո՞նց չկարուեն» /Կոմ, 7/ կամ՝ «Ասենք,

⁷ Մ. Աք եղան 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 555:

Արարատյան քերրի հովտի ո՞ր գյուղում այդպես չէ, անծանոթ մարդուն երբեմն նոյն միևնույն գյուղամիջոց կոպտությամբ քարշ են տալիս տուն... հյուրասիրելու» /ՀԳ, 86/:

Ի տարրերություն ենթինակայինի, ենթոսների խոսքում նման կառույցներով հաստատական միտք է արտահայտվում. «-Ենքան ագռավի ձվեր են խաշել-կերել... Բա ուսու դրա զոհը չի՞...» /ՍՍ, 54/, «-Ուրեմն որսկան Ասատորի բռուսն զիսին փափախ չկա», որ ուրիշները նրանից առաջ ընկնեն...» /ՍՍ, 185/, «Չորանը ես չե՞ն, որտեղ ուզենամ, էնտեղ է կարածացնեն» /Կօմ, 132/:

Ժիտական կառույցով հաստատում արտահայտող հարցական նախադասություններում շատ անգամ առկա է երկրայության նրբիմաստը, երբ արտահայտված մորում կասկած կա. «Ի՞նչ եք կարծում, այդ բանը ձեր ուժերից վեր չէ»,-հարցրեց ուսուցիչը /ՍՍ, 82/:

Երեմնն էլ ճարտասանական հարցումը ստանում է իր համար անսովոր գործառույթ՝ հանդես գալով իբրև հավաստիական հարցման պատասխան. «-Պապի, մորքին ի՞նչ ես անելու: -Են որ Հասմիկից մատանու ակը խլեցիք-ուղարկեցիք քանզարան, կարծում եր ես նրան առանց նվերի՝ եմ բռնվելու» /ՍՍ, 240/:

Մեր հաշվումներով Վ. Անանյանի հերոսներից ամենից շատ ծերունի Ասատորի («Սևանի ափին») խոսքում ենք հանդիպում ճարտասանական հարցական նախադասությունների: Փաստը պայմանավորված է նրանով, որ հեղինակը հերոսին համարում է խորհրդանշական կերպար: Նա ժողովրդական իմաստնության կրտղն ու մարմնացումն է, որն իր երկարաւու կենսափորձի արդյունքում ամրարած գիտելիքները փոխանցում է երեխաններին: Այդ փոխանցման լավագույն ու նախընտրելի միջոցներից մեկն էլ ճարտասանական հարցումն է, որով նախ կենտրոնացնում է իրեն շրջապատողների ուշադրությունը որևէ իրողության կամ երևույթի վրա, ապա տալիս է դրա մեկնարանությունը: Օրինակ՝ «-Ասրեւ: Էսկ ինչի՞ է լոյն վախկոտ /բարբ-Ա.Ա./: Իրեն կարմիր գոյնին պատճառով: Որ կողմը շարժվում է՝ հեռվից երևում է: Հիմի ձեզ եմ հարցնում, կարմիր բաղր իրեն եղ զույնով կարո՞ղ է շարաթներով բռիս նատել դամշկութում...» /ՍՍ, 38/, «...Էսկ բռնորի մոր ահից ո՞վ կմտնի նրա բռյնը... Էն տեսակ սիրելի մոր ծագը իսկի արագ վազելու կամ պաշտպանվելու կարիք ունի՞...» /ՍՍ, 105/: «-Ո՞նց կարող է ամեն բան զբուրում լինի, -հարցրեց նա նեղացած: ... Դե բող ձեր զբուրն ասեն, թե էն լողացող բաղերի մի մասն ինչո՞ւ է սիրուն, փոխփոխավոր, հորիրատին տալիս արևի տակ, իսկ մնացածները քարի գոյնի, անշնորիք բաներ են» /ՍՍ, 24/:

Ժողովրդական լեզուն գործառում է նաև հարցական նախադասության մի այլ տեսակ՝ կազմված ով դերանունով և դիմավոր բայածնով, որը միշտ եզակի թիվ երրորդ դեմքով է հանդես գալիս (ո՞վ գիտի, ո՞վ է տեսել, ո՞վ կտար և այլն): Սրանք զգայական վերաբերմունք արտահայտող միջանկալ նախադասություններ են՝ հաճախարենք իրակություններ Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվում. «Ներքին ծնունի վրա պարզ երևում է մեծ սպիտ: Ո՞վ գիտե՞ ո՞ր ֆրոնտում մորորված մի զնդակ ջարդել է ծնուն ու իր հետ տարել ատամների առաջին շաբթը» /Կօմ, 114/, «-Անարխիս է՝, տո՛, ո՞վ է տեսել, որ առանց վարչության հանձնայնության կողլսովի հողանասը ցանկապատվի» /ՍՍ, 105/:

Մեռում է ավելացնել, որ «ո՞վ գիտե» կապակցությունով հարցական նախադասությունները ավելի շատ հավաստիական հարցում է արտահայտվում, իսկ «ո՞վ է տեսել», «ո՞վ կտա» և նման կապակցություններով հարցականները՝ նաև ճարտասանական, երբ դրական կոպույցով ժխտվող միտք է արտահայտվում. «-Վիհ, քուանամ ես, երեաք շանգրելով բացականչեց պառավը, -ո՞վ է տեսել, որ հանդի ձուն հավի տակը դնեն» /ՍՍ, 95/:

Ժողովրդական խոսքին բնորոշ հարցական նախադասության դրսերում պիտի համարել նաև սովորական նախադասություններում որոշ բառերի հարցական հճնառով այնպիսի գործածությունները, երբ խոսողը փորձում է իր կողմից ներկայացվող երևույթը, իրադարձությունը հավաստի և իրական դարձնել որևէ փաստի հիման վրա (սովորաբար այդ փաստը դիմացինի դրական, հաստատական վերաբերմունքն է ներկայացվող իրողության նկատմամբ): Հարցում արտահայտող բառերի դեպքում հանդես են գալիս իմնականում ստորոգյաները պարզ (տեսա՞ր, տեսա՞ր, գիտե՞ս, մի՞տք է (մի՞տք է), իիշո՞ւմ ես և նման այլ ձևեր), որոնք որպես ոճավորման միջոցներ՝

հերոսների խոսքը դարձնում են ավելի իրական ու անմիջական: Ինչպես՝ «Տեսա՞ր, պատի՛, որ ոչ երկրաշարժ եղավ, ոչ քամի բարձրացավ,- լուրջ պատասխանեց Գրիգո-րը» /ՍՍ,161/, «Հողեմ նրա պրաֆեսոր զլուխը, տեսա՞ք ոնց կապ գցեցի...» /ՍՍ,217/, «Մի՞տու է, որ մերի հոսից ճանաբարի ճակատն էիր բարձրացել» /ՍՍ,236/: Ի դեպ, սրանք որոշ առնչություն ունեն լրացական հարցական նախադասությունների հետ, և շատ դեպքերում կարող են ակնկալել պատասխան «այո» կամ «ոչ» պատասխանա-կան բառերով:

Դարտասանական հարցական նախադասությամբ երբեմն կարող է արտա-հայտվել նաև **հանդիմանամբ**: Ինչպես նկատել է Ս. Արքահամյանը, երբ «հարցական նախադասության մեջ հուսորականությունն ու հանդիմանությունը տեղ են գտնում միաժամանակ». հարցական նախադասությունն ունենում է և մեկի, և մյուսի տարրը, հատկանիշը»:⁸ «-**ճանաչեցի՞ր**, թե ով ես և ում զավակը,- հերթական հարվածը հաս-ցրեց Աշոտը: Չո հայրը տաշած տուֆից երկու հարկանի տուն շինեց: Ո՞ւմ աշխա-տանով, իսկի հարցը եւ ես, պիտի Սարգիս...»/ՀԳ,119/: «Տուր, բա փափախ չկա՞ ձեր գլխին, եգուց մեր աղջկներին էլ կտանեն, բա տղամարդկություն չկա՞ ձեր մեջ» /Կօմ,52/: «Այ դանազներ, տերություն ա, բուվ ու բուփիսանա ունի, դուք քանի՞ գլխա-նի եր, որ թվանք եք քաշում տերության վրա» /Կօմ,52/:

Վ. Անանյանի վեպերում ճարտասանական հարցմանը երբեմն կարող է ար-տահայտվել նաև **զայրոյթ, ցասում, հաճախ էլ՝ զարմանք**. «Եվ դուք ձեզ կոմերիտա-կաննե՞ր եր համարում...» /ՍՍ,69/: «- Այ թեզ բան, առանց հորի կողի՞, -բացականչեց նա՝ մեջքը շտկելով» /ՍՍ,48/, «-Քոռանամ ես, այ տղա, բա ամբողջ օրը ո՞նց ես սոված մնացել...» /ՍՍ,75/:

Նման հարցական նախադասություններում համապատասխան հնչերանգին զուգահեռ հաճախ առկա է նաև բացականչական հնչերանգը: Կարող են նաև հարցու-մից առաջ առկա լինել զարմանալ, քար կտրել, ապշել և նման իմաստ ունեցող բառեր, որոնցով էլ պայմանավորվում է նախադասության հետագա բովանդակությունը.

«Պատը զարմացավ: Այ թեզ բան...Այդ ի՞նչ անտեսանելի ուժ է ողի միջոն քոչունին դեսի իրեն քաշում...» /ՍՍ,218/: «-Ի՞նչ, սահմանն անցե՞լ է, կոչե՞ն է տարածել: Զարմանքից աշքերը չենց ցրտից կապտած պատանու վրա» /Կօմ,146/:

Վ. Անանյանն իր վիպական արձակում բավականին հաճախ ու հնտորեն է կի-րառել հարցական նախադասության մի հետաքրքիր ձև, երբ հարցական նախադասու-թյունը բնույթով իիշենում է **ներքին խոսք** և հանդես է զայխ որպես որդիշի ներքին խոհ՝ հարցական հնչերանգով: Հիմնականում այդ հարցական նախադասություններն որդիշի խոսք են, որ հեղինակային խոսքին կապվում են մտածել, մտաստանցվել, մտքով ամցման և նմանիմաստ բառերով: Վյապես՝ «Կամոն լաւում էր ու անհանդեր մնածում. «Ե՞ր ենք փակելու այդ կնոջ բերանը... Ե՞ր ենք քացելու Աև ժայոի ու Գիլի լճի գաղտնիքները...» /ՍՍ,217/, «Տեղում կանգնած մտածեց, տատանվեց: Էհ, ո՞վ էր զժվել մենակ ճամփա զնալ ժայռերով ու ձորերով...»/ՀԳ,22/, «Ինչի՞ է խեթում, չինի՞ թե սրի-կան էի իինն է մնացել», անցակ պատանու մորով» /Կօմ,236/:

Երբեմն հարցմանը նախորդող այդ **հուշող** բառերը կարող են զեղչված լինել. «Զարմացած նայում են ... պատանուն և «Կասյա՞ն, զաղտնի ժողով» /Կօմ,89/: Այս-տեղ ընդգծված հարցումից առաջ մտածում են բայր զեղչված է, բայց հստակ զիտակցում է: Սակայն այն կարող է նաև չզիտակցվել: Այնուամենայնիվ կառույցը չի դադարի հասկացվել որպես մտածական հարցական նախադասություն: Այդպես է նաև հետևյալ օրինակներում. «Օգնություն կանչել ընկերներին ամաչում էր /մտածում էր-Ա.Ա./, ի՞նչ կամ այն առցիկ» /ՍՍ,66/, «Ի՞նչ անել, ո՞ւր զնալ /մտածում էր-Ա.Ա./: Չէ՞ որ խոստացել էր այս զիշեր քոուզիկները զլողերը հասցնել»: /Կօմ,69/, «Պատանիների սիրու սեղմում էր /մտածում էին-Ա.Ա./, ո՞ւր է տանում այդ խորիդավոր անցք» /ՍՍ,44/, «Աերջին դեպքերը նրան շշմեցրել էին /մտածանցվում էր-Ա.Ա./: Ո՞ւր մնացին ընկերները» /Կօմ,105/:

⁸ Ս. Արքահամյան, Ժամանակակից հայերենի շարակելության մի քանի հարցեր, Եր., 1962, էջ 83:

Մենք հակված ենք նմանատիպ նախադասությունները կոչել մտածական հարցական նախադասություններ, որոնցում հարցումը կարող է լինել և՝ հավաստիական, և՝ լրացական, և՝ ճարտասանական՝ դրստրվելով յուրօրինակ ձևի՝ ներքին խոհի միջոցով։ Բնշ որ տեղ մտածական հարցական նախադասություններն առնչվում են ազատ անողության խոսքին, բայց վերջիններից տարրերվում են թե՛ հարցական հնչերանգով, թե՛ ընույթով։

Մտածական հարցումը բնորոշ է ինչպես հեղինակային, այնպես էլ կերպարմերի խոսքին։ Ըստ հաճախ դա կարող է լինել ոչ թե մեկի մտածածք, այլ բոլորի խոհը, եթե որևէ խնդրի հանդիպելիս բոլորն էլ մտքում նույն հարցն են տալիս իրենց՝ իրարից անկախ։ Այսպես՝ «Հետքը զննեցին /պատաճիները-Ա.Ա./. իր ոտնատեղերով եւս չի եկել։ Բայց ո՞ր է զնացել, ին երկինք չի բռել.../աղվեսը-Ա.Ա./» /ՍՍ,232/։

Մտածական հարցումը հաճախ կարող է գուգորդվել ճարտասանական հարց-մանը՝ նախորդելով կամ հաջորդելով վերջինիս։ «Ո՞ւր զնալ, ո՞ւմ դևմ, ինչի՞ համար։ Այսր չի՞ որ մերոնք են, հայ են, «հայր հայի դեմ»։ Ելի կոմիսարի դեմ ոչինչ, կարելի է..., բայց դու արի Մարկոսենց Աքոյի վրա կրակիր, ախր ո՞նց սպանես էն մարդուն, որ կոմիսարի, տերուերի, զորքաների ճեղքից փողը խլեց, քեզ տվալվ» /Կօմ,171/։

Հարցական նախադասությունների համառոտ քննությունը վկայում է. Վ. Անանյանը ժողովրդական բառ ու բանի հմտությունը օգտագործող է, որը կարողացել է վարպետութեան մշակել ժողովրդականին բնորոշ լեզվաձևերը և դրանք ճաշակով ու հմտորեն կիրառել գեղարվեստական գրականության մեջ՝ դարձնելով այդ տարրերը գրական լեզվի ճոխի հարատության անտրոհելի բաղադրամասը։

Համառոտագրություններ

- ԿՕՄ-Վ.Անանյան, Կրակե օղակի մեջ, Եր., 1930:
 ՀՎՓԲ - Վ.Անանյան, Հին վրանի փոքրիկ բնակից, Եր., 1978:
 ՀԳ - Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, Եր., 1984:
 ՍՍ - Վ.Անանյան, Սևակի ափին, Եր., 1953 և 1970:
 ՈՒՏԿ - Վ. Անանյան, Ո՞ւր են տանում կածաները, Եր., 1980:

ВОПРОСИТЕЛЬНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В РОМАНИЧЕСКОЙ ПРОЗЕ В. АНАНЯНА

Резюме

A. Avagyan

В. Ананян в своих произведениях смог искусно употребить не только три основные виды вопроса (утвердительные, пояснительные и риторические), но благодаря своеобразному языкомышлению в вопросительных предложениях, он ввел новые модели: двубортные и многобортные утвердительные вопросы, мыслительные вопросительные предложения. Благодаря своему общенародному языкомышлению, писателю удалось применить разнообразные проявления вопросительных предложений, способствующих образности героев-персонажей и созданию прозаической атмосферы в своих произведениях.

Саакануш ГРИГОГЯН

КОННОТАТИВНЫЕ ВОЗМОЖНОСТИ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫХ ЭЛЕМЕНТОВ В ОРГАНИЗАЦИИ АНГЛИЙСКОЙ АНТРОПОНИМИЧЕСКОЙ ЛЕКСИКИ

В последние годы наметилась методика комплексного изучения структуры многозначного слова. Учитываются синтагматические и парадигматические связи слова в системе как в формальном, так и в содержательном аспектах.¹

Объектом рассмотрения данной статьи является корпус примеров в 13.000 единиц, засвидетельствованных в подготовленном нами словаре английской коннотативной антропонимической лексики². Материал, привлеченный к анализу, рассматривается с точки зрения словообразовательных возможностей в создании оценочности как компонента коннотативного фона лексической единицы.

Вслед за Э. Азнауровой, мы считаем что оценка – это «закрепленное в семантической структуре слова оценочное значение, которое реализует отношение языкового коллектива к соотнесенному со словом понятию или предмету по типу хорошо-плохо, одобрение-неодобрение и т.д. Всеобщность и обязательность этих критерии создают ту объективную лингво - психологическую базу, на основании которой становится возможной коммуникация в сфере стилистических значений оценочной направленности».³

Само собой разумеется, что терминологическая лексика, например, лишенная эмоциональной оценки в своей семантической структуре, но могущая приобрести ее в конкретном ситуативном употреблении и в определенных контекстах, не может быть предметом нашего исследования.

Существует определенный пласт лексики, который содержит оценку в семантической структуре слова. В этом случае оценка связана в основном с номинативной способностью слова. Например, *darer, dauber, killer, prowler* и др.

В данной работе мы исследуем слова с привнесенной эмоциональной оценочностью, т.е. с ярко выраженной коннотативностью. Здесь в обычно нейтральных словах появляются оценочные семы или оценочные ассоциации, которые, закрепившись в семантической структуре слова, служат причиной сдвига сем, что приводит к трансформации смысла. Возникает вторичная номинация. Анализ позволил сделать вывод о том, что на современном этапе развития английского языка наблюдается преимущественное образование метафорических единиц-новых ЛСВ слов, созданных в процессе вторичной номинации. Наблюдается тенденция к языковой экономии.

Подавляющее большинство слов с вторичной номинацией-существительные. Среди существительных антропонимическая лексика по своей экспрессивности, стилистической направленности, эмоциональной оценочности занимает особое положение и образует очень большой пласт единиц в лексической системе английского языка. Языковая категория лица многоаспектна и многогранна.

В семантическую структуру большинства качественных имен входят оценочные семы и, как показывает анализ материала, их оценочная семантика яв-

¹ Э. М е д н и к о в а, *Значение слова и методы его описания*. М., 1974; А.Уфимцева, *Лингвистическая сущность и аспекты номинации. В кн.: Языковая номинация. Общие вопросы*, М., 1977; М. Никитин, *Лексическое значение слова (структура и комбинаторика)*, М., 1983; И. Стернин, *Проблемы анализа структуры значения слова*. Воронеж, 1979.

² С. Григорян, *Словарь английской коннотативной антропонимической лексики (в печати).*

³ Э. А з н а у р о в а, *Очерки по стилистике слова*. Ташикент, 1973, стр. 117.

ляется отрицательно направленной. Впрочем, это явление универсально для многих языков.

В. Шаховский объясняет это следующим образом: «Лексика отрицательной оценки в количественном отношении значительно превалирует и в русском, и в английском языке над лексикой положительной оценки. Этот факт объясняется социально-психологическими факторами: все хорошее считается нормой, а отклонения от нее в сторону полюса отрицательной оценки имеют разнообразную гамму проявлений, отраженных в денотации значения слов, обозначающих эти проявления».⁴

Перейдем к рассмотрению некоторых словообразовательных средств, придающих оценочность антропонимам, включенным в указанный словарь.⁵

Суффиксы, имеющие эмоциональную оценочность, в количественном отношении превалируют над префиксами, поэтому рассмотрим некоторые из них.

Суффикс *-ster/-aster* прибавляется к существительному и придает ему иронический, умеренно отрицательный характер: lamester, huckster, mobster, trickster, homester, philosophaster и др.

Например, *doomster informal* someone who always thinks something bad is going to happen; *doomsayer*

grammaticaster contemptuous a petty grammarian

Суффикс *-у/-ie* придает существительному характер пренебрежения, фамильярности: *goalie, druggie(-у), hostie, doveя, oldie but goodie* и др.

Например, *goodie/goody informal, humorous* someone in a book or film who is good and does things you approve of

goalie informal a goalkeeper

Интересно отметить, что не всегда суффиксы *-у* и *-ie* взаимозаменяемы.

Например, *greenie slang* an environmentalist, conversationalist, especially one who participates in protest demonstrations

greeny slang 1. a newcomer, a novice, a tyro 2. an inexperienced person

Существительные с суффиксом *-ard* приобретают уничижительный характер. В настоящее время этот суффикс является непродуктивным. В нашей выборке он представлен такими словами, как *dustard, haggard, dullard, laggard, drunkard, dumbard, lollard, niggard* и др.

Например, *dullard a stupid or dull person; a dolt, a dunce*

laggard old-fashioned someone who is very slow or late; a lingerer, a loiterer

С суффиксом *-ling* образуются существительные со значением пренебрежительности, которое развилось из значения уменьшительности. Отсюда уменьшительно-ласкательное и уменьшительно-презрительное значение существительных с этим суффиксом: *gosling, hireling, lapling, dumpling, dukeling, faintling, fledgeling, nurseling, popeling* и др.

Например, *nurseling any person under fostering care, influences, or conditions*

faintling one who is faint or faint-hearted

fledgeling fig. an inexperienced person

Наличие суффикса *-о* в существительных – признак наличия фамильярной, разговорной или сленговой коннотации: *kiddo, pinko, nasho, nutso, plunko, garbo* и др.

Например, *garbo Australian slang* a dustman

nutso mainly US slang a crazy person, a madman, often as a (usually insulting or provocative) form of address

kiddo 1. *US colloq.* a familiar way of addressing someone you know, usually a young person 2. *informal* a child

⁴ В. Шаховский, Эмотивный компонент значения и методы его описания. Волгоград, 1983, стр. 33.

⁵ С. Григорян, ук. соч..

Существительные с суффиксом *-nik* русского происхождения в основном имеют иронический характер: *dopenik*, *no-goodnik*, *peacenik*, *beatnik*, *neatnik* и др.

Например, *dopenik* *slang* a narcotics user or addict

neatnik mainly US slang one who is neat in his or her personal habits (originally, as contrasted with a *beatnik*)

peacenik slang often disparaging an activist or demonstrator who opposes war and military intervention

Суффиксы *-eer*, *-ist*, которые могут указывать на род деятельности и часто придают существительному дерогативный оценочный оттенок: *jargoneer*, *pamphleteer*, *perfectionist*, *pleasurist* и др.

Например, *jingoist* a *jingo*, a person who professes his patriotism loudly and excessively; a chauvinist

jargoneer a jargon-monger

В словаре также нашли место существительные с такими суффиксами как *-ati*, *-crat*, *-cracy*, *-kin*, *-ian*, *-ant(e)* и др., которые также придают словам оценочную коннотацию.

Например, *glitterati originally US slang, humorous, show business* people who are full of cheap glitter, extravagantly showy, ostentatious, flashy

glitterati originally US slang, media the celebrities or “glittering stars” of fashionable society, especially those from the world of literature and entertainment; people who conspicuously or ostentatiously attend fashionable events

Словосложение в современном английском языке также является одним из основных средств эмоционально-оценочной номинации. Более 30% собранного нами материала составляют сложные слова.

В задачу данной статьи не входит подробное описание ассоциативных связей в сложных словах, реализующихся в процессе оценочной номинации. Отметим лишь, что пейоративность эмоциональной оценочности настолько усиlena, что употребление данной лексемы возможно только в условиях неофициального общения.

Значительная часть сложных наименований со значением лица имеет опорные повторяющиеся компоненты: *-head*, *-pate*, *-box*, *-monger*, *-brain*, *-maniac* и др.: *panic-monger*, *news-monger*, *cabbage-head*, *addlebate*, *baldfate*, *nymphomaniac*, *airbrain*, *addlebrain*, *pyromaniac* и т.д.

Например, *saucebox informal* a person addicted to making saucy, impudent remarks

scandal-monger someone who tells people untrue and shocking things about someone else; who spreads scandal or gossip

Интересно отметить, что одно и то же сложное слово *pointhead* имеет популярно противоположные значения, и они фактически являются омонимами:

pointhead¹ *slang* an intellectual, a thinker

pointhead² *slang* a stupid or foolish person; an idiot

Общее число сложных слов со вторым компонентом *-head* составляет 158 единиц.

Большое место в выборке занимают сложно-производные слова, несущие эмоциональную оценочность: *day-dreamer*, *double-dealer*, *fence-sitter*, *ear-bender* и др. Например, *stockjobber often contemptuous* a stock salesman, especially one who sells or promotes worthless securities

Такие номинации, как *kickie-wickie*, *fiddle-faddle*, *dumb-dumb*, *helie-feelie*, *ducky-wucky*, *gibble-gabble*, *huff-snuff*, *hocus-pocus*, *humpty-dumpty* и др. являются редупликативными образованиями. Они имеют преимущественно иронически – шутливую оценку.

Например, *hocus-pocus old use* a conjuror, juggler; *transf.* a trickster

helie-feelie informal an adherent of a theory which holds that certain mineral crystals possess therapeutic properties.

Из других словообразовательных средств, создающих определенный коннотативный фон в антропонимах, можно назвать усечение (ex-con, indie, innie и др.), образование акронимов (DINK-Double Income No Kids, FLK-Funny Looking Kid, BF- Best Friend/Bloody Fool, BMOC- Big Man On Campus, BWOC-Big Woman ON Campus и др.), словослияние, блэнды (Eurocrat, autocrat, foodaholic, clothesaholic, milkaholic, youthocracy, kleptocracy, Amerasian и др.).

Например, biocrat a bureaucrat representing the interests of the biological sciences or environment protection

actressocracy actresses ennobled by virtue of marriage, considered collectively

Рассматривая суффиксы, мы говорили о том, что значение лица может воплощаться в единице меньшей, чем слово, т.е. в системе словообразовательных морфем. Как показал анализ, значение лица может быть выражено и в единице большем, чем слово. На наш взгляд, интересны примеры образования эмоционально-оценочных существительных от глаголов с постпозитивными элементами и от существительных с предпозитивными элементами: gross out, go-between, hold-out, goof-up, fill-in, drop-in, drop-out, dick-for, non-winner, no-hoper, noshow, non-scientist, no-peck и др.

Например, goof-off *slang* a person who habitually shrinks work or responsibility; an idler

fill-in *Brit. informal* someone who does someone else's job when he is unable to do it

И наконец, оценочность свойственна и тем антропонимам, в которых наблюдается явление антономии, т.е. перехода собственного имени в нарицательное. Имя становится выразителем понятия, богатые оценочные возможности антропонима выражены косвенным путем. Необходимы фоновые знания, широкий кругозор коммуникантов, чтобы понять задействованные здесь фоновые коннотации.

Например, Adonis *slang* an attractive man, especially one who is sexually attractive

Cain used allusively a murderer

Caesar a tyrant, dictator

Appolo a young man of great beauty

Herculez one who resembles Herculez in strength; a strong man

Подводя итог всему сказанному, отметим, что мы не ставили задачу дать исчерпывающий анализ всех словообразовательных средств, а лишь остановились на наиболее ярких словообразовательных средствах, придающих антропонимам эмоциональную оценочность.

**ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀՈՒԶԱԶԳԱՑԱԿԱՆ ԻՍԱՍՏ
ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԵՐԵՆԻ
ԱՆՁԱՆԻՑ ԲԱՌԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ամփոփում

U. Գրիգորյան

Հոդվածը նվիրված է բառակազմական այն միջոցների հետազոտմանը, որոնք առաջ են բերում կամ ուղղակիորեն արտահայտում են հոգազգացական իմաստ, մասնավորաբար, զգացմունք և նշույթայնություն:

Ուսումնասիրության նյութը՝ անզերեն լեզվի անձնանիշ բառերը, պատկանում են լեզվի խոսակցական մակարդակին և հարուստ հիմք են ծառայում նման հետազոտության համար:

Գաղիկ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ(«Խոյր» պատմվածքը)

1898թ. Ա. Ահարոնյանը բարձրագույն կրթություն ստանալու նպատակով գնում է Ըվեցարիա և ընդունվում Լոզանի համալսարանի պատմաֆիլիստիկայության բաժինը: Ուսումնառության տարիներին գրողի ստեղծագործական հետաքրքրությունների կիզակետում է շարունակում մնալ արևմտահայության կյանքի ու ոգորումների թեման, սակայն փոխվում են այն արծարծելու գաղափարաքարական ու փիլիստիկայական ելակետերը: Ահարոնյանը, դառնալով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ամրան, սերտ կապեր է հաստատում նրա ճանաչված առաջնորդ Ջ. Սիքայելյանի հետ: Վերջինիս անմիջական խրախուսմանը էլ սկսում է իր գեղարվեստական ստեղծագործություններում պատկերել Արևմտյան Հայաստանում (1890-1900-ական թթ.) հայրուկ-ֆիդայինների մղած պարտիզանական բնույթի կրիվները, որ մղվում էին բուրքական իշխանությունների վարած հայասպան քաղաքականությունն իրականացնողների դեմ: Մի շաբթ բանավոր ու հատկապես գրավոր վավերական նյութերի հիման վրա, որոնք նրան էր տրամադրում այդ ժամանակ «Դրոշակ»-ի խմբագիր Ջ. Սիքայելյանը, Ահարոնյանը գրում է պատմվածաշաբաթ: Այդ ստեղծագործությունները «Ազատության ճանապարհին» խորագիր տակ 1898թ. լույս են տեսնում «Դրոշակ»-ի էջերում:

Այս պատմաշրջանում առաջին ալլան էր մղվել 1894-96թթ. ինքնապաշտպանական մարտերի ճախողման ու մասսայական կատորածների հետևանքով ընկնված ժողովրդին գոտեանելու խնդիրը: Եվ ահա գրողը ճեռնանոլու է լինում գրականացնելու իրեն հասած վավերական պատմությունները: Խրական կենսանյութը և նրա գեղարվեստական արտացոլումը ուրույն համադրությանը են դրսնորվել գրողի ստեղծագործական երևակայության փոխակերպումների մեջ: Ուստի՝ «Ազատության ճանապարհին» շաբթի երկերի ստեղծագործական մերողի առանձնահատկություններն առավել որոշակի են ի հայտ գալիս, երբ ուսումնասիրում ենք դրանց գեղարվեստական պատկերային համակարգի խորքային օրինաչափությունները: Ըստ այլը էլ՝ մեզ համար ակնհայտ է, որ այս շաբթի ստեղծագործությունները գրվել են նեռուունանատիզմի գեղագիտական համակարգին բնորոշ գեղարվեստական հղացման ու հորինման տրամարանությանը: Այդպիսի մտածողության տիրույթում հաճախ ոռնանտիզմի ակզրունքների հետ էկեկտիբիկորեն համատեղվում են այլ գրական ուղղություններին (ուսալիզմ, նատուրալիզմ, սենտիմենտալիզմ, իմպրեսիզմ, սիմվոլիզմ և այլն) հատուկ գեղարվեստական ոճի տարրեր:

Հեղինակի գերիմնդիրն է եղել այս շաբթի երկերում գրական բազմազան հնարանքներով վերատեղեծել հայ ազատամարտի ընթացքում գիրկընդիսառն դրսնորված հերոսականն ու ողբերգականը, վեհեն ու ստորը, սովորականն ու արտաստվոր-ֆանտաստիկականը: Նա գեղարվեստորեն նարմնավորել ու իմաստավորել է հայ մարդու և հատկապես ազատամարտիկ-հայուկների դրամատիզմով հագեցած առօրյայի, բրոնթության դեմ գաղափարական ու գործնական պայքարի, նրանց կանքի ու անձնազնության երբեմն բացառիկ դրսնորումներ պարունակող դրվագներով լի աշխարհը: Էականն այն է, որ արևմտահայության համար ստեղծված մղձավանշային կացության պայմաններում ազատագրական պայքարի թեման արծարծելիս գրողն ավելի ու ավելի էր հակվել դեպի քուրք և քուրք իշխողների բռնության դեմ մարտնչեր, ուժի փառաբանման գաղափարական ելակետը: Նրա աշխարհայցքում պայքարի կենսափիլիստիկայությունն ամրապնդվել էր թե՝ Դաշնակցության տեսարան Ջ. Սիքայելյանի և թե՝ գերմանացի փիլիստիկա Ֆ. Նիցշեի շնորհիվ: Առաջինը գրողի ուշադրությունը սկսել էր ազգային խնդիրների վրա, իսկ երկրորդը՝ գերմանու և հին արժեքների վերագնահատման մասին ունեցած իր հայացքներով՝ ուժեղ անհատի գործունեության զարգացման վրա:

Ազգային-ազատագրական պայքարի դիպաշարում Ահարոնյանի նախընտրած հերոսը ոչ միայն պարտիզանական մարտեր մղելու համար Արևմտյան Հայաս-

տան անցած հայրուկ-ֆիդայինն է՝ ազգային կուսակցության կարգապահությանը ենթակա մարտիկը, այլև տեղի հայ ազգաբնակչության միջից դուրս եկած, առանձին խմբով կովող, ապա նաև նրանց միացած Վրիժառու հայ գյուղացին: Նա, ով արժանապատվորեն ապրելը գերադասել էր ստրուկի ու ճորտի վիճակից, ով, զենք վերցնելով ու կյանքը վտանգի ենթարկելով, հաճախ անհեռանկար ու անհույս, տարերայնորեն կրվել էր բոլոր ու քուրդ արյունկակ ոճրագործների ոհմակի դեմ:

1898-1900թթ. ընթացքում, «Դրոշակում» տպագրված այս շարքի պատմվածքներին հետագայում ավելացնելով ին ու նոր այլ ստեղծագործություններ՝ հեղինակը դրանք ամփոփում է «Ազատության ճանապարհին» ժողովածուի մեջ, որն առաջին անգամ լույս է տեսել Թիֆլիսում, 1906թ.: Ժողովածուի ստեղծումը վկայում է, թե որքան կարևոր և սրտամոտ են եղել Վերոհիշյալ գործերը նրա համար: «Ազատության ճանապարհին» գտնված Վերնագիրն արդեն խորհրդանշում է գրքի գլխավոր թեման և զաղափարական պարուա: Այստեղ գետերված երկերը հիմնականում գրված են արձակի պատմողական-վերլուծական պատկերման սկզբունքով: Այդ պատմվածքներից են՝ «Խայր», «Պատիվը», «Էլ մի աղոքիր», «Սայրը», «Արյունոտ թիւմոր», «Զավոն», «Աշուրը», «Կովի դաշտում», «Տիրացու Գրիգորը», «Արյունի ձայնը», «Արուր», «Վազրիկ», «Հազրեն», «Մեր ճանապարհը», «Լուսաբացին», «Մահը», «Փորորիկը»:

Այս երկերում իրեն գաղափարագիտական եկանետ կարևորվել է դարավոր քշնամու դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար ազգային-հասարակական ուժերի համախմբնան պահանջն ավելի, քան սոցիալական տարրեր խավերի միջև հակասությունների բացահայտումը: Այսպիսի մոտեցումը պայմանավորված էր արևմտահայության տվյալ պատմաշրջանի կեցության յուրահատկությամբ: Օսմանյան կայսրության տարածքում մահմետական ցեղերի տիրապետության տակ գրեթե հավասար չափով տուժում էին (հատկապես զավառահայ ազգաբնակչության) բոլոր խավերը: Օակերատիվորեն արձագանքերով ազատագրական պայքարի հետ կապված, հայությանը հուզող օրախնդիր հարցերին՝ Ահարոնյանն հանդես էր զայիս իրեն կապված, հայությանը հուզող օրախնդիր զանազան դրսւորումներին ի տրիտուր տարիողում էր ֆիդայական-ազատագրական պայքարը: Գրողը միաժամանակ ձգտում էր զաղափարական միտումը ներդաշնակել գեղարվեստական հեղացքի արտիստիկ կատարման հետ: Նշված դիտանկյուններից ուշագրավ է շարքի հենց առաջին՝ «Խայր», պատմվածքը:

Այս երկը շարքի համար ծրագրային նշանակություն ունի: Ըստ պատմվածքի գերիսնդիրի՝ հեղինակը անշրջելի թվացող ծանր ճակատագրին անդառնալի կերպով գամկած լինելու լայնորեն տարածված գիտակցությանն ու տրամադրություններին հակադրում է նրա դեմ հայ մարդու անհատական կամ խմբակային խիզախությանը ընդվզելու զաղափարը: Այս միտքը պատմվածքի պատկերային համակարգում արտածվում է զաղբական Նախոյի (Խայի) անձնական փորձից և հակադրվում նրա նոր միջավայրի՝ արևելահայ գյուղի մարդկանց պատկերացումներին: Վերջիններս ճմեռվա մի իրիկուն դատողություններ էին անում ճակատագրի մասին: «Յուրաքանչյուրն իր դիտողություններն արեց այդ մասին, ամենքն էլ հասան այն եզրակացության, որ մարդը խաղալիք է ճակատագրի քնահաճույքին, որ նրա առաջ անգոր են մարդկային բույր հնարքները, նրա բոյոր խելքը, եռանդը, աշխատանքը»:¹ Ճակատագրի հանդեպ նման կրավորական վերաբերմունքը և սորոկական հնազանդությունը անընդունելի էր իր հայրենիքում ֆիդայի եղած Նախոյի համար: Նակատագրին չհավատալու մասին նրա հայտարարությունը հանկարծակի է թերում, նոյնիսկ ապշեցնում է գուման հավաքվածներին. չէ՞ որ ճակատագրի ամենագրություններին չհավատացողը ամեն ինչից գրկված մի արևմտահայ զաղբական էր: Գեղարվեստորեն տպավորիչ է պատկերված պահի կարևորությունը, Նախոյի նկատմամբ ներկաների վերաբերմունքը: «Խայկապես ամենքն էլ զայրացած էին. և ինչպես զայրանային. Մեկիքը, հարուստ, զորեղ Մեկիքը հավատում էր ճակատագրին, վախենում էր նրանից. ուս Գևոն, որի ճիպուտի առաջ բոլորը դրդում էին ինչպես ուղի տերևներ, սարսափում էր ճակատագրից. տերտերը յս՝

¹ Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն, Ժողովածու երկերի, հ. 5, Թիւրան, 1983, էջ 17: Այս հասորից մյուս մեջերումները կատարելիս տեքստում նշել ենք միայն էջը:

ինչ քարոզեր, վերջը ճակատագիրն էր. ամենքն էլ ընկճված էին այդ աներևոյթ գորության առաջ, ամենքն էլ տսկում էին նրանից, մեկ այս ողորման իսայր ճակատագրին չեր հավատում, չեր վախտենում նրանից»/18/: Նախոն նման համոզման էր եկել հայրենիքում իր պես տասը ընկերների հետ ֆիդայական կոխմաների բովով անցնելու շնորհիվ: Պայքարի այդ ձևում ու անվանումը քանի որ նորություն էին շատերի համար, հեղինակը հերոսի կողմից լրացուցիչ բացատրություններ է տալիս. «Քյուրդերն ու քյուրքերը նեզ ասում էին «Ֆեւդայի», իսկ հայերն ասում էին «Վրիժառու ոգի»»/19/: Նրանք իրենց ընտանիքների արժանապատվությունը ուսնահարելու պատճառով վրեժ էին լուծում թե՛ բորբերից, թե՛ քրդերից, որոնք հովանավորվում էին իշխանությունների կողմից: Զննարկման առարկա հարցի կապակցությամբ Նախոն պատճում է իր ու մի քորդ համիդիերի միջև տեղի ունեցած պատահարի մասին: Թեև անզեն՝ նրան այնուամենայնիվ հաջողվում է ճարպկություն և համարձակություն հանդիս թերել և սպանել մինչև ատամները զինված հայատյաց բարբարոսին: Նախոյի մեջ դիմադրելու ուժ ու կարողություն է ներարկում ոչ միայն քշնամուն ատելու զգացումը, այլև բնության մեջ ընթացող զոյության կովի օրինակը: Այս տեսանկյունից է ինաստավորված արագիլի և օծի մենամարտը պատկերող դրվագը, որը թեև հարմարեցված է, սակայն ուսի որոշակի ուսուցողական դերակատարություն: Այստեղ իր «Խորամաննկության» ու «Ինարամտության» շնորհիվ ի վերջո հաղորդում է օծը: Հետևաբար, քշնամուն հաղթելու համար պետք է կիրառել պայքարի հնարավոր բորբ ձևերը. չ² որ մարդու կյանքը ևս գոյապայքար է: Եվ ամեն նարդ պետք է ճատի տեր կանգնել իր ճակատագրին, գոյությունը պահպանելու համար ընդվզի իրեն խոշնեղուող անարդարությունների դեմ: «Աստված, որ չի թոյլ տալիս օծի ննան զզկեի սողունն անգամ անարդար զի՞ դառնա արագիլին, - նսորում է Նախոն, - նոյն աստվածը մի՞թե պիտի թոյլ տա, որ այս քյուրքը, օծից տասն անգամ զզկեի այս արարածը իմ ճակատագիրը տնօրինի: Չէ, ճակատագիրը սիսալ է, մտածեցի ես... պիտի ճար տեսնել»/23/:

Ի դեմս ժողովրդական վրիժառու Նախոյի՝ հեղինակը գտել էր իր իդեալ հերոսի հատկանիշներից ունեցող մարդուն: Նրա միջոցով է անձնավորվել տվյալ միջավայրում ճակատագրին դիմակայելու ընդունակ, ուժեղ անհատի կերպարը: Վերջինիս արարքի բարոյահոգերանական հիմքերի մեջ անհատական կենսափորձից բացի, մեր կարծիքով, որոշակի դերակատարություն ունի նաև հեղինակի կողմից Ֆ. Նիցշեի «Այս խոսեց Զրադաշտը» երկի ընթերցումը, նրա գերմարդու տեսությունը: Ինաստուն օծի հետ կապված դրվագն համեմայնեպս ուղղակիորեն հիշեցնում է Զրադաշտի սիրելի կենդանուն, որի մասին վերջինս ասում է. «Երանի թե ավելի խելոք լինեի, շատ և շատ խելոք, որպես իմ օծը».² Անշուշտ, Ահարոնյան արձակագիրը միշտ չէ որ հաշու է եղել Նիցշեի տեսակետների հետ: Նա իր գրական ու զարդարական-փիլիսոփայական ուսումնառությունը միշտ օգտագործել է իր ստեղծագործական երևակայության ու լարորասորիայի միջով անցկացնելուց հետո, այն գեղարվեստի միջոցով ծառայեցրել ազգային-հասարակական կյանքի վրա ներգործելու համար:

Այսպիսով, գրողը ժողովրդի միջից դուրս եկած Նախոն-Խայի հերոսական օրինակով ուզում էր ոգևորել հայ ընթերցողին, ազդու տպագորություն գործել կյանքի մղձավանջային պայմաններին համակերպված մարդկանց վրա: Ուստի պատմվածքում հեղինակային խոսքը ակտիվ է: Գեղարվեստական կողագորումը միշտված է մարդկանց մտքերն ու տրամադրությունները վերափոխելուն: Այս առումով ուշագրավ է նաև պատմվածքի ավարտը: Նախոյի պատմածի տպագորությունն ավելի արտահայտչ դարձնելու, ինչպես նաև հեղինակային թելադրից զարդարար շեշտելու համար դրսում մոլեգնող բքի աղմուկն արդեն զրոգրդվում է ընդրեմ ճակատագրի, հանուն ազգատության պայքարի ոգեկոչումների հետ: Կարծում ենք՝ հեղինակային խոսքի նման «միջամտությունները» կատարված են գրական արտիստիկմով:

Այս տիպի մյուս պատմվածքներում Ահարոնյանը շարունակում է գրականացնել «ազատության ճանապարհով» զնացածների կյանքի դրվագները: Իսկ հայորեների գործն ու պայքարը ներկայացնում է թե՛ «ողբաց»՝ արևմտահայ բնակչության վերա-

² Ֆրիդրիխ Նիցշ, Այսպիսոց Զրադաշտը, (գերմաներնից բարզ. Վ. Խորենի, Բարու, 1914), Եր., 1990, էջ 24:

թերմունքի բարդույթներով, թև՝ «ներսից»՝ հայրուկային խմբերի մեջ ընդգրկվածների անձնուրաց, խիզախ արարքների, գերմարուկային տանջանքների, ինքնարուի մարդասիրության դրսնորումներով:

ХУДОЖЕСТВЕННОЕ ВОСПРОИЗВЕДЕНИЕ НАЦИОНАЛЬНО- ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В ПРОЗЕ А. АГАРОНЯНА (рассказ „Хай,,)

Резюме

Г. Хачикян

Освободительная борьба западных армян в художественной прозе А. Агароняна целеустремленно отобразилась особенно в цикле „На дороге свободы,,, затем в произведениях одноименного сборника. Философия освободительной борьбы закрепилась в сознании писателя под влиянием некоторых идей основоположника и теоретика партии Дашнакцутюн Х. Микаеляна, а также немецкого философа Ф. Ницше. Для раскрытия идеино-философских принципов сборника программное значение имеет рассказ „Хай,,. В данном произведении, написанном в духе художественного мышления неоромантизма, писатель развивает и обосновывает идею бунтарства против кажущегося непоколебимого рока.

Արտաշես ԲՈՅՅԱԶՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՍԱՐՋԻ ՍՈՅՑԻԱԼ-ՏՆՏԵՍՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (մաս II*)

Շիրակի մարզի աշխատանքային ռեսուրսների օգտագործման վիճակը բարելավելու շարժադրմերը թելադրում են խորապես մտորել տնտեսության զարգացման ուղղությունների ընտրության, այդ հարցում առկա սխալներն ու բացքողումները չկրկնելու և դրանց հետևանքները վերացնելու մասին: Հիմնվելով վիճակագրական տվյալների վրա՝ կիրքձենք բնութագրել XXդ. վերջին և XXIդ. սկզբին Շիրակի մարզի աշխատունակ բնակչությունն իր տնտեսական ակտիվության, գործունեության ու գրաղվածության հատկանիշներով:

1989թ. Շիրակի աշխատունակ բնակչության քվարանակը (15-64 տարեկան) կազմել է 211859 մարդ, այդ թվում մարզի քաղաքային աշխատունակ բնակչության թիվն է 142689, իսկ գյուղական բնակավայրերում՝ 69172: 2001թ.՝ համապատասխանաբար՝ 181489 մարդ (114864-ը՝ քաղաքային, 66625-ը՝ գյուղական բնակավայրերում):¹ Ինչպես տեսնում ենք, նշանակած ժամանակահատվածում մարզի աշխատունակ տարիքի բնակչության թիվը պակասել է 30370 մարդով կամ 16,7%-ով, այդ թվում քաղաքային բնակավայրերում՝ 27825-ով կամ 24,2%-ով, իսկ գյուղերում՝ 2547-ով կամ 3,8%-ով: Այսինքն՝ Շիրակի մարզի քաղաքային աշխատունակ բնակչության նվազումը քազմարիվ անգամ գերազանցել է գյուղական աշխատունակ բնակչության թվի նվազման ցուցանիշը: Կարծում ենք՝ դա բացատրվում է նրանով, որ 1990-ական թվականներին հանրապետությունների անցման, պետական ունեցվածքի, այդ թվում գյուղատնտեսական հողահանդակների մասաւայական սեփականաշնորհման պայմաններում գյուղերում աշխատունակ բնակչությունը որոշ առունու ապահովվեց աշխատանքով, իսկ քաղաքներում՝ ընդհակառակը, արդյունարերական ձեռնարկությունների սեփականաշնորհումց հետո տասնյակ հազարավոր բանկիրներ ու ծառայողներ դարձան գործազուրկներ: Դա են փասում նաև վիճակագրական տվյալները: Այսպես, 2001թ. ՀՀ մարդահամարի տվյալներով Շիրակի մարզում գործազուրկների թիվը կազմել է 52646 մարդ, այդ թվում քաղաքային՝ 44456 մարդ կամ գործազուրկների ամբողջ թվի 84,4%-ը, որ ամենաքարձը ցուցանիշն է հանրապետությունում:² Այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզում էապես խախտվել է խորհրդային տարիներին ձևակրության արտադրահարարերությունների և աշխատունակ բնակչության գրաղվածության համակարգը, իսկ Գյումրիում՝ հիմնավորապես:

Զբաղվածությունը մարդկանց աշխատատեղերով ապահովելու և հանրօգուտ աշխատանքային գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար նրանց միջև ստեղծված հարաբերությունների համակարգն է: Դա աշխատունակ բնակչության գործառական բնութագրումն է: Վերլուծելով ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի բնակչության գրաղվածության թվի շարժները ստանում ենք հետևյալ պատկերը. Մինչև երկրաշարժ՝ 1988թ. առաջին կիսամյակին ներկայիս մարզի սահմաններում գրաղվածություն ունեցող մարդկանց թիվը կազմել է 139,3 հազար, այդ թվում Գյումրի քաղաքում՝ 75,2 հազար,³ իսկ 2001թ.՝ համապատասխանաբար՝ 79,4 և 29,8 հազար մարդ:⁴ Բերված թվերից երևում է, որ եթե 1988թ. համեմատ՝ 2001թ. Շիրակի մարզում գրաղվածություն ունեցող բնակչության թվաքանակը պակասել է 59,9 հազարով, ապա Գյումրիում՝ 45,4 հազար մարդով: Այսինքն՝ գրաղվածություն ունեցող բնակչության թվաքանակի նվազման 76%-ը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին: Ուսումնա-

* Սկիզբ՝ տես՝ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատաթյուններ», հ. 8, Գյումրի, 2005, էջ 65-70:

¹ 1989թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Եր., 1991: 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ), Եր., էջ 129-130:

² Նոյն տեղում, էջ 165:

³ ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային վարչություն, գ. 7, թ 42:

⁴ 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ), Եր., էջ 168:

սիրվող ժամանակահատվածում մարզի տնտեսության ոլորտներում գրաղվածություն ունեցող բնակչության թվի շարժմբացի աղյուսակային պատկերը կլինի այսպիսի:

Զքաղվածության թվի շարժմբացը Շիրակի մարզում 1988-2001թթ.*

Աղ. 1

	1988թ.			2001թ.		
	Շիրակի մարզ	ք. Գյումրի	Ընդամենը	Շիրակի մարզ	ք. Գյումրի	Ընդամենը
Զքաղվածների թիվը	64125	75230	139355	50182	29289	79471
Արդյունաբերություն	12354	37877	50231	1439	2059	3498
Գյուղատնտեսություն	29265	757	30022	27791	445	28236
Շինարարություն	1125	4353	5478	704	1656	2360
Առևտուր և հասարակական սննդադրություն	1345	5867	7212	413	2499	2912
Տրանսպորտ և կապ	2224	7038	9262	422	1675	2097
Սոորոշականություն և սոցիալ. ոլորտ	1036	3425	4461	908	2326	3234
Կրթություն	2534	8864	11398	3005	5881	8886
Պետական կառավարում	2090	497	2587	4996	3128	8124
Կոմունալ տնտեսություն	547	1630	2177	237	1024	1261
Տնտեսական գործունեություն չնշանակածներ	-	-	-	10232	8384	18616
Տնտեսության այլ ոլորտներ	11605	4922	16527	35	212	247

Աղյուսակից երևում է, որ 1988թ. մարզի նյութական ոլորտում աշխատողների թիվը 94993 մարդ է, որը կազմել է ամբողջ տնտեսությունում գրաղվածների թվի 68,1%-ը, իսկ Գյումրիի քաղաքում համապատասխանարար՝ 50025 մարդ է կամ 66,4%: 2001թ. նյութական ոլորտում աշխատողների թիվը նվազել է 2,6 անգամ՝ հասնելով 36191 մարդու և կազմել է ամբողջ տնտեսությունում գրաղվածների թվի 45,5%-ը, իսկ Գյումրիի քաղաքում՝ նվազել է 8,6 անգամ՝ հասնելով 5835 մարդու և կազմել է ամբողջ տնտեսությունում գրաղվածների թվի 19,9%-ը: Ուժումնասիրվող ժամանակահատվածում մարզի հյութական արտադրության ոլորտում աշխատողների թվի նվազման 75,2%-ը բաժին է լնելում Գյումրի քաղաքին, հատկանիս արդյունաբերության ոլորտին: Այլ է վիճակը ոչ նյութական արտադրության կամ սպասարկման ոլորտում: 1988թ. սպասարկման ոլորտում աշխատողների թիվը Շիրակում 20623 մարդ էր, իսկ Գյումրի քաղաքում՝ 14416, որ կազմում էր մարզի սպասարկման ոլորտի աշխատողների թվի 69,9%-ը, իսկ 2001թ. համապատասխանարար՝ 21505 մարդ, Գյումրիում՝ 12559 կամ մարզի սպասարկման ոլորտում աշխատողների ամբողջ թվի 58,4 %-ը: Այսինքն՝ այդ տարիներին Շիրակի մարզի (առանց Գյումրի քաղաքի) սպասարկման ոլորտում աշխատողների թիվն ավելացել է 882 մարդով կամ 4,3%-ով, մինչդեռ Գյումրիում նվազել է 1857 մարդով կամ 14,7%-ով: Սպասարկման ոլորտում աճ է գրանցվել պետական կառավարման համակարգում: Դա պիտի բացատրել նրանով, որ 1988թ. պետական կառավարման համակարգում ընդորլել է միայն վարչական կառավարման մարմինները, իսկ 2001թ. վարչական մարմիններից բացի, նրանում են հաշվվում նաև քաղաքացիական ծառայողները և բյուջետային հաստատությունների վարչական աշխատողները: Աղյուսակից երևում է նաև, որ 2001թ. մեծ է տնտեսական գործունեությունը չնշանակածների թիվը: Կարծում ենք՝ դրանում իր բացասական դերն ունի նաև տնտեսության նկատելի ստվերայնությունը. մարդահամարին հարցվածների մի մասը չի ցանկացել տեղեկություններ հաղորդել իր տնտեսական գործունեության վերաբերյալ:

Արդեն նշեցինք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մարզի գրաղվածություն ունեցողների թվի կտրուկ նվազում դիտվել է նյութական արտադրության ոլորտում: Հետևաբար խորըն առաջին հերթին կարևորվում է Շիրակի արդյունաբերության

* Աղյուսակը կազմվել է ըստ ՀՀ ԱՎԾ-ի Շիրակի մարզային վարչության տվյալների, գիրը 7, թ. 42-45: Տես նաև 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունաբերությունը (Շիրակի մարզ), Եր., էջ 165-181

ճյուղերի նորովի գարգացման, նրա ուղղությունների միշտ ընտրության, ինչպես նաև տնտեսության մեջ զրադարձության նոր կառուցվածքի ձևավորման առումով, որն իր վրա այսօր կրում է առևտության և ծառայությունների մաստուցման աճող դերի ազդեցությունը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ընուժում չըստեց Ծիրակի մարզում, հատկապես Գյումրիում առկա թերև արդյունաբերական և մեքենաշինական խոշոր ձեռնարկությունների արտադրողական ուժերի տեղաբաշխման անհիմն քաղաքականությունը:

Խորիրդային տարիներին Ծիրակը հանրապետության արդյունաբերության գարգացման խոշոր շրջաններից մեկն էր, և 1980-ական թվականներին արդյունաբերական արտադրության ծավալով հանրապետությունում զիջում էր միայն մայրաքաղաքին: Եթե Ծիրակի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից քողարկված ապրանքային արտադրանքի ծավալը 1985թ. կազմել է հանրապետությունում քողարկված արտադրանքի ընդհանուր ծավալի 13.4%, ապա 1997թ.՝ միայն 3.2 %, 2003թ.՝ 2.7%: Գյումրիում այդ ցուցանիշները համապատասխանարար 12.0%, 2.6% և 1.6% են.⁵

Ասել է թե՝ 18 տարիների ընթացքում Ծիրակի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը հարաբերական թվերով հանրապետությունում պակասել է 4.9, իսկ Գյումրիում՝ 7.5 անգամ: Այդ տարիներին Ծիրակի մարզի և Գյումրիի քաղաքի արդյունաբերական արտադրության ծավալը անկումն ուղեցվել է նաև այդ ոլորտում աշխատողների թվաքանակի նվազմամբ: Այսպես, 1988թ. Ծիրակի մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել են շորջ 50.2 հազար մարդ, 1997թ.՝ 14.0 հազար, 2001թ.՝ 3.5 հազար և 2003թ.՝ 3.3 հազար մարդ, իսկ Գյումրիում համապատասխանարար՝ 37.8, 10.5, 2.1, և 2.0 հազար մարդ⁶: Այսինքն՝ 1988թ. համեմատ՝ 2003թ. մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակը պակասել է 15, իսկ Գյումրիի քաղաքում 19 անգամ: Այդ թվի կտրուկ նվազումը պայմանավորված է եղել ոչ այնքան աղետայի երկրաշարժի պատճառած վնասներով ու մարդկային կորուստներով, որքան 1990-ական թվականների անցկացված սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններով և, մասնավորպես, նաև ԽՍՀՄ-ի լուծարումով: Մեր ասածը հիմնավորենը թվերով. երկրաշարժից երկու տարի անց՝ 1990թ. Գյումրու արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը 22 հազար մարդ էր,⁷ տարի անց՝ 1997թ. այդ ցուցանիշը նվազել է երկու, իսկ 2003թ.՝ 10 անգամ: Այդ տարիներին քաղաքից որակյալ աշխատունակ բնակչության արտագաղթն էլ հիմնականում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների փակմանը էր պայմանավորված: Այսպես, եթե 1990թ. քաղաքում թիվ թե՛ շատ աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների թիվը 37 էր, ապա 2003թ.՝ 16, որտեղ աշխատել են ընդհանուր 1069 մարդ, Արքիկ քաղաքի 5 ձեռնարկություններում՝ 96, Սարալիկ քաղաքի 2 ձեռնարկություններում՝ 68 և Ալսուլյան գյուղի 6 ձեռնարկություններում՝ 101:⁷ Այն, որ մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակի կտրուկ նվազումը բերելու էր արտադրության ծավալների նվազման, օրինաչափ էր: Եթե երկրաշարժի նախօրեին՝ 1988թ. Գյումրիի քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում 37.8 հազար աշխատատեղերի պայմաններում աշխատողների թվաքանակը կտրուկ նվազումը բերելու էր արտադրության ծավալների նվազման, օրինաչափ էր: Եթե երկրաշարժի նախօրեին՝ 1988թ. Գյումրիի քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում՝ 6.8 մլրդ. դրամի (նշված տարում այն կազմել է 13,6 մլն. դրամ), իսկ 2004թ.՝ 20 հազար աշխատատեղերի պայմաններում՝ 12,7 մլրդ. դրամի (նշված տարվա համարժեքով՝ 34,5, իսկ 1997թ. համարժեքով՝ 25,5 մլն. դրամ):

⁵ Մ. Մասսայան, Ա. Գյումրիության, Ա. Պոտոսյան, Ծիրակի մարզ (քննությունը, քնակչությունը, տնտեսությունը), Եր., 2002, էջ 103: Տեղեկագիր Ծիրակի մարզի սոցիալ-տնտեսական դրամականությունը 1995-1997թթ., Եր., 1997, էջ 2: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 11:

⁶ ՀՀ ԱՎԾ Ծիրակի մարզային վարչության տվյալներ, գիր 8, թ. 35:

⁷ Դաշտային ազգագույն հյութեր, Գյումրի, 2005, տեսար 15:

⁸ Մ. Մասսայան, Ա. Գյումրիության, Ա. Պոտոսյան, Անդր. աշխատանք, էջ 103: Տեղեկագիր Ծիրակի մարզի սոցիալ-տնտեսական դրամականությունը 1995-1997թթ., Եր., 1997, էջ 2: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 11: ՀՀ ԱՎԾ Ծիրակի մարզային վարչության տվյալները, գիր 8, թ. 35:

Ի մի քերելով Շիրակի մարզի, այդ թվում Գյումրի քաղաքի աշխատունակ տարիքի և գրաղվածություն ունեցող բնակչության թվաքանակի շարժընթացը ու արդյունաբերության արտադրության բողարկման ծավալների ու աշխատողների թվաքանակի փոփոխությունները ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ գալիս ենք ենթևալ եղրահանգման։ Վերջին 15 տարիների ընթացքում հանրապետության իշխանությունները գործնական քայլեր չեն կատարել մարզի արդյունաբերական հանալիքի հզորությունը պահպանելու ուղղությամբ։ Ավելին, 2003թ. սկսած՝ կառավարության որոշումներով արդյունաբերական մի շարք շենք-շինությունների քանդելը, եղած շինանյութերի շուկայականից ցածր գներով վաճառքը դեռևս շարունակվում է։ Մինչ օրս տեղական, մարզային և հանրապետության իշխանությունների կողմից չի մշակվել Շիրակի մարզի արդյունաբերության զարգացման համալիր ծրագիր։ Նույնիսկ առաջարկություններ չկան, թե արդյունաբերության զարգացման որ ճյուղերին պետք է նախապատվություն տալ։ Էլ ավելի է մեծացել մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական ֆոնդերի ֆիզիկական մաշվածությունը, բացատրել արտադրված ապրանքի ինքնարժեքը։ Եթե ասվածին ավելացնենք նաև այլ խոչընդոտող գործոններ՝ դեպի տարածաշրջանի խոշոր երկրներ՝ Ռուսաստան, Թուրքիա և Իրան երկարուղային տրանսպորտային ուղիների անգործությունը, որակյալ արդյունաբերական կայուների արտագաղթը գործազրկության պայմաններում նրանց մասնագիտական ունակությունների կորուստը և այլն, ապա պատկերն իրոք հուսադրող չէ։ Այսպիսի պայմաններում Շիրակի արդյունաբերության զարգացմանը և ձեռնարկություններում աշխատատեղերի ավելացմանը նպաստող գործոններ կարող են դառնալ նաև հումքային ռեսուրսների և եժան աշխատուժի, տրանսպորտային, արտադրական և ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների համար կայեր պատրաստելու նպատակով համապատասխան ուսումնական հաստատությունների վերաբացում։ (Հարուսակելի)

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В ШИРАКСКОГО РЕГИОНА (часть II)

Резюме

А. Бояджян

В конце XX-начале XXI в. в Ширакской области, в основном в городе Гюмри, зарегистрировано снижение как численности трудоспособного населения, так и объема промышленного валового продукта. Так, в 1985г. от общего объема промышленной продукции Советской Армении на долю Ширакской области приходилось 13.4%, в 1997г. только 3.2%, в 2003г. 2.7%. В городе Гюмри те же показатели составили соответственно 12.0, 2.6, 1.6%. В 1988г. на промышленных предприятиях Ширакской области работали около 50.2 тыс. человек, в 1997г.- 14 тыс., в 2003г.-3.3 тыс., в Гюмри соответственно 37.8, 10.5, 2.0 тыс. человек. Снижение численности работников в промышленных предприятиях, а также промышленной продукции обусловлено отсутствием четкой и целостной программы экономического развития региона.

Էրեգլի ԵՍԱՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ (VII-XI դդ.)

Իրեն հանցագործության ապացուցման հնարամիտ միջոց անգլոսաքսոնական քազավորություններում գրեթե լայն տարածում էին գտել շիկացած երկարով և եռացրած ջրով դատական փորձությունները, որոնք պատմահրավակական գրականությունում, որպես կանոն, ընդունված էր կոչել «Աստծու դատ Աստվածային դատաստան»¹ կամ «Աստծու սաստիկ պատիժ»:²

Դատական դաժան փորձությունների հնարամության միջոցով ծանրագույն հանցագործությունների բացահայտման, հանցագործի մեղքի կամ անմեղության հիմնավորման, հաստատման ու ապացուցման, ինչպես նաև օրինական և արդարացի դատավճիր կայացնելու վերաբերյալ փորձությունների քրեաղատավարության առեղծվածն առաջին անգամ հաստատագրել է Հնագոյն Բարելոնի սորվատիրական քազավորության տիրակալ Համմուրաբի թագավորը մ.թ.ա. 1792-1750ք.:

Համմուրաբի թագավորի օրենքների (դատաստանագրքի) 2, 129, 132, 141 և 143 հոդվածների իրավական շեշտադրության համաձայն՝ ծանրագույն հանցագործություն կատարելու մեջ կասկածվող մարդի փորձությունների էր ենթարկվում ջրով: Ըստ որում՝ Բարելոնի թագավորության դատարաններում հանցագործության ապացուցման տարատեսակներ էին համարվում կասկածյալի կամ մեղադրյալի երդում-ցուցմունքը, վկաների և տուժողների ցուցմունքները, գրավոր ու իրեղեն ապացույցները: Նրա դատաստանագրքի հոդված 2-ն ուղղակի սահմանում էր, որ, եթե մարդը մեղադրվում էր կախարդություն կատարելու մեջ, և կախարդությունը չէր ապացուցվում, ապա կասկածվողը կամ մեղադրվողը իրեն նետում էր հոսող գետի մեջ: Եթե գետը քշում տանում էր նրան, ապա մեղադրվողը տիրում էր մեղադրվող հանցագործի տանը: Իսկ եթե վերջինս չէր խեղդվում և անվնաս էր մնում, ապա այս դեպքում նա համարվում էր անմեղ, իսկ կախարդության մեջ մեղադրողը ենթարկվում էր մահապատժի: Այսպիսի հանցամանքներում ու դեպքերում մահապատժվածի տունը տնօրինում էր կախարդության մեջ կասկածված կամ մեղադրված անձը: Համմուրաբի թագավորի օրենքները հիշատակում են, որ սառը ջրով դատական փորձության էր ենթարկվում այն կինը, որն սիրաբանությամբ էր գրավվում այլ տղամարդու հետ: Այսպիսի դեպքում երկուսին կապում ու նետում էին գետը (հոդվ. 129): Այդպես էլ եթե կինն աննպատակ հեռանում էր տնից, աղքատացնում, շռայլաբար ու մսխաղաբար վատնում էր տան ունեցվածքը, ապա նրան ևս նետում էին գետը (հոդվ. 142, 143):³

Դատական փորձությունների քրեական դատավարության առեղծվածի շարունակությունն իր իրավական ամրապնդումն է գտնում Հնագոյն Հնդկաստանում՝ սորվատիրության դարաշրջանում, մասնավորապես, առասպեկտական նախահայր Մանոհի օրենքներում: Այդ իրավունքի աղյուրը շարադրել ու կազմել է Բրահմանների (սուրբ գրքերը՝ Վեդաները մեկնաբանողների) քրմական դպրություններից մեկը, մոտավորապես մ. թ. ա. II դարից մինչև մ. թ. թ դարն ընկած ժամանակաշրջանում: Պետք է ենթարկել, և դա հավանական է, որ Մանոհի օրենքները Հնագոյն Հնդկաստանի դրախմաշաստրայի իրավական նորմերի առաջին օրինակարգումը կամ օրենքների համակարգումն էր:

Հնագոյն Հնդկաստանում դատավարության ընթացքում ցուցմունքների հավաստման, հաստատման արժեքավորումը, իմանավորումը և որակումը կախված էին մարդկանց այն կամայականությունից և կամահաճությունից, թե որ կաստային կամ

¹ G. Frederick, Jr. Kent in, *Historical Introduction to Anglo-American Law. Third Edition. Pennsylvania, 1990, p. 58:*

² G. Smith, *A History of England. Third Edition. New-York, 1966, p. 24:*

³ *Տի՛ւ Զակոն Խամմուրապի, Մ., 1960; Խրեստոմատիա ու դատարանական առաջարկությունների համար, Երևան, 1984, էջ 56-57; Յ. Չերնիլովսկի, *Խրեստոմատիա ու դատարանական առաջարկությունների համար, Երևան, 1996, էջ 17-18:**

կաստաներին էր (of the caste or castanets) պատկանում վկան: Ըստ որում՝ բրահման-ների ցուցմունքների առավել արժեքավոր էին գնահատվում: Իսկ եթե վկաներ գոյություն չունեին, ապա դատավորները հարցի կամ մեղադրանքի իսկությունը և ճշմարտությունը բացահայտելու համար նշանակում էին դատական փորձություններ:

Մանոհ օրենքների իրավական տեսության համաձայն՝ Հնագույն Հնդկաստանում գոյություն են ունեցել ու կիրառվել են իինզ տարաբնույթ փորձություններ: Առաջին տարատեսակն էր կշեռով փորձություն: Ըստ որում, մեղադրյալին կշռում էին կրկնակի: Եթե նա երկրորդ անգամ իր կշիռով ավելի թերեւ էր, քան առաջին անգամ, ապա նա ճանաչվում էր անմեղ: Երկրորդ տարատեսակը փորձությունն էր կրակով: Այս դեպքում մեղադրյալն ատրաշեկ (շիկացած) առարկան բռնում էր իր ձեռքով: Եվ եթե այդ փորձությունից հետո խարանվածքի հետքեր չեն երևում, ապա նա ճանաչվում էր անմեղ:

Երրորդ տեսակի փորձությունը կատարվում էր սառը ջրով: Հանցագործության կատարման մեջ մեղադրվողին նետում էին սառը ջրով լցված խոր հորի մեջ, և եթե նա չէր խեղդվում, ապա դատարանը նրան ճանաչում էր անմեղ: Չորրորդ՝ փորձությունն էր բույնով: Այս դեպքում դատարանը որոշում էր կասկածյալին կամ մեղադրյալին տալ սահմանված չափի բույն: Եվ եթե բույնը խնելուց հետո վերջինս չէր մահանում, ապա համարվում է անմեղ.⁴ Հինգերրորդ դատական փորձությունը կասկածյալի կամ մեղադրյալի «աստվածային ոգեկրծման երրումն էր» հետևյալ բովանդակությամբ. «Ո՛վ, Տեր՝ իմ Աստված, եթե այս բանը արել եմ, եթե անհրավորյուն կա իմ ձեռքերում, եթե չար եմ հասուցել իմձ հետ խաղաղ լինողին և կողոպտել եմ իմձ զոր տեղը նեղացնողին, ապա բող քշնամին հայած իմ անձը և հասնել նրան, որ իմ կյանքը կոխ տայ գետնի վերայ և իմ փառքը հողի մեջ քնակեցնե՛»:⁵ Եվ եթե կասկածյալը կամ մեղադրյալը հանցագործության իսկության բացահայտման արարողության և երդման ժամանակ այլայլքում էր իր դեմքով, կեցվածքով ու վարրագծով, ընկնում էր շփոթության մեջ, ապա նրա մեղքը համարվում էր ապացուցված:

Մանոհ օրենքների 83 հոդվածը հիշատակում է, որ դատարանում ճշմարիտ ցուցմունք տալու համար վկաններ էին հանդիսանում բոլոր կաստաներին պատկանող մարդիկ: Իսկ 113 հոդվածը սահմանում և պատվիրագրում էր, որ ծանրագույն հանցագործությունների կատարման դեպքերում դատարանում հարկադրաբար երդվում էին բրահմանները, քշատրիմները, Վայշինները և շուղրինները:⁶

Հնագույն Բարեկոնի և Հնագույն Հնդկաստանի դատական դաժան փորձությունների իրավական տեսությունն իր կենսագործումն ու ընդօրինակումը գտավ Արևմտյան Եվրոպայում ավատափական թագավորությունների ծևափրման վաղ ժամանակաշրջանում: Այսպիս, «Գերուս վեցերորդ դարում Ֆրանկյան տարեգործությունները իշխատակում են փորձության մի քանի ձևեր, մասնավորպես, ֆրանկյան ավատափիրյան իրավունքի աղբյուրում՝ Սալիկյան պրավիդայում (Lex Salica):⁷ Այդ իրավունքի աղբյուրում գրավել են սալիկյան (առավելյան) ֆրանկների դատական տպությունները: «Դատական սովորությունների գրաված իրավունքի աղբյուրներ ունեին նաև գերմանական մյուս ցեղերը: Այսպիս, օրինակ՝ բուրգունդական ցեղերն ունեին իրենց բուրգունդական պրավրան, ալեմանները՝ ալեմանական, վեստգորերները՝ վեստգորերյան պրավիրան, բավարները՝ բավարական, սաքսերը՝ սաքսոնական պրավդաները: Այդ բարբարոսական պրավդաների իրավական համակարգում յորսահատուկ տեղ էր գրավում Սալիկյան, որը գրավել էր V-VI դարում՝ կարողինգների գահատոհմի թագավոր Հրոդվիգի կատարման ժամանակաշրջանում (481-511թթ.):

Սալիկյան պրավրայի՝ «Ձեռքերը կարսայից փրկազնելու մասին (LIII) վերտառության 1 և 3 դրվագները (LIII.1.3.) և «գոտարան շներկայանալու վերաբերյալ» LVI վերմագրի 1 դրվագը (LVI. 1) նվիրված էր ետացրած ջրով փորձությունների դատական ապացույցների հիմնավորվածությանը: Սեղադրյալ դատական փորձությունը կամ

⁴ Законы Хаммурапи, М., 1560; Хрестоматия по истории государства и права зарубежных стран, М., 1984, 12, 18, стр. 28-29.

⁵ Stein Աստվածաշունչ, Stuttgart, 1991, էջ 643:

⁶ Законы Хаммурапи, М., 1960; Хрестоматия ..., стр. 28-29.

⁷ G. Frederick Jr. Kempin, Աշվ. աշխ., էջ 58:

արարողությունը տեղի էր ունենում նաև ատրաշեկ երկաթով: Տվյալ ժամանակաշրջանի նարդկանց իրավական մտածողությամբ և պատկերացմամբ՝ արդար դատաստանն իրականացվում էր «գերբնական ուժի՝ Աստծու դատաստանի միջոցով»: Դատական փորձությունը կատարվում էր կաթուայի եռացրած ջրով: Փորձության ենթարկվող կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր էր իր ձեռքն ընկդմված պահել կաթուայի եռացրած ջրի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չեր արտաքերել սրբազն ու նվիրական, պատրաստի ու անփոփոխ ոգեկշռման արտահայտությունները: Ձեռքը կապում և որոշ ժամանակ անց մանրազնին բուժազննում էին դատարանում: Եթե փորձարկվողի ձեռքի վերքը սահմանված ժամանակում ամռվում և բուժվում էր, ապա դատարանը նրան անմեղ էր ճանաչում, հակառակ դեպքում նա դատապարտվում էր օրենքի ամենայն խսությամբ: Սահմանված փորձությունից օրենքով բույսարվում էր ազատվել միայն վրկազնի միջոցով, եթե կասկածյալը կամ մեղադրյալն օրենքով նախատեսված կարգով տուգանք էին վճարում տուժողին և քազակորին:⁸ Իհարկե, վրկագննումը՝ որպես արտոնություն, նախատեսված էր հարուստ և ունեող խավերի ու խմբերի համար:

Ֆրանսիայի ավատատիրական թագավորությունում՝ դեռևս նրա սկզբնավորման ու կազմադրման ժամանակաշրջանում, քաջի դատական փորձություններից, դատարանում ապացույց էր համարվում երրում-ցուցմոնքը, ինչպես նաև դատական մենամարտը: Բայց վերջին դեպքում բույսերը, ինքանները և կանայք կարող էին իրենց փոխարեն առաջ քաշել կամ առաջարիել, այսպես ասած, մարտունակ ռազմիկներին:

Ժամանակակից ամերիկյան իրավագետ-պատմաբան Ֆրեդերիկ Զ. Շենքինը «Անգլ-ամերիկյան իրավունքի պատմական ներածություն» աշխատությունում հիշատակում է, որ քրիստոնեության հետ մեկտեղ դաժան փորձությունները տարածվում էին Արևելյան Եվրոպայում, Անգլիայում և Իռլանդիայում: Փորձությունները զիսավորապես լայն կիրառում են ստանում վկաս IX-XII դր.⁹ Գործածվել են դաժան փորձությունների չորս ձևեր՝ եռացրած կամ սառը ջրով, շիկացած երկաթով և նվազագույն կերակրով: Առաջին երկուսը կիրառվում էր առքատների և անազատների նկատմամբ: Անազատների նկատմամբ գործածվում էր նաև ատրաշեկ երկաթով փորձությունը:

Նվազագույն կերակրով փորձությունը գործադրվում էր հանցագործության կատարման մեջ մեղադրվող հոգևորականի նկատմամբ:¹⁰

Հնագույն Անգլիայի թագավորությունների օրենսդրություններում հիշատակվում են քրեական դատավարության իրավունքի նորմերի խախտման դեպքերում դատարանի կողմից նշանակվող այնախիք փորձություններ, որոնք կիրառվել են դեռևս Հնագույն Բարեկոնի և Հնագույն Հնդկաստանի թագավորությունների քրեական դատավարություններում:

Այսպես՝ Ունեսերսի Իննե քազակորի (688-726ը.) օրենքների 37 հոդվածի համաձայն, եթե կեռը քազմարիլ անզամ մեղադրվել էր զողորյան կատարման մեջ և կաթուայի եռացրած ջրի միջոցով ճանաչվել էր որպես հանցագործ-մեղադրյալ, ապա կտրում էին նրա ձեռքը կամ ոտքը:¹¹

Էդգար քազակորի (959-975ը.) օրենքների իրավական տեսության համաձայն՝ դատական փորձությունը կարող էր փոխարինվել նյութական պատասխանատվությամբ: Նա հարյուրակների տիրույթների վերաբերյալ իր հրամանագիր-օրենքում հիշատակում է, որ «եռակի փորձությունը պետք է գնահատել երեք ֆունտ, իսկ առանձինը՝ մեկ ֆունտ»:¹²

Դատական դաժան փորձությունները որպես՝ հանցագործության ապացուցման միջոց, որոշակի տեղ էին գրավում նաև Էտելրեդ II թագավորի (978-1016ը.) բենք-

⁸ Хрестоматия памятников феодального государства и права стран Европы, М., 1961, стр. 21-23.

⁹ G. Frederick, Jr. Kempin, նշ. աշխ. էջ 58.

¹⁰ Նոյն սեղում, էջ 59:

¹¹ Attenborough. The Laws of Earliest English Kings. London, 1922; Smith G. A History of England. Third edition. New-York, 1966, p. 24-25.

¹² Stubbs W. Selections, Charters and other illustrations of English Constitutional History. Oxford, 1870, p. 69-70.

ներում:¹³ Ընդ որում, ինչպես Էդգար, այնպես էլ Էտելրեդ II թագավորների օրենքներում հիշատակվում է երկալի և եռակի դաժան դատական փորձությունների նասին:

Անգլիայի ավատատիրության իրավունքի աղբյուրները հավաստում են, որ 938թ. մինչև 1000թ. ընկած ժամանակաշրջանում դատական փորձությունների իրավական հիմունք է եղել անհայտ հեղինակների կողմից գրված և քրեական դատավարությունում կիրառված, «Ծիկացած երկարով ու եռացրած ջրով, փորձությունների նասին օրենքը»:

Հիշյալ օրենքի I հոդվածում ուղղակի գրված է «Աստծու իրամանով՝ երկարով կամ ջրով փորձությունների կատարումը պատվիրագրվում է Քենտրությունի արքեպիսկոպոսին, մյուս եպիսկոպոսներին»:¹⁴ Իսկ փորձության կատարումը տեղի էր ունենում եկեղեցում՝ քահանաների ներկայությամբ: Եթե փորձությունը կատարվում էր ջրով, ապա այն պետք է տարացվեր մինչև եռման աստիճան: Որպես կանոն՝ եռման ջրի շոգեկարսան պետք է լիներ երկարից կամ պղնձից, կապարից կամ իրակայուն կավից: Եթե կասկածյալը կամ մեղադրյալը էր փորձության շիկացած՝ երկարով, ապա նա ընպում էր սրբազնության կամ օրինված ջուրը, կապկապում էին նրա այն բացուկը, որով բռնելու և նետելու էր ատրաշեկ դարձած երկարը: Դրանից հետո փորձարկվողի բազուկը կնիքվում և երրորդ օրը բուժազննվում էր՝ դատարանում ապացուցելու համար նրա մեղքը կամ անմեղությունը: Այդ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում էր, որ դատական փորձության այդպիսի կարգը խախտելու դեպքում փորձությունը համարվում էր անվավեր, իսկ հանցագործության կատարման մեջ մեղադրվողը բազավորին չինազանդիկելու պարագայում տուգանվում էր 120 շիլլինգով: Սակայն նշված օրենքում չէր հիշատակվում, թե դատական փորձությունը նման պարագայում կրկնվելու է, թե ոչ: Պետք է ենթադրել, որ այն շարունակվելու էր այնքան ժամանակ, քանի դեռ կասկածյալի կամ մեղադրյալի մեղքը կամ անմեղությունն ապացուցված չին դատական կարգով: Եվրոպական մայրցամարտում IX-XII դարերում դատական դաժան փորձությունները գործածվում էին ոչ միայն ծանրագույն հանցագործությունները բացահայտելու համար դատական դաժան փորձության էլեմենտներում, այլև քաղաքական նպատակների հասնելու համար: Միջնադարյան Անգլիայում, որպես կանոն, դատական դաժան փորձությունները կիրառվում էին միայն այն դեպքում, եթե անհրաժեշտ էր քրեական գործերը հասցնել հավաստի և վերջնական լուծնան: Ծանրագույն հանցագործությունները բացահայտելու համար դատական դաժան փորձության էին ենթարկվում ոչ միայն տղամարդիկ, այլև խիստ անհրաժեշտ դեպքերում նաև կանայք:¹⁵

Արևմտյան Եվրոպայում «Աստվածային դատաստանի» յուրաքանչյուր դաժան փորձություն, ըստ էության, իրենից ներկայացնում էր եկեղեցական մի փառավոր արարողության բաղկացուցիչ իրադարձություն: Չնայած բարձրաստիճան հոգևորականները ծանրակշիռ աջակցություն էին ցույց տալիս դատական դաժան փորձությունների իրականացմանը, այնուամենայնիվ, այդ առնչությամբ արդեն IX դարում բազմաթիվ ու բազմաթիվ էին նաև բողոք-գանձատները դատական դաժան փորձությունների գործադրման դեմ: Իսկ XII դարից սկսած՝ այն քննադատության ավելի սուր բնույթ ուներ և համեմիանուր դժգոհության տեսլիք էր տալիս հասարակական լայն խավերի ու խմբերի շրջանակներում: Մեղմելու համար հասարակական վրդապնունքը, հոգևորականությունը տարաբնույթ փաստարկներ էր մեջքերում, որոնք հավաստի և համոզեցուցիչ չին: Իսկ աշխարհիկ քաղաքական իշխանությունը դատական դաժան ու ծանր փորձությունների դադարեցումը հիմնափորում էր նրանվ, որ մինչև XI դարը հոռոմեական կարգիկ եկեղեցու պապերը ենթարկվել էին աշխարհիկ դատական ատյաններին և այդ պապերից շատերը նշանակվել ու պապական աթոռից հեռացվել էին կայսր-տիրակալի կողմից:¹⁶

1215թ. իրավիրվում է Լյութերականության չորրորդ խորիոյի նատաշրջան, որտեղ խորիոյի ազդեցիկ ու հեղինակավոր անդամները նպատակաւաց և արտակարգ

¹³ Attenborough. *The Laws of Earliest English Kings*. London, 1922, Stubbs W. *Select Charters and other illustrations of English Constitutional History*. Oxford, 1870, p. 71-72.

¹⁴ Стін Хрестоматія пам'ятників феодального господарства и права стран Европы. М., 1961, стр. 91- 92.

¹⁵ G. Frederick, Jr. *Ke m p i n , նշվ. աշխ., էջ 59-60:*

¹⁶ Նոյն տեղում, էջ 60:

քննադատության են ենթարկում հոգևոր դատական դաժան փորձությունների գործադրությունը։ Խորիրդի աստվածաբան անդամները Աստվածաշնչի հոգևոր դրույթներով էին հիմնավորում միայն նրա դատաստանների ճշմարիտ և արդար լինելը՝ պնդելով, որ Աստված ինքն է սահմանել հոգևոր պատման ճշմարիտ անհավատության, ստախուսության, անբարոյականության և հոգևոր բոլոր մերժերի համար։ Մինչեռ, այսպես կոչված, «Աստվածային դատաստանները» հակասաստվածային, հակահոգևոր հնարքներ են, որ հակասում են Աստծու կամքին և նրա նկատմամբ եղած հավատքին, հույսին և սիրուն։ Նրանք միաժամանակ հաստատագրում էին, որ Աստված ֆիզիկական տանջանքներ չի նախատեսել մարդու, նույնիսկ հանցագործների համար, և որ հանցագործությունը աշխարհիկ մեղք է։ Լյութերականության չորրորդ խորիրդի կողմից «Աստվածային դատաստանի» մերժումը արժանանում է քաղաքական իշխանությունների և ժողովուրդի բուռն հավանությանը։ Այդ խորիրդի որոշմանը՝ վաճականներն այլևս իրավունք չունեիմ իրականացնելու դատական դաժան փորձությունները։ Իսկ պետական-իրավական տեսակետից դա մի առաջադիմական քաղաքական քայլ էր եկեղեցին պետությունից, աշխարհիկ իշխանությունից անջատելու գործընթացի մեջ։¹⁷

Դատական դաժան փորձությունների գործադրման փլամարեն հանցագործության կատարման մեջ մեղադպություններին դատապարտելու, ինչպես նաև արդարացնող կամ դատապարտող դատավճրության կայացնելու համար դատավորներն աստիճանաբար սկսում էին դիմել երդվյալ ատենականների իրավական ինստիտուտին՝ երդվյալ ատե-

նականների դատարանին։ Դատական ճամանակ իրենց կարծիքն արտահայտելիս երդվյալ ատենականները իմբ էին ընդունում ոչ թե վկայությունները, այլ տվյալ գործի վերաբերյալ ձեռք բերված բոլոր տեղեկությունները։ Սակայն դատապարտության այդ կարգը նորամուծություն էր, և դատարանը իրավունք չուներ որևէ ձևով հարկադրել մեղադպության՝ ենթարկվելու քրեափական դատավարության այդ նոր կարգին։ Եվ եթե նա մերժում էր ժյուրիին՝ երդվյալ ատենական դատավորներին, ապա քրեական գործը քննող դատարանը փակուղու առաջ էր կանգնում։ Քրեական դատավարության այս փակուղին կամ դատավարական այս բացն իր վերջնական լրացումն է ստանում 1275թ. Վեստմինստերյան I ստատուտում։¹⁸ Եթե մեղադրյալը իրաժարվում էր ժյուրիին ընդունելուց, ապա ձերքակալվում և ենթարկվում էր ֆիզիկական տաճանքների։ Քանտարկյալները իմբնականում չեն ընդունում ժյուրիին, քանի որ այն նշանակված էր դատավորներից, որոնք նախկինում իրենց դատապարտել էին։ Իսկ դա նշանակում էր, որ մեղադպական դատավճրը նախօրոք կանխորշված բնույթ էր կրում։ Դատաիրավական այս բացը կամ խոշընդուտը վերացվում է 1351-1352 թթ., եթե որոշվում է ժյուրիի կազմում չընդգրկել այն դատավորներին, ովքեր դատապարտել էին մեղադպության։ Քրեական դատավարության այս ընթացակարգին դատավարական վերջակես է դրվել մոտավորապես հարյուր տարի հետո։ Քանի որ ժյուրիի անդամների համար քրեական դատավարության ընթացքում իրավական իմբը կենսափորն ու գիտելիքներն էին, ուստի հնարավոր էր ու չըր բացառվում գիտակցարար կամ ոչ գիտակցարար սխալ դատավճռի կայացումը։ Եվ եթե դատավորը կասկածում էր ժյուրիի կայացրած դատավճռի արդարացիությանը, ապա նա նշանակում էր 24 մարդուց բաղկացած մեկ այլ ժյուրի՝ կեղծիքի համար դատապարտելու առաջին անդամներին։ Վերջիններիս մեղավոր ճանաչվելու դեպքում դատարանը իրավունք ուներ ձերքակալելու առաջին ժյուրիին և բռնագրավելու նրա շարժական կայքը՝ հօգուտ քաղաքուրական իշխանության։ Դատավորի այսպիսի որոշումը չկատարելու կամ արհամարելու դեպքերում դատարանը կարող էր ժյուրիին մեծ չափերի հասնող սուլանքի ենթարկել։

XVI դարում ժյուրին՝ երդվյալ ատենական դատավորների ինստիտուտը, պատախանատու է դառնում նաև այլ, ընդհուպ մինչև Աստուային պալատի դատավարական գործընթացների համար։¹⁹

Այսպիսով, Արևմտյան Եվրոպայում, առանձնապես Անգլիայում, «Աստվածային դատաստանի» դաժան փորձություններն աստիճանաբար դուրս են մղվում քրեա-

¹⁷ G. Frederick, Jr. *Cemetery, Աշվ. աշխ.*, էջ 62:

¹⁸ Նոյն տեղում, էջ 63:

¹⁹ Նոյն տեղում, էջ 63-64:

կան դատավարությունից, կանխվում է դատական ապացույցների ձեռքբերման դաժան փորձությունների ոչ իրավական համակարգը։ Ակավում է եկեղեցին քաղաքական իշխանությունից տարանջատելու գործընթացը։ հանցագործության կատարման մեջ կասկածվողների կամ մեղադրվողների վերաբերյալ քրեական գործերի դատավարության իրավունքի վերապահումը աշխարհիկ դատարանների իրավագործությանը և երդվյալ ատենականների կազմակորումը։

СУДЕБНЫЕ ИСПЫТАНИЯ В АНГЛИЙСКОМ ПРАВЕ (VII-XIVв.)

— Резюме —

— Э. Есаян —

В Западной Европе, особенно в Англии, суровые судебные испытания как духовная мера наказания “Божественной расправы” постепенно вытеснялись из уголовного процесса, была отменена несудебная структура получения доказательств с помощью суровых испытаний, начался процесс разграничения церкви от политической власти. Уголовное судопроизводство в отношении преступников, привлеченных к уголовной ответственности, было передано под ведение светских судов, также основался и сформировался Суд присяжных заседателей.

Յուղարեր ՅԱՓՈՒՆՉՅԱՆ Գայանե ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

ԱՆՑՈՒՍԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Բորսայական ինդեքսները բորսայական առևտուրը բնութագրող հիմնական ցուցանիշներն են: Այդ ինդեքսները բնութագրում են ոչ միայն արժեքրերի շուկայի իրավիճակը, այլև տնտեսության զարգացման դիմամիկան: Զարգացած երկրներում այդ ինդեքսները հանդիսանում են նակրոտնեսական կարևորագույն ցուցանիշ: Զարգացող և, հատկապես, անցումային տնտեսություններում ինդեքսների կառուցման հետ կապված դժվարությունները բացատրվում են շուկաների ցածր իրացվելիությամբ, եթե որոշ բաժնետոմսերի գնաճումները կարող են երկար ժամանակ գոյություն չունենալ: Այս հիմնախնդիրն այսօր ցայտուն է արտահայտված Հայաստանում: Անցումային տնտեսություններում չափազանց կարևոր են արժեքրերի շուկաների ինդեքսների կառուցման սկզբունքները: Եթե զարգացած շուկաների համար տարրեր սկզբունքներով կառուցված ինդեքսները նոյն ընտրանքի դեպքում հիմնականում տալիս են շատ մոտ արդյունքներ, ապա անցումային տնտեսություններում, որոնց արժեքրերի շուկաները, ինչպես արդեն նշվել է, բնութագրվում են ցածր իրացվելիությամբ, ստացված արդյունքները կարող են իրարից խիստ տարրերվել: Այսպիսի իրավիճակում չափազանց կարևոր է ինդեքսը այնպես կառուցել, որ:

1. Ինդեքսը հաշվարկելիս օգտագործվեն շուկայում իրականացվող փոքրաբիլ գործարքների հնարավորին չափ շատ տվյալներ: Հասկանալի է, որ այս նպատակին կարելի է հասնել ընտրանքը մեծացնելու հաշվին: Սակայն ընտրանքը չափազանց մեծացնելիս առաջ է զալիս մեկ այլ գտանք՝ այնպիսի բաժնետոմսերով գործարքները, որոնք շուկայի վրա որևից իրական ազդեցություն չունեն:

2. Հնարավոր է, որ այսպիսի շուկաներում իմաստ ունի կառուցել այնպիսի ինդեքսներ, որոնք բնութագրում են ոչ միայն գնային տատանումները, այլև շուկայի ակտիվույթն մակարդակը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում ինդեքսները կառուցելիս որոշ չափով կարող են փոփոխվել կառուցման վերը թվարկած սկզբունքները: Առաջին սկզբունքը չափողականությունն է: Ծատ կարևոր է, որ ընտրանքի չափողականությունը համապատասխանի տվյալ ինդեքսով նկարագրվող բորսայական սեկտորը կազմող ընկերությունների քանակին, կամ որևից չափանիշով ընտրված տվյալ սեկտորի առավել կարևոր ընկերությունների քանակին: Թերի զարգացած արժեքրերի շուկաներ ունեցող անցումային տնտեսություններում իմաստ ունի կիրառել փոփոխական ընտրանքի չափողականություն ունեցող ինդեքսներ: Այս մոտեցումը թույլ է տալիս արձագանքել այսպիսի շուկաների կառուցվածքի և առաջատարների արագ փոփոխության գործընթացներին: Նշենք նաև, որ թերի զարգացած շուկաներում օգտագործվում են նաև չափազանց փոքր ընտրանքով ինդեքսներ, որոնք թույլ են տալիս գործ ունենալ միայն այն բաժնետոմսերի հետ, որոնք խիստ համապատասխանում են ընտրված չափանիշներին: Միևնույն ժամանակ, փոքր ընտրանքի դեպքում կարող է կորչել ներկայացուցչականության պատշաճ մակարդակը:

Հաջորդ սկզբունքը ներկայացուցչականությունն է, այսինքն՝ ինդեքսի մեջ մտնող բաժնետոմսները ինչպես են արտահայտում տվյալ ճյուղի վիճակը: Ինդեքսի հաշվարկման ընտրանքը կազմող բաժնետոմսների ընտրությունը իրականացվում է որոշակի սկզբունքների հիման վրա: Զարգացած երկրներում այդպիսի սկզբունքներից հիմնականում հանդիսանում է զալիս որևից բորսայում լիստինգ անցնելը և, ավելի հազվադեպ, բորսայական կապիտալիզացիայի որոշակի մակարդակը: Ծյուղային ինդեքսների համար որպես այդպիսի ցուցանիշ, բնականարար, հանդիսանում է զալիս նաև տնտեսության համապատասխան ճյուղին պատկանելը: Զարգացող և անցումային երկրներում, բացի վերը նշված գործուներից, որպես չափանիշ համախ օգտագործվում են նաև հետևյալ ցուցանիշները:

- տվյալ բաժնետոմսի գնանշումներն ունեն սահմանված ժամանակահատվածով պատմություն,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված հաճախականությամբ գնանշումներ,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված ժամանակահատվածով դիվլիդենտային պատմություն,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված ժամանակահատվածով անընդմեջ գնանշումներ:

Հասկանալի է, որ այս կամ այն չափանիշը և այս կամ այն սահմանված ժամանակահատվածն ընտրելիս անհրաժեշտ է նախ ուսումնասիրել հետազոտվող շուկան, ճիշտ ընտրելու համար առավել օպտիմալ ժամանակահատվածները և չափանիշները։ Այստեղ նոյնպես, հաշվի առնելով թերի զարգացած արժեքորերի շուկաների առանձնահատկությունները, չափանիշները և հատկապես ժամանակահատվածները կարող են փոփոխական լինել։

Հայաստանի Ֆոնդային բորսան և ծրագրավորում է մոտակա ժամանակաշրջանում ներմուծել ֆոնդային ինդեքս, որի կառուցման մեխանիզմի ընտրության համար կատարվել են նի շարք հետազոտություններ։

Հայաստանի Ֆոնդային բորսայի ինդեքսի հաշվարկման ամենաարդյունավետ մեխանիզմը կարող է լինել համաշխարհային պրակտիկայում առավել օգտագործվող, իսկ անցումային տնտեսություններում հատկապես օգտագործվող կապիտալիզացիայով կշռված ինդեքսները։ Ինդեքսների հաշվարկման այլ մեխանիզմներն ունեն որոշակի թերթություններ, որոնք Հայաստանի կապիտալի շուկաների թերի զարգացվածության պայմաններում կարող են թերել անհաղթահարելի բարդությունների։ Ինչպես արդեն նշվել է, ցածր իրացվելիություն ունեցող շուկաների համար շատ կարևոր է ընտրել ինդեքսների կառուցման ձևուն մեխանիզմ այնպես, որ այն բույլ տա հաշվի առնել շուկայում իրականացվող փորբարիվ գործարքների մեծ մասը՝ միաժամանակ հնարավորություն ստեղծի խուսափել ոչ էական գործարքների հաշվարկումից։ Բացի այդ, մեխանիզմը պետք է հնարավորություն ստեղծի փոփոխական շափողականությամբ և ներկայացուցչականությամբ ինդեքսների կառուցման համար։ Կարևոր է նաև ինդեքսը կառուցելիս հնարավորություն ունենալ հաշվի առնելու այս կամ այն բաժնետոմսներով իրականացվող գործարքների ակտիվությունը կամ հաճախականությունը։ Ենթերվ վերը նշված իմնադրությունը՝ կառուցվել են տարբեր ինդեքսները ինդեքսները կառուցված են Հայաստանի ֆոնդային բորսայում լիստինց անցած բաժնետոմսներով իրականացված գործարքների հիմնա վրա։ Որպես տվյալների բազա ընտրված են ՀՖ-ում իրականացված գործարքները՝ սկզբած առաջին առևտրային նատաշրջանից՝ 2001թ. հուլիսի 6-ից մինչև 2002թ. նոյեմբերի 14-ը։ Ընդ որում, ինդեքսների կառուցումը սկսված է ոչ շուտ, քան 2002թ. հունվարի 1-ից, երբ բավականաչափ ընկերություններ էին ցուցակվել, և բորսայում իրականացվել էին որոշակի քանակությամբ գործարքներ։ Հետազոտությունները իրականացվել են հատուկ այս նպատակի համար Visual Basic համակարգային ծրագրավորման լեզվով և MS SQL տվյալների բազաների կառավարման համակարգով։ Ազգրիքնը հիմնված է կապիտալիզացիոն ինդեքսների հաշվարկման բանաձևերի վրա։ Ծրագիրը բույլ է տալիս փոփոխել հետևյալ մեծությունները։

1. Ինդեքսի չափողականությունը։ Մասնավորապես, ավտոմատիկորեն հաշվի են առնվում լիստինցի և դելիստինցի գործընթացները, այն դեպքերում, երբ ինդեքսի կառուցման համար օգտագործվում են բոլոր լիստինց անցած բաժնետոմսները։

2. Ինդեքսի ներկայացուցչականությունը։ Այսպես, հնարավորություն կա ընտրել ցանկացած ժամանակահատվածի համար ցանկացած քանակությամբ լավագույն բաժնետոմսները։ Այս հաճախանքը շատ կարևոր է, երբ ինդեքսը կառուցվում է որոշակի սկզբունքով ընտրված լավագույն ո քանակությամբ բաժնետոմսների հիմնա վրա։ Ծրագիրը բույլ է տալիս փոփոխել ինչպես ո արժեքը, այնպես էլ ընտրել համապատասխան ցանկությամբ լավագույն բաժնետոմսները։ Կարող է կիրառվել լավագույն բաժնետոմսեր ընտրելու երկու տարրերակ.

- առավել ակտիվ առք ո վաճառքի առարկա հանդիսացող բաժնետոմսները (որոշվում է նախորդ առևտրային նատաշրջանների ընթացքում իրականացված գործարքների քանակով),

- առավելագույն կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսները:

Այդ հետազոտությունում որպես լավագույն բաժնետոմսների շահանիշ վերցրել են առավել ակտիվ առ ու վաճառքի առարկա հանդիսացող բաժնետոմսները: Երբ այս շահանիշով բաժնետոմսները հավասար են, ապա որպես լավագույն հանդես է զայխ ավելի մեծ կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսը: Կապիտալիզացիայի գործակիցը որպես իիմնական շահանիշ չեն վերցրել, քանի որ ցածր իրացվելիության պայմաններում լավագույն կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսները կարող են երկար ժամանակահատվածի ընթացքում (ամիսներ) չհանդիսանալ գործարքի առարկա և հետևաբար չպարունակել որևէ օգտակար տեղեկություն ինդեքսի կառուցման համար:

3. Գործարքների առարկա չինելու ժամանակահատվածը. Ծրագիրը հնարավորություն է տալիս սահմանել ժամանակահատված, որի ընթացքում բաժնետոմսը գործարքի առարկա չհանդիսանելու դեպքում ավտոմատիկորեն դուրս է զայխ ընտրանքից, իսկ եթե տեղը գրավում է ըստ ընտրված շահանիշի հաջորդ լավագույն բաժնետոմսը: Այս ժամանակահատվածը նույնականացնելու համար է փոխել:

4. Բազիսային օրը: Ծրագիրը թույլ է տալիս ինդեքսի հաշվարկը սկսել ցանկացած բազիսային օրվանից: Մասնավորապես, այսուղեւ հաշվարկվել են ինդեքսներ երեք տարբեր բազիսային օրերի համար: Այդ բազիսային օրերն են՝ 2001թ. հունվարի 3-ը, 2001թ. փետրվարի 1-ը և 2001թ. մայիսի 1-ը: Հասկանալի է, որ բազիսային օրը մի անգամ ընտրելուց հետո չի կարելի համախ փոխել: Այդ հետազոտությունների նպատակը բազմաթիվ կորեր ստանալուց հետո էնակիրկի ճանապարհով լավագույն պարամետրեր ունեցող կորի ընտրությունն է: Բոլոր կորերի համար որպես բազիսային օրվա արժեք է ընտրվել 1000-ը: Այսպիսով, վերը թվարկված սկզբունքներով կառուցվել են 42 կորեր: Եվ տարբեր սկզբունքներով կառուցած կորերը նոյն տվյալների բազաների համար տախուն են իրարից բավականին տարբերվող արդյունքներ: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում ստացված կորերից գտնել լավագույնը:

Սուբյեկտիվ գնահատականներից խոսափելու համար որպես լավագույնի շահանիշ ընտրվել են հետևյալ երկուար՝

1. Ստացված կորերի վարիացիայի գործակիցը, որը հաշվարկվում է որպես ստացված արժեքների միջինի և վարիացիայի բաժանորդ:

2. Փոխադարձ կորելյացիայի գործակիցների միջինը: Այս ցուցանիշը հաշվարկելու համար կազմված է կորերի փոխադարձ կորելյացիաների գործակիցների աղյուսակ: Ամեն կորի համար հաշվարկված է մյուս 41 կորերի կորելյացիայի գործակիցների գումարը և բաժանված է 41-ի: Բացասական կամ փոքր փոխադարձ կորելյացիայի միջին գործակից ունեցող կորերը դուրս կմնան լավագույն կոր հանդիսանալու դիտարկումից, քանի որ նրանցով ստացված արդյունքներն առավել շատ են տարբերվում բոլոր կորերով նկարագրվող ընդհանուր միտումներից: Մնացած կորերից լավագույնը ընտրվում է փոքր վարիացիայի գործակից ունենալու սկզբունքով, քանի որ բարձր վարիացիայի գործակիցը նշանակում է ինդեքսի ավելի մեծ տատանումներ, որոնք շատ դեպքերում կապված կլինին ոչ բն շուկայում իրականացր պրոցեսների, այլ պարզապես ինդեքսի կառուցման պարամետրերի ոչ օպտիմալ լինելու հետ:

Սիևույն ժամանակ շատեր է մոռանալ՝ որքան մեծ է դիտարկման ժամկետը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ վարիացիայի գործակիցը կարող է մեծ լինել: Այդ պատճառով, երկրորդ շահանիշը օգտագործելիս, պետք է համեմատել միևնույն բազիսային ժամանակահատված ունեցող կորերը:

Այս հետազոտությունների արդյունքներից ենելով Հայաստանի ֆոնդային բրուսան մշակել է ինդեքսի հաշվարկման նախագիծ, որի էռորյունը հետևյալն է: Նախ ինդեքսը կոչվում է ARDEX: Այս ինդեքսի հաշվարկման բազայի մեջ են մտնում այն ընկերությունները բաժնետոմսները, որոնք ցուցակված են ՀՖ-ում: Ինդեքսի հաշվարկման բազան կազմված է երկու մասից. իիմնական (իր մեջ ընդգրկում է 10 արժեքուր) և լրացուցիչ (իր մեջ ընդգրկում է 5 արժեքուր): Լրացուցիչը նախատեսված է ինդեքսի հաշվարկման իիմնական բազայում փոփոխություն կատարելու նպատակով: ARDEX ինդեքսի բազայի մեջ մտնող արժեքուրների ընտրությունը կատարվում է համաձայն վերը նշված 2 գործունների (տվյալ ընկերության կապիտալիզացիայի և շրջանառության ծավալի): ARDEX-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ARMEX=Market Capitalization/Latest Index Divisor

$$\text{Market Capitalization} = \sum_{i=1}^n P_{i,t} * Q_{i,(t-1)} * R_i \text{ որտեղ}$$

$P_{i,t}$ -i-րդ արժեքը գիմն է ժամանակի տպահին,

$Q_{i,(t-1)}$ - i-րդ արժեքը քանակությունն է շրջանառության մեջ ժամանակի տպահին,

R_i - i-րդ արժեքը ներկայացուցչականության գործակիցն է:

Ներկայացուցչականության գործակիցն նպատակն է՝ նվազեցնել ինդեքսում այն արժեքը, որն էլ կապիտալիզացիան գերազանցում է ինդեքսի հաշվարկման բազայում ընդգրկված արժեքը ընդհանուր կապիտալիզացիայի 30%-ը:

Latest Index Divisor-ը ճշտման գործակիցն է՝ կորպորատիվ իրադարձությունները հաշվի առնելու համար:

ПРИНЦИПЫ ИНДЕКСИРОВАНИЯ В ПЕРЕХОДНЫХ ЭКОНОМИКАХ

Резюме

Ю. Япунджян, Г. Салназарян

Для общей характеристики конъюнктуры рынка ценных бумаг, оценки его состояния используются некоторые синтетические показатели, при составлении которых необходимы сведения относительно объема и цены сделок. Обрабатывая имеющиеся под рукой сведения, фондовые биржи получают показатели, которые называются индексами. Индексы включают цены всех сделок вместе с их объемами. В статье представлены принципы построения биржевых индексов в странах с экономикой переходного периода. В частности представлен индекс ARMEX, разработанный армянской фондовой биржей. Исходя из индексов, характеризующих биржевую торговлю, можно получить представление не только о состоянии рынка ценных бумаг, но и о динамике экономического развития.

Рузанна МАРДОЯН

ПРОБЛЕМЫ ПЕДАГОГИЧЕСКОЙ АКСИОЛОГИИ В ИССЛЕДОВАНИЯХ АРМЯНСКИХ ПЕДАГОГОВ XIX В.

Длительное время аксиологические проблемы не являлись самостоятельной областью исследования и рассматривались в рамках философии. С появлением педагогической теории они стали изучаться педагогами, которые в различное время с разной глубиной исследовали вопросы педагогической аксиологии. Это в первую очередь были такие европейские педагоги, как В. Ратке, Я. А. Коменский, Ж. Ж. Руссо, И. Г. Песталоцци, И. Ф. Гербарт и др. Аксиологический подход к педагогическим проблемам отразился и в работах русских педагогов: Л. Ф. Магницкий, В. Н. Татищев, В. С. Соловьев, К. Д. Ушинский и др. Армянские педагоги, рассматриваемого периода, тоже внесли свой вклад в процесс формирования, развития педагогической аксиологии. Рассмотрим это на примере анализа педагогических взглядов наиболее известных армянских педагогов XIX в.

Х. Абовян – основатель армянской народно-демократической педагогики. Его педагогические взгляды сформировались под воздействием русских революционеров-демократов. Он выдвигал идеи построения новой системы образования, демократической и гуманистической по своей сути, и поэтому основу его взглядов составляли гуманистические ценности. Х. Абовян видел тяжелые условия жизни, гнет, нищету народа и причиной считал невежество народа. А единственный путь освобождения от этих условий видел в просвещении. Высочайшей ценностью он считал образование. Выдвигая образование, воспитание как ценности, он выступал за планомерную, целенаправленную организацию учебно-воспитательного процесса, т.е. за формирование личности ребенка в государственной системе образования, в школе. Век Просвещения выдвинул новые ценностные взгляды на образование, не просто признавал ценность знания, но и провозгласил право на знание, поставив вопрос о создании системы всеобщего образования. И это, конечно, нашло отражение в педагогических взглядах Х. Абовяна, и он в духе времени выдвинул следующие положения: осуществление реального образования в школе, обеспечение обязательного, гармоничного и всестороннего развития всех детей, обоих полов¹ и др.

С начала XIXв. в педагогике развивалось общенациональное направление, отстаивающее ценности народного достоинства, гордости. Х. Абовян тоже руководствовался этими ценностными ориентирами и в своих педагогических исследованиях («Պատմության Տիգրանի», «Եափառապահ», «Պարագա Վահագի» и др.) на практическом уровне решал вопросы нравственного воспитания: воспитание патриотизма, любви и уважения к родителям, честности и др. Процесс нравственного воспитания у Х. Абовяна обладает ценностью только в том случае, если он опирается на правильный выбор методов воспитания: изучение поведения ребенка, любовь и уважение к личности ребенка и т. д.

Х. Абовян выдвинул много новых педагогических проблем, не утративших актуальность и в наши дни: ценностный подход к формированию гармонически развитой личности, единство физического, трудового и умственного воспитания. В произведении «Պատմության Տիգրանի» учитель Ваганян говорит о значении трудолюбия и готовит учеников к умственному и физическому труду.

Рассматривая педагогическую деятельность как ценностно значимую, Х. Абовян выделил те черты, которые должны быть присущи учителю-воспитателю: трудолюбие, преданность своему делу, скромность, любовь к детям и др.

¹ Յ. Մ մ ն ե լ յ ա ն, Հայ մանկավարժության պատմության 19-20 դ., Եր., 2000, էջ 22, 49, 50:

М. Налбандян не был педагогом в специальном смысле этого слова, не был учителем-практиком (не считая нескольких месяцев его учительской работы в Лазаревской семинарии), но, исходя из позиции революционеров-демократов, он выражал важные мысли о просвещении, культуре народа, выдвигал жизненно необходимые задачи и имел неоценимую роль в развитии армянской педагогической мысли, что подтверждают все его произведения, в частности «Հիշություններ»². М. Налбандян выдвигал идею ценности науки, просвещения, которые, по его мнению, «как солнце даруют тепло и жизнь всему живому».² Эти ценности он считал важными предпосылками для улучшения условий жизни народа.

Ценостный подход к педагогическому наследию М. Налбандяна позволяет выделить другую важную педагогическую ценность-школу. Отметим, что он имел в виду национальную школу, обучение на родном языке. Говоря о ценности знания, он подчеркивал его целостность, гармоничность. И считал, что знание должно быть добыто в условиях непосредственной связи школы и жизни.

В рассматриваемый период развивались торговля, производство, расширялись межгосударственные связи. И это все способствовало повышению ценности знания. Однако появилась проблема определения его удельного веса, соотношения знания и реальности, жизни. Для решения этой проблемы М. Налбандян давал практические советы: открывать мастерские, обучать детей в современных мастерских. В развитии личности он важным считал другую педагогическую ценность – воспитание, отсутствие которого влечет к формированию таких качеств как эгоизм, лень и других отрицательных свойств характера.

Анализируя педагогические взгляды М. Налбандяна с точки зрения аксиологии, мы хотим подчеркнуть его ценностный подход к проблемам национального образования, семейного воспитания и особенно женского образования, к которому он серьезно относился и призывал в каждой деревне открывать школу для девочек.

Другой важный представитель исследуемого периода - К. Агаян, которого часто называют учителем учителей из-за больших заслуг перед армянской педагогикой. Вся педагогическая теория К. Агаяна глубоко аксиологична. Важной ценностью он считал воспитание, способное обеспечить единство умственного, нравственного, эстетического, физического, трудового развития человека, которое подготовит его к жизни, поэтому он предлагает включить в программу обучения знания по математике, по естественным наукам, чтобы придать обучению практический характер и обеспечить связь с жизнью. Ценность знания он видел в улучшении жизни народа, в совершенствовании личности. Обращаясь к выявлению ценностных аспектов образования, К. Агаян показал взаимодействие образования и мышления, что было очень прогрессивно для его эпохи.³

Ценность воспитания, по мнению К. Агаяна, определяется верой в ребенка, в его лучшие черты характера. Человек, вера в него-высочайшая ценность в гуманистической педагогике К. Агаяна. Хотя в основе воспитания у данного исследователя общечеловеческие ценности (добро, красота, любовь и др.), но он выступает за национальную систему воспитания, основанную на народных ценностях (любовь и уважение к истории народа, гордость за свой народ и т.д.). Он не раз писал о том, что образование, воспитание надо приспособить к особенностям нашего народа, к нашим политическим, экономическим условиям.⁴ К. Агаян один из первых в истории армянской педагогики подчеркнул ценность здоровья и поэтому так много внимания уделял физическому воспитанию детей, урокам физкультуры, спорту, играм, т. е. составляющим элементам здорового образа жизни человека. По мнению многих исследователей (А. Шаваршяна, Ц. Симон-

² Ա. Ծաղկացնեան, Հայ մանկավարժներ, գիրք Ա, Եր., 1958, էջ 253:

³ Նոյն տեղամբ, էջ 343:

⁴ Ղ. Աղայան, Երևան, հ. Գ, Եր., 1940, էջ 147, 192, 198:

яна и др.), К. Агаян очень много сделал и в области методики, ценность которой он видел в том, что она с одной стороны задает общее основание для преподавания, а с другой – дает полную свободу учителю, предусматривая его творческие способности. Такой подход актуален и сегодня. В иерархии педагогической аксиологии методика относится к группе стимулирующих ценностей на основе понимания педагогики как технологичной науки.⁵ К Агаян в качестве ценности признавал и педагогические знания: педагогическая интуиция, педагогическое мастерство и т. д.. Ценственный подход к педагогическим знаниям позволил известному педагогу выделить и ценность труда учителя. К учителю К. Агаян предъявлял высокие профессиональные и личностные требования.

В истории армянской педагогики большую заслугу имеет С. Мандинян-человек всесторонне образованный, учитель-практик, ученый-теоретик. Получив образование в Германии, он в начале своей педагогической деятельности находился под влиянием идей И. Гербарта и поэтому ценность образования С. Мандинян видел в приближении к нуждам народа, в оказании народу помощи. Как и И. Гербарт, он важными считал те знания, которые совершают нравственную природу человека – это религия. Осуществляя ценственный подход к знаниям, он делил их на «практические» и «формальные» и был склонен к последним, потому что очень большое место уделял развитию логического мышления детей, умению самостоятельно мыслить, делать выводы, умозаключения. С. Мандинян подчеркивал и ценности образования, воспитания, ценность которых он видел в осуществлении следующей цели: достичь волеизъявления ребенка, при этом нравственная воля должна соответствовать определенным критериям: внутренней свободе, справедливости, доброжелательности и т. д. При этом С. Мандинян образование и воспитание подводил под научные основы организации, иначе в результате можно получить человека, «побывавшего в образовании, а не образованного».⁶

Как его предшественники С. Мандинян ценостно значимым считает профессию учителя. Ценность учительского труда он видит в единстве профессиональных и личностных качеств учителя. Особо он подчеркивал творческие способности учителя, его умение самостоятельно мыслить.

С. Мандинян особое внимание уделял нравственному воспитанию детей, в основе которого он ставил общечеловеческие ценности, христианскую мораль: любовь к Родине, к родителям, к ближнему и др. При этом призывал уделять внимание формированию чувства национального самосознания, достоинства и т.д.

В плеяде армянских педагогов рассматриваемого периода особое место занимает А. Багатрян, который внес большой вклад в развитие армянской педагогической мысли. В силу своего образования он находился под влиянием идей И. Ф. Гербарта. Однако А. Багатрян механически не применял гербартовскую систему, а учитывал национальные особенности. Для его педагогической системы характерна ценность знаний, их всесторонность, гармоничность. Ценность знания он видел в умственном развитии детей, в их практической подготовке к жизни. Образование и воспитание – вот те главные ценности, на которых основывается его система. Верный принципам демократических идей своего времени, он ценность образования признавал в просвещении своего народа, в обязательном начальном образовании и предлагал значительно расширить программу начальной школы, включив историю, географию, математику, астрономию и т.д.

Если до А. Багатряна в армянской педагогике говорили об образовании здоровых детей, то он впервые заговорил об образовании, обучении детей с фи-

⁵ В. Слатенин, Г. Чижакова, *Введение в педагогическую аксиологию: Учебное пособие для студентов*, 2003, стр. 118.

⁶ И. Сашарյашвили, 624. աշխատական էջ 478:

зическими дефектами: глухих, немых, что, несомненно, повышает гуманность педагогических взглядов этого исследователя.

А. Багатрян в единстве рассматривал обучение и воспитание, конечно, учитывая их своеобразие. Осуществляя ценностный подход к процессу обучения, он теоретически обосновал принципы обучения, формы, методы преподавания. В процессе обучения особо выделил ценность педагогического общения. Ценность педагогического общения он видел в процессе воспитания детей, во взаимодействии с другими людьми, когда развиваются природные качества ребенка.⁷ Аксиологичность в воспитании ребенка проявляется во всестороннем и гармоничном развитии. Под влиянием европейских и русских педагогов (Я. Коменского, И. Песталоцци, И. Гербarta, К. Ушинского и др.) он важным считал единство, взаимосвязь трудового, эстетического, физического, нравственного воспитания детей. Говоря о физическом воспитании, он подчеркивал ценность здоровья, которое можно сохранить благодаря физической культуре, упражнениям, игре.

В воспитании он признавал такие нравственные ценности как патриотизм, чувство национального самосознания. В его понимании нравственность строится на общечеловеческих и национальных ценностях, в формировании и сохранении последних он важную роль придавал армянской церкви.

Ценностный подход к профессии учителя позволил ему выделить как личностные качества (честность, скромность и др.), так и специальные: учитель должен быть психологом, мастером своего дела, проявить творческий подход в работе, создать свою творческую лабораторию.⁸ Требования, предъявляемые А. Багатряном, актуальны и сегодня.

Итак, мы увидели на рассматриваемых примерах, что армянская педагогика XIXв. глубоко аксиологична по поставленным задачам, предлагаемым способам их решения. В педагогических системах армянских педагогов этого периода очень выпукло обозначилась проблема формирования личности, отвечающей всем требованиям эпохи. Армянские педагоги, как и европейские, русские подчеркнули ценность знания, образования, воспитания. Хотя понимание ценности было различным в их взглядах, но они все признавали эти педагогические ценности, особо выделяли ценность педагогического знания. А ценность образования они видели в улучшении условий жизни народа, в совершенствовании личности человека. Образование они рассматривали как личную, общественную и государственную ценность.

Армянские педагоги XIXв. исходя из такой важной ценности, как образование, провозгласили право каждого человека на образование, выступали за систему всеобщего образования. И большое внимание уделяли женскому образованию, национальным проблемам образования. Это общенациональное направление отстаивало ценности народа. Руководствуясь этими ценностными ориентирами, они на практическом уровне решали вопросы изучения армянского языка, литературы, истории.

Актуальны и сегодня проблемы ценностного подхода к формированию гармонически развитой личности, единства обучения с трудовым, физическим, нравственным, семейным воспитанием, тесное взаимодействие семьи и школы в воспитании детей. Они пытались определить взаимодействие индивидуального развития ребенка и процесса обучения, подчеркивая самоценность личности ребенка, индивидуализм, внутреннюю активность человека, его нравственность, которая у армянских педагогов данного периода заключалась в единстве общечеловеческих, христианских и национальных ценностей.

⁷ Ա. Հարություն Առաքել Բահրամյան (Կյանքը և գործը), Եր., 1992, էջ 81:

⁸ Նոյն տեղում, էջ 96:

Выделяя знание, образование, воспитание как ценности, Х. Абовян, М. Налбандян, К. Агаян и др. учительский труд определили как ценностно значимый и сумели дать аксиологическую характеристику профессии учителя.

Процесс постепенной гуманизации современного общества приводит нас к пониманию того, что высшей ценностью является-человек. Основным смыслом образования и воспитания стало создание условий для развития и саморазвития личности. Решение этой задачи невозможно без обращения к историческим истокам образовательных ценностей европейской, русской, а также армянской педагогики, где уже в XIXв. в трудах многих педагогов были подняты, рассмотрены педагогические ценности. Мы можем сказать, что армянские педагоги XIXв. сделали немало для выделения, определения, решения проблем педагогической аксиологии.

ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՔՍԻՈԼՈԳԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ XIX դ. ՀԱՅ ՍԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՈՒԽՈԽՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

— *Ամփոփում* —

— *Ռ. Մարդույան* —

Երկար ժամանակ աքսիոլոգիական խնդիրները դիտարկվել են վիլխովայության շրջանակներում: Մանկավարժական տեսության երևան գալուց հետո այն սկսեց հետաքրքրել նաև մանկավարժներին, որոնք տարրեր ժամանակներում, տարրեր խորհրդական ուսումնասիրեցին մանկավարժական սոցիոլոգիայի հարցերը:

Հոդվածում ուսումնասիրվում են Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, ՈՒ. Մանդինյանի հայացքները մանկավարժական աքսիոլոգիայի տեսանկյունից: Դիտարկված ժամանակահատվածի հայ մանկավարժները, որպես առանձնացրել են գլուխելիքը, կրթուրյունն ու դաստիարակուրյունը: Նյանց մանկավարժական համակարգը աքսիոլոգիական է և կառուցված է ազգային ու համամարդկային արժեքների միասնության վրա: Այդ դպրոցի խնդիրների լուծումը անհնար է առանց անդրադարձի կրթական արժեքների ակունքներին, արժեքներ, որոնց ձևավորումն ու զարգացումը հրամայական էր դեռ XIX դ. հայ մանկավարժների համար:

Նախրա ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԼՐԱՑՈՒՄ

Անգլերենի խորացված ուսուցման հաճարարքական դասընթացում ներկայում տեղի են ունենում նպատակների հիմնային փոփոխություններ: Դա բացատրվում է ոչ միայն մասնագիտական (պրոֆիլային) ուսուցման, այլև բազային մակարդակում աճագ-լերենի ուսուցման ծրագրերի արմատական փոփոխությամբ:

Ինչպես հայտնի է, օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի խորհրդային ավանդույթի շրջանակներում առանձնակի կարևորվում էին հիմնականում գործնական, մշակութային և կրթական նպատակները:¹ Սակայն արդեն 1990-ական թվականներին օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի առաջնային նպատակ է սկսում դատինալ հադրդակցական իրազեկության կամ կարողության ձևավորումը.² Արդի փուլում բազային մակարդակում օտար լեզվի դասավանդման նպատակները ներառում են օտարալեզու հարդրդակցական իրազեկության (խորային, լեզվական, սոցիալ-մշակութային, կոմպենսատորային և ուսումնաճանաչողական) խթանում և աշակերտների զարգացումն ու դաստիարակությունը օտար լեզվի միջոցներով:³

Մեթոդաբանները մեծ ուշադիրություն են դարձնում հատկապես օտար լեզվի միջոցով աշակերտների քննադատական մտածողության զարգացման, աշխարհայացքի, արժեքային համակարգի ձևավորման, ընդհանուր դաստիարակության և կրթության խնդիրների վրա: Անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում օտար լեզուն սոցիալականացման, դաստիարակության ու կրթության միջոցի, և ոչ թե նպատակի, վերածելու համար: Բազային մակարդակում օտար լեզվի ուսուցումը հետապնդում է ոչ միայն կրթական, ուսումնական, այլև դաստիարակչական նպատակներ: Հաշվի առնելով այն, որ պրոֆիլային մակարդակում դասաժամների թիվը կարող է ավելանալ մինչև 210 ժամ, այն դեպքում, եթե բազային մակարդակում այն 105 ժամ է, կարելի է պնդել, որ օտար լեզվի ուսուցման նպատակներն այսուղե ենթարկվում են թե՛ բովանդակային, թե՛ ծավալային փոփոխության: Դա այն է, որ անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ընտրած աշակերտան ավելի նպատակալաց է, ավելի հետևողական է իր կայացրած որոշումներում, և հաղորդակցական ունակության ձևավորումը՝ որպես ինքնազարգացման, ինքնակրթության միջոց, ավելի շատ է կարևորվում:

Ինչպես հայտնի է, աշակերտների պահանջմունքների վերլուծությունը պրոֆիլային և պրոֆիլային-կողմնորոշման ուսուցման հիմնական պահանջմունքից է: Հայտնի է նաև, որ մեթոդաբանները օտար լեզվի ուսուցման դասընթացը նախագծելիս հիմնականում ուշադիրություն են դարձնում լեզվանյութի վերլուծության և համակարգման, ուսուցման արդյունքների պլանավորման վրա:⁴

Սակայն անգլերենի խորացված ուսուցման դասընթացը կազմակերպելիս առաջին պլան է մղվում պահանջմունքների վերլուծությունը, քանի որ միայն այդպես է հնարավոր անհատակացնել դասընթացը, դիտարկել այն ինչպես տարբերակված, այնպես էլ համալիր: Այսուղե մենք մոտենում ենք աշակերտների պահանջմունքների ինդիքին դրդապատճառի առաջացման տեսանկյունից, որի վրա, ըստ Օ. Պոլյակովի,

¹ Г. Р о в а, *Методика обучения английскому языку. (На англ. Яз.) Учебное пособие для пед. ин-тов и фак. иностранных языков Л., 1975, стр. 312, 34-39.*

² *Stū Objectives for foreign language learning by Jan A. Van EK Volume 1: Scope, Project # 12.*

“Learning & teaching modern languages for communication”: Council for Cultural Cooperation, Council of Europe Press, 1993, p. 11-14.

³ П. С ո ւ ե ս, *Обучение иностранному языку на старшей ступени общего среднего (полного) образования. Профильный уровень (Х-ХII классы), “Иностранные языки в школе”, № 2, 2006, стр. 7.*

⁴ И. Б ո ւ մ, *К проблеме планируемого результата обучения иностранным языкам в общеобразовательной средней школе, “Иностранные языки в школе”, № 6, 1984, стр. 17-24.*

ազդում են երեք տեսակի գործոններ՝ ա) ուսուցման կազմակերպման և անցկացման վրա ազդող գործոններ, բ) ուղղակիորեն աշակերտի հետ կապված անհատական գործոններ, 3) սոցիալ-մշակութային գործոններ։⁵ Նրդապատճառի առաջին տեսակի գործոնների առումով ուսուցման արդի փուլում ի հայտ են եկել բազում խնդիրներ: Այսպէս, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ընտառատանի Դաշնությունում ստեղծվել են մի շարք ՍՊՆՀ-եր (մեթոդառումնական համալիրներ): Մինչին, Հայաստանի Հանրապետությունում հիմնականում շրջանառության մեջ են կա՞մ Ո-Դ-ում ստեղծված վերոհիշյալ գրքահամալիրները, կա՞մ արտասահմանյան երկրներում հայտնի գրքաշարերը:⁶ Իսկ դա նշանակում է, որ ՀՀ-ում դեռևս չկան պրոֆիլային ուսուցման դասընթացին համապատասխանող սեփական դասագրքեր, ել չենք ասում՝ դասագրքաշարեր: Բազային դասընթացի համար նախատեսված դասագրքերը կարող են օգտագործվել կոնկրետ պայմաններում ընտրողական, ֆակուլտատիվ դասընթացներում: Սակայն թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները մեծ դժվարությունների են հանդիպում, երբ ուսուցման գործընթացում կիրառվում են ոչ թե դասագրքեր, այլ նրանցից ընտրովի վերցված տեքստեր և վարժություններ: Բանն այն է, որ շրջանառության մեջ է մնում Բոնկը,⁷ ընդուրում, ոչ թե սրա վերահրատարակված վերջին տարբերակները, այլև այն, ինչ կրկնությունների հիմնական դասագիրք է հանրավել տարիներ շարունակ: Ներկայումս այս դասագիրքն են գործածում ՀՀ-ի շատ դպրոցներ խորացված ուսուցման դասընթացի վերջին փուլում 9-10-րդ դասարաններում:

Անհատական գործոնների դիտարկումը նույնական է հայտ է թերում հետաքրքրացարժ փաստեր: Մասնավորապես այն, որ տվյալ դասընթացի մեջ ընդգրկված աշակերտների մեծ մասը լավ չեն պատկերացնում իրենց նպատակները: Ավելին, ուսուցման ոչ մի փուլում չի կատարվում նրանց պահանջմունքների վերլուծություն: Ո՛չ ուսուցիչները, ոչ մերորաքանները չեն փորձում գիտափորձով ցույց տալ այս կամ այն մերորական համալիրի, գրքի, աշխատանքային տեսրի, այս կամ այն մերոդի, սկզբունքի արդյունավետությունը:

Հայկական լսարանի համար չնախատեսված դասագրքերում հաշվի չեն առնված հայերենի և անզերենի քերականական, հնչյունական, ուղղագրական, տիպարանական առանձնահատկությունները, քերականական, բառային, հնչյունական, գործարանական փոխներքափառացման դրսուրումները:

Դիտարկելով պրոֆիլային ուսուցման գործընթացում աշակերտների դրդապատճառների տարարաժանման Ո. Գարդերի և Վ. Լամբերտի բանաձևը, ըստ որի՝ դրանք լինում են գործիքային (“instrumental”) և ներառական (“integrational”)՝ կարող ենք ասել, որ խորացված ուսուցման դասընթացում ներգրավված սովորողների դրդապատճառները հիմնականում գործիքային են: «Գործիքային մոտիվացիան այն է, երբ լեզուն ուսումնասիրում են որպես գործիքային նպատակների հասնելու միջոց, օրինակ՝ կարդալու մասնագիտական գրականություն, լեզվից կամ լեզվով քննություն հանձնելու, առաջխաղացում ունենալու ծառայության մեջ».⁸ Իսկ ներառական դրդապատճառները դրսուրում են այն ժամանակ, երբ լեզուն սովորողի մոտ ցանկություն է առաջանալ ներառվել լեզուն կրողների նշակույթի մեջ, նույնացնել իրեն նրանց հետ և դառնալ նրանց հանրության մի մասը:

Թե՛ պրոֆիլային, թե՛ մասնագիտական կողմնորոշման անզերենի ուսուցման առաջնահերթությունը աշակերտների կողմից իրենց պահանջմունքների գիտակցումն է: Խնդիրն այն է, թե նրանք ինչ ձևերով և միջոցներով են սկսում գիտակցել իրենց պահանջմունքները:

⁵ О. П о л я к о в, *Автономия учащихся как основа развития современного непрерывного образования личности*, “Иностранные языки в школе”, № 3, 2004, стр. 46.

⁶ *Star First Certificate Star Student's Book: Luke Prodromou, Macmillan publishers Limited, 1998, 240 p.; Nexus English for advanced learners. Martin Mills, 1990, 182 p.*

⁷ Н. Б о н к, Г. К о т ո ւ ն, Н. Л ո ւ կ յ ա ն օ ւ ա, *Учебник английского языка, Часть 1, М, 1998, стр. 637.*

⁸ W. L a m b e r t, *Language, Psychology, and Culture*. Stanford, CA:Stanford University Press, 1972.

1978թ. Զ. Մանդիկի “Communicative Syllabus Design”-ը⁹ բացեց նոր դարաշրջան մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման տեսության և պրակտիկայի մեջ: Զ. Մանդիկն համառոտ ներկայացրել է լեզվի ուսուցման կիրառման բնական պայմաններում պահանջնունքների բացահայտման ընթացակարգը, առաջարկել մի շարք հարցեր, որոնց պատասխանների վերլուծությունը կարող է տալ արժեքավոր տեղեկություն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացը նախագծելու համար:

Անգլերենի խորացված ուսուցման դասընթացը մի կողմից ներկայանում է որպես պրոֆիլային, մյուս կողմից՝ մասնագիտական կողմնորոշման դասընթաց:

Դարպոց

Ինստիտուտ

Պրոֆիլային ուսուցում → մասնագիտական ուսուցում
Պրոֆիլային ուսուցում → մասնագիտական կողմնորոշման ուսուցում

Այսինքն՝ անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավարտելուց հետո աշակերտն ընդունվում է անգլերենի մասնագիտական ուսուցման ֆակուլտետ (անգլերեն լեզու, քարգմանական գործ և այլն) կամ ընդունվում է մասնագիտական կողմնորոշման ուսուցման ֆակուլտետ (տնտեսագիտական, իրավաբանական և այլն): Պահանջնունքների վերլուծությունն օգնում է ճիշտ կողմնորոշվել ոչ միայն աշակերտներին, այլև ընտրել համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդներ, սկզբունքներ: Այդ վերլուծությունն օգնում է նաև հստակ պատկերացում կազմելու, թե ում ընդգրկել ընտրողական և ֆակուլտատիվ դասընթացներում: Սակայն ասվածը չի նշանակում, որ նշված վերլուծությունը պրոֆիլային ուսուցման հաջող կազմակերպման հիմնական պայմանն է:

Ճիշտ է նկատում նաև Օ. Պոլյակովը, որ պահանջնունքների վերլուծությամբ կարելի է որոշել, թե ինչ սովորեցնել և ոչ թե՝ ինչպես:¹⁰ Դա է պատճառը, որ մերոդարձներն այսօր առանձնացնում են պահանջնունքների տարրեր տեսակները: Նոյն Յ. Մանդիկն դիտարկել է իրական հաղորդակցման իրադրություններում առկա պահանջնունքները:¹¹ Ն. Չամբերսը քննության առարկա է դարձել հաղորդակցական պահանջնունքները և նրանց իրացման առանձնահատկությունները:¹² Ու. Օրպահիք հարցին նոտենում է սովորողների անձի ձևավորման անհատականացման տեսանկյունից՝ տարարածանելով օրինակությունը և սուբյեկտությունը պահանջնունքները և առանձնացնելով ուսուցման մարտավարություններն ու ոճերը, տեղական մշակույթի ուսուցման միջոցներն ու եղանակները, պահանջնունքների վերլուծության շրջանակները:¹³

Օ. Պոլյակովը, ընդհանրացնելով արևմտյան մեթոդական մշակույթում պահանջնունքների վերլուծության վերաբերյալ գորություն ունեցող հարուստ փորձը, առանձնացնում է դրանց երկու խումբ՝ 1. հաղորդակցական պահանջնունքները, թերացումները և ցանկությունները, 2. ուսումնական պահանջնունքները: Ըստ նրա՝ «Հաղորդակցական պահանջնունքները որոշվում են այնպիսի իրադրությունների բացահայտման միջոցով, որոնցում սովորող պիտի գործի, օգտագործելով անգլերենը և նրա բադադրամասերի համապատասխան վերլուծությունը»: Օրինակ՝ գործարարը կարող է ունենալ գործնական նամակները հավանալու, համաժողովներում արտասահմանցի գործնկերների հետ արդյունավետ հաղորդակցվելու, զանազան գործարքներ կնքելու, առևտրային կատալոգներից տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև, այդ իրադրություններին բնորոշ լեզվական (խորային, գործառական, կառուցվածքային, բառային) առանձնահատկություններն իմանալու պահանջնունք:

Ակնհայտ է, որ անգլերենի դասընթացում թե՛ պրոֆիլային, թե՛ մասնագիտական կողմնորոշման հաղորդակցական պահանջնունքների վերլուծությունը նրա հաջող և արդյունավետ անցկացման կարևորագույն պայմանն է: Այն պիտի հաշվի առնեն ոչ միայն գործնական դասընթաց անցկացնող ուսուցիչները, այլև այն նախագծող, դասագրքաստեղծող, պահանակորդ մեթոդաբան-մանկավարժները: Թերությունների, թե-

⁹ J. Munday, *Communicative Syllabus Design*. Cambridge University Press, 1978.

¹⁰ Օ. Պօլյակօն, Աշվ. աշխ., էջ 49:

¹¹ J. Munday, Աշվ. աշխ.:

¹² F. Chambers, *Reevaluation of needs analysis in ESP// ESP Journal*. 1980. Vol. 1/1. p. 27-31.

¹³ R. Allwright, Perceiving and pursuing learner's needs//Individualization/ Ed. By M. Geddes. G. Sturridge. London: Modern English Publications, 1982, p. 24-28.

բացումերի վերլուծությունը նույնպես նույն նպատակն է հետապնդում: Տվյալ դասընթացը պլանավորող, նախագծող մասնակինները պիտի հստակորեն պատկերացնեն, թե որն է ուսուցման ընթացքում ձախողումների պատճառը:

Պահանջմունքների վերլուծությունն օգնում է նաև հաղթահարելու տարրեր իրադրություններում առաջացող դժվարությունները, այսինքն՝ այն օգնում է ճշշտ պատկերացում կազմել սովորողների իրադրային ուղղվածություն ունեցող ցանկությունների մասին: Լեզվանյութի, դասանյութի, համապատասխան մեթոդի և սկզբունքի ընտրությունը հնարավորինս չպիտի հակասի սովորողների իրադրային, իրավիճակային ցանկություններին:

Հաշվի առնելով դասանյութը և լեզվանյութը, ուսուցման մեթոդներ ու սկզբունքները ընտրելիս սովորողների ցանկությունները՝ ուսուցիչները և դասընթացը նախագծողները ավելի մեծ հնարավորություն են առանում մոտեցնել ուսումնական իրադրությունները բնականին, սուելծել ոչ թե արհեստաձին, այլ բնական իրադրություն: Լուրջ խնդիր է նաև պահանջմունքների վերլուծության անցկացման կարգի, ժամանակահատվածի և ընթացակարգի ընտրությունը: Մերողարանները առաջարկում են անցկացնել այն ամբողջ ուսուցման ընթացքում, նրա տարրեր փուլերում: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել թե՛ դասընթացը նախագծողների, դասազիրը ստեղծողների, թե՛ գործնական աշխատանք իրականացնող ուսուցիչների աշխատանքը: Սյստեղ կարևոր է հստակորեն ընդգծել, թե անզերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս որ հայեցակետն է առաջնային դիտվում.

1. Կողմնորոշված ենք դեպի մասնագիտական լեզուն,
2. Կողմնորոշված ենք դեպի հմտությունները,
3. Կողմնորոշված ենք դեպի ուսուցումը:¹⁴

Կասկած չկա, որ մասնագիտական կողմնորոշման, հմտությունների զարգացման և ընդհանրապես ուսումնառության կաղապարները իրար չեն հակասում, այլ լրացնում են մեկը մյուսին:

Ըստ ESR դասընթացի հայտնի նախագծողներից մեկի՝ Թ. Հաշինսոնի՝ դեպի մասնագիտական լեզուն կողմնորոշված դասընթացի դեպքում դասընթացի նախագծումը սահմանափակվում է լեզվի օգտագործման իրական իրադրություններում խոսքային գործունեության իրականացման մասին գիտելիքով: Հնտություն զարգացնող դասընթացի համար առաջնային են խոսքագործունեության, խոսքի սերման գործընթացները, իսկ դեպի ուսումնառությունը կողմնորոշված դասընթացը դիտարկվում է նախագծման գործընթացի բոլոր փուլերում:¹⁵

Ինչպես ցոյց են տալիս մեր անցկացրած հարցախույզի արդյունքներն անզերենի խորացված ուսուցման (9-10-րդ) դասարաններում, աշակերտները շատ լուրջ են վերաբերվում իրենց ապագա մասնագիտությանը: Մեր հարցախույզի հիմնական նպատակն աշակերտների պահանջմունքների բովանդակությունն ու ողղվածությունը որոշեն եր: Առաջարկվել են հետևյալ հարցերը.

1. Ինչո՞ւ ընտրել անզերենի խորացված ուսուցման դասընթացը

- ա) սիրում եմ անզերենը
- բ) ուզում եմ դասնալ անզերենի ուսուցիչ
- գ) ուզում եմ օգտվել այդ լեզվով գրականությունից
- դ) առանց անզերենի չես հասնի հաջողության ոչ մի մասնագիտական ոլորտում
- ե) ուզում եմ դասնալ դիվանագետ

2. Ըստ Ձեզ՝ անզերենի խորացված ուսուցումը նպաստում է

- ա) ճիշտ և ճշգրիտ պատկերացումներ ունենալ Անզիայի, ԱՄՆ-ի, այլ անզիախոս երկրների մասին
- բ) լինել համակողմանի զարգացած, ժամանակակից մարդ
- գ) յուրացնել անզիախոս երկրների պատմությունն ու մշակույթը

¹⁴ О. П о л я к о в, նշվ. աշխ., էջ 50:

¹⁵ T. H u t c h i n s o n, A. W a t e r s, English for Specific Purposes: A Learning-centred approach. Cambridge: Cambridge University Press, 1987, p. 72-74.

դ) ցանկացած պահի հեռանալ Հայաստանից

Ե) աշխատանք զունել ցանկացած զարգացած երկրում:

3. Ո՞վ է Ձեզ խորհուրդ տվել, որ սովորեք անզերնների խորացված ուսուցման դասընթացով.

ա) ծնողներս

բ) դպրոցը մոտ է տանը

գ) ինքս եմ որոշել

դ) բարեկամներս

ե) ուսուցիչներս

Աշակերտների պատասխանների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանց մեծ մասը՝ 65%-ը, օտար լեզու սովորում են ծնողների կամ բարեկամների խորհրդով: Դրա հետև մեկտեղ՝ աշակերտների զգալի մասը կարևորում է օտար լեզվի դերը նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում: Ընդ որում, հարցման ենթակաված 45 աշակերտներից 27 համոզված էր, որ անզերննը վճռորոշ է լինելու ապագա մասնագիտական գործունեության մեջ: Նրանք վստահ էին, որ դառնալու են անձներնի ուսուցիչ, դասախոս, բարգմանիչ, զիդ կամ դիվանագետ: Միայն 6%-ը չէր կանորել անզերննի դերը ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Այսպիսով, մասնագիտական խորացված անզերննի ուսուցման դասընթացը կազմակերպելու համար ուսուցման բոլոր փուլերում անհրաժեշտ է իրականացնել սովորողների պահանջնությունների վերլուծություն: Վերջինս անզերննի խորացված ուսուցման դասընթացը կազմակերպելիս մղվում է առաջին պլան, քանի որ առանց դրա հնարավոր չէ անհատակացնել ոչ մի դասընթաց, դիտարկել այն տարրերակաված կամ ամբողջապես: Այն օգնում է ուսումնամեթոդական գրականություն, թեմաներ ու տեքստեր, համապատասխան մեթոդներ և սկզբունքներ ընտրելիս և կիրառելիս: Պահանջնությունների վերլուծության հիմնական պահանջներից է ուսումնամեթոդական գրականության մշտական վերանայումը, տարրերակաված և անհատականացված մոտեցումների կիրառումը: Սա պիտի հաշվի առնեն ոչ միայն գործնական դասընթաց անցկացնող ուսուցիչները, այլև այն նախագծող, դասագրքաստեղծ և պլանավորող մեթոդաբան-մանկավարժները:

АНАЛИЗ ПОТРЕБНОСТЕЙ ПРИ УГЛУБЛЕННОМ ИЗУЧЕНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Резюме

Н. Айрапетян

В данной статье рассмотрены особенности анализа потребностей в профильно-ориентированном обучении английскому языку. Показано, что анализ потребностей имеет большое значение не только в профильно-ориентированном, но и в профильном обучении. Особенно подчеркивается роль и значение анализа потребностей и при отборе школьников, и в процессе обучения английскому языку в школах с углубленным изучением иностранного языка. Соответствующая обработка и учет данных проведенного анализа помогает при отборе учебно-методических комплектов, учебной литературы, методов и принципов преподавания, при организации учебно-методической работы в школах с углубленным изучением английского языка.

Նունե ԱԴԱՍՅԱՆ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դպրոց ընդունվելով՝ երեխայի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումնական գործունեությունը: Ըստ ակադ. Ա. Լեռնուկի, առաջատար է այնպիսի գործունեությունը, որի ընթացքում տեղի է ունենում հոգեկան հիմնական գործնքացների և անձնավորության էական հատկությունների ձևավորումը, որոնք և բնորոշում են տարիքային զարգացման տվյալ փուլի զիսավար նվաճումը: Ըստ այդմ էլ՝ կրտսեր դպրոցականի «Ուսումնական գործունեությունը հասարակայնորեն նշանակալի, պարտադիր, զնահատելի գործունեություն է, և դրանով այն սկզբունքորեն տարրերվում է գործունեության բոլոր այլ տեսակներից, որոնցով առաջ երեխան զբաղվում էր նախադպրոցական հիմնարկներում կամ տանը»:¹

Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը ձևավորելիս պիտի նկատի ունենալ դպրոցական համակարգված ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնական առանձնահատկությունները: Նշանավոր հոգեբան Դ. Էլկոնինը տարբերակել ու բնութագրել է դպրոցական համակարգված ուսուցման հիմնական առանձնահատկությունները:

Դպրոցական ուսուցման առաջին հիմնական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելով՝ երեխան սկսում է իրականացնել, թերևս առաջին անգամ իր կյանքում, հասարակականորեն նշանակալի և հասարակականորեն զնահատելի գործունեություն՝ ուսումնական գործունեություն, որը նրան դնում է բոլորովին նոր դիրքում, որով էլ որոշվում են նրա մնացած բոլոր հարաբերությունները նեծահասակների և հասակակիցների հետ ընտանիքում, դպրոցում, դպրոցից դուրս, վերաբերմունքը իր նկատմամբ և իմբնազնահատումը: Եվ միանգամայն իրավացի է Լ. Բոժովիչը, երբ իր հետազոտությունների հիման վրա եզրակացնում է, թե «դպրոցական համակարգված ուսուցման համար պատրաստվածությունը որոշվում է ամենից առաջ երեխայի մեջ հասարակականորեն նշանակալի և հասարակականորեն զնահատելի գործունեության միտումի ձևավորմամբ»:²

Համակարգված դպրոցական ուսուցման երկրորդ էական առանձնահատկությունն այն է, որ այն պահանջում է պարտադիր կարգով կատարել բոլորի համար նիատեսակ կանոնների մի ամրող շարք, որոնց ներակա է նաև աշակերտի վարքը դպրոցում գտնվելու ամրող ժամանակամիջոցում:

Դպրոցական համակարգված ուսուցման երրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելոց սկսում է զիտության համակարգված կամ տվյալ զիտության բնագավառի, տվյալ ուսումնական առարկայի ուսումնավորությունը տրամաբանությամբ: Պիսի նկատի ունենալ այն, որ տվյալ զիտության յուրացման էակես կարևոր հատկանիշն այն է, որ զիտական հասկացություններն իրենցից ներկայացնում են որոշակի համակարգ, և դրանք չի կարելի ուսումնասիրել պատահական հաջորդականությամբ:

Դպրոցական համակարգված ուսուցման չորրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոցական ուսուցման անցնելիս երեխան պետք է արմատականորեն փոխի իրեն դաստիարակող չափահասների հետ ունեցած հարաբերությունների ամրող համակարգը: Ասել է թե՝ հարաբերությունների համակարգն անմիջականից դառնում է միջնորդակարգած, այսինքն՝ ուսուցիչը աշակերտների հետ և աշակերտների ուսուցչի հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտորեն պետք է տիրապետեն միջոցների հասուկ համակարգի:

Այդ առանձնահատկությունները բնութագրելուց հետո հոգեբան Դ. Էլկոնինը տալիս է ուսումնական գործունեության հետևյալ սահմանումը. «Ուսումնական գործու-

¹ Դ. Էլկոնին, Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Եր., 1975, էջ 19:

² Ավելի մանրամասն տես՝ Լ. Բոժովիչ, Լичность и его формирование в школьном возрасте, М., 1968.

ներքյունը նախատակառությած գործունեություն է, որի բովանդակությունը կազմում է գիտական հասկացությունների ոլորտում եղած գործողությունների ընդհանրացված եղանակների յուրացումը:³ Իսկ նման գործունեության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքի սկզբում՝ առաջին դասարանցիների մեջ ընթանում է մի շարք դժվարություններ հաղթահարելով:

Ուսումնասիրելով առաջին դասարանցու հոգեբանությունը՝ Մ. Վորկիսինը բացահայտել է մի շարք դժվարություններ.

- ուժիմի հետ կապված դժվարություն. մանկապարտեզում դաստիարակները վերահսկում են երեխայի գործողությունները մինչև կեսօր, իսկ հետո՝ տանը բոլանում է այդ վերահսկողությունը.
- փոխվում է երեխայի առաջատար գործունեությունը. խաղին փոխարինում է ուսումնական գործունեությունը.
- փոխվում է վերաբերմունքը ընկերների նկատմամբ, դեռևս չի ձևավորված փոխօգնության զգացումը.
- փոխվում է վերաբերմունքը մանկապարժների նկատմամբ. ժամանակ է պետք, որ պեսզի 1-ին դասարանցիները պատշաճ հարաբերություններ ստեղծեն ուսուցիչների հետ.
- արմատապես փոխվում է 1-ին դասարանցիների հոգեվիճակը. 6 տարեկանները մանկապարտեզում համարվել են «ավագ», իսկ հիմա դպրոցում իրենք ամենափրքերն են և այն: Նկատի ունենալով ուսումնական գործունեությունը, հոգեբան Դ. Էլոնինը վկայակոչում է նաև մի այլ դժվարություն. ուսումնական գործունեության մեջ առկա այն հակասությունը, որ լինելով հասարակական իր հմաստով, իր բովանդակությամբ, իրականացման իր ձևով, այն միաժամանակ անհատական է ըստ արդյունքի (խաղի ժամանակ միշտ չէ, որ առկա է արդյունքը), այսինքն՝ ուսումնական գործունեության ընթացքում յուրացված գիտելիքները, հմտությունները, գործողության եղանակները առանձին աշակերտի վաստակն է. «Դրա համար էլ միշտ ուսումնական գործունեությունը անհատապաշտական ուղղվածություն ունեցող գործողության վերածվելու վտանգ կա: Նման անհատապաշտական ուղղվածության դեպքում կորչում է գործունեության հասարակական իմաստը: Որպեսզի դա տեղի չը ունենա, անհրաժեշտ է, որ ուսումնական աշխատանքի ընթացքում ստացված գիտելիքները, կարողությունները և հմտությունները իրենց կիրառումը ստանան հաճրօգուտ աշխատանքում, կապվեն դասարանական կոլեկտիվի կենսագործունեության հետ»:⁴

Ակադ. Վ. Դավիթովը, անդրադառնալով կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման հիմնահարցին, նկատում է, որ առաջին դասարանցիները դժվարություններ են կրում ուսումնական տարվա վերջին շրջանում: Ուսումնական տարվա սկզբներին «նրանք հաճույքով դպրոց էին շտապում դասերից բավականին շուտ, պատրաստականությամբ էին ցանկացած վարժություններ կատարում, հպարտանում էին ուսուցչի տված գնահատականներով: Այս ամենի մեջ իր արտահայտությունն էր գտնում զիտելիք ձեռք բերելու նրանց ընդհանուր պատրաստականությունը»:⁵ Սակայն ուսումնական տարվա վերջերին այդ ամենը դատնում է ստվրական բան, երեխաները կարծես «հագեցնում» են, դպրոցի կյանքի արտաքին կողմները երեխայի համար ստվրական են դառնում, ուստի նրա մեջ մարում է ուսման նկատմամբ սկզբնական ձգտումը, և վրա է հասնում անտարբերությունը»:⁶ Իհարկե, առաջին դասարանում դասավանդող ուսուցիչները երբեմն վտրձում են հաղթահարել այդ դժվարությունը՝ ուսումնական նյութի մեջ հետաքրքրաշարժ տարրեր ներմուծելով: Սակայն այդ հնարջ արդյունավետ է յինում միայն կարճ ժամանակի ընթացքում: Ըստ ակադ. Վ. Դավիթովի՝ «Ուսուցման գործորոշություն «հագեցնում» այդպիսի վիճակը կանխելու ամենահուսայի նույնակը աշակերտներին բավականաշատ բարդ ուսումնահմացական խնդիրներ առաջադրելը,

³ Դ. Էլ կ ո ճ ի ն, ճշգ. աշխ., էջ 72:

⁴ Նոյեն տեղում, էջ 28–29:

⁵ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 91:

⁶ Նոյեն:

նրանց պրոբլեմային իրավիճակների առջև կանգնեցնելու է: Դրանց հաղթահարման համար աշակերտուները պետք է տիրապետեն անհրաժեշտ հասկացությունների»:⁷

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում առաջնակարգ դեր են կատարում ուսումնածանաշողական մոտիվները (դրդապատճառները), որոնք տարրերվում են սովորական ճանաչողական հետաքրքրություններից: Եթե սովորական հետաքրքրությունը պարզապես շրջապատճեն է ուսումնասիրվող առարկայի կոնկրետ բնագավառում գործողության եղանակների յուրացմանը: Հոգեբան Դ. Էլկոնինը մատնանշում է, որ «ուսումնական գործունեության կառուցվածքի կարևորագույն բաղադրամասն են ուսումնածանաշողական մոտիվները: Դրանց ձևավորումը ուսուցման կարևորագույն խնդիրն է, և նրանից, թե որքանով են արդեն տարրական դասարաններում ձևավորվել այդպիսի մոտիվներ, շատ բանով է կախված հետագա ուսուցման հաջողությունը»:⁸

Ուսումնական գործունեության ընթացքում պետք է ձևավորել ու զարգացնել նաև դպրոցականների ճանաչողական պահանջնունքները: Դրանք ձևավորվում են իրար հետ փոխկապակցված դրոշակի փուլով, դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Պրոֆ. Ա. Բայյանը տարրերում ու բնութագրում է նման 4 փուլեր:

Առաջին փուլում աշակերտին հետաքրքրում, գրավում է գիտական գիտելիքների եմայիրիկ հիմքը՝ վար իյուստրացիան, հետաքրքրական փորձը, ուշագրավ փաստերն ու օրյենտացները: **Երկրորդ փուլում** աշակերտի մեջ ձևավորվում է ուսումնասիրվող առարկայի գիտավոր, էական կողմերը ճանաչելու պահանջնունք, առաջանում է բարձր հետաքրքրասիրություն: **Երրորդ փուլում** առարկան կամ երևույթը ճանաչելու պահանջնունքը դառնում է առավել նպատակամետ, երբեմն կապված կենսական պլանների, անձնական հակումների և ընդունակությունների հետ. «Այստեղ դրսելորվում է ճանաչողական պահանջնունքների ընտրողական բնույթը, նպատակաուղղվածությունը, նրանց գերածելը ճանաչողական հետաքրքրությունների»:⁹ ճանաչողական պահանջնունքների ձևավորման շորոշող փուլը ուսումնասիրվող առարկայով, երևույթով իրապարզելու, կրոստությամբ տարվելու փուլն է, որը կապված է աշակերտի մտավոր ընդունակությունների, ցայտունորեն արտահայտված հակումների հետ. «Այս փուլում սովորողների մեջ առաջանում է դպրոցում իր ստացած ծրագրային, դասագրքային գիտելիքները լրացնելու, ինքնուրույնության պահանջնունքը»:¹⁰ Ա. Բայյանն իրավացիորեն գտնում է, որ բոլոր փուլերում էլ դրսելորվում է ճանաչողական պահանջնունքների ինտելեկտուալ գործառություն. «Ճանաչել ուսումնասիրվող առարկայի, երևույթի էությունը, նրա էական, գիտավոր հատկանիշը տարրերել ոչ էական, երկրորդական հատկանիշից, ճանաչել տվյալ երևույթի պատճառը, այն տարրերել առիթից, տեսնել երևույթների ներքին փոխկապակցվածությունը, այն օրենքները, որոնք ընկած են ուսումնասիրվող երևույթների հիմքում, գաղափարները, որոնց ենթակա են ուսումնասիրվող փաստերը»:¹¹

Ճանաչողական պահանջնունքները անհսկելիորեն կապված են իմացական հետաքրքրությունների հետ: Ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում դրանք կարևոր դեր են կատարում: Ըստ Գ. Ծովկինայի՝ «Փմացական հետաքրքրությունն իր ընդհանուր ձևով կարելի է ահմանել որպես իմացական գործընթացի (իսկ ուսուցումն էլ իմացական գործընթաց է-Ն.Ա.) նկատմամբ անձնավորության ընտրական նպատակայնության դրսելորում: Զգում դեպի իմացությունը, տվյալ գիտական բնագավառը (կամ ուսումնական առարկան), այն հնարավորին չափ ավելի լիակատար իմացությամբ ընդգրկելու, խորությամբ, հիմնավոր ուսումնասիրելու ցանկությունը, իմացական գործունեությամբ զբաղվելու, նրա նպատակահարմար, արագ և հաջող ընթացքի համար անհրաժեշտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու

⁷ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 91:

⁸ Դ. Է լ կ ո ն ի ն, նշվ. աշխ., էջ 74–75:

⁹ Ա. Բ ա լ լ ա ն, Աշակերտուների ճանաչողական պահանջնունքները և դրանց ձևավորման ուղիները, Եր., 1982, էջ 11:

¹⁰ Նույնին:

¹¹ Նույն տեղում, էջ 8:

ճգումը»:¹² Նա կոչ է անում ուսուցիչներին ամեն կերպ զարգացնել ուսման նկատմամբ դպրոցականների հետաքրքրությունները, այդ նպատակով գործադրելով արգասավոր մեթոդները:¹³

Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության ընթացքում տեղի է ունենալ նաև նրա նույնական գործունեությունը՝ առաջարկելով առանձնահատուկ ոչ աշխարհային պատճենների կրտսեր դպրոցականների մտավոր դաստիարակությանը, որի առաջնահերթ խնդիրներն են. Պողլասներն սահմանել է իր «Տարրական դպրոցի մանկավարժություն» բուհական ձևունարկում. որոշակի ծավալի գիտական գիտելիքների յուրացում, աշխարհայացքի ձևավորում, մտավոր զգացմունքների, ընդունակությունների և հակումների, ճանաչողական հետաքրքրությունների, անձի նույնական կարողությունների ու հմարավորությունների գարգացում, ճանաչողական ակտիվիտերյան ձևավորում, իր գիտելիքները մշտապես լրացնելու պահանջմանը ձևավորում, հանրակրթական պատրաստվածության մակարդակի բարձրացում, աշակերտներին ճանաչողական գործունեության մեթոդներով գիմում, մտածողության նեղանակների, ստեղծագործական գործունեության վերաբերյալ ճանապարհում և այլն.¹⁴

Նա իրավացիորեն գտնում է, որ տարրական դասարաններում դասավանդողի առաջնահերթ խնդիրը պիտի լինի երեխաներին սովորել սովորեցնելը, որի մասին մատնանշել է դեռևս դասական մանկավարժ Կ. Ուշինսկին, գրելով. «Տարրական ուսուցման ժամանակ երեխաները պետք է իրենց բոլոր դասերը սովորեն դասարանում ուսուցիների հսկողության ու ղեկավարության տակ, որոնք նախ երեխաներին պետք է սովորել սովորեցնեն, իսկ հետո միայն այդ գործը հանձնարարեն նրանց»:¹⁵

Իհարկե, վերոհիշյալը չեն սպասվում ուստմնական գործունեության ձևավորման խնդիրները և միջոցները: Այնուհանդերձ քննության առնված հարցերը կարծում ենք՝ կօգնեն տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ մանկավարժորեն ճիշտ ուղղորդելու կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման ու զարգացման գործընթացը:

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

зюме _____

H. Адамян

В статье показано, что после поступления в школу, главным для ребенка становится учебная деятельность, которая формируется преодолением ряда трудностей. Включенные в статью материалы несомненно помогут учителям начальных классов плодотворными формами и методами сформировать учебную деятельность младших школьников, вооружить их научными знаниями, навыками и умениями.

¹² զ. Ը ու կ ի ն ա, Խմացական հետաքրքրությունը դպրոցականի ուսումնական գործունեության մեջ, Եր., 1975, լո 6:

¹³ К. Ушинский, Собр. соч., Т. 6, стр. 272.

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս И. Подласный, Педагогика начальной школы, М., 2000, стр. 91 - 92.

¹⁵ Կ. Ուշի և կի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Եր., 1959, էջ 709:

Հիլիք ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՅՍԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկապարտեզում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը ամենից առաջ կախված է նրանից, թե դաստիարակները որքանով են հաշվի առնում տարբեր խմբերում ընդգրկված երեխաների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները։ Եվ միանգամայն իրավացի են հոգեբաններ Ա. Զավորոժեցը և Վ. Դավիթովը, երբ այրով. Ա. Արկինի «Երեխան նախադպրոցական տարիներին» գրքի առաջարանում գրում են. «Նախադպրոցական մանկական հիմնարկներում աշխատողները և գրագետ ծնողները պետք է լավատեղյակ լինեն նախադպրոցականի տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին, յուրացնեն գիտության կողմից սահմանված տեսական գիտելիքները և դրանցով ինքնուրույնաբար անշեղ առաջնորդվեն երեխաների հետ հաղորդակցվելիս»:¹

Ի. Պողասնին նկատում է, որ մանկավարժության մեջ «երեխաների տարիքային շրջարաժաննան հիմքում դրվում են մի կողմից նրանց ֆիզիկական և հոգեբանական զարգացման փուլերը, մյուս կողմից՝ այն պայմանները, որոնց մեջ ընթանում է երեխաների դաստիարակությունը»:² Ըստ այդմ էլ նա կատարում է հասունացող սերնդի տարիքային հետևյալ շրջարաժանումը.

1. մանկիկային տարիք՝ մինչև 1 տարեկանը.
2. մինչնախադպրոցական տարիք՝ 3–6 տարեկանը.
3. նախադպրոցական տարիք՝ 4–5 տարեկանը.
 - ա) կրտսեր նախադպրոցական տարիք՝ 3–4 տարեկանը.
 - բ) միջին նախադպրոցական տարիք՝ 4–5 տարեկանը.
 - գ) ավագ նախադպրոցական տարիք՝ 5–6 տարեկանը.
4. կրտսեր դպրոցական տարիք՝ 6–10 տարեկանը.
5. միջին դպրոցական (դեռահաս) տարիք՝ 10–15 տարեկանը.
6. ավագ դպրոցական (պատանեկան) տարիք՝ 15–18 տարեկանը:

Համառոտակի անդրադառնանք «ավագ նախադպրոցական տարիքի» երեխաների հոգեբանական առանձնահատկություններին, մի տարիք, որի դերը անձի հոգևոր զարգացման մեջ անշափ բարձր են գնահատել ականավոր շատ մանկավարժներ։³

Անձի ձևավորման գործընթացում բարձր գնահատելով ավագ նախադպրոցականի դաստիարակվածության դերը, ականավոր մանկավարժ Ա. Մակարենկոն գրել է. «Սարդու դաստիարակությունը որոշվում է փոքր տարիքում մինչ Տարբեկանը: Թե ինչպիսին կիմին մարդը՝ գլխավորապես կախված է նրանից, թե դուք նրան ինչպիսին եք դարձել մինչև 5 տարեկանը: Եթե դուք մինչև 5 տարեկանը նրան չդաստիարակեք ինչպես հարկն է, ապա հետո հարկ կիմին վերադաստիարակել»:⁴ Այստեղից ըստու գործնական հետևությունը քողնում ենք մանկապարտեզի դաստիարակներին ու ծնողներին, որոնք լավ պիտի իմանան, որ վերադաստիարակելը ավելի դժվար գործնքաց է, քան դաստիարակելը:

Հոգեբանության կարևորագույն սկզբունքներից է գործունեության ընթացքում անձի հոգեկանի զարգացման սկզբունքը, իսկ մարդկային գործունեության հիմնական տեսակներն են խաղը, ուսուցումը և աշխատանքը: Նախադպրոցականի գործունեության առաջատար տեսակը խաղն է, որի ընթացքում էլ զարգանում են երեխաների հոգեկան գործներացները և անձի հոգեբանական հատկությունները: Ավագ նախադպրոցական տարիքում առաջատար են դասում հատկապես դերային խաղերը: Մեծերի հետ հաղորդակցվելու, նրանց հետ համատեղ կյանքով ապրելու ավագ նախադպրոցականների պահանջմանքները սկսում են բավարարվել հատկապես դերային խաղե-

¹ Е. А р к и н, Ребенок в дошкольные годы, М., 1968, стр. 3.

² И. П од л а с н ы й, Педагогика, М., 1996, стр. 116.

³ Л. Т ол ст о й, Соч. в 12-и томах, т. 10, 1963, стр. 537.

⁴ У. Մակարենկո, Ընտանեկան դաստիարակության մասին, Եր., 1985, էջ 166:

ոի ընթացքում: Դեռևս մինչև խաղը նրանք պայմանավորվում են, քեզ ով ինչ դեր է կատարելու: Ասեմք, աղջկեմերը նկատի են ունենում «մայրիկի», «բժշկուհու», «բաստիառակշունուու», իսկ տղաները «վարորդի», «օդաչուի», «զինվորի» գործառույթները (պայմանականորեն դրանք կարելի է անվանել սեռադերային խաղեր): Պրոֆ. Վ. Մուխինան գտնում է, որ դերային և կանոններով խաղերը օգնում են ավագ նախադպրոցականներին ստանձնելու մեջերի փոխարարքերությունները, նրանց «սոցիալական դեմքք»: Անդրադառնալով ավագ նախադպրոցականների խաղերի առանձնահատկությանը, նա գրում է. «Ավագ նախադպրոցականների խաղի բովանդակության մեջ էական է դառնում կանոններին հետևելու: Առաջին պլանի վրա են նոյնիւմ ինքնասահմանափակումը և հարաբերությունների հաստատման գործում դրսարվող կարգապահությունը: Խաղի ընթացքում երեխաները հետությամբ են համաձայնեցնում իրենց գործողությունները, ենթարկվում են միմյանց, փոխադարձ զիջումներ են կատարում, քանի որ այդ ամենը մտնում է իրենց վրա վերցրած դերերի բովանդակության մեջ»:⁵

Կանոններով ու դերային խաղերի ընթացքում ձևավորվում ու զարգանում են ավագ նախադպրոցականների բարոյական ընդունումներն ու գնահատումները: Հենց բարոյական առումով էլ դրանք գնահատում են իրենց խաղընկերների արարքներն ու գործողությունները: Նրանց տվյալներից գնահատումներից են՝ «Այդպես չի կարելի», «Այդպես վատ է», «Այսպես լավ է», «Այդպես չի կարող լինել» և այլն:

Պրոֆ. Լ. Բոժովիչը իր «Անձնավորությունը և նրա ձևավորումը մանկական տարիքում» աշխատության մեջ ավագ նախադպրոցականի հոգեբանական նորագոյացումներից է համարում նրա արարքներում ու գործողություններում միջնորդավորված բարոյական մոտիվների առաջացումը: Ըստ այդմ էլ նրանք «զավ» են համարում խաղի այնպիսի կանոններն ու բարոյական նորմերին հաճախատախսանող ընկերների արարքներն ու գործողությունները, իսկ «վատ»՝ եթե խախտվում են խաղի կանոնները կամ բարոյական նորմերը: Ընդ որում, ավագ նախադպրոցականի համար բարոյական նորման է դառնում ընդհանուրի համար կատարվող աշխատանքը: Ավագ նախադպրոցականի աշխատանքային գործունեության մեջ «կարևոր սեփական գործունեությունը հասարակական դրդապատճառներին ենթարկելու, ուրիշների օգուտի համար գործել կարողանալու ունակությունն է» (Բոժովիչ):

Խաղի հետ միասին ավագ նախադպրոցականի հոգեկան զարգացման ընթացքում էական դեր է խաղում նաև արդյունարար գործունեությունը՝ նկարել, ծեփակերտումը, ապլիկացիան, տանը կամ մանկապարտեզում աշխատանքային առաջադրանքների կատարումը և այլն: Հենց այդ արդյունարար գործունեության ընթացքում էլ զարգանում են նախադպրոցականի ուշադրությունը, իհշողությունը, երևակայությունը, մտածողությունը և հոգեկան մյուս գործնքացները: Ավագ նախադպրոցական տարիքում հոգեկան այդ գործնքացները դառնում են առավել կանաչին, քան տարիքային նախորդ շրջանում: Եթե կրտսեր և միջին նախադպրոցական տարիքում գերակշռող է չկանխամտածված ուշադրության և իհշողության դերը, ապա ավագ նախադպրոցական տարիքում ձևավորվում է ուշադրությունը կամածին կերպով ավելի ու ավելի տևականորեն կառավարելու ընդունակություն: Ակսում է զարգանալ նաև խոսքային իմաստավորված իհշողությունը, որն իր կատարած դերով արդեն վեց-յոթ տարեկանում հավասարվում է պատկերավոր իհշողությանը: Ավագ նախադպրոցականի իհշողության զարգացման գործնքացում բեկման պահ է հանդիսանում հատուկ մնեմիկական գործողությունների ծագումը, այսինքն՝ երեխան իր առջև մտապահման խնդիր է դնում և սկսում է համապատասխան հնարներ կիրառել. օրինակ՝ լավ մտապահելու համար երեխան բառերը մի քանի անգամ կրկնում է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավագ նախադպրոցականներն ունեն հարստ երևակայություն: Այն տպավորությունն է ստեղծվում, որ կարծես երեխան միաժամանակ ապրում է երկու աշխարհում՝ իրական աշխարհում և իր երևակայության աշխարհում: Նկատի ունենալով դա, առանձին հետազոտողներ երևակայությունը համարեցին նախադպրոցականի համար բնորոշ գործունեության ձևերի աղբյուրը: Սակայն հոգեբանական հատուկ հետազոտությունները ցույց տվեցին, որ նա-

⁵ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 65:

Խաղաղոցականի երևակայության զարգացումը գործունեության խաղային, նկարչական և այլ տեսակներին տիրապետելու ոչ թե պատճառը, այլ հետևանքն է: Ինչարքեւ, նախադարձոցականի երևակայության պատկերները պայծառ են, ակնառու, հոգականությամբ հագեցված, սակայն այնքան էլ մատչելի չեն վերահսկողության ու կառավարման համար: Երևակայության զարգացման հիմնական ուղղությունը գիտակցական մտադրություններին աստիճանաբար ենթարկվելը և որոշակի մտահղացումների իրականացման միջոց դառնալն է:

Դպրոցական համակարգված ուսուցման անցնելու կապակցությամբ պետք է շեշտադրել հատկապես ավագ նախադպրոցականի խոսքի և մտածողության աննախընթաց զարգացումը: Հարստանում է նրա բառապաշարը՝ հասնելով 3000-4000 բառի: «Նախադպրոցականի հոգեբանությունը» աշխատության մեջ պրոֆ. Վ. Մուխինան ներկայացնում է ավագ նախադպրոցականի խոսքի զարգացածությունը, տվյալ առարկայի, նկարի, իրադարձության հասկանալի նկարագրությունը, նորի ու խոսքի ընթացքի տրամաբանվածությունը, այս կամ այն երևոյթի, կանոնի հատկա բացատրությունը և այլ որակներ: Նա ընդգծում է, որ խոսքի հետ անխօնի կապի մեջ զարգանում է ավագ նախադպրոցականի մտածողությունը, որը դպրոցական ուսուցմանն անցնելու կարևոր հոգեբանական նախադրյալ է: Ըստ Վ. Մուխինայի, ավագ նախադպրոցականները «պետք է կարողանան առանձնացնել շրջապատի երևոյթների էական կողմերը, համեմատել առարկաներն ու երևոյթները, նկատել նման և տարբեր հատկանիշները, ճիշտ դատողություններ անել, գտնել երևոյթների պատճառները, ընդիհանրացումներ կատարել»:⁶ Խոսքը ոչ միայն հաղորդակցման, այլև մտածողության միջոց է: «Հոգեհասան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մտավոր-իմացական գործանությունների բոլոր տեսակների կատարելագործումը հենվում է երեխայի խոսքի զարգացման վրա: Բառերը, իրենցում ամրապնդելով երեխայի կողմից յուրացված կոնկրետ, զգայական չափորինակները, սկսում են «մասնակցել մտածողության գործընթացներին, դառնում են մտապատճենների ու հասկացությունների կրող, և տրամաբանական դատողությունների կատարման հնարավորություն է ատեղծվում: Խոսքն ուղղություն է հաղորդում երևակայության աշխատանքին, նաև դիմում ուշադրության ու հիշողության առջև: Խոսքի միջոցով երեխան խտացված ձևով ստանում է մարդկության ձեռք բերած փորձը, ընդ որում նաև հենց հոգեկան գործունեության փորձը»:⁷

Առանձին վարչական միավորներ էին ավատատիրական տիրույթները: Բացի իրենց գոյությունը պահպանած էին ավատատիրական տներից, բագրատունիների օրոր բարձրանում են նաև նորերը: Որպես հակակշիռ՝ Բագրատունիները հովանավորում են որոշ իշխանական տների, որոնք թագավորական իշխանության համար կլինեին հուսալի հենարան՝ ի հակադրություն իրն անշատողական իշխանական տների: Այդ է պատճառը, որ Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսում են ազատների միջավայրից առաջ քաշել նոր իշխանական տներ: Աննշան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ, Պահլավունիներն (Ապուղամբենը) ու մասամբ Ապիրատյանները, շուտով բարձր դիրքի են հասնում: Բագրատունիների կասալներն էին Պահլավունիները, Ապիրատյանները, Հավաններները, Գնրունիները, Քաջրերունիները, Գարեջանները, Մերոնները, Խաչենի, Սյունյա, Արծունի իշխանները: Ենթակա ավատատիրական իշխանություններն առանձին վարչապատասիրական միավորներ էին: Ամենաընդարձակը Պահլավունիների տիրույթներն էին: Նրանք կալվածքներ ունեին Արա-

¹⁵ Թու վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 466:

¹⁶ Յովհաննու կաթողիկոսի Դրասիսանակերոցույց Պատմոթիւմ Հայոց, Եր., 1996, էջ 296:

¹⁷ Նոյն տեղում, էջ 317:

¹⁸ Ղ. Ա լ ի 2 ա ն, Այրարատ, էջ 128:

¹⁹ «Հոգարաքնու» խնամատար, վերակացու:

²⁰ Պատմոթիւն Արիստակեսի Լատիկերոցույց (այսուհետև՝ Լաստիկերոցի), Եր., 1963, էջ 54:

գածուն, Նիզ, Կոտայք, Մազագ, Վարաժնունիք գավառներում, որոնք մեջընդմեջ տառածվում էին Շիրակ գավառից մինչև Սևանա լճի ու Ազատ գետի ավազանը Փամբակի լեռներից մինչև Երասխ գետն ընկած տարածքում։ Հնտագայում Պահլավունիների մի ճյուղը, որի ներկայացուցիչներն էին Վասակ Հոլումը, նրա եղբայր Վահրամը (Գրիգոր Համզայի ճյուղ) Հովհաննես Սմբատի վասալներն էին։ Պահլավունիների մյուս ճյուղը, որը սերում էր Հասանից, վասալիտետով կապված էր Աշոտ Դ-ի հետ։ Այս ճյուղի ներկայացուցիչներն էին Հասանի որդի Ապիրատը և Վերօհինս հաջորդները, այդ թվում Քարսեղ Ա Անեցին, Գրիգոր Ապիրատյանը և ուրիշներ²¹։ Ավատափիրական տիրույթները կառավարվում էին տվյալ ավատատիրոց արքունիքից։ Վարչական պաշտոնավարությունը կատարում էին մանր ազնվականները, որոնք դրա դիմաց ցլյան (պայմանական իրավունքով) հատուցվում էին հոդաբաժններով։ Այսպիսով, յուրաքանչյուր իշխանի և նրանից վասալական կախվածության մեջ գտնվող իշխանների կալվածքները միասին կազմում էին մի վարչադարձական միավոր՝ ավատական իշխանություն։

Անիի թագավորության սահմաններում առանձին վարչական միավորներ էին Վայոց ձորի, Խաչենի (Առանշահիկներ), Փառիսոսի (Սևորիներ), Թթիշի, Կոգովտի հշխանությունները, Դմինի և Գողթնի ամիրայությունները։ Ըննարկվող ժամանակաշրջանում երկրի կառավարումն իրագործվում էր արքունիքից, որը բաղկացած էր Դիվանից կամ Պետական խորհրդից և արքունի գործակալություններից։

Հայոց թագավորության գլուխ կանգնած էր Բագրատունի թագավորը, որը տնօրինում էր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքը։ Նրան էին ենթարկվում բոլոր իշխաններն ու եկեղեցին։ Հողի նկատմամբ թագավորի գերազույն իրավունք կրում էր ճևական բնույթ։

Հայաստանի շահնշահին ենթարկվում էին երկրի բոլոր ենթակա թագավորները։ Պետության մեջ կառավարման համար գոյություն ունեին մի քանի գործակալություններ։ Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր գործունեության առանձին բնագավառը և գլխավորվում էր մի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից։ Թագավորին էին ենթարկվում հետևյալ համապետական գործակալները՝ իշխանաց իշխան Հայոց, իշխան Հայոց, սպարապետ, մարզպան Հայոց, տէրանց տէր։²² Իշխանաց իշխանը զիսավորում էր Հայաստանի բոլոր իշխաններին։ Նրան էին ենթարկվում գավառապետ բերդապահ իշխաններն ու քաղաքապետները։ Նա էր կառավարում երկրի հարկերի հավաքումը։ Պատերազմի ժամանակ սպարապետի հետ նա գիսավորում էր հայոց զորքը։

Անիի թագավորության սպարապետը, որ ստորաբար կոչվել է «Հայոց սպարապետ», կատարում էր երկրի ռազմական ուժերի գերազույն իրամանատարի պաշտոնը։ Պատերազմների ժամանակ նրան էին ենթարկվում ոչ միայն Անիի թագավորության, այլ նաև վերջինիս վասալ քաջավորությունների (Վասպուրական, Կարս, Սյունիք, Տաշիր-Չորագետ) ու իշխանությունների (Վայոց ձոր, Խաչեն) զորքերը։ Գլխավոր իրամանատարի պաշտոնվ հանդես էին զայիս Անիի թագավորները։

Խ դ. երկրորդ կեսից մինչև XI դ. կեսերը գործակալները մեծ մասամբ Պահլավունիների տոհմից էին։ Աղբյուրներում հիշատակվում են սպարապետներ Վասակը (Հոլում)՝ Գագիկ Ա-ի օրոք, Վահրամ Պահլավունին (Հայոց իշխան՝ Գրիգորի որդի, 1042–1045թ.)։²³ Իշխանաց իշխան է հիշատակվում Գրիգոր Մազհստրոս Պահլավունին։²⁴ Նույն Վասակն ու Վահրամը մինչև սպարապետությունը եղել են իշխանաց իշխաններ։²⁵ Հայոց իշխաններն էին՝ Ապլիարիքը (976թ.), Գրիգոր Ապիրատը (XI դ. 20-ական թթ.)։²⁶ Վասպուրականի թագավորության անկումից հետո (1021թ.) մարզպանության գործակալությունը նույնպես հանձնվեց Պահլավունիներին։ 1029–1040թթ. ըս-

²¹ Սատրենի Ոտհայեցոյ Պատմոթիւմ (այսուհետև՝ Սատրեն Ոտհայեցի), Յերուսաղէմ, 1869, էջ 12, 253, 328։

²² Վիմական տարեգիր, էջ 6։

²³ Մատթ եռ ու Ու ո հ ա յ ե ց ի, էջ 13, 99։

²⁴ Վիմական տարեգիր, էջ 17։

²⁵ Արիստակ և Լաւատիկ երտություն, էջ 63։ Ղ. Արիշան, Շիրակ, էջ 148։ Վիմական տարեգիր, էջ 16, 17, 26։

²⁶ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 148։

պես մարզպան արձանագրություններում հիշատակվում է Ապլխարիք Պահավոնին:²⁷ Ծառայության համար նրանք սուամում էին բաժիններ «Ծիրակի տան» տիրույթներում: Պահավոնիններին էր տրված Մարմաշենը, Բագնայրը,²⁸ Վեստ Սարգիսին՝ Խծկոնքը,²⁹ Սուրմառին, որտեղ ունեին սեփական եկեղեցիներ, իսկ Ապուղամը մարզպանն այդպիսիք ուներ Անիում (Փրկչի, Ապուղամընց):³⁰ Նրանք բնակվում էին Անիում, որտեղ գտնվում էր նաև արքունի ապարանքը: Նոր պաշտոններ էին քաղաքի ամիրան (քաղաքապետ) և մոհքասիրը (շահապետ),³¹ որոնք հանդիս են զայխ առևտորի և քաղաքների զարգացման հետևանքով: Բազրատունինների քազավորությունում չկար քազարի ասախտի պաշտոն, քազարությունը կատարում էր Հայոց կարողիկուր: Այլ գործակալությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել:

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ И АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ АНИЙСКОГО ЦАРСТВА (Х-ХІвв.)

Резюме

B. Abramyan

Административно-территориальное деление любой страны обусловлено общественно-экономическими отношениями данного периода. Во времена феодального строя феодальное владение превращалось в административную единицу. В своих владениях феодалы имели безграничную власть, правили административными, военными и судебными делами.

Кроме старых княжеских домов во время правления Багратидов появились и новые княжеские дома, среди которых выделялись Арцруни, Пахлавуни, Гитуни, Каджберуни и другие. Все княжеские владения считались отдельными административными единицами.

²⁷ Ղ. Ա 1ի 2 ա 6, Ծիրակ, էջ 53, 82, 84, 148: Վիմական տարեգիր, էջ 16, 19, 20, 21:

²⁸ Վիմական տարեգիր, էջ 17: Ստեփանոս Աստղիկ, էջ 270:

²⁹ Նոյն տեղում, էջ 18:

³⁰ Նոյն տեղում, էջ 19:

³¹ Նոյն տեղում, էջ 27, 221: Դիվան հայ վիմագրության, պրակ 1, էջ 38:

Հառուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՅ ԱՐԴԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՅԸ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ Ս. ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Գյումրու Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցն ազգային մշակույթի այն հազվագյուտ օջախներից է, որի դերն ու նշանակությունը բացահայտ էր իր սկզբնավորման հենց առաջին օրվանից (1921թ.): Սինչ այդ Գյումրիի վաղուց արդեն ուներ կայուն ու ամուր ձևակորման մշակութային ավանդությունը: Երգը, երաժշտությունը, թատրոնը ներկայացնում էին քաղաքի կյանքի բնական ընթացքը, նրա առօրյան: Նկարչական դպրոցի առեղծումը երկար սպասված, բայց և օրինաչափ երևույթ էր, և այն չընկալեց որպես զուտ քաղաքի գարգացման ցուցիչ: Գյումրին, դեռ չքծկած իր մարմնական ու հոգեկան, սոցիալական ու տնտեսական վերքերը (1915թ. հետո), երազում էր ապագայի մասին: Զաղաքի մտավորականության մտահոգությունը նախևառաջ ուղղված էր ազգային արվեստի պահպանման ու վերականգնմանը, այս արվեստի, որի հիմքում մարդասիրության, ծննդրի հայրենասիրության ոգին և իր քաղաքին ու արվեստին ծառայելու գոտումն էր: Այս առումով անշափ նշանակալի էր նկարչական դպրոցի դերը: Դպրոցն իր գոյության հենց առաջին տարիներից տվեց այնպիսի դեմքեր, որոնք իրենց առեղծագործությամբ զարգացրին ու հարստացրին հայ կերպարվեստի զարգացման գործում այնքան ծանրակշիռ է, որ արժանի է ուշադրության:

Անցյալ դարի 60-90-ական թվականների արվեստում, երբ ռեալիզմ հասկացությունը դառնում էր ավելի բազմակողմանի, երբ հետևողական ու մանրակրկիտ ուսունասիրության առարկա էին դառնում հարուստ ազգային ավանդություններն ու համաշխարհային առաջադեմ արվեստի ժառանգությունը, հայ կերպարվեստը պահանջ ուներ առաջնակարգ նշանակության տեղաշարժերի: Գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, դեկորատիվ կիրառական արվեստում արդիականության արտացոլման և գեղարվեստակերպարային ընկալման նոր ուղիների որոնման այս շրջանը բնութագրվում է ժամանակակից շրջանակների ընդարձակմանը, գեղարվեստական լեզվի գործներացի անընդհատ արդիականացմամբ և նկարիների գեղարվեստական լեզվի ոճական բազմազանությամբ:

Կերպարվեստի յուրաքանչյուր տեսակ և ժանր հատկորշվում է իրականության արտահայտման նոր, օրինակելի և սուր դեմքերի որոնումներով: Երիտասարդ նկարիչների ստեղծագործություններում տեսանելիութեն ուժեղանում է սուրբեկտիվիզմը, որը նպաստում է նկարչի ստեղծագործական ակտիվացմանն ու դրանով իսկ մեծացնում ստեղծագործության հուզականությունը: Նմանօրինակ մոտեցումը առավելապես օգնում էր նկարչին հետանալ թեմաների վերապատկերման կարծրատիպերից ու արտահայտչամիջոցներից, որոնք հատկապես նկատելի էին հետպատճերազմյան շրջանի հայկական կերպարվեստում:

Գեղարվեստական որոնումների այս հորդանուտում էլ հայտնվեց գյումրեցի նկարիչների մի ամբողջ սերունդ: Նրանցից շատերին վիճակված էր դառնալ գեղարվեստական նոր ուղղությունների ու ոմերի հիմնադիր կամ առաջամարտիկ: Այս սերնդի նկարիչների մեջ իր վառ անհատականությամբ առանձնանում է Հ. Անանիկյանը, որի ավանդն անգնահատելի է ոչ միայն որպես մասնակիր գեղարվեստի, այլև որպես ինքնատիպ գեղանկարչի: Նրա նկարելաձևի նախատիպը գրականության մեջ կրչվում է դիմակու: «Ալեքսանդրապոլյան դիմակու» կոլորիտային առանձնահատկությամբ և քաղաքային բարի ու զուսակ հումորով իր արտահայտությունը զուակ Անանիկյանի ստեղծագործություններում, որոնց մեծ մասը, շատ քիչ բացառությամբ, ունի իր սյուժետային հիմքը հարազատ քաղաքի՝ Ալեքսանդրապոլ-Գյումրու պատմությունից: Անանիկյանի կտապները մտահացմանք միամիտ-պատմողական են, բայց դրանց կատարումն աչքի է ընկնում իմաստուն զայլածությամբ և մեծամասամբ հենվում է պյաստիկական արտահայտչականության վրա: Նկարիչը սիրում է պատմել գոնազեղ քաղաքային նովել-օնեսի և Վարսիկի սիրո, խոսքաշեն ու հումորաշատ Պոլող Մուկուչի ու Ծիրու

Ալեքի, Ղաֆա Սիմոնի և այլոց մասին: Անանիկյանի արվեստը նոր խոսք էր 60-ական ների հայ կերպարվեստում, որը ենոտ շարունակվերու էր իր սերմնդակից Ռաֆայել Արյուսին և ավելի երիտասարդ նկարիչներ Ֆերդինանտ Սանտույանի, Հմայակ Մաթևոսյանի, Զավեն Կոշտոյանի ստեղծագործություններում: Բայց Հ. Անանիկյանի մեծագույն հայտնագործությունը, բարի խսկական իմաստով, Սիմաս Ավետիսյանն էր: Նրա մարգարեսական օրինությանը Մինասը նտավ արվեստի աշխարհ, նտավ հաստատաքայլ, տիրական, շռայլ ու պերճագեղ, օրինաչափ ու տրամարանական, որպեսզի ավետեր հետսարյանական հայ նորագույն գեղանկարչության ծնունդը: Դա պահանջված հայտնություն էր:

50-60-ական թվականների սահմանագծում արդեն զգացվեց, որ սարյանական տիտանական ոճի պատմական ատարելությունն ավարտված է, և որ հայկական կերպարվեստին պետք էին նոր, նախորդից սկզբունքորեն տարրեր լուծուներ, որոնք պայմանագրելու էին կերպարվեստի պատմական զարգացման նոր փուլ:

Ազգային գեղանկարչության համար Մինասի գունային աշխարհն արժեքավոր էր նրանով, որ ավերում էր նրա ահազնացող անդեմությունը: Հայտնի է, որ տեսողական իրողության և տեսողության իրականացման ակտի միջև կա միջամտող գործողություն, որն անվանում ենք մեջնարաբանական, և այս տեսողական ընկալման մեջնարաբանան հանձնարեղ նորության մեջ է Մինասի արվեստի հզորությունը: Մինասի կոլորիտը՝ անսպասելի գունային հակադրություններով, ազատ է, ինքնարուիս: Իր գեղարվեստական համակարգի գլխավոր անկյունը դարձնելով զույնը՝ Մինասը նրանում կենտրոնացնում է ստեղծագործության զիշավոր զաղափարը: Նկարչի կոլորիտային նորույթը անմիջապես աջքի է զարենում: Նրա նկարներում լույսը պայմանական է, պայմանական է նաև գույնը: «Լույսն ինձ համար գույնն է», - հաճախ կրկնում էր նկարիչը: Իր ստեղծագործություններում Մինասը նկազագույնի հասցրեց սյուժենային, պատմուական մոտիվները: Նա ձգուում էր կենսական երևոյթների լայն փիլիսոփայական ընդգրկման: Նրա զործերում տպափորվել են ոչ թե առօրյա դրվագներ, այլ մարդկային զգացմունքների ու մոտորունքների ամբողջական շերտեր՝ ողբ, ուրախություն, կյանքի գեղեցկության հիացում, սիրո երջանկություն, աշխարհի զգացման վայելքի ըմբոշխննում: Մինասի մեծությունն այն է, որ նա մերժեց իր անմիջական նախորդների աշխարհ-զգացման կոլորիտային նախասիրությունները՝ բնօրինակի առարկայական գույնները: Նա իր ձևավորվող ստեղծագործական համակարգի սահմաններում կիրառեց առարկայից դրւու հոգևոր գույնը: Նկարչի աշխատանքները կերպարային համակարգով, գեղարվեստական երսարեսիայի բնույթով կտրուկ տարբերվում էին նախորդներից: Նրան հետաքրքրում էր ոչ թե նասուրան, այլ նրանից ստացած տպափորությունը: Մինասը ոչ այնքան պատմում էր այդ տպափորությունների մասին, որքան դրանց հենքի վրա ստեղծում ասոցիատիվ զուգահեռներ, որոնք ավելի շատ երաժշտական բնույթ ունեին: Այսպես էին վարդում նաև հայ ին նկարիչները: Մինասն ընդամենը նոր մեկնություն էր տալիս նրանց կոլորիտային ավանդությներին: Նա ձգուում էր ոչ թե արտացոլել տեսանելին, այլ այն դարձնել տեսանելի: Մինասը գուավ «նոր տեսանկյուն», որը նրան բույլ տվեց տեսնել ազգային մշակույթի, ազգային ճակատագրի անցյալն ու ապագան: Նա միաձուեց, միացրեց նրանց կենսափիլիստիայության և քնարական ներկապնակի գծերը: Այս ամենը նա արեց տաղանդի աներևակայելի ուժով, ավարտվածությամբ, ոմն այնպիսի մաքրությամբ, որ, հիրավի, իրավունք է վերապահում նրան համարելու գեղարվեստական դպրոցի հիմնադիր, որի նվաճումներն ու փորձարարական պարուր անհետևանք չմնացին: Նա ունեցավ հետևորդների մի ստվար բանակ:

Անցյալ դարի 70-80-ական թթ. չկար ոչ մի քիչ թե շատ նշանավոր նկարիչ, որն ինչ-որ չափով ազդված չիներ Մինասի ստեղծագործությունից: Նկարչի հարթած ճանապարհով, իհարկե, նրան ոչ համարայլ, ընթացան նաև նրա համերկրացի սերմնակիցները՝ Ա. Մերոնյանը, Ա. Հովհաննիսյանը, Ռ. Աքոյանը, Հ. Մինասյանը, որոնք գեղարվեստական ուղղությունների ու ոճերի խայտարդես հորձանուտում գտան արվեստի իրենց օրգանական ձևը: Նրանք հայտնվել էին տեսնազին յուրացման զորժեքացում և փորձում էին մոտենալ ազգային ինքնուրությանը՝ վերադարձնել իրենց երբեմնի ազատությունը և զարգացնել ժամանակի նկարչության հիմնական միտումները:

Հովհաննես Սինասյանի 1974թ. (հետմահու) անհատական ցուցահանդեսը նրա ստեղծագործական արարումի հանրագումարն էր: Ծառ կարճ, բայց հագեցած ու պայծառ ստեղծագործական կյանք ունեցավ նկարիչը: Գերազանց ուսումնասիրելով մեր անցյալի վարպետների գրքային և որմնանկարային գեղանկարչությունը՝ Սինասյանը կարողացավ ավանդական մոտիվներից քաղել յուրօրինակ գունային և ոիքմիկ ֆորմուլաներ, որոնք բացառիկ ինքնատիպությամբ վերարտադրեց իր նոնումննտալ կոմպոզիցիաներում: Նրա անցումը նոնումննտալ-դեկորատիվ ձևերին բնավ էլ արհեստական չէր, այլ օրինական պահանջ մի արվեստի, որը գտում էր թեմաների ու կերպարների ընդհանրացման, տարրունակ բովանդակության:

1950-70-ական թվականներին նոր էին ձևավորվում մոնումենտալ արվեստի կայացման միտումները: Դրանք սերտորեն կապված էին գեղանկարչության և ճարտարապետության սիմբոլիկ հեռանկարին: Հենց որմնանկարներուն և խճանկարներուն էլ երևան են զալիս նկարչի անհատականությունը, մարդի խորությունը, կատարողական վարպետությունը և խանդական աշխատասիրությունը:

Ընորհայի նկարչի տաղանդի հզորությունը լիարժեքորեն բացահայտվեց մեծածավալ մոնումենտալ գեղանկարչության մեջ, որը թեև այդ տարիներին (50-80-ական թթ.) դեռ կայունացման գործընթաց էր ապրում: Այնուամենայնիվ Սինասյանին հաջողվեց ստեղծել բարձրարժեք գործեր, դառնալ այդ ոլորտի բարի ավանդույթների շարունակողն ու նորովի զարգացնողը: Մոնումենտալ գեղանկարչությունը նկարչի ինքնարացահայտնան և արվեստում զոյատևանան նրա նախընտրած ամենաճիշտ ձևն էր:

Ազգային արվեստի տեսադաշտում կան շատ այլ ինքնատիպ մոտեցումներ: Եվ ամեն անզամ նկարիչը յուրովի է ներկայացնում անցումը ավանդականից դեպի ժամանակակիցը, ժողովրդական արվեստի պարզ հնարիներից դեպի փորձառու պրոֆեսիոնալիզմը, անմիջական դիտարկումից մինչև ստեղծագործական ընդհանրացումները անցումն այլ դրսարրումներ ևս ունի: Այդպես, Աշոտ Հովհաննիսյանն իր շատ կտավներում կոմպոզիցիաները կառուցում է զունավոր քառակուսիներից և ուղղանկյուններից՝ մարմինների երկրաչափականացման միջոցով ձգտելով հասնել ծայրահեղ պարզության և ավարտվածության: Նկարչի ներկայրման այս արխիտեկտոնիկ ձևը փորձ է մոտենալու հայ իին ճարտարապետությանը: Նրա այսօրինակ գործերը որոշ չափով վստեմատիկ են, բայց զորկ չեն գեղարվեստական պատկերի հարթության կազմակերպման վարպետությունից:

Սարդասիրությունը, նուրք քնարական աշխարհներումը, ժամանակի սուր զգացողությունը, գեղանկարչության «երաժշտական» լեզվի ինքնատիպությունը բույլ են տալիս Աշոտ Սելքոնյանին դասել նկարիչ-պրետեների շարքին: Այս զարմանալի նկարիչը չի զալիս իրենից առաջ եղած ինչ-որ մեկից, այլ՝ ինքն իրենից: Ընորհաշատ նկարիչը դեռ ոչ վաղ անցյալում համարվում էր «հայկական նեռուալիզմի»¹ հիմնադիր, որի արմատները ձգվում են մինչև իտալական կինտմատոզրաֆիան և նրա բարդ բազմապատճեն նշանակության արտաստվոր «օտարման» ինքնատիպ գուգակցումը: Բայց, այսուհետեւ, այդ համեմատությունը մատնանշում է միայն նկարչի ոճի հետ ունեցած մասնակի առնչությունը, ոչ ավելին, քանի որ Սելքոնյանի աշխատանքների հիմնական ակունքներն ու ընդհանուր բնույթը լրիվությամբ ազգային են: Նա քնարական է ու անքոռ, չնայած պակաս արգասակորությանը (հաճախ չէր նկարում. իրաշաբակ սրբահար էր, երբեմն մասնակցում էր համերգների): Պետք է նշել, որ նոր գեղարվեստական ոճի զարգացման ասպարեզում նրա ներդրումները շոշափելի են, իսկ նկարելիս նա իր կտավները կառուցում է երաժշտական կոնարգությանը բոլոր կանոններով՝ կոլորիտի զլխավոր «ապարտիաներով»,² ոիքմիկ կրկնություններով ու վարիացիաներով, ֆիգորների և առարկաների միջև նմկած տարածական մեծ ընդգրկումներով: Դրանք աշքի շարժումը դարձնում են ազատ և բույլ են տալիս ցայտունությամբ տեսնել զլխավորը՝ նկարում գույնի և ոիքմիկ գեղակայությունը: Ա. Սելքոնյանի գեղանկարչության երաժշտական բնույթն իրավամբ շատ արժեքավոր է: Նրա աշխատանքներում դրա

¹ В. Каменчик, Эпюды о художниках Армении, “Советская проза”, Ер., 1979, стр. 218.

² Նույնը:

անունով է մեկնաբանվում և գեղջկական միամտությունը, և նուրք արտիստիզմը, և ազգային հնչողության այն առանձնահատուկ արտահայտչականությունը, որն սկիզբ է առնում ժողովրդական երգերից և իր մեղեդայնությամբ իրար է ազուցում տարբեր ժամանակներն ու իրադարձությունները:

Կառուցվածքի ինտոնացիայով Ս. Մելքոնյանի արվեստին շատ մոտ է Ռ. Արոյանը: 60-ական թվականների գյումրեցի մյուս նկարիչների նման նրա զարգացումն էլ անցել է ոճական որույն հատկանիշների բյուրեղացման ճանապարհ: Ռ. Արոյանի գործերում մարդը, վտողը, տները, կենդանիները, ամեն ինչ ենքարկված է պատկերի տարածության և գունային մթնոլորտի մեջ իր «տեղը գտնելու»³ օրենքին: Ռ. Արոյանն ազգային նկարիչ է, որը, նրբուն զգալով հայրենի բնության հետ մարդկանց հրաշալի կապվածությունն ու ներդաշնակությունը, միայն իրեն հատուկ հնարանքներով ստեղծում է իրապատում մի կախսարդան՝ որը ծնունդ է առնում մանկության հուշերի երազային աշխարհից ծնունդ առնող: Ռ. Արոյանի նկարներում տեսանելի իրականությունը դիտողին ներկայանում է որակական նոր հատկանիշներով, զարմանալի խորհրդավոր գրավչությամբ, որին նկարիչը հասնում է հուզաքրթիոն երանցներով, մակերեսների նուրք մշակմամբ: Նրա նկարներում նկատելիորեն ակտիվ է գույնի դերը: Ամեն ինչ ողողող քննարականությունն աս է նկարչի յուրաքանչյուր ստեղծագործության մեկնության կերպը: Նրա ստեղծագործական դիմանկարը ձգտում է բնական, բայց խոհուն պարզության, և սերն ու հետաքրքրությունը կյանքի ու բնության նկատմամբ նրան բույլ չեն տալիս հորինել: Նա հավատացած է, որ բնության մեջ ամեն ինչ արժանի է պատկերման և իրավունք ունի գոյատելու կտավի կամ թղթի վրա: Արվեստագետի անպանույն նկարները արտացոլում են ենդինակի անմիջական տպափորությունն այն ամենից, ինչը գտնվում է նրա հայացքի տիրություն: Դա անշառ, անշտապ ճանաշման գործնքաց է: Ռ. Արոյանի համար չկան փոքր ու մեծ թեմաներ, մինչև իսկ ամենապարզ իրերի մեջ նկարիչը կարողանում է բացահայտել բանաստեղծական իմաստ:

60-80-ական թվականների գյումրեցի նկարիչների ավագ սերնդի վերոհիշյալ ներկայացուցիչները վաստականություններ էին և իրենց ստեղծագործություններով բարձ շունչ ու նոր որակ հաղորդեցին հայ կերպարվեստին թե՛ ոճական, թե՛ քեմատիկ առումով՝ շատ բանով ուղղորդելով նրա հետագա տարիների զարգացումը:

СОВРЕМЕННОЕ АРМЯНСКОЕ ИЗОБРАЗИТЕЛЬНОЕ ИСКУССТВО И ХУДОЖЕСТВЕННАЯ ШКОЛА ИМЕНИ С. МЕРКУРОВА г. ГЮМРИ

Резюме

Լ. Атанесян

Художественная школа им. С. Меркурова г. Гюмри одна из исключительных и ярких примеров в истории искусства, роль и значение которой очевидна с первых дней ее основания (1912г.). Роль дальнейшей деятельности выпускников этой школы в развитии армянского изобразительного искусства так значима, что достойна особого внимания. Данная статья отражает деятельность старшего поколения художников-гюмрийцев 60-80-х годов (М. Аветисян, А. Оганесян, А. Мелконян, А. Ананикян), которые хотя и не создали ярко выраженной национальной школы, но дали новое качество, свежее дыхание армянскому изобразительному искусству, разработали новые пути, тенденции его развития.

³ Ը. Խաչատրյան, Ռաֆայել Արոյան, Եր., 1985, էջ 3:

Արարս ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԵՎԵԼՔԸ ՄԱՐԻԱՄԱՍԼԱՍՍԱՉՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

1970-ական թվ Մ. Ապամազյանի ճանաշման տարիներն էին. նա շրջագայում է, ստեղծում բազմաթիվ նկարներ, արժանանում մրցանակների: Արևելքը Մ. Ապամազյանի համար հիացմունքի և ոխտազնացության աղբյուր է: Բազմաթիվ ուղևորությունները Հնդկաստան, Շապուհա, Եգիպտոս, Փղոսկրի ափ, Սաղազակար, Կոնգ կազմում են նրա ժառանգության անբաժանելի մասը: Ճանապարհորդությունների ժամանակ Մ. Ապամազյանն աշխատում է անմիջական տպագրության տակ կատարել ճնապանկարներ, որոնք արվեստանոցում վերածվելու էին կտավների: Այսպես են ծնվել նրա արևելյան կենցաղային ժանրի ստեղծագործությունները, թեմատիկ գործերը, նաև աշխատությունները: «Արևելքը ինձ զարմացնում է: Այնուղիւ պահպանվել են ազգային սովորությունները, որոնք հուզում են նկարչին իրենց անկրկնելի գունագեղությամբ», - գրել է նկարչութիւն:¹

Հնդկաստանում Մ. Ապամազյանը եղել է երեք անգամ: «Երբ 1957թ. ես գնացի Հնդկաստան տուրիստական ուղևորության, երջանկությունից գլուխս պտտվում էր: Ես չի կարող հանգստանալ և տարերքի մեջ նկարում էի՝ վախենալով բաց թողնել ինչ-որ կարևոր բան: Հնդկաստանը հրաշքների երկիր է: Այն գերում է ոչ միայն իր բանկարծեք քարերով ու մարգարիտներով, այլև զարմանափառ ժողովրդով և գեղեցիկ բնությամբ: Ամեն մի հեղինակ մեջ կարելի է տեսնել այդ հնագույն մշակույթը. սա գեղեցիկ ժողովուրդ է, որը չափազանց ճաշակով է հագնվում»:²

Հին սովորությունները, խորհրդավոր և անկրկնելի, առատ և ճիխ բնությունը, մարդն իր ամենօրյա շրջապատի մեջ. ահա այսպիսին է Հնդկաստանը Մ. Ապամազյանի ստեղծագործություններում: «Հնդկաստանը, նրա ժողովուրդը վաղուց ինձ հրապուրում էին: Ես կարդացել եմ շատ գրքեր Հնդկաստանի մասին, ուսումնասիրել Հնդկաստանում եղած նկարչների աշխատանքները: Ես ուսումնասիրել եմ հնդկական արվեստը: Սակայն իրական Հնդկաստանը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները: Նրա եռյունը դժվար է նկարագրել բառերով ու գույներով: Նա ավելի հարուստ է ու լայն»:³

Ամեն մի նկարից յուրովի է ընկալել այս հնամենի երկիրը: Ուերիխի կտավներում այն առեղծվածային է և խորհրդավոր, Չույկովը պատկերում է նրա գուսաց պոեզիան: Մ. Ապամազյանի կտավներում Հնդկաստանը ներկայանում է որպես ինձ սովորությունների և ինքնատիպ մարդկանց երկիր: Տարբեր կանացի կերպարների ցուցարակից ծնվում է կանանց նվիրված շարքը: Նրանց կյանքի, աշխատանքի, ստեղծագործության միջոցով նկարչութիւն պատմում է ողջ երկիր մասին: Գունեղ սարիներով երիտասարդ գեղեցկութիւնները, օջախի պահապան տարեց կանայք, վարպետութիւն կանայք, մանուկներին կերակրող կանայք... Նրանց ընդհանրացված կերպարներից ծնվում է Մ. Ապամազյանի Հնդկաստանը:

«Պարուին Մարդասից» (1967թ.) կտավը տուրք է հնդկական մշակույթին: Դեռահաս կիսամերկ աղջիկը ավելի շուտ հիշեցնում է ծաղիկ, արևադարձային միքք: Կտավը կսոսուցված է վաս գույներով, լրկալ քսվածքներով: Հնդկանուր առմանը, կտավը դեկորատիվ է, կոլորիտային: Այս գործի շարտնակությունը «Հնդկութիւն հյուր գնալիս» (1970թ.) կտավն է, որտեղ պատկերված կինը պատկանում է միջին դասին: Նրա մեջ նկարչութիւն տեսնում է անսահման կանացիություն, նրբագեղություն, նաև՝ գիշատիչ արտահայտություն: Դեղնավուն սարին, ոսկյա ականջօն ու ապարանջանը ամբողջացնում են կերպարը: Հնդկութիւն պատկերված է բաց ֆոնի վրա, ինչն ընդգծում է նրա դեմքի և մարմնի առողջ շագանակագույնը:

Հնդկութիւն մի այլ տիպ՝ ուսանողութիւն, կարելի է տեսնել «Ուսանողութիւն Դե-

¹ Советская культура, Ег., 17. 02. 1976.

² М. А с л а м ա զ յ ա ն, Դաւтар моей жизни, М., 1990, стр. 54.

³ Moscow News, 24.03.1972; Դ. Сарабյան, Մարիամ Աсламазյան, „Советский художник”, 1979, стр. 20.

լիից» (1970թ.) կտավում: Արևելյան դիմագծերով աղջկա ազգությունը բացահայտում են հնդկական նախշերով քարանը, քարձը, ինչպես նաև պատից կախված հնդկական դիմակը: Գույնը դարձյալ դառնում է ձևակազմից տարբ: Մուգ կապույտն ու կարմիրը հավասարակշռված են արծաթագույն երիզներով: Իսկ աղջկա ձեռքի վառ դեղին գիրքը անսպասելի երանգավորում են մոցնում կտավի մեջ: Ծիշտ է, կերպարը փոքր-ինչ կաշ-կանոված է, սակայն վառ գունաշարը նկարը դարձնում է կոլորիտային, ակտիվ:

Ս. Ասլամազյանի համար հատկապես հիշարժան եղավ 1973թ. այցելությունը Հնդկաստան, երբ արժանանալով Զ. Ներուի մրցանակին՝ նա Հնդկաստանում հանդիպեց Ինդիրա Գանդիի հետ: Ս. Ասլամազյանը մեծ հիացմունքով է նկարագրում այդ հանդիպումը. «Մենյակի դուերի մոտ կանգնած էր ոչ բարձրահասակ, շատ հմայիչ մի կին: Նա ձեռքը մեկնել էր մեզ ողջունելու: Նրա մեջ զարմանալի կերպով գուգորդվում էին կանացի նրբագեղությունը՝ տղանարդու կամային բնավորության հետ: Երբ ես հարցուեցի, թե ինչպես է նրան հաջողվել այդքան դժվար աշխատանքի հետ մնալ կանացի և գեղեցիկ, Ինդիրա Գանդին արևելյան իմաստությամբ պատասխանեց. «Գեղեցկությունը նրա աշքերում է, ով դա տեսնում է»:⁴ Վերադառնալով հայրենիք՝ Ս. Ասլամազյանը նկարում է Ինդիրա Գանդիին հոր դիմանկարի ֆոնի վրա: Նկարը ցուցադրվեց Մոսկվայում, Բոնմեյում: Ս. Ասլամազյանը 1975թ. նկարը նվիրեց Ինդիրա Գանդիին, որն այն համարեց իր ունեցած լավագույն դիմանկարներից մեկը:

Թեմատիկ ստեղծագործությունները՝ «Ծողովրդական բրուտագործուիհն» (1971թ.), «Աշխատանքային օրից հետո Զայառություն» (1971թ.) ընդհանրացված են, համարում են կենցաղային ժանրը դիմանկարի հետ: «Ծողովրդական վարպետուիհն» լավագույն գործերից է: Նկարը կառուցված է գույնի և ռիբմի գուգորդման միջոցով: Վառ լոկալ գույնները՝ նարնջագույնը, կապույտը, օխրան հաջորդում են միջնանց: Դրանց հարաբերությունը ծայրասահման սրված է, և միայն պլաստիկ ռիբմն է նկարը պահում հավասարակշռության մեջ: Նկարի հիմնական ձևը կորագիծն է: Վարպետուիտ ծալապատիկ դիրքը հիշեցնում է սափորների ձևերը: Նրա ձեռքի ապարանջանը ներդաշնակվում է սափորների զարդանախշերի միջոցով, ոտքի և սանդալի հարաբերությունը կրկնվում է ներկամանի վրա: Հնդկաստանը պատկերելիս դարձյալ Ս. Ասլամազյանը մնում է հոգեհարազատ հայի գունազգացողությանը՝ պահպանելով դեղինը, կարմիրը ու կապույտը, որոնք բխում են հայկական մանրանկարչությունից, Սինասի ստեղծագործությունների գույներանզներից:

«Հնդկաստանի կանայք» կտավը (1973թ.) մոնումենտալ ստեղծագործություն է: Կոմպոզիցիոն կառուցվածքով այն հիշեցնում է «Հայաստանը այսօր» կտավը: Կենտրոնում պատկերված է ոսկե սարիով հնդկուիհն՝ ձեռքին մանուկ, որի դեմքը թեև չի երևում, սակայն նա է «կահում» ողջ կոմպոզիցիան: Հավանաբար նրա նասին է գրել Ս. Ասլամազյանը. «Հնդկուիհն նստած էր օվկիանոսի ափին: Ինձ էին ուղղված խոշոր, քարի աշքերը, որոնք օժնված էին ներքին արժանապատվությամբ և մաքրությամբ: Նրա հազին ոսկեզույն սարի էր, ձեռքին՝ ոսկե ականջօղով մի հրաշակի մանջուկ: Նրանք կարծես լինեհն Հնդկաստանի խորիրդանիշը»:⁵ Նկարում պատկերված նյուս հնդկուիհները ևս տիպային կերպարներ են: Գույները նըրբուն հավասարակշռված են՝ դեղինը կարմիրի հետ, մանուշակագույնը՝ սպիտակի, մուգ կանաչը՝ մուգ կարմիրի հետ: Այս խայտարդես գունաշարը ամրացված է կարմրադարձնագույն և վարդագույն ֆոնով, որն իր հերքին ակտիվանում է վերին մասի լազուր կապույտով:

Հնդկական թեմաներով նատյուրմորտներում ապրում է «Հնդկաստանի մի մասնիկը, «Հնդկաստան» (1970թ.), «Նատյուրմորտ հնդկական կոշիկով» (1970թ.), «Նատյուրմորտ Հնդկական կտորով և սև խարորդ» (1973թ.): Բավկական է՝ նկարչուիհն իր ձեռքի տակ ունենա ճանապարհորդությունից բերված հուշանվեր, իր, մենք տեսնում և զգում ենք տվյալ երկրի շունչը, կիման, գույները:

Երկրորդ երկիրը, ուր այցելում է Ս. Ասլամազյանը, Եգիպտոսն էր: Դա տեղի ունեցավ 1967թ., երբ Ասուանի ջրանցքը կառուցողների հետ միասին Ս. Ասլամազյանը ուղևորվում է այսուղեղ: Ինքնարիուից զցած առաջին հայացքը վերևից կանխորշում է

⁴ Մ. Ա շ ա մ ա զ յ ա ն, Ց պ. աշխ., էջ 55:

⁵ Մ. Ա շ ա մ ա զ յ ա ն, Օ բ Ի ն ձ ն ի, "Советская страна", N 8, 1987, стр. 30.

Մ. Ապամազյանի Եղիստական շարքի գունաշարը: Այդ շարքերը կատարված են տեսմակերպության կողմէն՝ պահպանապահության մեջ: Նրանք ճանապարհորդական ճեղքանկարներ են, որոնց միջոցով նկարչութիւն ուսումնասիրություն է Եղիստուուր՝ տարվա տարրեր ամիսներին, օրվա տարրեր ժամերին, նրա պատմությունը, ներկան: Նրա տեմպերային շարքերում քննությունը («Աստան զյուղի արևածագը» 1967թ.) հետզհետև վերածվում է տոր կեսօրի («Աստան զյուղը» 1967թ.), որին հաջորդում է զով երեկոն («Փողոց Լուկուրում» 1968թ.):⁶ Իր գունային հակառակություններով: Այս ստեղծագործություններում մենք չենք տեսնի արևը ուղղակիորեն, սակայն նա տիրում է ամենուրեք. «Ես հասկացա, թե ինչո՞ւ էր Եղիստացիների մոտ արևը զիսավոր աստվածություն համարվում: Ես այս երկիրը լմկալեցի որպես արևի բազավորություն: Նրա շողերի ներքո ծնվում են վառ գույներ, լույս ու ստվերի հակառակություններ»:⁷

Եղիստուի բողած տպագրությունն այնքան մեծ էր, որ նկարչութիւն ոչ միայն նկարում էր, այլև գրառումներ կատարում իր նորատեսություն. «Ես վախենում եի, որ դարերի ընթացքում Եղիստական արվեստը հղկվել է բացարձակության աստիճանի: Սակայն իմ տեսածը գերազանցեց բոլոր սպասելիքներս: Ամեն մի արվեստ իր բարձրակետում լինում է վիթխարի և պարզ միաժամանակ, ինչպես Սֆինքսն ու Քեռիսի բուրգը: Նրանց մեջ կա ձգողականություն և անհասանելիություն: Այդ իրեշը նայում է թեզ վերևից և տեսնում է ապագան: Նրա կողքին նարդը իրեն գգում է մի քրքոր: Որքան մեծ մարդիկ են անցել նրա կողքով, իսկ նա անվրդով կանգնած նայում է հավերժությանը՝ առեղծվածային ուժով»:⁸

Նկարչութիւն այցելում է Կահիրե, լինում է Մեմֆիսում, ապրում է Աստան զյուղում: Նրա համար ամենահետաքրքիրը դատնում են հանդիպումները մարդկանց հետ: Եթե կանայք սկզբում նայում են նրան կասկածամտորեն, սակայն իմանալով, թե որ երկրից է նկարչութիւն, սկսում են ժապառ և նոյնիսկ բոլոր են տալիս իրենց նկարել, ինչը այնքան էլ բնորոշ չէ տեղաբնիկներին: Եղիստական շարքի համար Մ. Ապամազյանը 1976թ. արժանանում է Համալ Արդել Նասրի անվան մրցանակի:

Նկարիչն առավել, քան որևէ արվեստագետ, մնալով իր նախասիրած գուներանգների ու թեմատիկայի սահմաններում, որպես կանոն, աննշականորեն է արձագանքում այն նոր իրականությանն ու տպագրություններին, որոնց ականատեսն է դառնում: Այդպիսին եղավ Սարիան Ապամազյանն իր արևելյան կտավերում:

ВОСТОК В КАРТИНАХ МАРИАМ АСЛАМАЗЯН

Резюме

A. Մարկարյան

Семидесятие - годы признания таланта Мариам Асламазян. Она много путешествует, открывает для себя новые страны. Воспитанная на традициях русской культуры, М. Асламазян особенно восприимчива к Востоку. Ее любовью и привязанностью становится Индия, страна с древней и самобытной культурой. С ее полотен перед нами предстают яркая тропическая природа, обычаи и быт этой древней цивилизации, и люди, красивые и гордые, мужественные и непокоренные ...

Индийским произведениям Мариам Асламазян своеобразную ноту придает ее особое отношение к Индире Ганди, с кем она неоднократно встречалась и не переставала восхищаться.

⁶ *Московский художник*, 5. 02.1976.

⁷ *М. А сл а м а з я н, Դաւтар..., стр. 108:*

ԱՃԱՇ ԱՍՏԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՄՐՎԵՍԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ ԵՎ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
(Ն.Տիգրանյանի ծննդյան 150-ամյակի առիվ)՝

Ինչպես հայտնի է, 1958թ. ինմանդրված ԳԱԱ արքեատի ինատիտուտի գիտական կարևորագույն ուղղություններից է հայ երաժշտության դասականների ստեղծագործության ուսումնափրությունը և ակադեմիական հրատարակության նախապատրաստումը, նրանց նամականությունը, հուշագրության, գիտական ու հրապարակախոսական ժառանգության հրատարակումը:

Եվ միանգամայն բնական էր, որ իր ստեղծման առաջին խև օրվանից Արքեստի ինստիտուտի երաժշտագետների ուշադրության կենտրոնում պիտի հայտնվեր հայ պրոֆեսիոնալ երաժշտության և կոմպոզիտորական դպրոցի հիմնադիմներից մեկը՝ հայ ազգային դաշնամուրային երաժշտության հիմնային, տաղանձավոր կոմպոզիտոր, ազգագրագետ, Արևելքի երկրների երաժշտական ստեղծագործության մեծ գիտակ, փայլուն դաշնակահար, երաժշտական-հասարակական անմկուն գործիչ, հմուտ մանկավարժ, երաժշտության մասին մի շաբթ հոդվածների հեղինակ Նիկողայոս Տիգրանյանը (1856-1951թ.): Հայ երաժշտության պատմության մեջ ամենաերկարակյացը, Ալ. Սպենդիարյանի դիմուկ բնորոշմամբ «Արևելքի երգի մեծ երաժշտը», հայ կոմպոզիտորներից առաջիններից էր, որ հավաքեց ժողովրդական պարեանանակներն ու երգերը, առաջիմն էր, որ եվրոպական երաժշտական միջոցներով գրառեց մոլումների բարդ ձևերն ու նշակեց դրանք դաշնամուրի, ձայնի, ջուրակի, կամերային-գործիքային անսամբլների, սիմֆոնիկ և ժողովրդական զործիքների և այլազամանակակից անդամանությունների:

Ն. Տիգրանյանի ստեղծագործության հետազոտությունն ստանձնում է Արվեստի ինստիտուտի հիմնադրումից ընթացմենը մեկ տարի անց՝ 1959թ. ինստիտուտում աշխատանքի անցած Ռուզաննա Սագմանյանը,¹ որն էլ իր հետազոտական աշխատանքի արդյունքներն անփոփոք է կոնճպղիստրի նախին առաջին դիմերտացիայում՝ անդրանիկ մենագրական ուսումնասիրության մեջ։ Ն. Տիգրանյանի ժառանգության ուսումնասիրության ընտրությունը խորհրդանշական էր. քերին է հայտնի այն փաստը, որ Ռ. Սագմանյանի հայրը՝ Հևոնչ արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր ճարտարապետ, Երևանի շինարարական (պոլիտեխնիկական) ինստիտուտի առաջին ռեկտոր Միքայել Սագմանյանը, Լենինականի գլխավոր հատակագծի հեղինակն է (1932-1937թթ.): Այստեղ նրա նախագծով 1935-1937թթ. կառուցվել են մի շարք բնակելի և վարչական շենքեր։ Ամելին, Ռ. Սագմանյանի մայր՝ դեռասանուին, Հևոնչ ժողովրդա-

կան արտիստուիդ Վարդուշ Ստեփանյանը, դարձավ Վարդան Աճեմյանի դեկավարությամբ 1928թ. նոյեմբերի 1-ին բացված Լենինականի Ա. Մուալյանի անվան նորակազմ պետական դրամատիկական թատրոնի հիմնադիրներից մեկը՝ լենինականյան թեմում հանդես գալով մինչև 1930 թվականը:

Երիտասարդ գիտաշխատողը ձեռնամուխ է լինում Ն. Տիգրանյանի կյանքին ու ստեղծագործական գործունեության առնչվող բազմաթիվ նյութերի ու վավերագրերի՝ նամակների,² հուշերի,³ կոմպոզիտորի՝ գիտական ու պատմական կարևոր նշանակություն ունեցող հողվածների⁴ ուսումնասիրմանը, ծանրանում Տիգրանյանի մասին առկա ողջ գրականությանը՝ հողվածներ և գրախոսականներ մամուլում,⁵ կոմպոզիտորին նվիրված առանձին գլուխներ դիմերտացիաներում⁶ և գրքերում,⁷ նրա մասին անդրանիկ աշխատանքը՝ Գումրեցու “Հ. Փ. Տիգրան և մանականական գործություն”⁸ ուր ներկայացված է նրա կյանքն ու ստեղծագործական գործունեությունը մինչև 1927 թվականը, Տիգրանյանին նվիրված առանձին բաժինները հայ երաժշտության հարցերին նվիրված՝ Ա. Չահվերդյանի, Ա. Հարությունյանի, Ա. Քարսամյանի, Ա. Մուրադյանի, Շ. Ավելյանի, Կ. Խուդարաշյանի գիտական հողվածներում, ինչպես նաև Գ. Տիգրանովի և Ա. Տերյանի հողվածները:

Աւելախոսն ուսումնասիրել է կոմպոզիտորի գրեթե ողջ ժառանգությունը՝ ինչպես հրատարակված, այնպես էլ ձեռագիր՝ բացահայտելով նրա ստեղծագործության մի շարք կարևոր ոճական առանձնահատկությունները:

1974թ. Ո. Մազմանյանը պաշտպանում է “Հիկոգայօս Տիգրանյան. Ժիզն և տարօւթեածություն” թեմայով թեկնածուական դիմերտացիան՝ կոմպոզիտորի մասին անդրանիկ ծավալուն աշխատությունը, որի անհրաժեշտությունը հասունացել էր վաղուց, և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Աւելախոսության վեց գլուխներում Մազմանյանը հանգամանալից քննության է ատել Ն. Տիգրանյանի կյանքը, նրա կատարդական, իրապարակախոսական և մանկավարժական գործունեությունը, ստեղծագործությունը: Առաջին գլուխում ներկայացված է դարաշրջանը՝ XIX դարի երկրորդ կեսն ու XX դարի առաջին կեսը, սոցիալական ու պատմամշակութային նքնուրուղը, որ ծավալվել է Ն. Տիգրանյանի գործունեությունը: Տրված են Տիգրան Չուխանյանի, Քրիստովոր Կարա-Մուրզայի և Մակար Եկմալյանի ստեղծագործական գործունեության համառոտ բնութագրերը, նրանց շարքում նաև՝ Ն. Տիգրանյանի դերն ու նշանակությունը հայ ազգային պլոդեսինալ երաժշտության ձևավորման վաղ փուլում: Երկրորդ գլուխում ներկայացված է Ն. Տիգրանյանի կյանքն ու գործունեությունը: Երրորդ գլուխը նվիրված է Տիգրանյանի ժառանգության մեջ առավել նշանակալի տեղ գրադարձնող կարևոր նշանակություն ունեցող՝ դաշնամուրի համար ժողովրդական պարերի (այդ թվում՝ «Դյուզ պար», «Ծու ու առաջ», «Թարս պար», «Գյումրվա կլոր

² Տե՛ս Գ.Աթ. Ն. Տիգրանյանի դիվան:

³ Նույն տեղում: Խոսքը նաև կոմպոզիտորի զարմիկների՝ երաժշտագետներ Սիրայել Տերյանի և Գեղրդի Տիգրանովի անուիպ հուշերի մասին է:

⁴ Տե՛ս Գ.Աթ. Ն. Տիգրանյանի դիվան:

⁵ Նկատի ունեմք դեռևս 1897-ին «Հովու արքա» հանդեսի մայիսի 12-ի համարում տպագրված Իվանով-Բրունցկու «Сборник Закавказских мелодий Н. Тиграняна» հողվածը ինչպես նաև «Սշակ», «Արմազաք», «Տարզ», «Սուրբ», «Ժամանակ», «Հայաստան», «Հայաստան», «Հայաստան», «Հովու արքա», «Երևան», «Տիգրանյան» դարում և առաջնային դաշնամուրի համար ժողովրդական գործունեությունը նշանակությունը հայ ազգային պլոդեսինալ երաժշտության ձևավորման վաղ փուլում: Երկրորդ գլուխում ներկայացված է Ն. Տիգրանյանի կյանքն ու գործունեությունը: Երրորդ գլուխը նվիրված է Տիգրանյանի ժառանգության մեջ առավել նշանակալի տեղ գրադարձնող կարևոր նշանակություն ունեցող՝ դաշնամուրի համար ժողովրդական պարերի (այդ թվում՝ «Դյուզ պար», «Ծու ու առաջ», «Թարս պար», «Գյումրվա կլոր

⁶ Տե՛ս Ալ. Չահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», «Հայ երաժշտության պատմության ակնարկներ» (Ելեղ.՝ Ք. Քոչճարյան, Ա. Մուրադյան, Գ. Գյուղակյան), Ա. Մուրադյանի «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարի սկզբին», Ա. Հարությունյանի «Հայ երաժշտության պատմություն» դասագիրքը և այլն:

⁷ Տե՛ս Հ. Գումրեցի, Հ. Փ. Տիգրան և մանականական գործունեությունը 1927 թվականը՝ Ալ. Սահմանիայանի և Ն. Մատի:

⁸ Տե՛ս Հ. Գումրեցի, Հ. Փ. Տիգրան և մանականական գործունեությունը 1927 թվականը՝ Ալ. Սահմանիայանի և Ն. Մատի:

Ո. Մազմանյանը, բնականաբար, առանձին գոլիս է հատկացնում դաշնամուրի համար մուղամների (այդ թվում՝ «Զարգահ», «Նովրուզ արարի», «Հեղարի» և այլ) փոխադրումների վերլուծությանը. Տիգրանյանն Արևելքի կոմպոզիտորներից առաջինն էր, որը գրաեց ու մշակեց մուղամները՝ կորսոյան կտանգի վրկելով ժողովրդապրաֆեսիոնալ երաժշտության այդ հարուստ ու բարձրարժեք նմուշները: Տիգրանյանը մշակել է Հայաստանում լայն տարածում գտած զործիքային մուղամները՝ նախատեսված լարային և փողային գործիքների կատարման համար: Ո. Մազմանյանը կտարարում է Տիգրանյանի մշակած մուղամների և առքեքջանական մուղամների համեմատական վերլուծությունը ևս: «Մուղամների մշակումներում օգտագործելով եվրոպական երաժշտության նվաճումները, Տիգրանյանը մուղամարի կոլլուգարան հասցրեց այն փուլին, երբ դա կարող էր հիմք ծառայել Արևելքի ժողովրդությունների նոր պրոֆեսիոնալ (քազմաձայն) դպրոցի ներկայացուցիչների կողմից ստեղծների, սիմֆոնիաների, կոնցերտների, կվարտետների, ռապսադիաների և այլնի համար»:¹⁰

Հիմներորդ գլուխը լույս է ափում Ն. Տիգրանյանի ստեղծագործության Վերջին շրջանի վրա. մուղամների և ժողովրդական պարերի դաշնամուրային մշակումներն ստանում են նոր կյանք՝ նկատի ունենք դրանց փոխադրումները սիմֆոնիկ նվազախմբի, ժողովրդական գործիքների նվազախմբի և կամերային-գործիքային անսամբլների համար: Կոմպոզիտորի կամերային-գործիքային ստեղծագործությունները, որոնցում օրգանական միահյուսվեցին հայ ժողովրդապրոֆեսիոնալ գործիքային երաժշտության և եվրոպական կամերային երաժշտության բնորոշ գծերը, նշանակալի դեր խաղացին հայ երաժշտության մեջ՝ ժանրի զարգացման գործում: Միմֆոնիկ փոխադրումների առնչությամբ հեղինակը նշում է, որ դրանք արված են ճաշակով, «սրանցում ազգային կոլորիտը զուգակցվում է եվրոպական երաժշտական տեխնիկայի հետ: Գործիքավորումը պարզ է, քանի անցիկ, մենատակար գործիքների, ճայնառությունների լայն օգտագործմամբ»:¹¹ Հատկապես ուշադրության է արժանի Պաղտասար Դայիրի «Ի նրանք արքայական»-ի մշակումը ա կարպելա քառաձայն երգչախմբի համար, որը կատարել է կոմպոզիտորի 92 տարեկան հասակում:

⁹ Р. Мазманян, Никогайос Тигранян. Жизнь и творчество, Диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения, Ер., 1973, стр. 80.

¹⁰ Р. Мазманян, Никогайос Тигранян. Жизнь и творчество, Автореферат..., стр. 19.

¹¹ Ὡνιγᾶ αἰτηηπιμ, ἐῷ 17:

Ն. Տիգրանյանի մասին ուսումնասիրությունն արժանացավ բարձր գնահատականի: Աստենախոսության ընդդիմախոս, արվեստագիտության դրվող Մ. Մուրայյանը նկատեց. «Ենք աշխատության հեղինակը լավ ծանոթ է Ն. Տիգրանյանի մասին եղած գրականությանը, որի քննական տեսության մեջ ցուցաբերել է իր քննադատական վերաբերմունքը հեղինակների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում վեմի բռնվել նոյնիսկ նրանցից նշանավորների հետ: Այդպես է, օրինակ, Վ. Դորդանյանի դեպքում, եթե նա իր հոդվածներում պնդում էր, որ Ն. Տիգրանյանը (ավելի ոչ նաև Կոմիտասը) ճիշտ չեն վարվում, որ ժողովրդական երգերն ու պարեղանակները հրատարակում են իրենց մշակմամբ: Դրանով նրանք ոչ թե օգուտ, այլ վնաս են հասցնում երաժշտության զարգացմանը: Դորդանյանը գտնում էր, որ ժողովրդական երգերը պետք է հրատարակել միայն որպես ազգագրական գործեր: Անդրադառնալով այս հարցին՝ Ո. Մազմանյանն իրավացիորեն գտնում է, որ Վ. Դորդանյանը, տվյալ հարցում անկասկած պիտի վել է և չի կարողացել գնահատել Տիգրանյանի և Կոմիտասի կատարած աշխատանքի սկզբունքային կարևոր նշանակությունը (էջ 6-7):¹²

Հեճարաց իր հետազոտական աշխատանքի՝ Ո. Մազմանյանը, գրականությունն ու ժամանակաշրջանն ուսումնասիրելուց զատ, հավաքել է ժամանակակիցների հիշողությունները Տիգրանյանի մասին, ի մի բերել կոմպոզիտորի տպագրված ու ձեռագիր՝ անտիպ հոդվածները, նամակներն ու արխիվային փաստարքերը: Դրանք օգտագործելով ատենախոսության մեջ՝ հեղինակը շարադրում է կոմպոզիտորի ստեղծագործական առավել ընդարձակ ու ամբողջական կենսագրությունը, որը պարզ պատկերացնում է տալիս նրա անցած ուղղությունը և ստեղծագործության նաև: Մ. Մուրայյանի գնահատմամբ «աշխատության կարևոր կողմներից մեկն էլ այն է, որ հեղինակը Ն. Տիգրանյանին դիտել է իր շրջապատի հետ ունեցած կապակցությունների մեջ և որոշել նրա տեղը հայ երաժշտության պատմության մեջ: Դրան նաև հասել է ոչ միայն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի երևույթների բնութագրությամբ, այլև արվեստի տարրեր բնագավառներում գոյություն ունեցող վիճակի և հասկապես երաժշտության բնագավառում տիրող դրության վերաբերյալ անհրաժեշտ նյութեր հաղորդելու միջոցով: Պարզելով այն, թե ի՞նչ էր արված Ն. Տիգրանյանի հանդես գալուց առաջ և ի՞նչ էին անում նրա ժամանակակիցները, հատկապես Տ. Չոխանյանը, Զ. Կարա-Մուրզան, Գ. Դորդանյանը և Ո. Եկմալյանը, դիսերտանուր հնարավությունն է ստանում ճիշտ գնահատել Ն. Տիգրանյանի տեղում ու նշանակությունը հայ երաժշտության պատմության պրոցեսում»:¹³

1978թ. լույս է տեսնում Ն. Տիգրանյանի մասին Ո. Մազմանյանի մենագրությունը, որից հետո հեղինակը ձեռնամուխ է լինում կոմպոզիտորի հոդվածների, հուշերի և նամակների ժողովածուի հրատարակման գրքիմ՝ հեղինակելով ներածական ժաղանակածու: Ժողովածուն, որ երևան եկավ 1981թ., ներառում է մեծաքանակ վավերագրական նյութեր, որոնք ոչ միայն լույս են սփռում Ն. Տիգրանյանի կյանքի ու ստեղծագործության վրա, այլև պատկերացում տալիս հայ պրոֆեսիոնալ երաժշտության սկզբնավորման ժամանակաշրջանի մասին: Ժողովածուն կազմող երեք բաժիններից առաջինում տեղ են գտել կոմպոզիտորի հոդվածներն ու հիշողությունները, այդ բաժնում՝ Կոմիտասի, Աղամազ Մելիք-Աղամալյանի մասին, երկրորդ բաժնում Տիգրանյանի մասին են պատմում ժամանակակիցները՝ Ալեքսանդր Սպենդիարյանը, Հարո Ստեփանյանը, Մարտին Սազմանյանը, Գեղրդի Տիգրանովը, Միքայել Տերյանը, Սամսոն Գասպարյանը, Ֆիցիլիա Բրուտյանը, Հրաչյա Բոգդանյանը և ուրիշներ՝ արժեքավոր փաստեր ներկայացնելով կոմպոզիտորի գործունեության տարրեր տարիների արգասաքեր աշխատանքի մասին, բացահայտելով Ն. Տիգրանյանի փիլիսոփարաբերություններն ու ստեղծագործական շփոմները ժամանակակիցների հետ: Մրացնում տեղ են գտել հայրենական երաժշտության զարգացման հարցերին առնչվող՝ Տիգրանյանի մտքերը: Ժողովածուի եզրափակիչ բաժնում գետեղված է Տիգրանյանի նամականին այստեղ են կոմպոզիտորի նամակները՝ հասցեագրված Ալ. Մազմանյանին, Ո.

¹² Ո. Մ. Մ ո ր ա դ յ ա ն, Կարծիք երաժշտագետ Ո. Մազմանյանի «Նիկողայոս Տիգրանյան» թեկնածուական դիսերտացիայի մասին, էջ 2 (Ո. Մազմանյանի արխիվ):

¹³ Նույն տեղում, էջ 3:

Մելիքյանին, Ա. Սայխյանին, Ռ. Թերլեմեզյանին, Գ. Կազաչենկոյին և այլոց, ինչպես նաև նրանցից, Կոմիտասից, Գ. Տիգրանովից, Հ. Նալբանդյանից, Ս. Գասպարյանից, Հ. Ստեփանյանից ստացված նամակները:

Այսպիսով, Արվեստի ինստիտուտի օանքերով լույս աշխարհ են եկել Ն. Տիգրանյանի մասին մենագրությունը, նրա հուշերի և հոդվածների ժողովածուն, նամականին: Սակայն ինստիտուտը դեռևս շնարած պարտք ունի մեծ գյումրեցու անթառան հիշատակի առջև։ Եկատի ունենք կոմպոզիտորի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը։ Լիահոյս ենք, որ Ն. Տիգրանյանի հաջորդ հորեւյանին արդէն մեր սեղանին կլինեն նրա ժառանգության ակադեմիական հասորները...

**ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА И ИССЛЕДОВАНИЕ
ТВОРЧЕСТВА Н. ТИГРАНЯНА
(к 150-летию со дня рождения Н. Тиграняна)**

Резюме

A. Acatryan

Одним из первых капитальных исследований, проведенных в Институте искусств АН Армянской ССР было посвящено творчеству выдающегося композитора, одного из основоположников армянской профессиональной музыки, Н. Тиграняна. Этому была посвящена диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения Рузанны Мазманиян. В этой работе впервые были представлены все сферы творческой деятельности Н. Тиграняна – композитора, музыканта, этнографа, исполнителя, педагога.

Հասմիկ ԳԱԼՈՍՅԱՆ

ՎԱՀՐԱՄԱՔԵՐԴ ԳՅՈՒՂԻ ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՆԻՆԵՐ

Ժողովրդական երգը ժողովրդական կյանքի պատմությունն է: Հայ երգային բանահյուսության մեջ բազմակողմանիորեն արտացոլվել է հայ մարդու կյանքը: Ծընվում է մարդը, ապրում, մնունում, և երգը միշտ նրա հետ է՝ դաշտում աշխատելիս, սիրո և ուրախության ժամերին, կորուտների և դժբախտությունների օրերին: Բանահյուսական քնարերգությունը (աշխատանքային երգեր, սիրային ու ծիսական երգեր, անեծքներ ու ողբեր, պանդխտության ու օրորոցային երգեր և այլն) ժողովրդական կյանքի աշխարհն է:

Վ. Բրյուսովը “Պօջան Արմենի” աշխատության ներածական ակնարկում գրում է, որ հայ երգային բանահյուսությունը շատ է հիշեցնում ամենաուշ ժամանակի չափածոյի տեխնիկայում հմտացած որևէ բանաստեղծի նրբորեն մտածված ստեղծագործությունները:¹

Հայ ժողովրդի քնարական բանահյուսության կարևոր բաժիններից մեկը ժողովրդական խաղիկներն են: Առաջին լուրջ օրինակը տալիս է Աւոնի Ալիշանը «Հայոց երգը ուամլականը» ժողովածուվ, թեալետ այս տեսակ երգերի գրառումը սկսվել է մինչև Ալիշանը: 1904թ. «Արարատ» ամսագրում և ապա առանձին գրքով լույս է տեսնում Մ. Արենյանի «Ժողովրդական խաղեր» հետազոտությունը: Սրանում հայ իրականության մեջ հիմք է դրվում ժողովրդական երգերի բանասիրական-բանագիտական ուսումնասիրությանը.²

Ուսումնասիրության սկզբում անդրադառնալով խաղիկների անվանման հարցին՝ Արենյանը նշում է, որ դրանք ընդիմանուր անունով կոչվում են խաղ, սակայն երբեմն էլ հիշվում են իրեն տաղ: Նա հավաստում է, որ խաղ բառը նշանակում է նաև պար, քանի որ այս խաղիկները սկզբնապես և հետո մեծ մասամբ պարերգեր են եղել:

Խաղիկների բովանդակությունը հարուստ է սիրո հետ կապված իրական կյանքի զանազան դրություններով, գործողություններով, համեմված են ժողովրդական ստվորություններով, կենցաղային գծերով ու բարքերով: Տագումով բոլոր խաղերը «հանպատրաստից, հանկարծական բերմանք» հորինված ստեղծագործություններ են, որ արտահայտել են հորինող երգչի վայրկենապես ծնված, բովեական տպագործությամբ առաջացած զգացմունքը, ինչպես նաև ժամանակի ու միջավայրի բարքերը: Ժողովրդական խաղիկները, ի տարրերություն սիրո երգերի, փոքր ծավալի, գերազանցապես քառատող, լիրիկական երգեր են՝ հորինված հոգեկան տարրեր վիճակների և հասարակական բազմազան երևույթների անմիջական ազդեցությամբ: Ցուուաբանչուր խաղիկ արտահայտում է մի ամբողջական միտք, տրամադրություն, հանգավոր է և գեղարվեստորեն ավարտում:

*Սազեր ունիմ ծիրանի,
Չեմ տա հազար քումանի,
Կուտամ մեր բազրոյանի,
Դմեր սրնդուկն ու տանի:*

*Յայլավորը յայլեն է,
Յարս վերի մայլեն է:
Յայլա տեղը սարին է,
Գլուխը չոր քարին է:*

Շիրակի մարգի Վահրամաքերդ (Ներքին Ղանիջա) գյուղի տարեց ասացողներից զրի ենք առել մոտ հարյուր իհսուն խաղիկներ, որոնք բանասացները կոչում են նաև մանի, խանա, բոլոր պարի երգեր, վիճակի ու ջանցուլումի երգեր:

Ուսումնասիրության նապատակն է որպես հաղորդում ներկայացնել մեր կողմից գրառված մանիները, ժամանակի կորսատից փրկել տվյալ տեղավայրի ազգաբնակչության բանավոր ավանդության մեջ տակալին գոյատևող հարուստ ստեղծագործությունները: Այս խաղիկներն ստեղծվել են միայն մեկ անգամ երգվելու համար, քայլ ժողովրդական բանահյուսության մյուս տեսակների նման այդ երգերը ևս, եթե հաջող են եղել, չեն անհետացել առաջին անգամ երգվելուց կամ իրենց հեղինակի մահից հետո:

¹ Վ. Բրյուսով, Պօջան Արմենի, Մ., 1916, стр. 39.

² Մ. Արենյան, Ժողովրդական խաղիկներ, Եր., 1940, լգ 51, 53, 110:

Խաղիկների գրառման ընթացքում հասովկ ուշադրություն ենք դարձրել, քեզ ասացողը ումից է լսել, սովորել, որտեղից, ինչ ճանապարհով են այդ նյութերը պահպանվել իրենց հուշերում։ Քանաացներից մեկը՝ ուրսունամյա Ռոզա Գևորգյանը, պատմեց. «Օղորմածիկ Արաք մանը, օր Կարմիր Ավետրանի տերն էր, շատ խաներ գիտեր. Զահել հարս ու աղջիկներին կողքը կշարեր, խանա կսեր, մենք էլ կսորվեինք» (ասացողը բնիկ Ղանիշեցի էր)։

Քանաացները (Ավագյան Վեռա, Գևորգյան Ռոզա, Հովհաննիայան Նորիկ (Նուռիկ), Սկրտյան Ցոռիկ)³ այս դեպքում ոչ միայն վերարտադրողներ են, այլև խաղիկների ստեղծման ու ձևավորման գործներացի անմիջական կրողն ու մասնակիցը։ Կատարելով իրենց խև ստեղծած ու մեծերից լսած երգերը՝ ժողովրդական հորինողները, հաճախ ոչ գիտակցաբար, ստեղծագործություններից դուրս են նղում սյուժետային, լեզվածական զանազան թերություններ և այլ կարգի անկատարելություններ։

Մանի լսեմ ու շարեմ, Սովորի վրի գիմին, Կոամեսով խաղցընեմ,
Տոպրակ լցնեմ ու կարեմ, Ապրի քեզի պես քենին, Չորովին (էլ)՝ կիախցընեմ:
Քաղքե քաղաք մամ տամ,
Մրտիս ուզած ճարեմ։

Վահրամաբերդում, ընդհանրապես Ծիրակում, ընդունված է եղել հարսանիքին նախորդող ինմաշաբթի օրը հարսնացուի հարազատներից մեկի տունը հայտարարել «պարտուն» (պարատուն)։ Հավաքվում էին զյուղի երիտասարդները, ներկա էր նվազախումբը։ Երիտասարդները բաժանվում էին երկու խմբի, և «պարը բոլորում էր»։ Առաջին խումբը տեղում հորինում էր մանիներ, մյուսն էլ՝ պատասխանում դրանց։ Այս մանիները իմանականում կրում էին կատակի, հումորի բնույթ, ամենատարածվածը յարի գովքն էր, արտաքին ու ներքին գեղեցկությունների նկարագրությունը։

<i>առաջին խումբ</i>	<i>երկրորդ խումբ</i>
<i>Մատմիքս մատովս չէ,</i>	<i>Ծերմակ ծաղիկ սկսվամ,</i>
<i>Միրել եմ, սրտովս չէ։</i>	<i>Ես ու յարս սեյրի քան։</i>
<i>Կայմել ես՝ կաք նմանիս,</i>	<i>Ես դուշ եմ՝ թևս դեղին,</i>
<i>Բացվել ես՝ վարդ նմանիս։</i>	<i>Սան գուկամ յարիս գեղին։</i>
<i>Ճրագ էրեք, լուս էրեք,</i>	<i>Պարրաշի՛, պարիդ աշե,</i>
<i>Ջիաղցողիմ դուս էրեք։</i>	<i>Ես դաշի՛ յարիդ աշե։</i>
<i>Կարմրնջի քարը փուխ է,</i>	<i>Կարմրնջի քարը չալ-չալ,</i>
<i>Յարիս աչքերը քոխ է։</i>	<i>Յարիս աչքերը չախալ։</i>

Այսպիսի պարտները գյուղում կազմակերպվել են 1930-ականներից և գոյություն են ունեցել մինչև 1988 թ. երկրաշարժը։

Ներկայացվող խաղիկները նախապատերազմյան շրջանի հոգսաշատ ու արտաքին աշխարհին անհարորդ զյուղական երիտասարդության հուզաշխարհի և հոգեկան ընդվզումների արդյունք են, նրանց ցանկությունների ու երազանքների արտահայտությունը։ Առօրյա դժվարություններից կտրվելու միջոցը երգն ու պարն էր։

Տարեց կանանց ներկայությունը պարտներում երեք նշանակություն ուներ. 1. զալիս էին աղջիկ ընտրելու իրենց տղաների համար, 2. սովորեցնում էին պարեր, 3. սովորեցնում էին մանիներ։

³ Ռոզա Սեղրակի Գևորգյան, ծնվել է 1927 թ. փետրվարի 18-ին, Ծիրակի մարզի Ներքին Ղամլջա (Վահրամաբերդ) գյուղում, Սուշի Ռ-ուստամ Գևորգի գյուղից գաղթած Սեղրակ Սամուկյանի ընտանիքում։ Երգերու շնորհը ժառանգել է հորից։ Հայրը լավ ճայն է ունեցել, երգել է քուրեններ, իմանականում աշուղ Ղարիի եերիաթներ։

Նորիկ (Նուռիկ) Սուշեղի Հովհաննիայան, ծնվել է 1933 թ., Ծիրակի մարզի Վահրամաբերդ գյուղում։ Բնիկ Ներքին Ղամլջացի հորից՝ վարպետ Սուշեղից ժառանգել երգելու ընդունակությունը։

Վեռա Սմբատի Հարությունյան, ծնվել է 1929 թ., Ծիրակի մարզի Դուզցանդ (Այսուրյան) գյուղում։ Երգելու շնորհը ժառանգել է տրակտորիստ հորից։ Խաղիկների մեծ մասը նա սովորել է Վահրամաբերդում։

Ավագ սերնդի փորձված ներկայացուցիչները ստուգում էին խաղիկների կատարումը և ուղղություններ տալիս: Չատ ջերմ ու անկեղծ էին զյուղի երիտասարդների փոխհարաբերությունները: Դրանք ավելի հստակորեն դրսևորվում էին ուրախությունների ժամանակ և հատկապես աշխատանքի մեջ: Որոշ խաղիկներում աղջիկներն իրենց սիրահետող տղաների հետ հումորով երկխոսության մեջ են մտնում:

Հերիք խոսաս ըծերեն,
Կլրմանիս քոռ մկներեն:

Հերիք խոսաս զյավազ,
Լոզրդ բերենեղ կվազա:

Հերիք խոսաս, հեր ունիս,
Ամեն մազիս տեր ունիս:

Զերիս բերանը պոտ-պուտ,
Տղոնցը կանչեմ կուտ-կուտ:

Ելա երդիկ՝ խոտ թափի,
Քեզ մեն խնձորով խարի:

Տղա՛, արի՛ քան քսեմ,
Քյամքյուղ օսկուց հուսեմ:

Չատ մանիներ ունեն առած-ասացվածքային բնույթ, որոնք մինչև հիմա օգտագործվում են առօրյա-խոսակցական լեզվում, բայց ոչ որպես խաղիկ:

Տեզրն օր հարսին ուզե,
Ժամացոյցը կղզե:

Օսկին ի՞նչ է, մանդրու է,
Բանձը օր զինը ծանդրու է:

Աղջիկն օր մորեն կեղնի (կծնվի),
Տվեք զլխուն քող մեռնի,

Տղեն օր մորեն կեղնի,
Թող երկան արև էղնի:

Աղրուր քիսավ՝ ջուրն անուշ,
Ախաղոր պայած քուրն անուշ:

Ստեղծվել են մի շաբթ մանիներ, որտեղ հստակորեն արտահայտված են սերն ու հավատն «առ Ավետարան» (Վահրամաքերդում են տարիներ շարունակ պահվել «Կարմիր Ավետարան», «Ծեկ Ավետարան», և մինչև օրս էլ պահվում են «Նարեկ», «Ճաշոց զիրք» սուրբ զքքերը):

Արև դրավ գերանին,
Մեռնիմ ավետըրանին,

Սազերս հուսի, ոխս էրի,
Աշաղըրտանց ջուխս էրի:

Ավետըրան ոխս էրի,
Մրտիս ուզածը ճարի:

